

ԲԵՆԻԱՍԻՆ ՄԱԻԼՅԱՆ

**ԱԲԻԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻԽԱԿԻ
ՀԻՄՆԱՑԱՐ ՖԸ
1917 - 1921 թթ.**

947. 92 2. 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

ԱԲԽԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻճակի
ՀԻՄԱՀԱՐՑԸ

1917 - 1921 թթ.

A 940 76



ԵՐԵՎԱՆ
ԼՈՒՍԱԿՆ
2008

ՀՏԴ 94/99

Գ.Ա.Դ. 63.3

Մ 159

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմանը

ՆՎԻՐՎՈՒՄ ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

Գիրքը տպագրվում է պետական պատվերով

Գիտական խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Պ. Ա. Չորանյան

Մահյան Բենիամին Վիկտորի

Մ 159 Արխագիայի կարգավիճակի հիմնահարցը 1917-1921 թթ.: Եր.:
Լուսակն, 2008,-160 էջ:

Մենագրությունը նվիրված է վրաց-արխազական առնչությունների պատմության ուսումնասիրությանը: Աշխատությունում լուսաբանված է ներկայացնելու կարգավիճակի հիմնահարցի առաջացման պատճառները և նրա զարգացման հիմնական փուլերը: Հեղինակը, վերլուծելով Արխագիայում ազգամիջան և սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նոր մոտեցում է ցուցաբերում քննարկվող հիմնահարցին, ուսումնասիրում է խնդիրը իրավական ու արտաքին քաղաքական գործուների ազդեցության համատեքստում:

Գիրքը նախատեսվում է պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագիտների և ընթերցող լայն հասարակության համար:

Գ.Ա.Դ. 63.3

ISBN 978-99941-48-96-7

© Մահյան Բենիամին, 2008 թ.

«Գեղեցիկ խօսքեր միշտ կարելի է գրել ազգերի համերաշխութեան և եղայրութեան մասին... բայց նրանց արժէքը սպառուած բանարի արժէքից մեծ չէ: Ազգերի մէջ իրական համերաշխութիւն և եղայրութիւն հաստատելու համար, պէտք է անհամերաշխութիւն և ատելութիւն առաջացնող պատճառները վերացնել են ոչ թէ լեզուի կամ գրչի մարզանըներ կատարել»:

ՄՐԾԱԿ ԶԱՍՍԱԼԵԱՆ

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

1917 թ. Ռուսաստանում հեղափոխական ցնցումներն արմատապես փոխեցին քաղաքական իրադրությունն Այսրկովկասում: Կայսերական լծից ազատագրված ժողովուրդների մոտ սկիզբ առան ինքնորշման և ազգային պետությունների ձևավորման գործընթացները:

Ազգամիջյան քարդ հարաբերությունների հետևանքով առաջացած իիմնահարցերի շարքում էր Արխազիայի կարգավիճակի խնդիրը 1917-1921 թթ. և նրա հետ կապված վայրիվերումները: Հիշյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադրությունների հետազոտման գործում էական նշանակություն ունի Արխազիայում քաղաքական իրադրության և Վրաց-արխազական հարաբերությունների պարզաբանումը: Ժամանակակից Արխազիայի կարգավիճակի հիմնահարցը առաջացել է Վրաց-արխազական պատմականորեն չկարգավորված ազգամիջյան հարաբերությունների հետևանքով: Արդի պատմության շրջանում այն մեծ հնչեղություն է ծեռք բերել՝ Վերածվելով Վրաց-արխազական խորհականության:

Հիմնահարցի զարգացումը կարելի է բաժանել երեք հիմնական ժամանակաշրջանների: Առաջինը՝ 1917-1921 թթ., երբ ձևավորվում էին Վրաստանի Հանրապետության սահմանները և Արխազիան ընդգրկվել էր նրա կազմի մեջ ինքնավարությունից օգտվելու պայմանով: Երկրորդը՝ 1921 թ. մարտից մինչև 1985 թ.: Այդ ընթացքում Արխազիան ստացել էր ինքնավար հանրապետության կարգավիճակ Խորհրդային Վրաստանի կազմում, սակայն դրա վերանայման հարցը ժամանակ առ ժամանակ առաջ էր քաշվում արխազ հասարակության կողմից: Եր-

րորդը՝ 1985 թ. մինչև մեր օրերը, այսինքն՝ «Վերակառուցման», ԽՍՀՄ կազմալուծման, Վրաստաճի անկախության հոչակնան հետևանքով Արխագիայի կարգավիճակի վերանայման փորձը և դրա արդյունքում վրաց-աբխազական զինված հակամարտության առաջացումը, որի հետևանքով Արխագիան հայտնվեց անորոշ կարգավիճակի մեջ: Ծավալված գործընթացների վախճանը դարձան 2008 թ. օգոստոսյան իրադարձությունները և Ռուսաստաճի կողմից Արխագիայի անկախության ճանաչումը:

Մենագրության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Ռուսական կայսրության անկման և Վրաստաճի Հանրապետության խորհրդայնացման միջև ընկած շրջանը, թեպես հետազոտության տրամաբանությամբ թելադրված մենագրության մեջ հիշատակված որոշ փաստերը և իրադարձությունները դրւու են զայս ժամանակագրական շրջանակներից: Հատկապես դա վերաբերում է Արխագիայի կարգավիճակի ձևափորմանը խորհրդային պետականության պայմաններում: Ուստի վերջին բաժնում համառոտակի ներկայացվել է նաև Արխագիայի կարգավիճակի հաջորդ փուլի՝ 1921-1931 թթ. պատմությունը, ինչը, մեր կարծիքով, անհրաժեշտ է խնդրի զարգացման անբողջական ընթացքը պատկերացնելու համար:

Արխագիայի կարգավիճակի հարցին առնչվող աշխատությունները աչքի են ընկնում հիմնականում միակողմանի մոտեցումներով, փաստերի և հանգամանքների ընտրովի հետազոտությամբ: Ուստի մեր խնդիրն ենք համարել տալ վրաց-աբխազական հարաբերությունների անկողմնակալ և անաշար լրաբարանում: Աշխատության մեջ ներառված են թե՝ արխազ և թե՝ վրաց ուսումնասիրողների մեկնարանությունները, այսինքն՝ համակարգման են ենթարկվել հակադիր դիրքորոշումները, իրար հակասող փաստարկներն ու մոտեցումները: Եվ այս տեսակներից սույն աշխատանքը նման առաջին փորձն է:

Հետազոտության ընթացքում գիտական շրջանառության մեջ են դրվում դեռևս շլուսարանված արխիվային նոր նյութեր: Այս տեսակետից բավականին արժեքավոր են Վրաստաճի Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՎԿՊՊԱ) գտնվող նյութերը: Ուստիմնասիրության համար առանձնակի կարևոր են Վրաստաճի Դեմոկրատական Հանրապետության կառավարության քարտուղարության փաստաթղթերը¹, որոնք բացահայտում են Վրաստաճի պետական հիմնարկների քաղաքականությունն Արխագիայում: Հետազոտության անբողջացման համար պահանջ էր առաջացել իրազեկ լինել նաև այն նյութերին, որոնք լրւու են սփոռում Արխագիայի հայ համայնքի կացությանը:

¹Տես ՎԿՊՊԱ, ֆ. 1861, գ. 1, նաև՝ գ. 2:

յան վրա: Այս տեսակետից արժեքավոր են Հայաստանի Ազգային Արխիվում (ՀԱՍ) պահպող Հայաստանի Առաջին Հանրապետության Արտաքին գործերի նախարարության փաստարդերը²: Հետազոտվել են նաև 1917-1921 թթ. Վրաստանում լույս ընծայված պարբերական մանուկի էջերում տպագրված բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք, ըստ էության, ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Մասնավորապես վիրահայ մամուլում տեղ գտած վիրխարի քանակությամբ լրատվական նյութերի ուսումնասիրությունը մեծապես նպաստում է ինչպես ողջ թեմայի, այդպես էլ նրա առանձին կողմերի նորովի ուսումնասիրությանը և նոր եզրահանգումներին:

Աշխատությունը գրելիս առաջնորդվել ենք պատմական ժամանակահատվածում երևոյթների, միտումների, գործընթացների և իրադարձությունների համադրման մերույուն: Համեմատվել են տարբեր հարցերի շուրջ եղած զանազան, հաճախ իրարամերժ ու հակասական մոտեցումներ և դրանց հիմնան վրա կատարվել են նոր եզրահանգումներ ու մնկնարանություններ: Կատարված է նաև վիճակագրական տվյալների վերլուծություն:

1917-1921 թթ. վրաց-աբխազական հարաբերությունների և Արխագիայի կարգավիճակի հետ առնչվող խնդիրների ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները հաճախ կրում են միտումնավոր և հակասական բնույթ, որոնք դժվարություններ են ստեղծում հիմնահարցի ընկալման համար: Նրանք շրջանառության մեջ են դրել նաև մեծաքանակ փաստարդեր և վավերագրական նյութեր: Վերլուծությունները պարունակող հետազոտությունների մեջ մասը, կենտրոնացված լինելով որոշակի հարցերի բննման վրա, արտահայտում են կամ վրաց, կամ էլ արխազ պատմաբանների հակադիր տեսակետները, իսկ որոշ դեպքերում բանավիճական խնդիրները գերակայում են զիտական պահանջների նկատմամբ³:

Հետազոտողներից քչերն են անդադարձել հիմնահարցին իր զարգացման մեջ և մեծամասամբ անտեսում են Արխագիայի կարգավիճա-

² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, գ. 1: Հիշյալ խնդիրը մասնակիորեն լուսաբանվել է հեղինակի գիտական հոդվածներում: Տե՛ս ՄԱԽԻՅԱՆ Բ. Քաղաքական իրադրությունն և համշենահայերի կացորդության 1918-1920 թթ. – ՊԲՀ, 2005, Ն 1, էջ 125-140: Նույնի՝ Համշենահայ համայնքը Վրաստանում 1918-1920 թթ. – «ՀԱՅԿԱՎԵԼՎ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԿԱՎԵԼՎ», 2006, հաջ. հատ., էջ 157-193: Նույնի՝ Համշենահայ համայնքը որպես ուսգարդարարական գործոն Սովի-Գագրա տարածաշրջանում 1919 թ. // ՄԵՐՂՈՎԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔ III՝ պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու): Եր., 2006, էջ 87-94: Նույնի՝ Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ. – ՊԲՀ, 2006, Ն 1, էջ 181-200:

³ Տե՛ս ԼОРԴԿԻՊԱՆԻՋԵ Մ. Աբխազ և Աբխազ (на груз., русск., и англ. яз.). Тб., 1990. Նաև՝ ՄԱՐԻԽՈՒԱ Ի. Օբ Աբխազ և Աբխаз (историческая справка). Второе, дополненное издание (на русск. и англ. яз.). Сухум (Майкоп, изд. "Адыгейя"), 1993.

կի հիմնահարցի ծագումը, որպես Ռուսական կայսրության կազմալուծման հետևանք: Եթե արխագ պատմաբանները Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կազմում Արխազիայի հայտնվելը դիտում են իրեն մի շարք պատահական դեպքերի հետևանքը և նիանշանակ գնահատում են դա որպես բռնագրավում, ապա վրաց հետազոտողները, Ժխտելով այս պնդումը, համարում են դա բռնական զարգացումների արդյունք: Վրացական պատմագրության մեջ Արխազիան համարվում է Արևմտյան Վրաստանի անրակտելի մաս, նրա պատմական բաղադրիչ, ինչպես Մեզրելիան կամ Իմերեթը: Վրացական հին պետականության կազմում գտնվում էր նաև Արխազիայի տարածքը և դրանով իսկ իմանավորվեց նրա կապի անհրաժեշտությունը նորակազմ Վրաստանի Հանրապետության հետ: Խոսելով վրացական նոր պետականության ձևափորման անհրաժեշտության մասին Նոյ Ժորդանիան 1918 թ., սակայն, արձանագրում էր. «Մեր պետությունը վախճանվել էր հարյուր տարի առաջ և նրանից որևէ բան չի մնացել...»⁴:

Ռուսական կայսրության փլուզումից հետո վրացական նոր պետականության կազմում Արխազիայի հայտնվելու գործում ուրույն դեր էին ունեցել մի շարք պայմանագրեր, որոնք 1918 թ. կնքվել էին արխագ ժողովրդի ներկայացուցիչների և վրացական կողմի միջև: Պայմանագրերի նկատմամբ գոյություն ունեն հակասական տեսակետներ. արխագ պատմաբան Ստանիլավ Լակորբան այս խնդրում ստեղծված կացությունը խճճված է համարում և նկատում, որ նոյնիսկ վրաց հետազոտողների մոտ չկա միակարծություն՝ մի մասը հղում է 1918 թ. հունիսի 8-ի դաշնագիրը, իսկ մյուսը՝ նոյն թվի հունիսի 11-ի⁵: Վրաց պատմաբան Լաշա Բարբաձեն ևս կարծում է, որ «[1918 թ.] հունիսի 11-ի դաշնագիրը հանդիսանում է վիճելի արխագ և վրաց պատմաբանների համար, ինչը պահանջում է հետագա հետազոտում»⁶, ինչպես նաև «...երկու [դաշնագրերի] որոշակի տարբերվող տեքստերի գոյության փաստը պիտի լինի հետագա հետազոտությունների առարկա»⁷: Այդ դաշնագրերը խոստանում էին տրամադրել Արխազիային ներքին ինքնուրույնություն, որի չափն ու ծավալը պահանջում էր լրացուցիչ պարզաբանությունը:

⁴ ЖОРДАНИЯ Н. Н. За два года (1 марта 1917 – 1 марта 1919). Доклады и речи. Тифлис, 1919, с. 112.

⁵ ЛАКОБА С. З. Абхазия после двух империй (XIX-XX вв.). Очерки // Славяно-Евразийские исследования. Вып. 2. Центр славянских исследований при Университете Хоккайдо (Саппоро), 2004. Москва, 2004, с. 54.

⁶ БАКРАДЗЕ Л. Абхазия 1918 года в документах германского МИДа // В сб.: Аспекты грузино-абхазского конфликта. 5. (Материалы грузино-абхазской конференции: «Преемственность культур в контексте государственного строительства». Адлер 26-28 августа 2000 г.). University of California, Irvine, 2001, с. 339.

⁷ Նոյն տեղում, էջ 341:

ნიუს⁸: Խնეրի բարეფიცეამբ էր պაյմანაվირქად, որ մինչև անգամ միևնույն վրաց պատմաբանը հայտնում է երկու զգուշադիպող տեսակետ նույն խների վերաբերյալ: Այսպես, Ավթանդիլ Մենքեշաշվիլին նախ գտնում էր, որ 1918 թ. հունիսի 8-ի դաշնագիրը խոստանում էր «տրամադրել ինքնավարություն Արխագիային, թեև դրա գործնական իրականացումը հետաձգվել էր»⁹, «Քվում էր, թե դրանից հետո չկար որևէ խոչընդոտ Արխագիայի ինքնավարության իրավական կարգավորման համար: Այնուամենայնիվ դա տեղի չընեցավ»¹⁰: Հետագայում նա արդեն պնդում է՝ «Հունիսի 8-ի դաշնագրով Արխագիային տրամադրվել էր լայն ինքնավարություն»¹¹: Ներկա աշխատությունում մենք փորձել ենք պարզաբանել իիշյալ հարցերը և նրանց շուրջ ծագած խնդիրները:

Տարբեր գնահատականներ տվող կողմերը գերադասում են վկայակոչել միայն այն նյութերն ու փաստարդերը, որոնք հաստատում են իրենց առաջադրած տեսակետները, սակայն երբեմն անտեսում են կարևոր նշանակություն ունեցող այլ առյուրմերի առկայությունը: Միաժամանակ հնարավոր չէ շիամածայնել U. Լակորայի հետ, որն անտեղի է համարում այն կշտամբանքները, թե արխազ զիտնականների աշխատությունները տառապում են ոչ պատշաճ վավերագրական հիմնավորմանը, քանի որ 1992 թ. վրաց-արխազական զինված հակամարտության հետևանքով ոչնչացվել էին Արխազական Պետական Կենտրոնական Արխիվը, ինչպես նաև Արխազական Սարգլումի և Արխազական Դ. Ի. Գուլիայի անվ. լեզվի, գրականության և պատմության զիտահետազոտական ինստիտուտի արխիվները¹²: Այդ անդառնայի վճարի մասին հայտնում են նաև այլ հեղինակներ¹³: 2003 թ. Մոսկվայում կայացած վրաց և արխազ պատմաբանների հանդիպման ժամանակ բարձրացվել էին մի շարք խնդիրներ, որոնցից էր նաև Թբիլիսիի պատմական արխիվ-

⁸ Տես ГАМАХАРИЯ Д. – ЧАНИЯ В. Аппексия Грузии и розыгрыши "абхазской карты". – "СВОБОДНАЯ ГРУЗИЯ" (այսուհետև՝ СГ), 2.VII.1991.

⁹ МЕНТЕШАШВИЛИ А. Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии 1917-1921 гг. Тб., 1987, с. 117-118. Նաև տես՝ МЕНТЕШАШВИЛИ А. – СУРГУЛАДЗЕ А. Только факты и документы. – "ЛИТЕРАТУРНАЯ ГРУЗИЯ" (այսուհետև՝ ЛГ), 1989, N 11, с. 151.

¹⁰ МЕНТЕШАШВИЛИ А. Октябрьская.., с. 119.

¹¹ Նույնի՝ Грузино-абхазские отношения в первой четверти XX века// В сб.: Расследование по истории Абхазии / Грузия. Тб., 1999, с. 266.

¹² ЛАКОБА С. З. Абхазия после двух империй, с. 45. Նաև տես՝ История Абхазии. Учебное пособие под ред. ЛАКОБА С. З. Гудаута, 1993, с. 406-407.

¹³ Տես КРЫЛОВ А. Б. Постсоветская Абхазия. М., 1999, с. 251. Նաև՝ ШНИРЕЛЬМАН В. А. Война памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003, с. 413. Նաև՝ КОЛБАЯ Г. Грузино-абхазское противостояние. – "АЗИЯ И АФРИКА СЕГОДНЯ", 1995, N 3, с. 24.

Անդրից արխագ զիտնականների օգտվելու պահանջը, քանզի Սովորումի արխիվների ոչնչացման հետևանքով լուրջ դժվարություն է առաջացել հետագա զիտահետազոտական աշխատանքների համար¹⁴:

Վրաց և արխաց պատմաբանների ուշադրությունն ամբողջովին սեռվում է փոխադարձ հարաբերությունների վրա, միաժամանակ անտեսվում է Արխազիայում բնակվող այլ ազգությունների հերակատարումը: Հեղինակներից քչերն են անդրադառնում ուսումնասիրվող հիմնահարցի խորքային կողմերին, իսկ մի մասը հակված է վրաց-արխազական հարաբերությունները ներկայացնել միայն բացասական հետևանքների տեսակետից: Հետազոտվող ժամանակաշրջանում Արխազիայի կարգավիճակի խնդիրը դարձել էր միջազգային հարաբերությունների առարկա: Այդպես, վրաց և արխաց պատմաբանները տարբեր գնահատական են տալիս Օսմանյան Թուրքիայի գործոնին և Արխազիայի նկատմամբ երիտրուքական կառավարիչների ուսնագործուներին: Արխաց հեղինակները հակված են լիովին անտեսել 1918 թ. բուրքական վտանգն Արխազիայի ժողովուրդների համար և փորձում են գտնել Թուրքիայի նվաճողական քաղաքականության մեջ դրական միտումներ արխաց ժողովոյի պատմության համար¹⁵: XX դարի սկզբին տեղի ունեցած քաղաքական զարգացումների մնայուն և շարունակական բնույթի մասին¹⁶ են վկայում նաև արդի իրավիճակին տրվող գնահատականները, որ «...բուրք-արխազական հարաբերությունների զարգացումն անմիջականորեն առնչվում է նաև Արխազիայի հայ համայնքի անվտանգության և բարեկեցության հիմնախնդիրներին»¹⁷:

1917-1921 թթ. Արխազիայի կարգավիճակի հիմնահարցի, ինչպես նաև այդ համատեքստում Վրաստանի կառավարության վարած քաղաքականության վերաբերյալ որոշակի հետազոտական աշխատանքներ կատարած հեղինակները մշակել են երկու հիմնական հայեցակարգ՝ «Վրացական» և «արխազական»: Ըստ վրաց հետազոտող Զ. Շատիրիշվիլու, «չկա միասնական արխազական պատմություն: Առկա է հատկապես արխազական տեսակետից գրված արխազական պատմություն: Եւ կա վրացական տեսակետների վրա հիմնված Արխազիայի «վրացական» պատմություն»¹⁸:

¹⁴ Аспекты грузино-абхазского конфликта 10. Время перемен. University of California, Irvine, 2005, с. 280-281.

¹⁵ История Абхазии, с. 299-300.

¹⁶ Դրա մասին են խոսում նաև արխաց պատմաբանները՝ ասելով. «Сейчас очень многое перекликается с событиями "смутного времени" 1917-1921 гг.». Стін նույն տեղում, էջ 405:

¹⁷ ՎԵՐԱՆՅԱԼ Կ. Արխազիան աշխարհադարական շահերի խաչմերուկում. – «21-րդ ԴԱՐ», 2005, թիվ 4 (10), էջ 61:

¹⁸ Аспекты грузино-абхазского конфликта 10. Время перемен, с. 29.

Խորհրդային ժամանակաշրջանում վրաց պատմաբանների ուշադրությունից դուրս էր մնացել XX դարում Արխագիայի իրավական կարգվիճակի շուրջ ծագած խնդիրների ուսումնասիրությունը: Միայն «Վերակառուցման» շրջանում, հայտնի իրադարձությունների հետևանքով, վրաց պատմաբաններ Ա. Մենթեշաշվիլին և Ա. Սուրզուլաձեն փորձ կատարեցին գիտականորեն վերլուծել այդ հարցերի մի մասը¹⁹: Հետազոտություններում Ա. Մենթեշաշվիլին գիտական շրջանառության մեջ դրեց նոր նյութեր, որոնք խորհրդային ժամանակաշրջանում անհայտ էին լայն հասարակության համար²⁰: 1917-1921 թթ. Արխագիայում իրադարձությունների հետազոտման Ա. Մենթեշաշվիլու կողմից մշակված սկզբունքները և մոտեցումները դարձել են «վրացական» հայեցակարգի հիմնաքարը²¹: Վրաց-արխազական հարաբերություններին նվիրված Ա. Մենթեշաշվիլու աշխատությունները, ինչպես հետազոտվող նյութով, այնպես էլ վերլուծություններով ու խնդրի նկատմամբ հեղինակի մոտեցումներով զգայիրեն քաղաքանացվել են²²:

Պատմաբաններ Զեմալ Գամախարիայի և Բաղրի Գոգիայի հետազոտության մեջ ընդգրկված են զգալի ծավալով նյութեր և փաստարդեր²³: Դրանց մի մասը վերաբերում է 1917-1921 թթ. ժամանակահատվածին: Հետազոտությունում տեղ գտած փաստարդերի մի մասը գրքի հեղինակների կողմից հրապարակվել է կրծատ տեսքով: Առանձին դեպքերում նյութերի բովանդակությունը կամ չի հաստատում, կամ էլ ուղղակի հակասում է հեղինակների եզրահանգումներին: Հրապարակված նյութերն ըստ եռթյան չեն արժանացել հետազոտողների կողմից խորն ուսումնասիրության:

Հետազոտող Զուրաք Պապասրիբիի գրքի շարադրանքը գրեթե ամբողջությամբ գտնվում է Ա. Մենթեշաշվիլու, Զ. Գամախարիայի և ուրիշ հեղինակների ջանքերով արդեն մշակած վրացական հայեցակարգի շրջանակներում: Նրա ուսումնասիրության մեջ մեծ ծավալով ընդգրկված են այլ հետազոտություններում մինչ այժմ լույս տեսած գիտական

¹⁹ МЕНТЕШАШВИЛИ А. – СУРГУЛАДЗЕ А. Только факты и документы. – ЛГ, 1989, N 11.

²⁰ МЕНТЕШАШВИЛИ А. Из истории взаимоотношений грузинского, абхазского и осетинского народов (1918-1921 гг.). Тб., 1990.

²¹ Նոյնի՝ Грузино-абхазские отношения в первой четверти XX века // В сб.: Расследования по истории Абхазии / Грузия. Тб., 1999.

²² Նոյնի՝ Исторические предпосылки современного сепаратизма в Грузии. Тб., 1998.

²³ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Абхазия – историческая область Грузии (исторические документы, материалы, комментарии с древнейших времен до 30-х годов XX века). Тб., 1997.

64) ιπτερρ, ηρηνδρ 6ικαυτμαδρ, αγηιωαμθηναγηβηψ, Ζ. Φιαψαυρχηρβι δηρα-
ληρηιι ε ιπτρψψ ψεραρερδηιιρ: Απωψειλωψει ωρηι 6ε 6ικαυτιιψ ψαψε-
ρωρερηρι αρηιευτακωαν կρδωտпιմները՝ αγηι 6ωαսվ. ηρηнδρ շեն տեղա-
փոլփում հեղինակի կառուցած ուրվագծի մեջ: Կարևոր 6շանակություն
ունեցող աղբյուրների մի ամբողջ շարքը դուրս է մնացել հետազոտութ-
յան դաշտից: Բացի այդ, գյուրթյուն ունեն առանձին փաստազրակωան
սխալներ, օրինակ՝ որոշակի խառնաշփոր է տիրում Արխագիայի ներ-
կայացուցական մարմնի անηամների քաղաքական և ազգային պատ-
կանելիության հարգում²⁴:

Պատմաբան Գեորգի Զիծարիան առաջինն էր փորձել ամբողջացնել XX դարի սկզբներին Վերաբերող Արխազիայի պատմությունը: Նրա աշխատությունները հիմնված են զանազան աղբյուրների վրա²⁵: Հեղինակը, սակայն, իր ուշադրությունը հիմնականում սևեռէ էր այն խնդիրների վրա, որոնք դրւում չեն զայխս «հեղափոխական շարժման» հետազոտության շրջանակներից: 1917-1921 թթ. ժամանակահատվածում նա հիմնականում հետազոտում է խորհրդային իշխանության համար պայքարի պատմությունը²⁶: Գ. Զիծարիայի ուսումնասիրություններում տեղ գտած տեղեկությունները, իրենց կարևորությամբ հանդերձ չեն տալիս 1917-1921 թթ. իրադարձությունների ամբողջական պատկերը: Խորհրդային պատմաբանի աշխատություններում միանշանակ բացասական է զնահատվում Վրաստաճի Դեմոկրատական Հանրապետության «մենչկիկյան» կառավարության քաղաքականությունն Արխազիայում, հետևապես Գ. Զիծարիայի հետազոտությունները կարելի է դասել «արխազական» հայզակարզն արտահայտող գործերի շարքին:

Հետխորհրդային շրջանում Արխագիայում 1917-1921 թ. տեղի ունեցած իրադարձությունները շարունակել է ոստինասիրել Ս. Լակորան, որն արդի պատմագրության մեջ կարող է համարվել «արխագական» հայեցակարգի հիմնադիրը²⁷. Ս. Լակորան չի նկատում թուրքա-

²⁴ Տես Տագավորության Կայուրած Խարչայի բառակազմության տաճախմբական աղյօթականության մասին օրենքը՝ 1917-1993 թվականի դաշտում, 2007.

²⁵ ДЗИДЗАРИЯ Г. А. *Очерки истории Абхазии (1910-1921 гг.)*. Тбилиси, 1963. Նոյնի՛ *Формирование дореволюционной абхазской интеллигенции*. Сухуми, 1979. Նաև *История Абхазской АССР (1917-1937 гг.)*, под ред. ДЗИДЗАРИЯ Г. А. Сухуми. 1983.

²⁶ Ҿипјібі. Роль Советов и "Киараза" в истории революционной борьбы в Абхазии (1917-1921 гг.). Сухуми, 1971. Ҿипјібі. Советская власть в Абхазии в 1918 году. Сухуми, 1972. Ҿипјібі. "Киараз" (Об Абхазской революционной крестьянской дружине 1917-1921 гг.). Сухуми, 1981.

²⁷ ЛАКОБА С. З. Очерки политической истории Абхазии. Сухуми, 1990. Նոյ-
ին՝ Столетняя война Грузии против Абхазии. Гагра, 1993. Նոյին՝ Абхазия после
двух империй (XIX-XX вв.). Очерки //Славяно-Евразийские исследования. Вып. 2.

կան վտանգի գործոնը Արխագիայի ժողովուրդների համար: Այդ դրվագը բխում է պատմաբանի պնդումից, թե 1918 թ. բուրքական աջակցությամբ հռչակած հյուսիսկովկայան լեռնականների հաճրապետության կազմի մեջ մտել էր նաև Արխագիան²⁸: Հետևապես Արխագիայի հայտնվելը Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության սահմաններում նա դիտում է իրեւ բռնազավթում²⁹: Այդ սկզբունքը դարձել է «արխագական» հայեցակարգի հիմնաքարը³⁰, որը հնչում է նաև պաշտոնական փաստարդերում³¹:

«Արխագական» հայեցակարգի շրջանակներում է գտնվում նաև իրավաբան Տարաս Շամբայի և կենսաբան Ավեքսանոյ Նեպրոշինի համատեղ աշխատությունը, որը նվիրված է Արխագիայի պետական ինքնուրույնության իրավական հիմքերի հիմնավորման խնդրին³²: 1918 թ. մայիսից մինչև 1921 թ. փետրվարը Արխագիան, ըստ նրանց, դիտվել է իրեւ Վրաստանի Հանրապետության կողմից «զավթած» երկիր: Հեղինակները որոշակի հակասությունների մեջ են հայտնվում, հայտարարելով Արխագիան որպես և՛ լեռնականների անկախ հանրապետության դաշնային անդամ, և՛ միջազգային իրավունքի սուբյեկտ, իսկ նրա բնակչությունը՝ որպես Ռուսաստանի քաղաքացիներ: Չլինելով մասնագետներ պատմության ասպարեզում S. Շամբան և Ա. Նեպրոշինը քոյլ են տալիս մի շարք վրիպումներ³³: Հեղինակները հիմնականում հղում են այն նյութերը, որոնք արդեն լուսաբանվել են գրականության մեջ:

Центр славянских исследований при Университете Хоккайдо (Саппоро, 2004). Москва, 2004.

²⁸ Նույնի՝ *К вопросу о Кавказской конфедерации. Абхазия и Грузия: вместе или врозь?* // В сб.: *Грузины и ахазы: путь к примирению*, под ред. КОППИТЕР-СА. Москва, 1998.

²⁹ Նույնի՝ *Предисловие. — Материалы по истории Абхазии*. Вып. 1-й. Сухуми, 1990. Վրաց հետազոտողները հականառում են այս տեսակետին՝ ասելով. «Необходимо отметить, что сама постановка вопроса об "оккупации" несостоятельна ни с научной, ни с политической, ни с правовой точек зрения, ибо Абхазия — историческая область Грузии, её неразрывная часть». Տես ΓΑΜΑХΑΡΙΑ Դ. — ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 75:

³⁰ Գенерал Мазնև և оккупация Абхазии (ֆ7) // История Абхазии, с. 296-299.

³¹ Տես Постановление Верховного Совета Абхазской АССР «О правовых гарантиях защиты государственности Абхазии» (25 августа 1990 г.) // В сб.: *Абхазия: Хроника необъявленной войны. Часть 1-я*, Москва, 1992, с. 17.

³² ՇԱՄԲԱ Տ. Մ. — ՆԵՊՐՈՍԻՆ Ա. Յ. *Абхазия: Правовые основы государственності и суверенитета*. Изд. 2-е, переработанное. М., 2004.

³³ Այսպէս, հակարիվնով պատմական փաստերին, գրի հեղինակները գրում են, թե տեղի է ունեցել «изгнание в 1920 г. грузинских войск с территории Абхазии силами Добровольческой армии генерала А. И. Деникина». Տես նոյն տեղում, էջ 117:

* * *

Ավարտելով Կովկասյան պատերազմը 1864 թվականին՝ Ռուսական կայսրությունը վերջնականորեն ամրապնդեց իր կազմում Կովկասին հարակից Սև ծովի ափը: Դրա հետևանքը եղավ նաև հազարավոր լեռնականների հեռանալը դեպի սուլթանական Թուրքիա: Բազմաթիվ արխազներ, դժողով լինելով Արխազական ինքնավար իշխանապետության վերացումից, արտագործեցին իրենց պատմական հայրենիքից նաև 1877-1878 թթ. ռուս-բուրքական պատերազմի ընթացքում³⁴: Միաժամանակ նվազված երկրամասն արագորեն բնակեցվում էր էքնիկ տարրեր խմբերով (ռուսներ, հույներ, մեզրեներ, էստոնացիներ, գերմանացիներ), այդ թվում Թուրքիայից գաղթած հայերով³⁵: XIX դարի վերջերին հայոց ներգաղթը զգալի աճեց, մանավանդ 1894-1896 թթ. կոտորածների հետևանքով: Տրավիզոնի Վիլայեթից եկած հայ զաղքականները հիմնականում բնակվում էին Սուխումի և Սոչիի շրջաններում: Թուրքիայի հայության երկրորդ նշանավոր արտահոսքը դեպի Արխազիա պայմանագրոված էր 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնով: Հայերի վերաբնակեցմանը նպաստում էր ռուս գործարաբների աջակցությունը, քանի որ նրանք լավատեղյակ էին ծխախտագործության ասպարեզում համշշենահայերի ունեցած համբավին³⁶: Հայ գյուղացիները կապալա-

³⁴ АНЧАБАДЗЕ 3. В. Очерк этнической истории Абхазского народа. Сухуми, 1976, с. 85.

³⁵ Մինչ օրս Արխազիայի հայերից շատերը, հատկապես տարեցները, կոչում են իրենց տրավիզոնցի, օրոնցի, սամսոնցի և ճամիկցի: Տես ԿՐԵԼՈՎ Ա. Յ. Նշվ. աշխ., էջ 12: Արխազիայի հայերի մի մասը հայտնի է նաև իրեն «հանչեցից»: Հանչենահայերն ապրել են պոնտական ամենաքարքը լեռնալանջերին, Քաջարար կոչվող լեռնան ստորոտում, կիսանկախ և ինքնուրույն լցանքով: Թուրքական ազգահաղած քաղաքականության հետևանքով համշշենահայերի մեծ մասը ստիպված է եղել հեռանալ իր հայրենի ոստաններից՝ Համշենից և նրան հարակից Սյուրմեն գավառներից ու հիմնական բնակուրյուն հաստատել Տրավիզոն, Օրոն, Սամսոն գավառներում: Տես ԽԱՅԻԿՅԱՆ Լ. Ս. Էջեր համշշենահայ պատմությունից. — «ԳԱՎԱԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍՏԱՍԱՐԱՆԻ», 1969, N 2, էջ 115-144: Նաև՝ ՄԵԼՔՈՆԵՑԱՆ Ա. Ա. Համշէր՝ պատմաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր) // Համշէր և համշշենահայություն. Երեսան-Պեյքուր, 2007, էջ 25-37: Նաև՝ ԹՈՈՒԼԱԶՅԱՆ Բ. Համշշենահայեր. — «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ», 24. V.1968: «Համշշենահայեր» եզրը գրաւանուրյան մեջ երբեմն գործածվում է ինչպես ողջ Տրավիզոնի, այնպես էլ ամբողջ արխազականության հասցեին: Տվյալ դեպքում, թերևս այդ տերմինը կարելի է կիրառել նիսայն Վերապահուումվ՝ նկատի առնելով ողջ տրավիզնահայության (ի դեպ, արխազականության մեջ իրեն «ոտքափոնցի») են հայտնի ոչ թե Տրավիզոն քաղաքի, այլ նրա շրջակա գյուղերի բնակիչները, որոնք Համշենից են զարդել. մինչդեռ Տրավիզոնի բնիկ հայ քաղաքացիները Անիի գաղրին էին (վերաբերում) և արխազականության միջավայրում համշշենական քարքանի երեք ճյուղի գործածության հանգամանքը: Տես ԱԾԱՌ-ՅԱՆ Հ. Քննություն Համշշենի բարբառի, Եր., 1947, էջ 5-10:

³⁶ ЧУМАЛОВ М. Ю. Этнокультурное развитие армян в Абхазии // В сб.: Малые и дисперсные этнические группы в Европейской части СССР. М., 1985, с. 106-107, 109.

կարձի հիմունքներով կալվածատերից վերցրած հողատարածություններում կարծ ժամանակամիջոցում կառուցեցին բնակավայրեր, չորացրին ճահճուտները, խիտ անտառներից մաքրած տարածքներում հիմնեցին ծխախոտի տնկարաններ: Արխագիշայում հաստատված հայերի մասին ազգագրական իր ուսումնասիրույթան մեջ* Հ. Սուրայյանն այսպես է բնորոշում նրանց դերը այդ երկրամասի տնտեսական զարգացման գործում. «Կարելի է ատել, թե Կովկասյան ափերի ծաղկելն ու առաջ գնալը սկսվում է հայ զարդարականների զալու օրից: Այդ հաստատապես նկատվում է այսօր Սովորության շրջանում, որ ութունական թվերի սկզբներին, երբ դեռ նոր էին սկսվել հայերը զարթել այդ կրոնները, մի աննշան, իետ ընկած, ամայի ու ալերակ տեղ էր. այսինչ այսօր Կովկասյան ափերի ամենածաղկած տեղերից է, իսկ բուրունի արդյունաբերությունով՝ առաջինն է ամբողջ Ռուսական»...»

Հայերի գալուց հետո՝ ամեն տեղ Կովկասյան ափերում, շարժում, կենդանություն է ընկնում: Հետզիւտե առաջվաճ դարեւոր ճահիճներն ու անտառները մաքրվելով, նոր նոր սիրուն արտեր ու պլանտացիաներ են բացվում. հարյուրավոր դեսյատիններով նոր վարելահողեր են ավելանում այդ վայրի ու խիտ անտառներով ծածկված երկրի մեջ: Եւ ամենա մեծ նասով այդ բոլոր արտերը բուրքահայերի ձեռքովն են փորվել ու բացվել...»³⁷: Հայ գյուղացիների ձեռքով, քրտնաջան աշխատանքի շնորհիվ, կոտակվել էին Սուխումի շրջանի լավագույն հողաբաժինները, և նրանք կարողացան առավելապես բարձր եկամուտով պահովել հողատեր արխագ իշխաններին³⁸: Տրավիզոնահայերն առաջինն էին, որ ծխախոտամշակությունը ներդրեցին Արխագիայում: Նրանց շնորհիվ ծխախոտը դարձավ երկրագործական տեղի արտադրության առաջնակարգ և ամենաշահութաբեր բնագավառներից մեկը³⁹: Մի քանի տարում հայերի շնորհիվ Արխագիայի ծխախոտագործությունն այնպիսի բուռն զարգացում ապրեց, որ նրանց աճեցրած բարձրորակ ծխախոտը «նվաճեց» ոչ միայն Ռուսաստանի շուկան, այլ նաև Վերջինս սկսեց ծխախոտ արտահանել Եվրոպա: Հայերը մեծ դեր ունեցան

* Համշենցի հայեր, Թիֆլիս, 1901:

³⁷ Տես ԽՎԳԻԿՑԱՆ Լ. Ս. Աշխ. աշխ., էջ 143: Վերաբնակության հաստատած հայերի մասին նաև տես Черноморские армяне // В сб.: Братская помощь пострадавшим в Турции армянам. 2-е издание. Москва, 1898, с. 556-559.

³⁸ «ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ», 28. III. 1919:

³⁹ Стю ФОН-ДЕРВИЗ Н. В. *Сухумский округ* (Записки Кавказского отдела Императорского Русского географического общества. Кн. XXV, вып. 8-й). Тифлис, 1906, с. 34, 50.

ինչպես Արխագիայի, այդպես էլ Սև ծովի ողջ հյուսիս-արևելյան երկրամասի տնտեսական զարգացման գործում⁴⁰:

Արխագիայի հայ բնակչության բվարանակը, ըստ տարբեր տեղեկությունների, տատանվում էր 25000⁴¹ մինչև 30000⁴²: Ուստական իշխանությունը, սակայն, երկրամասի հայ բնակչությանը հաճարում էր ժամանակավոր վերաբնակիչ և ոռուսաստանյան հպատակություն չէր տրամադրում⁴³: Ավելին, նրանց կարող էին, ըստ ցարական կառավարության 1898 թ. մայիսի 29-ի որոշման, ցանկացած ժամանակ ետ ուղարկել Թուրքիա: «Ուստ օստարատեաց կառավարութիւնը ամենէն վնասակար մրցակիցը կը համարէ հայերը: Անոնք տեղատրուած են մեծ ու փոքր մասնաւոր ու լաւագոյն հողերու վրայ ու իրենց ծխախոտագործութեամբ անուղղակի կերպով արգելվ կ'ըլլան ոուս զաղքականներու տեղատրման, ասպարեզը բռնած են: Ուստ զաղքականները պետական հեռու հողերու վրայ կրնան տեղատրուի եւ իրենց կաղամքի ու գետնախնձորի մշակութեամբ չեն կրնար մասնաւորներու հողերու վրայ բնակիլ եւ վարձ վճարել հողատերերուն»⁴⁴: Ցարական իշխանությունները, ունենալով հատուկ նպատակ՝ ոուսացնել Սև ծովի ափը, մեջնադեռ ձեռք էին առնում հալածական միջոցներ վարձակալ հայ և հույն թուրքահպատակ զաղքականների դեմ, նրանց արհեստական միջոցներով դուրս հանելու համար⁴⁵: «1904-ին Սովորումի եւ Սօչիի շրջանի հայ զիւղացիներուն կը յայտարարուի թէ հունձքը առնելին յետոյ, այլևս չեն կրնար զիւղերը մնալ ու պէտք է հեռանան»⁴⁶: Վարչակազմը մերժում էր տեղի հայ զիւղացիների դիմումները, առաջարկելով Սիրիք

⁴⁰ МИНАСЯН М. Переселение ашленских армян на Черноморское побережье Кавказа и первые шаги их хозяйственной деятельности (последняя четверть XIX века). — «ВЕСТНИК ОБЩЕСТВЕННЫХ НАУК АН АрмССР», 1977, № 1, с. 64-73. Ըստ ոուս հետազոտողի, «արխագիայության 87 %-ը զբաղվում էր զյուղանախտական պարունակություններու միջոցներով; արիստում, արիտեստավորական և արդյունաբերական արտադրույթուններում ընդորկված [հայազգի] անձանց մասնաբաժինը համապատասխանարար չէր գերազանց 7 %-ը... արխագիայերի 1/6 բնակիում էր թ. Սովորումի սահմանագծում, արիստարայունաբերական խավը երեք քի ենել այդ խնդիրի գործը, ինչպես [ոյս ենել է] հայերի միջև Կովկասի այլ քաղաքներում» (Տես ԿՄԱԼՈՎ Մ. Ի. Նշվ. աշխ., էջ 108-109):

⁴¹ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 11:

⁴² Նույն տեղում, թ. 60:

⁴³ Նույն տեղում, թ. 11-12:

⁴⁴ Արեմանահայ զարդը մը Կովկասի մէջ. — «ՀԱՅՐԵՆԻՔ» (Բուստոն), 1930, դեկտեմբեր, էջ 148:

⁴⁵ 1895 թ. շրջաբետ գնդ. Բրակերը առաջարկում էր անհապաղ դաշտեցնել նաև մեզբելների վերաբնակեցումը, որպեսզի Արխագիայի հողային ֆոնդի մեծ մասը պահպանի ոուս ազգության մարդկանց համար (История Абхазии, с. 208): 1897 թ. մարդահամարը ցոյց տվեց, որ Արխագիայում բնակվող 25875 վրացիներից՝ 23810 մեղքելներ էին (նոյն տեղում, էջ 209):

⁴⁶ Արեմանահայ զարդը մը Կովկասի մէջ. — «ՀԱՅՐԵՆԻՔ», 1930, դեկտեմբեր, էջ 149:

զաղբել և այնտեղ իոդ ստանալ: Քանի որ այդ քանը խոշոր կալվածատերերի շահերին վճասակար էր, ապա օտարահպատակ հայերի և հույսների դիմումները պաշտպանություն էին գտնում նրանց կողմից⁴⁷: Կայսերական Գյուղատնտեսական Ընկերության Կովկասի ճյուղի մի շարք անդամները, մեծահարուստ արխազական իշխան Ալեքսանդր Շերպաշչիձեի գլխավորությամբ, դիմել էին փոխարքային: «Իշխան Շերպաշչիձե անկեղծ ու խրոխտ շեշտով մը յայտնեց, որ հայ երկրագործ զաղբականները կեանք ու ջիղ տուին մեռած շրջանի մը: Եթէ անոնք ըլլային, կալուածատերերը դրամի երես պիտի չտեսնեին եւ շատոնց սնանկացած պիտի ըլլային: Կ'ուզուի ոուս զաղբականները թերել ու տեղատրել անոնց տեղ, բայց ի՞նչ կրնան տալ ոուս զաղբականները մեզ՝ հողատէրուս: Աւելորդ անտառ չմնաց որ փայտ կտրեն ծախտեն. կը մնայ որ կաղամք տնկեն...»⁴⁸: Այս միջամտության շնորհիվ, բարեքախտաբար, արտաքսումն անորոշ ժամանակով հետաձգվել էր, իսկ տարիներն այդպես անցնում էին...

Փոխչահավետ հարաբերությունների հաստատումը նպաստում էր արխազ հողատերերի և հայերի միջև բարիդրացիական կապերի ամրապնդմանը: Եւ ոչ միայն այդ պատճառով: Այսպես՝ արխազ ազգագրագետ և լրասպորտիչ Սիմոն Բասարիան XX դարի սկզբին գրում էր, որ «հայերը... շատ զգոյշ են արխազների նկատմամբ, ընդունում են արխազների պատմական, իրավական և բնիկության իրավունքները տարածի նկատմամբ, իրենց Արխազիայում համարում են հյուր, հաճույքով բացում են իրենց դռները արխազների առջև և ամեն կերպ փորձում են ընդօրինակել նրանց հյուրափորտյունը: Հայերի մեծ պատվին պետք է վերագրել նաև այն, որ այն միակ ազգն էր Արխազիայում, որը խնամքով էր վերաբերվում հնագործ արխազական տեղանուններին. Նրանց բոլոր զյուղերը կրում են հնագործ արխազական տեղանուններ»⁴⁹: Հայկական և արխազական համայնքների միջև հարաբերությունները, այնուամենայնիվ, ընդիմանուր առճաման դրական էին: Արխազների և մեզրելների շահերը, սակայն, բախվում էին, քանի որ վերջիններս, մշակելով եզիապտացորեն, չկարողացան շահավետ հարաբերություններ հաստատել արխազ հողատերերի հետ: Մեզրել զյուղացիների միջավայրում նպաստավոր ասպարեզ էր ստեղծվել հեղափոխական և սոցիալիստական բարոզության համար, ինչը ևս անընդունելի էր արխազ ազնվականների համար⁵⁰: 1905 թ. իրադարձությունները

⁴⁷ «ԱԾԽԱՏԱՒՈՐ», 13. V. 1919:

⁴⁸ Արևմտահայ զաղոր մը Կովկասի մէջ. – «ՀԱՅՐԵՆԻՔ», 1930, դեկտեմբեր, էջ 151:

⁴⁹ Տե՛ս ՍԿԱԿՈՎ Ա. Արխազիայի հայեր անցեալում և ներկայում // Համշեն և համշենահայորին. Երևան-Պէյքոր, 2007, էջ 82:

⁵⁰ ԴԱՄԱХԱՐԻԱ Դ. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 393-395, վալ. N 213.

արխագներն ընկալեցին իբրև «վրացական հեղափոխություն» և աջակցություն էին ցուցաբերում ցարական կառավարության հակահեղափոխական միջոցառումներին⁵¹: «Սուխումի և ընդիանքապես ամբողջ շրջանի համար սուր հարց է վրաց-արխազական հարաբերությունը»⁵², - գրված է վրաց թերթի էջերում:

1864-1917 թթ. Արխազիան հետզիետե ներքաշվեց Ռուսական կայսրության ընդիանուր քաղաքական և տնտեսական համակարգի մեջ, ունենալով սոցիալ-տնտեսական ու մշակութային զգալի առաջընթաց:

⁵¹ ЛАКОБА С. З. *Абхазия после дней империи*, с. 13.


⁵² «Խաւազիա պյուրըցըլո», 25 օქտոմբեր 1915.

I

**ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԲԽԱԶԻԱՅԻ ԻՆՔՈՂՈՉՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
(ԱԲԽԱԶԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ)**

Ուստական կայսրության անկումից հետո նրա ամբողջ տարածքում, այդ թվում՝ Այսրկովկասում, իրատապ հարց է դատնում ազգային խնդիրը: 1917 թ. ապրիլի 12-ի ՕՉԱԿՈՍ-ի հոչակազրով ազգային խնդրի լրացման հետաձգվել էր մինչև Համառուսաստանյան Սահմանադրության ժամանակը:⁵³ Այս մեկնաբանության հետ համերաշխ

⁵³ 1905-1907 թթ. Ուստական առաջին հեղափոխության տարիներին առաջ քաշվեցին ազգային-երեխի փարչատարածքային նոր բաժանման, Այսրկովկասում և ամբողջ կայսրությունում դաշնային կառուցվածք ստեղծելու ծրագրեր: Այսրկովկասի տարածքի վերածնավորման հարցը, ըստ երեխական պատկանելիության, պաշտոնավես արժանացել էր բնակչության դիմում կայսերական Ուստական անդաման շեմին: 1916 թ. հոկտեմբերին Թիֆլիսում գումարվեց խորհրդակցություն, որը նվիրված էր երկրամասում գենստվայական մարմինների ստեղծման խնդրին: Միջոցառություն մասնակից էր նաև պատվիրակություն Սուլյանի շրջանից իշխան Ալեքսանդր Շերվաշիձեի գլխավորությամբ: Անհնանուստաց լինելով պատվող լուրերով, թե նախապատրաստվում է շրջանի միավորունք Սևոլյան նահանգին, Արխազիայի բանագնացներն իրենց հերթին առաջարկեցին Սուլյանի շրջանից ստեղծել առանձին նահանգ («աշածու լա չեզրցիձա», 1916, N 23, զ. 4): Ա. Շերվաշիձեն, լինելով Սուլյանի բարձրագործիք, հանդիսանում էր այդ տարրերակի հիմնական ջատագովներից մեկը (ШԵՐՎԱՇԻՁՅԵ Ա. Գ. Օ պրօեօթանու ու ուժաւու առաջարկով՝ «ЧЕРНОМОРСКОЕ СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО». Սուխում, 1914, N 10-11, c. 581-586. — ՏԵ՛Ն ՃՅԱՇՅԱՐԻ Գ. Ա. Փօրմրօթանու.., ս. 274), բանի որ 1914 թ. բարպարագ դրում դիմում դիմել էր Կովկասի փոխարքային սույն առաջարկով («ЧЕРНОМОРСКОЕ СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО». Սուխում, 1914, N 7-9, c. 477-484; «СУХУМСКИЙ ВЕСТНИК», 6. XII. 1915; «ԿՈՒԱԿՍԿԻԵ ՎԵСՏԻ», 19. XII. 1915. — ՏԵ՛Ն ՃՅԱՇՅԱՐԻ Գ. Ա. Փօրմրօթանու.., ս. 274): Հաջորդ անգամ նոյն բնույթի հարցերը քննարկման նյութ էին դարձել 1917 թ. հուլիսի 1, 2 և 8-ին Պետրոգրադում: Խորհրդակցությունները իրավիրվել էին Ուստականի Ժամանակավոր կառավարության ներքին գործերի նախարարի գլխությամբ՝ Այսրկովկասի համար գենստվայական կառավարման սկզբունքները մշակելու նպատակով: Անմիջապես հարց ծագեց, թե արդյոք գենստվաներ պետք է նույնական Այսրկովկասի արդյունք իմակ գոյություն ունեցող վարչական միավորներում, թե անհրաժեշտ է կատարել երկրամասի վարչական վերաբարձրություն: Այսրկովկասի ներքին վարչական սահմանների փոփոխության հարցին մասնակիցները տվեցին դրական պատասխան, և բոլոր ազգույթների ներկայացուցիչներն առաջին անգամ ընդունեցին, որ հարցը պետք է լուծվի երեխական սկզբունքով: Խորհրդակցության ընթացքում ընտրվեց հանձնաժողով, որը պետք է մշակել երկրամասի նոր վարչատարածքային բաժանման նախագիծը: Նրա նախագահ էր ընտրվել պետական իրավունքի պրոֆեսոր Զորաք Ավարզը (նաև՝ Ավալիշվիլի): Այդ հանձնաժողովի կազմում ընդգրկված էին Գ. Լորրիփիանձեն, Ս. Ավալիշանին՝ վրացիներից, Ա. Շահիսարունյանը, Ալ. Խատիսյանը՝ հայերից, Ֆ. Խան Խոյսկին, Ս. Շեխտվալամովը՝ Կովկասի



Էմ Վրաց սոցիալ-դեմոկրատները (մենչևիկներ) ⁵⁴: Նրանց առաջնորդ Նոյ Ժորդանիան առաջարկում էր երկրամասում ստեղծել վարչական միավորների երկու տեսակ: Առաջինը՝ ազգային-տարածքային, որը պետք է ներկայացված լիներ երեք ինքնակառավարվող մարզերով՝ հայկական, վրացական և թաթարական, որոնց սահմանների հարցը պետք է որոշվեր տեղի ազգությունների իրական բնակությամբ: Երկրորդ տեսակի մեջ առանձնացվում էմ խառը բնակչություն ունեցող տարածքները, որտեղ յուրաքանչյուր ազգության պետք է տրամադրվեր մշակութային ինքնավարություն: Այս թեզերը հավանության արժանացան 1917 թ. հովհանքի 1-ին Կովկասի Խորհրդական համագումարում ⁵⁵: Այսայսով, Վրաց սոցիալ-դեմոկրատները, իրենց առաջնորդի բերանով հայտարարեցին, թե կրավարարվեն ենթադրվող դաշնության մեջ վրացաբնակ մարզի համար ինքնակառավարման սկզբունքով: Այդ պարագայում, իշխանությունը Վրաստանի տարածքում ենթադրվում էր հանձնել զեմստվայի բնույթ կրող վարչությանը, որի գործունեության իրավական հիմքերը պիտի սահմաննեին Ռուսաստանի դաշնության կենտրոնական մարմինները: Այլ կերպ էր դիտվում ինքնավարությունը: Այն կարող էր լինել երկու հիմնական տեսակի՝ վարչական (սահմանափակ) և քաղաքական (լայն): Ըստ տարածքած տեսակետի, ինքնավարությունն արտոնում էր սեփական օրենսդրական համակարգի գոյության իրավունքը ⁵⁶:

Վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցությունը պահեցում էր մինչև համառուսաստանյան դաշնության ստեղծումը տրամադրել Վրաստանին ազգային-տարածքային ինքնավարություն ⁵⁷: Ըստ ֆեդերալիստների կոնֆերանսում ընդունված քանակի՝ ապագա ինքնավար Վրաստանը պետք է ընդգրկեր Վրաց բնակչության մեծա-

բարարներից, Վ. Զաքարիկը, Ա. Նամիտովը՝ լեռնականներից (ՀԱԱ, ֆ. 223, գ. 1, գ. 61, թ. 1-3: Նաև՝ ՏΥՒԻՅ Բ. Կարաబախսկ կոնֆլիկտ. Եր., 1999, ս. 16): Ժամանակավոր կառավարությունը հանձնարել էր ՕԶԱԿՈՍ-ին բնել հարցը, որի համար էլ 1917 թ. հոկտեմբերի 14-15-ին իրավիրքել էր միջկուսակցական խորհրդակցություն: Չնայած, որ ինքնական ազգությունները կողմ էմ արտահայտվել երեխական սահմանագուման սկզբունքի օգտին, Վերջնական համաձայնությունը շիրականացավ հայ-թաթարական հակասությունների պատճառով (ՀԱԱ, ֆ. 223, գ. 1, գ. 61, թ. 7: նոյն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 104, թ. 2-8: Նաև՝ ԶԱԿԱՆ. Ա. Հայ-վրացական կնճիր. – «ՀԱՅՐԵՆԻՔ», 1928, մարտ, էջ 88-89: Նաև՝ Ադմինістративній передел в Закавказії. – «МОЛОТ», 18.X.1917. Նաև՝ Земство в Кавказе. – «КАВКАЗСКОЕ СЛОВО», 17. X. 1917. Նաև տես ՇԱԽԱ-ՏҮԻՅ Ա. Ադմіністративний передел Закавказского края. Տифլіс, 1918):

⁵⁴ "БОРЬБА", 12. V. 1917.

⁵⁵ ЖОРДАНИЯ Н. Н. Նշվ. աշխ., էջ 29-30:

⁵⁶ Տես Ավտոնомия. – ЭНЦИКЛОПЕДИЧЕСКИЙ СЛОВАРЬ Т-ва "Бр. А. и И. Гранат и Ко", т. 1-й, (1910 г.), с. 326.

⁵⁷ МЕНТЕШАШВИЛИ А. Октябрьская .., с. 46.

մասնությունն ունեցող գավառները, այդ բվում Սովորումի շրջանի մեզ-րելաքնակ՝⁵⁸ հատկածը (Սամորգականը): Վիճելի տարածքների հարցը առաջարկվում էր լուծել հանրաքվեի միջոցով, ուստի Սովորումի շրջանի մնացած մասը (Արխագիա) որպես այդպիսին չէր դիտվում⁵⁹:

Վրացական ազգային շարժման արմատական զանգվածը հանդես ենկավ երկրամասի վրացաքնակ շրջաններին քաղաքական ինքնորոշման իրավունք տալու օգտին: Վրաց ազգային-դեմոկրատների կուսակցությունն առաջարկում էր անհապաղ վերականգնել 1801 թ. խախտված վրաց ժողովրդի քաղաքական իրավունքները: Ի տարբերություն նախորդ երկու կուսակցությունների՝ վերջինս պահանջում էր լայն քաղաքական ինքնավարություն Վրաստանի համար և անդրանիկ համագումարում հայտարարել էր իր երկրի հնարավոր սահմանները, որոնք պետք է ընդունվեն Քարրլի, Կախեթ, Խմերեթ, Սվանեթ, Սամցխե-Սաքարագո, Գուրիա, Մեգրելիա, Արխագիա «աշխարհները»⁶⁰: Ազգային-դեմոկրատները գումարում էին այդ տարածքին նաև Զաքարալայի, Օլիխի և Արդահանի շրջանները: Նրանք խոստանում էին Վրաստանի կազմում ինքնակառավարում տրամադրել վրաց մահմեդականներին և Արխագիային⁶¹: Ազգային-դեմոկրատների մտադրությունը՝ ընդունվելու Արխագիան վրացական ինքնավարության մեջ, հանդիպել էր թշնամական վերաբերմունքի: Արխագ գործիչները պահանջում էին Վրաստանից անջատ ազգային ինքնորոշում, քանի որ արխազները «վրացական ցեղ չեն և բացարձակապես չեն հասկանում վրացերեն լեզուն»⁶²:

⁵⁸ Մեգրելերը, ինչպես նաև վրացիները (բուն բարբելեներ), սվանները, լազերը՝ բարբելական լեզվախմբին պատկանող ժողովուրդներից են:

⁵⁹ Արմաно-ցրցանցիկ Յօրուցուածական կոնֆլիկտ. Եակ, 1919, ս. 6.

⁶⁰ ՇԱՄԲԱ Տ. Մ. – ՀԵՊՐՈՎԻՆ Ա. Յ. Նշվ. աշխ., էջ 86: Արխազներն անվանում են իրենց երկիրը Ավտուա, խև Սոլյամունը Ակուա:

⁶¹ «Եայշարտցյլու», 22 օցնօւ 1917. Ծովը 70 տարի անց Վրաստանի առաջին նախագահ Զիվադ Գամասախորդիան, դիմելով արխագ ժողովուրդին, նույնպես խոստանում էր տրամադրել Արխագիային «վիճակատրք ինքնակառավարում»: Տե՛ս Կոնֆլիկտы в Абхазии и Южной Осетии. Документы 1989–2006 гг. (Составление и комментарии ВОЛХОНСКИЙ М. А. – ЗАХАРОВ В. А. – СИЛАЕВ Н. Ю.), М., 2008, с. 50, док. N 18. Արխագիայի խորհրդարանի նախագահ Վլադիմիր Վրձինբան պատասխան խոսքում նշում է, որ «Վրաստանի Հանրապետության օրենքների իմաստը բնորոշվում է բացահայտ ծառումով՝ փաստացի հավասարեցնել Արխագիան... հասարակ փաշատարածական միավորի» (նոյն տեղում, էջ 119, վավ. N 62):

⁶² По Кавказу: Абхазия. – «БОРЬБА», 21.V.1917. Ազգային-դեմոկրատների տեսակետներն արտահայտող մասնակ պետք էր, թէ, "...абхазцы с древнейших времен, с момента появления национального самосознания на Кавказе, входили в семью картвельских народов и составляли вместе с кахетинцами, имеретинцами, мингрельцами и проч. одну грузинскую нацию. Следует твердо и определенно заявить, что

Ապագա Վրաստանի կարգավիճակի և նրա սահմանների շուրջ վրաց հասարակությունում գոյություն ունեցող տեսակետները ի մի բերելու նպատակով՝ հրավիրվեցին միջկուսակցական խորհրդակցություններ: 1917 թ. ապրիլի 16-ին վրաց կուսակցությունների ներկայացուցիչները համաձայնության եկան Վրաստանի ենթադրյալ սահմանների շուրջ, նրա հնարավոր տարածքը բաժանելով «անփառելի» և «փիճարկվող» շրջանների: Վերջիններիս ընդգրկումը պետք է որոշվեր տեղի բնակչության հանրաքվեի միջոցով⁶³: Այս առումով Արխագիան դասվեց վիճարկվող շրջանների կազմում: Ուշագրավ է, որ 1917 թ. վրացական քաղաքական վերնախավը, առժամանակ մի կողմ դնելով ազգային-դեմոկրատների պնդած «պատմական» սկզբունքը, այսրկովկայան ապագա ազգային միավորների վարչական սահմանները գծելիս որպես իմք ճանաչեց նրանց էթնիկական կազմը⁶⁴: Վերջինս վրաց սոցիալ-դեմոկրատների առաջարկն էր: Հայաստանի Առաջին Հանրապետության ականավոր գործիչ Արշակ Զամայանն իրավացիորեն նկատել է, որ Ն. Շորդանիան և նրա կուսակիցները, սակայն, «գործնական քաղաքականութեան մէջ, որքան թիզ կարեւորութիւն են տալիս սկզբունքներին, երբ նրանք չեն համապատասխանում Վրաստանի ազգայնական շահերին...»⁶⁵: Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, ավաղ, այս ամենն արվում էր այլ քաղաքական ուժերին մոլորեցնելու և տարածքների հարցում անկախացումից հետո առավել շահերական վիճակում հայտնվելու նպատակով: Իրականություն այն է, որ վրաց քաղաքական գործիչները էթնիկ սկզբունքի մասին խոսում էին միայն ոռուսական միավետության տապալումից հետո նոր քաղաքական դաշտում ժողովրդավար երևալու և երկրամասի մյուս ազգային ուժերի հետ առերևս համերաշխավելու նպատակով: Վրաց քաղաքական շրջանակները հետևողական երբեք չեն պաշտպանել այդ սկզբունքը և սահմանների հարցում միշտ խուսանավոր քայլերով փորձել են հնարավորինս ավելի ընդարձակ, էթնիկապես ոչ վրացաբնակ տարածքներ ընդգրկել ապագա վրացական պետության կազմի մեջ՝ ընդ որում շահարկելով նաև պատմական սկզբունքը⁶⁶:

Վրաց Միջկուսակցական խորհրդում մշակվել էին «նվազագույն» պահանջներ. 1) Այսրկովկասի տարածքը բաժանել տեղի բոլոր ազ-

абхазцы в национально-культурном отношении грузины..." (ИМЕРИ С. Абхазский вопрос. — "ГРУЗИЯ", 13.VI.1919).

⁶³ МЕНТЕШАШВИЛИ А. Октябрьская..., с. 65.

⁶⁴ "БОРЬБА", 21. VI. 1917.

⁶⁵ Տն. ԶԱՍԱԸՆԵԼՎՆ Ա. Հայ-վրացական կմայոք. – «ՀԱՅՐԵՆԻՔ», 1928, մարտ, էջ 76:

⁶⁶ Տն. ՄԵԼՔՈՆՅԱՎՆ Ա. Ա. Զավախյառ 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին. Եր., 2003, էջ 267-270:

գուրյունների համաձայնությամբ; 2) Արտոնել Վրաստաճի համար՝ տեղական ինքնակառավարում, սեփական վարչակազմ, օրենքներ և բանակ ունենալու իրավունքը; 3) Վրաստաճի տարածքում հիմնարկների, դատարանի և դարպոցի լեզուն դարձնել վրացերենը⁶⁷:

Միջկուսակցական խորհրդի նախաձեռնությամբ 1917 թ. նոյեմբերի 19-ից 24-ը հրավիրվեց Վրաստաճի անդրանիկ Ազգային համագումարը⁶⁸: Համագումարում հանդես եկավ վրաց սոցիալ-դեմոկրատների առաջնորդ Նոյ Ժորդանիան՝ «Վրաց ժողովուրդը և ընթացիկ պահը» զեկույցով: Նրա ելույթը իիմնված էր բոլոր վրաց կուսակցությունների համար ընդունելի տեսակետների վրա: Հայտարարվում էր, որ վրացիները ցանկանում են մնալ Ռուսաստանի սահմաններում և, շեշտվում էր, որ այդ հարցում նրանց հետ համերաշխ էին նաև հայերը: Համագումարը հանձնարարեց վրաց պատգամավորներին Համառուսատանյան Սահմանադիր ժողովում պահանջել Վրաստաճի լիակատար տարածքային ինքնավարություն՝ սեփական օրենսդրական ժողով ունենալու արտոնությամբ: Շուտով, սակայն, ռուսական կենտրոնական իշխանության բուլացմանը զուգընթաց ազգային-տարածքային ինքնավարության պահանջներն առաջ քաշելուց զատ, վրացական քաղաքական շրջանակները սկսեցին հետզինետե հակվել դեպի ազգային անկախ պետականության ստեղծման գաղափարը:

Համագումարի բանաձևը նաև հայտարարում էր, որ ապագա Վրաստաճի սահմանները պիտի որոշվեին դրացի շահագրգոված ազգությունների հետ համաձայնության զալով: Տարածայնությունների առաջացման դեպքում ազգային ինքնորդշնան սկզբունքը, ըստ վրացական տեսակետի, կարող էր կիրառվել, եթե խոսք լիներ նոր վարչական բաժանման մասին Ռուսաստաճի «Փետքրացիայի» սահմաններում, կամ Այսրկովկասի ազգությունների դաշնության ստեղծման պարագայում: Մինչդեռ Վրաստաճի Հանրապետության հոչակումից հետո վրաց կառավարությունը պահանջում էր հարեւաններից հաշվի նստել իր մտադրության հետ՝ ձեռք բերելու ռազմավարական տեսակետից հարմար և նորակազմ երկրի տնտեսական շահերը սպասարկող սահմանները:

Վրաստաճում ապրող ազգային փորձամասնություններին համագումարը խոստանում էր կատարյալ իրավական երաշխավորություն իրենց մշակութային զարգացման համար⁶⁹: Սահմեդական վրացիներին

⁶⁷ ЖОРДАНИЯ Н. Н. Նշվ. աշխ., էջ 53, 55, 58:

⁶⁸ Վրաց ազգային համագումարը. – «ՀՈՐԻՇՉՈՒՆ», 21. XI. 1917:

⁶⁹ Ճշգրցած յաեցածք. եայժմուցը եացարդպահութունը ուժութեացու (1917 մարտի 1 – 1918 մայիսի մօսիօ) // յարտցածք քաջազնութիւն. Եյցովնցայց 9. տձուութիւն. 2002, զ. 16.

(իմա՝ աջարացիներին և մեսխեթցիներին) սիրաշահում էին նրանց համար առանձին ընդարձակ տարածքային ինքնավարություն ստեղծելու ծրագրով⁷⁰: Նույնպիսի կարգավիճակից պիտի օգտվեին նաև այն ծայրագավառները, որոնց բնակչությունը ցանկություն կիայտներ մտնել Վրաստանի հետ միության մեջ⁷¹: Վրացական խորհրդաժողովում ներկա էր բազմազգ պատվիրակություն, որն ընտրվել էր Սուխումի շրջանի զյուղացիության անդրանիկ համագումարում⁷²: Ավանքեկ Շերիփովը, իբրև Աբխազական ժողովրդական խորհրդի (այսուհետև՝ ԱԺԽ) ներկայացուցիչ, իր ելույթում բացահայտեց այդ կազմակերպության դիրքորոշումը: «Աբխազները մտնելով իրենց հյուսիսային եղբայրների հետ միության մեջ, - ասաց նա, - համոզված են..., որ մոտ ապագայում կիանդիպեն ազնիվ վրաց ժողովրդին Կովկասի բոլոր ժողովուրդների ընդհանուր միության մեջ: Եւ այդ ապագա միության կազմում արխազ ժողովուրդը դիտում է իրեն որպես Համախմբված լեռնականների միության լիիրավ անդամ»⁷³: Հակառակ դրան, Սուխումի շրջանի Սամուրզականի զավաոփ⁷⁴ (այժմ՝ Գալիի շրջան) պատվիրակ Ի. Գեղիան հայտարարեց, որ իր զավաոր շմիացավ արխազների ցանկությանը՝ լինելու միության մեջ հյուսիսկովկասյան լեռնականների հետ և կամե-

⁷⁰ «Սահմետական Վրաստանի ազատության կոմիտեի» (նախագահ Մեմեդ բեզ Արաշիձե) անդամները լրջորեն էին ընդունել այս խոստումները և ծրագրում էին «միքնավարության» մեջ ընդունել Բարումի մարզը, Ախալքալաքի և Ախալցխայի զավաները: «Ես յանութեացաւ հայնացաւ» (1918, N 105) թերթից արտասպակած հոդվածը տես՝ Կոչ վրացի մահմեդականներին: «ԸՈՐ ՀՈՐԻ ԶՈՒ» 4, XII. 1918:

⁷¹ Տե՛ս Վրաց համագումարը. - «ՀՈՐԻ ԶՈՒ», 26. XI. 1917: 1917 թ. սեպտեմբերի հոկտեմբերին Թիֆլիսում գումարված համահայկական խորհրդաժողովը որոշեց հավանություն տալ Ժամանակավոր կառավարության կազմված նախագծին՝ ըստ էրեմիկական սկզբունքի Այսրկիվաստմ վրացական, հայկական ու բարարական վարչական խոշոր միավորների ստեղծելու մասին (Ածմուստրատուսնի ուրածությունը պերծ Յ Զակաթազե. - «МОЛОТ», 18.X. 1917): Անդրկովկասի կոմիսարիատում վրացական կողմը միասնական էր բոլոր բարարների ներկայացուցիչների հետ: Վիճելի տարածքներ համարվեցին Երևանի նահանգն աճրողորդյամբ, Եղիզավետպոլի նահանգի հայրանակ Էլոնային մասը, Կարսի և Կաղզգանի շրջանները, Բորչալու և Ախալքալաքի զավաները: Նրանք փաստացի հանդես եկան Հայկական կանտոնի ստեղծման դեմ (Յամշտի ու Կաթով. - «КАВКАЗСКОЕ СЛОВО», 17. X. 1917. Նաև՝ ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ. Հայկական հարցը 1918 րվակամբան. Եր.. 1997, էջ 20-21):

⁷² История Абхазской АССР (1917-1937), с. 22.

⁷³ ЦГВИА РФ, ф. 1300, оп. 1, д. 130, л. 135 об. — Տես ԼАКОБА Ս. Յ. Կ Յորոց օ Կաթովիչ կոնֆեդերացիա..., ս. 155. Նույնի Աբխазия ուժության մեջ մասնակի համար անդամները համարվել են այսօր գուտ մեղքելական ավան է...», - տեղեկացնում էր վրացական մամուլը: Տես «Ես անձիւ պահանջանակություն», 25 օգոստոսի 1915.

նում էր Սովորության շրջանը միավորել ապագա Վրաստանին, որտեղ Արխագիան պես է օգտվեր մշակութային ինքնավարությունից⁷⁵:

1917 թ. Ռուսաստանի ծայրամասերում սկսվեց քաղաքական քառուս: Փետրվարյան հեղափոխությունը արմատապես փոխեց քաղաքական իրադրությունն Այսրկովկասում, որտեղ ժամանակավոր կառավարության իշխանության նարմին ՕՉԱԿՈՒ-ը երկար ժամանակ ազգային շրջաններում չէր կարողանում ստեղծել իր ենթակա մարմինները: Մինչև ՕՉԱԿՈՒ-ի ձևափորումը Սովորության շրջանում հայտային կարգով սկսեցին առաջանալ նոր տեղական իշխանության նարմինները՝ քաղաքային գործադիր կոմիտեները, որոնց կազմում էին կուսակցությունների և կազմակերպությունների լիազորները, քացառությանը բոլշևիկների: Առաջին կոմիտեն ձևափորվեց Սովորության մարտի 3-ին, որին հետևեցին Գուդառուսական և Օչաճշիրան: Մարտի 10-ին կոմիտեների ներկայացուցիչների խորհրդակցության արդյունքում առաջացավ ժամանակավոր կառավարության տեղական նարմին՝ «Հանրային անվտանգության շրջանային կոմիտե»՝ արխազական գահակալ իշխանների շառավիդ Ալեքսանդր Շերպաշչենի (նաև՝ Զաշրա) գլխավորությամբ: Մաճուլլ հայտնում էր, որ նա հաճքավ է վայելում ինչպես արխազների մոտ, այդպես էլ եկալոր բնակչության զանգվածներում⁷⁶: Կոմիտեն որոշում կայացրեց տեղական միջիցիայի կազմակորման մասին, որի պես ընտրվեց մեկ այլ արխազական մեծատոհմիկ՝ Տատաշ Մարշանիան (նաև՝ Ամարշան)⁷⁷: Այս որոշումներին հաջորդեց Ա. Շերպաշչենի նշանակումը ՕՉԱԿՈՒ-ի շրջանային կոմիսարի պաշտոնում: Հետագայում առաջնորդյունն անցավ Անվտանգության կոմիտեի այլ անդամներին՝ սոցիալ-դեմոկրատներ Դ. Էմուսվարիին և Դ. Զախարովին⁷⁸: Վրաց սոցիալ-դեմոկրատների ներկայացուցիչներն այդ իրադարձություններում գործուն մասնակցություն ունեցան: Նրանց առաջնորդներից մեկը՝ Ակակի Չիսենկելին, 1917 թ. հունիսին հասուկ շրջազայռություն էր կատարել Արխազիայում, զբաղվելով Սովորության քաղաքային դրումայի ընտրություններով և գյուղացիական առաջիկա համա-

⁷⁵ «Ճաջործո», 30 նոյեմբեր 1917. Սամուրգականի բնակչության վրացամետ դիրքը չէր փոխվել և հետագայում, եթե Արխազիայում հաստատվել էին խորհրդային կարգեր: 1921 թ. ամռանը Գայիի զավակի «աշխատավորության» համագումարում Հեղիոմի նախագահ Ե. Էշրան հայտարարել էր, թե «քողջիկայսն կուսակցության հանար Արխազիայի Ռուսաստանին, թե Խորհրդային Վրաստանին միացման հարցը... չունի որևէ նշանակություն, [ինչը] չըսկարագրեց հասարակությանը: Համագումարում ակներևաբար արտահայտվեց հակում դեպի միուրյուն Վրաստանի հետ» (տես ՇԱՄԲԱ Տ. Մ. – ՀԵՊՐՈ-ՇԻՆ Ա. Յ. Նշվ. աշխ., էջ 129).

⁷⁶ *Պո Կաթազ: Անձնագիր*. – «ԲՈՐԵԲԱ», 21. V. 1917.

⁷⁷ ՀՅԱՋՅԱՐԻԱ Գ. Ա. Օչերկի..., ս. 61. Նաև՝ ԼԱԿՈԲԱ Ս. Յ. Օչերկի..., ս. 62.

⁷⁸ ՀՅԱՋՅԱՐԻԱ Գ. Ա. Օչերկի..., ս. 62-63, 68.

գումարի գումարման գործերով: Սովորումի դումայի նոր կազմում սոցիալ-դեմոկրատները ստացան մեծամասնություն և հովհանի 2-ին քաղաքագլուխ ընտրվեց տեղի նրանց առաջնորդ Վենդիամին (Բենիա) Դիսիկվիշվիլին⁷⁹:

Արխագ գյուղացիության միջավայրում մեծ հաճքավ վայելող բոլշևիկ Նեստոր Լակորան, որն ընտրվել էր Գուղառուսայի կոմիսարի պաշտոնում, իր համախոհների աջակցությամբ, փորձ կատարեց հաստատել զավառում խորհրդային իշխանություն, որը պայմանականորեն կոչեցին «Գուղառուսայի հանրապետություն»⁸⁰:

1917 թ. մայիսի 1-ին Վլադիկավկազում գումարված լեռնականների անդրանիկ համագումարում առաջ քաշվեց համակովկասայան միասնականության մասին թեզը: Համագումարում ծևավորվեց Կովկասի համախմբված լեռնականների միությունը (այսուհետև՝ ՍՕԳԿ), որը գլխավորում էին չեղն S. Շերմուշը, կոմիլկ Ռ. Քափլանովը, կարարոյն Շ. Կոցիկը, ինգուշ Վ. Զարաբիկը: Արխագ ժողովրդի շահերը այդ կազմակերպությունում ներկայացնում էր Սեմյոն Աշխացավաճ⁸¹: Ա. Շերվաշիձեի գլխավորած պատվիրակությունը, որպես արխագ ժողովրդի ներկայացուցիչներ, մասնակցել էր 1917 թ. հոկտեմբերի 20-ին Վլադիկավկազում գումարված համագումարում, որտեղ հիմնադրվեց կազակների և Կովկասի լեռնականների Հարավ-Արևելյան Միությունը: Սիութենական պայմանագրի հիման վրա նոյեմբերի 16-ից Եկատերինուդում (այժմ՝ Կրասնոդար) սկսեց գործել միասնական կառավարությունը, որը հանդես եկավ հոչակագրով՝ Միության անդամակցող ժողովություններին վերապահելով լիրակ անկախություն ներքին կյանքում: Նրանց բնակության տարածքները նախատեսվում էր դարձնել ինքնավար նահանգներ ենթադրվող Ռուսաստանի դեմոկրատական դաշնային հանրապետության կազմում⁸²: Ենթադրվում էր նաև, որ Հարավ-Արևելյան Միությանը կանդամակցի «Սովորումի շրջանի լեռնական ժողովության գործերում առաջ կազմակերպության մեջ մասնակցել էր նաև ՀՅԴ-ի մեկ ներկայացուցիչ (Տես Պո

⁷⁹ Սովորումի դումային անդամակցել էր նաև ՀՅԴ-ի մեկ ներկայացուցիչ (Տես Պո

Կավказу: Сухум.- «КАВКАЗСКОЕ СЛОВО», 26.VII.1917):

⁸⁰ ЛАКОБА Н. А. Статьи и речи. Сухуми, 1987, с. 5.

⁸¹ Союз объединенных горцев Северного Кавказа и Дагестана (1917-1918). Горская Республика (1918-1920). Сб. док. и мат. Махачкала, 1994, с. 4, 5, 134. Համագումարում ներկա էր նաև վրաց պատվիրակությունը, որին լեռնականները դիմափորել էին բուռն ծափահարություններով, ինչպես նաև աղորքով օրինեցին Գորջիստանը՝ վրացիների և լեռնականների բարեկանական հարաբերությունները (ՎԱԿНАДՅ Դ. Проблема Кавказа. Париж, 1933, с. 35).

⁸² Казаки и горцы. — «МОЛОТ», 25.X.1917. Նաև տե՛ս Հարավ-Արևելյան Միության կառավարության հոչակագրը (28 նոյեմբերի 1917 թ.). — ЛАКОБА С. З. Очерки., с. 62-63. Նաև՝ КОЛБАЯ Г. Грузино-абхазское противостояние. — «АЗИЯ И АФРИКА СЕГОДНЯ», 1995, N 3, с. 24.

դուրս կանաչ գույքում (աբխազներ)»⁸³: Սիության շրջանակներում ձևավորված լեռնականների տարածքային ժամանակավոր կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 4-ին «Ժիվ 1 դեկտեմբեր» որոշեց տարածել իր իշխանությունն անդրկովկասյան Սովորումի և Զաքարալայի շրջաններում՝ միայն տեղի լիիրավ մարմինների համապատասխան որոշումից հետո⁸⁴: Ա. Շերպաշչիձեն մեկնել էր Վլադիկավկազ առանց որևէ լիազորությունների և չի բացառվում, որ ՕՉԱԿՈՒՄ-ի կողմից նրա պաշտոնագրկումը և հոկտեմբերի 27-ին Դ. Զախարովին շրջանային կրօնար նշանակելը, ուղղակի կապ ունի նշված փաստի հետ⁸⁵:

1917 թ. նոյեմբերի 7-ից 9-ը Սովորումում գումարվեց շրջանային գյուղացիական անդրանիկ համագումարը: Համագումարի գումարման օրը Ա. Զիսենկելու գլխավորությամբ Սովորում ժամանեց պատվիրակություն: Վրացական կողմը տեղեկացված էր հյուսիսկովկասյան լեռնականների պետության հետ Աբխազիայի նախապատրաստվող միավորմանը և ժամանել էր այդ ծրագրի ձախողման հասուլ առաքելությամբ: Համագումարում ներկա վրաց պատվիրակության կազմում էր նաև հայտնի հասարակական գործիչ Ի. Գոնարբելին⁸⁶, որը հաշվետվության մեջ գրում էր. «Աբխազների ներկայացուցիչները ոչ միայն սառը, այլև գրեթե թշնամաբար ընդունեցին վրացական պատվիրակությանը: Նրանք նախապես որոշել էին մերժել [վրաց] պատվիրակության խորհուրդները և զգնալ զիջումների, ամուր պահպանելով իրենց դիրքերը»⁸⁷: Այդ իրադարձությունների մասին վերիիշում էր նաև Ն. Լալիբան: «Ակակի Զիսենկելին, - ասում է նա, - գործի դրեց սեփական դիվանագիտական հմտությունը՝ համագումարին ապացուցելով Այրկովկասից Աբխազիայի մեկուսացման կործանարար հետևանքները»

⁸³ *Юго-Восточный союз (текст догоовора). — "МОЛОТ", 2.II.1918.*

⁸⁴ ГАМАХАРИЯ Д. — ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 397, վավ. N 214: «Դեկտեմբեր» բիուտ էր ՍՕԳԿ-ի Կենտկոմի 1917 թ. դեկտեմբերի 3-ի որոշումից՝ “В отношении Закатальского и Сухумского округов постановлено, что горское правительство, несомненно, распространяет на них свою компетенцию по вопросам национально-культурного и политического характера, вопрос же о распространении теперь же полностью государственной власти горского правительства на эти округа или же временном оставлении их в сфере компетенции временного закавказского правительства... предоставить на разрешение закатальского и абхазского народных советов” (*Территория горского штата. — "МОЛОТ", 16. XII. 1917*). Վրաց պատմարանները համոզված գրում են, թե «Абхазский Народный Совет никогда не принимал решения о распространении государственной власти Горского правительства над территорией Абхазии. Это можно смело утверждать, хотя не сохранились протоколы Народного Совета того периода» (ГАМАХАРИЯ Д. - ЧАНИЯ В. «*Оккупация* Абхазии: мифы и реальность?! — СГ, 30.IV.1991).

⁸⁵ ДЗИДЗАРИЯ Г. А. *Очерки...*, с. 68, 87-88.

⁸⁶ Նրա մասին տես՝ Վրաց լեռան՝ դրույտ Գոնարբելին. — «ՍՇԱԿ», 6. II. 1919:

⁸⁷ ГАМАХАРИЯ Д. — ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 392, վավ. N 213:

Նրբանկատ ընդգծելով այն հանգամանքը, որ կիրք Վրաստանի համեմատության՝ լեռնական միությունը ոչինչ է: Իսկ լեռնական պատվիրակները դիմում էին արխազներին՝ շեշտելով բոլոր լեռնականների պատճության, կենացի և եղբայրական կապերի ընդհանրությունը»⁸⁸: Տարածայնությունների բնույթի մասին Գոմարելին ասում է, որ արխազները լավատեղյակ լինելով Սամուրզականի մեզրելների (ըստ արխազական հայեցակարգի մեզրելացված արխազների)⁸⁹ վրացամետ դիրքորոշման մասին, այնուամենայնիվ ներկայացրել էին նրանց վերջնազիր՝ լեռնականների դաշնությանը միանալու հարցում իրենց հետ համերաշխության մասին: Սամուրզականի լիազորները, սակայն, մերժեցին այն՝ Այդ դիրքորոշումը ևս մեկ անգամ հաստատվեց Այսկովկասյան կոմիսարիատի անդամ Ա. Չիւենկելիին հղած հեռազրում՝ «Սամուրզականացիները կամենում են կապ ունենալ Կովկասի բոլոր ժողովուրդների հետ: Վրացիների հետ քաղաքական կապերը խզել չենք ուզում: Հարցի լուծումը հանձնարարում ենք Ձեզ, որպես բնիկ սամուրզականցու»⁹⁰:

Համագումարում ձևափրկել էին երկու հակադիր ճամբարներ: Հյուսիսկովասյան ներկայացուցիչները քարոզում էին ՍՕԳԿ-ի հետ դաշինք կապելու օգտին: Սամուրզականի պատվիրակները, օգտվելով վրացական ներկայացուցիչների աջակցությունից, սպառնում էին տարածաշատել Սովորումի շրջանից: Սակայն ճնշումը ապարդյուն եղավ և արխագ պատվիրակների մեծ մասը, առանձնանալով՝ արտահայտվեց հյուսիսկովասյան կողմորոշման օգտին⁹²: Արխազների հեռանալուց հետո Զիւնենկելին փորձեց շարունակել նիստը, կոչելով այն «մասնա-

⁸⁸ ЛАКОБА Н. А. Նշվ. աշխ., էջ 49:

⁸⁹ История Абхазии, с. 209. Там: ШИРИЕЛЬМАН В. А. Ч2. ажн., т 443-444: Ами хардг շորջ արխագ և վրաց աղբյուրները խստ հակասական են: Արխաց հեղինակների կարծիքով Սամորգականում բուն մեզրեների բարքանակը XX դարի սկզբին կազմում էր 13 տոկոս, իսկ տեղի բնակչությունը իմբնականում բաղկացած էր այսպես կորչված՝ «սամորգականացներից» (80 տոկոս), որոնց էրնիկական պատկանելիությունը մինչ օրս ներև է անորոշ և վիճելի գիտական գրականության մեջ: Հայտնի է, սակայն, որ սույն սահմանամերձ տարածքում կատարվում էր արխագ և մեզրել տարրի ակտիվ միաձավում: Ст'яна ИНАЛ-ИПА Ш. Д. Об изменении этнической структуры в Абхазии в XIX-начале XX века. — «СОВЕТСКАЯ ЭТНОГРАФИЯ», 1990, N 1, с. 40, 42. Սամորգականացների գերակշռող մասը, այնուամենայնիվ, իրեն խսուակցանակ ենում էր օստագործում մեզրեներեն: XX դարի սկզբին լոյս տեսան տեղականական գրականության մեջ սամորգականացները հաշվառվում են արխաների հետ համատեղ, սակայն մեզրեներից և վրացներից զու: Ст'яна БРОКГАЗЗ Ф. А. — ЕФРОН И. А. Словарь. — ЭНЦИКЛОПЕДИЧЕСКИЙ СЛОВАРЬ. Т. XXXII. С.-Пб., 1901, с. 150.

⁹⁰ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշ. աշխ. էջ 393:

⁹¹ «ხაჭაროვანო», 28 იანვარი 1918.

⁹² История Абхазии, с. 283. Նախ ԼАКОБА С. З. Абхазия после двух империй..., с. 47-48.

վոր խորհրդակցություն», սակայն բոլշևիկները ձախողեցին նրա աշխատանքը⁹³:

Արխագ պատվիրակները որոշեցին ստեղծել Արխազական ժողովրդական խորհուրդ⁹⁴: Նրանք ընդունեցին «Արխազական ժողովրդի համագումարի հոչակագիր»⁹⁵ և «Արխազական ժողովրդական խորհրդի սահմանադրույթուն»⁹⁶, որոնց մշակմանը գործուն մասնակցություն ունեցան՝ համագումարի ու ԱԺ-ի նախագահ Ս. Բասարիան, արխագ պատվիրակներ Ա. Շերպաշիձեն, Տ. Մարշալիան, Մ. Ցագորիան, Դ. Ալանիան, Մ. Թարնավան և ՍՈԳԿ-ի լիազոր չեղեն Ա. Շերիփովը: Վերջինս հանդիսանում էր հիմնական գեկուցող և իր ճառում հնչած թերթի օգալի մասը վերաբերում էր Արխազիայի ընդգրկմանը հյուսիսվկասյան լեռնականների նախազգվող պետության մեջ: Տեղի բոլշևիկների առաջնորդ Եֆրեմ Եշրան վկայում էր, թե Արխազիա Շերիփովի գալու պատճառներից էր նաև բոլրական կառավարության հետ կապ հաստատելու մտադրույթունը⁹⁷: «Հոչակագիրը» շեշտում էր, որ ԱԺ-ն հանդիսանում է «արխագ ժողովրդի ներկայացուցիչը և կամքի արտահայտողը կառավարական և վարչական մարմինների հետ շփումներում...», և նրա պահանջներն էին՝ «արխագ ժողովրդի քաղաքական իրավունքների և ազգային ու տնտեսամշակութային շահերի պահպանություն; արխագ ժողովրդի ինքնորոշման համար նախապատրաստական աշխատանքների իրականացում; արխագ ժո-

⁹³ ДЗИДЗАРИЯ Г. А. *Очерки..*, с. 93. Նաև տես՝ ԼԱԿՈԲԱ Հ. Ա. Եղվարդ, էջ 51:

⁴⁴ Արխագ պատմաբաները տարբերում են երեք ԱժԽ. 1) 1917 թ. նոյեմբերի 8-ից – 1918 թ. ապրիլը; 2) 1918 թ. մայիսի 20-ից – մինչև 6. թ. հոկտեմբերի 10-ը; 3) 1919 թ. մարտի 18-ից – 1921 թ. մարտի 8-ը (*История Абхазии*, с. 285); Վրաց աղյուսները ճանաչում են երկու ԱժԽ. 1917–1918 թթ. գործող և 1919 թ. ընտրված (Абхазский вопрос. – “КАВКАЗСКОЕ СЛОВО”, 25.VII.1919):

⁹⁵ Штю БАСАРИЯ С. Абхазия в географическом, этнографическом и экономическом отношении. Сухум-Кале, 1923, с. 86-89.

⁹⁶ Նոյն տեղում, էջ 89-90:

⁹⁷ ЭШБА Е. Асланбек Шерипов. Грозный, 1929, с. 94. Նաև տե՛ ՂԱՄԱԽԱՐԻԱ Դ. — ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 80. Նաև՝ ՀՅԻՇԶԱՐԻԱ Գ. Ա. Փորմիրօններ.., ս. 293. Թուրքամնես տրամադրությունները չեղեն հասարակության ներսում ունեն խոր արմատներ, որի վկայություններից մեկն է 1922 թ. սեպտեմբերին կայացած համագումարի որոշումը՝ տեղեկել անկախ Հեղնիսի Թուրքիայի հովանակության ներք (ГАТАГОВА Л. С. Революция 1917 г. и этнополитическая ситуация на Кавказе // В сб.: История народа России в исследование и докumentах. Москва, 2004, с. 156). Այդ որոշամադրությունների արձատական բնույթի մասին կարելի է խոսել նաև Արքայական պարագայում: 1922 թ. հունվարին Գույքանտայի Հեղկոմի նախագահ Չուիմ Բեկինայի որոշումը եր, որ արևագ զյուղացիությունը չի ճանաչում կոմունիստական կուսակցությունը և նրա նիշավայրում գրեթե է բուրքական ազդեցությունը (ՂԱՄԱԽԱՐԻԱ Դ. — ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 112):

դովրդի և Կովկասի լեռնականների միության միջև կապերի ամրապնդում և զարգացում»: Ժամանակակից արխագ պատմաբանները պնդում են, թե ԱժԽ-ն դարձել էր տեղում իշխանության իրական մարմին⁹⁸, կամ էլ «արխագ ժողովրդի համագումարը 1917 թ. նոյեմբերի 8-ին ձևավորել էր ԱժԽ-ն որպես լեռնականների միության տեղական իշխանության մարմին»⁹⁹: Հակառակ այս տեսակետի՝ ԱժԽ-ի «Սահմանադրությունը» «ճանաչում է համապատասխան վարչական մարմինների իշխանությունը և լիազորությունները...», «շրջանային կոմիտեն, կոմիսարները և այլ վարչական իիմնարկներն ու անձինք պահպանում են նախկին կառավարչական ֆունկցիաները...»: «Հոչակագրում» ցանկություն էր հայտնվում իշխանությունների հետ շփման մեջ գործելու մասին և, եթե տեղի իշխանությունների գործունեությունը չէր հակասի ժողովրդավարությանը և ազգերի ինքնորոշման սկզբունքին, ապա ԱժԽ-ն խոստանում էր աջակցել նրանց: Այսպիսով ԱժԽ-ն դարձավ ևս մեկ ազգային հասարակարարական կազմակերպություն¹⁰⁰, ինչպես էին այդ պահին Այսրկովկասում վրացական, հայկական և մահմեդական խորհուրդները: Արտահայտելով արխագ հասարակության մեջ տիրող տրամադրությունները, ԱժԽ-ն հանդես եկավ Հարավ-Արևելյան Միությանը միանալու օգտին:

Հոկտեմբերյան հեղաշրջումը կտրուկ կերպով ազդեց ազգային գործընթացների վրա, որոնք 1917 թ. սկզբից ծավալվում էին Այսրկովկասում: Երկրի տարբեր մասերի միջև խախտվեց պետականական կապը: 1918 թ. հունվարի 6-ին բոլշևիկների կողմից Սահմանադիր ժողովի գրումը Ռուսաստանից Այսրկովկասի բաժանման խթան դարձավ: Ինքնավարության կարգախոսն ինքնին վերածվում էր անկախության պահանջի, որի կողմնակից էին դառնում մինչ այդ չափավոր վրացական ազգային ուժերը: Այսրկովկասի ժողովուրդների ինքնորոշման հարցը դարձավ առաջնային, ետ մղելով սոցիալականը: Տեղի ունեցավ քաղաքական ուժերի համախմբում ազգային հիմքի վրա՝ բացառությամբ բոլշևիկների: Վրացական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդները մերժել էին դասակարգային պայքարի մասին բոլշևիկների ծայրահեղ կարգախոսները և ընտրել էին վրաց ազգի միասնականության զայնափառը¹⁰¹:

⁹⁸ ЛАКОБА С. З. *Очерки.., с. 63-64.*

⁹⁹ История Абхазии, с. 283.

¹⁰⁰ «Արխապալան ժողովրդական խորհուրդը հանդիսանում է ազգային քաղաքական կազմակերպություն, որը համախմբում է արխագ ժողովրդին»՝ արձանագրում է ԱժԽ-ի «Սահմանադրության» առաջին կետը (տե՛ս ԲԱСАРИЯ С. Նշվ. աշխ., էջ 89).

¹⁰¹ Այսրկովկասում փորձը ցոյց էր տվել, որ ազգային գործուն «արտահայտվում է համարյա բոլոր հարցերում և նոյնիսկ ինտերնացիոնալիտական պատմուճան հապած կուսակցությունները մեծ չափով հանակված են ազգային ոգով», - գրում էր «Հորիզոն»-ը:

1918 թ. փետրվարին Ն. Ժորդանիան Սեյմի ամբիոնից առաջարկեց անհապաղ իրականացնել Այսրկովկասի բաժանումն ազգային գավառների¹⁰² (կամ՝ կանոնները)¹⁰³: Ապագա Վրաստանի սահմանների որոշման գործում Վրացական ազգային խորհուրդը (այսուհետև՝ ՎԱԽ) կարևորում էր փոխարարերությունները Արխագիայի հետ: Վրացական քաղաքական շրջանակները բողոքում էին ՍՕԳԿ-ի և Հարավ-Արևելյան Միության կազմն Արխագիայի հնարավոր ներգրավման առիջիվ¹⁰⁴: Սակայն Հարավ-Արևելյան Միության կազմալուծման և Ռուսաստանի հարավում 1918 թ. սկզբին քաղաքացիական պատերազմի առաջացման պատճառով Համախմբված լեռնականների կառավարության իշխանության տարածումն Արխագիայի վրա այլևս իրական չէր: 1918 թ. սկզբին ՎԱԽ-ը նպատակահարմար էր գտել առաջարկել ԱԺԻ-ի ներկայացուցիչներին ժամանել Թիֆլիս հունվարի 20-ին՝ բանակցություններ վարելու համար¹⁰⁵. Նամակում մասնակիրապես ասված էր. «Վրացիները... անկեղծ կամենում են գտնել արխագինների հետ երկրող ըմբռնման և եղբայրական միասնականության հաստատման ուղին: Վրաստանի և Արխագիայի միջև փոխարարերությունների պարզեցման համար Վրացական ազգային խորհուրդը առաջարկում է խորհրդակցություն կազմակերպել արխազ ժողովրդի ներկայացուցիչ-

նքրե պերճախոս օրինակ, խմբագրական հոդվածում օրաբերքը բերում էր գեմստվայի շրոջ 1917 թ. հոկտեմբերին ձավաված պայքարը, որի ժամանակ «բոլոր վրացիները՝ բողէնիկ, մենշևիկ, սոցիալ-ֆեդերալիստ, նացիոնալ-դեմոկրատ, արոլենտար և իշխան, միացած ձայն տվին ընդդեմ բոլոր հայ ներկայացուցիչների՝ նույնպես առանց կուսակցական խորականության» («ՀՈՐԻԶՈՆ», 7. X. 1917: - Տե՛ս ԱՎԵՏԻՒՅՑԱՆ Հ. Նշանի, էջ 30-31):

¹⁰² ЖОРДАНИЯ Н. Н. Նշվ. աշխ., էջ 66-68:

¹⁰³ Տե՛ս A. Ш[АХАТУНЯН]. Закавказские кантоны и их взаимоотношения. — «МОЛОТ», 7. XI. 1917.

¹⁰⁴ ЖОРЖОЛИАНИ Г. — ЛЕКИШВИЛИ С. — ТОИДЗЕ Л. — ХОШТАРИЯ-БРОССЕ Э. Исторические и политико-правовые аспекты конфликта в Абхазии. Тбилиси, 1995, с. 20.

¹⁰⁵ 1918 թ. հունվարի 20-ին Արխագիայի պատճական կենտրոն Լիխնի ավանում (Գուրատուայի զավառ) կայացել էր արխազ ժողովրդի հավաք, որը իրավիրել էր ինքը որոշնան խնդիրը բնելու համար: Հայկական համայնքի կողմից միջոցանանքը մասնակից էր Մելքը Եղիսաբերյանը (Տե՛ս Գուշառ. - «ՀՈՐԻԶՈՆ», 7.II.1918: Նաև՝ Տելեգրամմա: Ղցայտ. - «МОЛОТ», 6.II.1918): «Արխագիններն էլ, ինչպես և Կովկասի բոլոր ազգերը, ուզում են ստեղծել ազատ Արխագիա, տարածելով իրենց սահմանները ինքոր գետից մինչև Գագրի: Այս ողին նրանց մէջ այնքան զարգացած է, որ Գուշառուած գումարած գիտացիական համագումարում, չնայած, որ մինքը ներքերը, հայերը և յոյները արխագինների դիմաց մեծամասնութիւն են կազմել, նրանք ստիպել են ժողովականներին հողային խնդրի վերաբերմանը անցկացնել այն բանաձեռ, ինչ որ կառավարելու իրեն՝ արխագինները, պատճառաբանելով, որ Արխագիան պետք է կառավարեն արխագինները և ոչ որիշները» (ԱՐԾԱԼՈՅԱ Գ. Թիֆլիսից - Հիսիսային Կովկաս. - «ՀՈՐԻԶՈՆ», 24. IV. 1918):

ների հետ, ինչպես նաև համագործակցության միջոցով կապ հաստատել մեր ժողովուրդների ապագա միասնական կյանքի համար»¹⁰⁶: Առանձին հրավեր եղավ Սամուրզականի ներկայացուցիչների համար¹⁰⁷: Վրացական կողմից համույթանը ներկա էին Ա. Չխենկելին, Կ. Մեսիխան, Պ. Սաղվարելիձեն, Գ. Գվազավան, Ն. Կարցիվաձեն: ԱժԽ-ի ներկայացնում էին Ա. Շերվաշիձեն, Ն. Մարգանիան, Ռ. Չխտուան, Բ. Ցագրիխան: /Արխազները ցանկանում էին հասնել քաղաքական ինքնուրույնության, միաժամանակ ունենալով Վրաստաճի հետ միայն բարիդրացիական հարաբերություններ՝ ինչպես հավասար հարևանի, և ԱժԽ-ի պատվիրակները պնդում էին այդ պահանջը¹⁰⁸: Սամուրզականի ներկայացուցիչ Մ. Էմուխավրին, որը հարել էր վրացական կողմին, հայտարարեց՝ «Ի նկատի ունենալով Արխազական ժողովրդական խորհրդի որոշումը՝ մտնել Կովկասի համախմբված լեռնականների միության մեջ, Սամուրզականը խօել է բոլոր հարաբերությունները Արխազիայի հետ»¹⁰⁹: Օգտվելով ընձեռված առիթից, Չխենկելին առաջ քաշեց ՍՕԳԿ-ից արխազների տարանջատման հարցը, խոստանալով աջակցել Սոլխումի շրջանի ամբողջականության վերականգնմանը, իբրև պատմական Արխազիայի¹¹⁰: «Ա. Չխենկելին սերտ կապ ունենալով Սամուրզականի հետ... փորձում էր շանտաժի ենթարկել արխազ պատվիրակներին Սամուրզականի արհեստականորեն ուռացցրած խնդրով»¹¹¹/ 1918 թ. փետրվարի 9-ին, ԱժԽ-ի լիազոր Ա. Շերվաշիձեի մասնակցությամբ, ՎԱԽ-ի նախագահության նիստում վերջնականացնելով մշակվեցին հետևյալ դրույթները. «1) Վերստեղծել մի անքածան Արխազիա՝ ինցոր գետից մինչև Մզիմրա գետի սահմանները, որի մեջ մտնելու են Արխազիան և Սամուրզականը, կամ ներկայ Սոլխումի շրջանը; 2) Սիացեալ Արխազիայի ապագայ քաղաքական կազմակերպութեան ձևը մշակում է ազգային ինքնուրույնութեան սկզբունքներով և դեմոկրատական իիմունքներով գումարուած Արխազիայի Սահմանադրության վերականգնման համար»¹¹²

¹⁰⁶ ՎԿՊ(Ա), ֆ. 1836, գ. 1, գ. 19, թ. 30: Նաև տե՛ս ՇԱՄԲԱ Տ. Մ. – ՀԵՊՐՈՒՆԻ Ա. ՅՈ. Նշվ. աշխ., էջ 88:

¹⁰⁷ ՎԿՊ(Ա), ֆ. 1836, գ. 1, գ. 19, թ. 28:

¹⁰⁸ МЕНТЕШАШВИЛИ А. – СУРГУЛАДЗЕ А. Только факты и документы. – ЛГ, 1989, N 11, с. 146. “Представители Национального Совета Грузии не соглашались с идеей политической независимости Абхазии и выразили пожелание о вхождении её в состав Грузии с оставлением широких политических прав”, - գրում են վրաց պատմաբանները (ГАМАХАРИЯ Դ. - ՉԱՆԻЯ Բ. “Оккупация” Абхазии: мифы и реальность?! – СГ, 30.IV.1991).

¹⁰⁹ МЕНТЕШАШВИЛИ А. Исторические предпосылки..., с. 16.

¹¹⁰ Տե՛ս ՄЕНТЕШАШВИЛИ Ա. Из истории взаимоотношений..., с. 11. Նույնի՝ Исторические предпосылки..., с. 16-17. Նաև ԳԱՄԱХԱՐԻԱ Դ. - ՉԱՆԻЯ Բ. “Оккупация” Абхазии: мифы и реальность?! – СГ, 30.IV.1991.

¹¹¹ Տե՛ս ԼԱԿՈԲԱ Ը. Աբխазия после двух империй, с. 48.

դիր ժողովը; 3) Եթէ Արխագիան, կամ Վրաստանը ցանկանան քաղաքան պայմանագրով կապել ուրիշ ազգերի կամ պետութիւնների հետ՝ փոխադարձաբար պայմանաւորում են ունենալ իրար հետ այդ մասին նախնական բանակցութիւններ»¹¹²: Փաստաբուրը չի պարունակում որևէ տեղեկություն, որի հիման վրա կարելի է ասել, թե «1918 թ. փետրվարի 9-ին Արխագիայի ներկայացուցիչներն ի վերջո հավանություն տվեցին Ա. Չխենկելիի ծրագրին, որը նախատեսում էր Վրաստանի կազմում լայն ներքին ինքնավարություն Արխագիայի համար...»¹¹³: Հնարավոր չէ հերքել, որ վրացական կողմն ուներ այդպիսի մտադրություն: Դեռ 1917 թ. Ի. Գոմարբելիին հայտնում էր արխագների և Սամուրգականի մեզրելների միասնական ինքնավարություն ստեղծելու ցանկության մասին, կանխամտածված շրջանցելով Վրաստանի և Արխագիայի հնարավոր վարչական կապի մասին հարցը¹¹⁴: Զանգի արխազ հասարակությունն անհանդուրդողականությամբ էր լցված վրացական քաղաքական շրջանակների ձգուման նկատմամբ՝ ունենալու որևէ վարչական կապ Արխագիայի և ապագա Վրաստանի միջև, ապա վրաց չափավոր գործիչները, չշեշտելով վերը նշված ցանկությունը, գերադասում էին փուլ առ փուլ իրականացնել որդեգրված ծրագրը: Փետրվարի 9-ին վրացական կողմը իրամարվեց Սամուրգական ապագա Վրաստանի մեջ անմիջականորեն ընդգրկելու մտքից և դիմացը ստացավ արխագների խոստումը՝ ժամանակավոր ձեռնպահ մնալ ՍՕԳԿ-ին Արխագիայի միանալու պահանջից¹¹⁵: Ապագայում Սուխու-

¹¹² Արխագիայի ինքնավարութեան շուրջը. – «ԱՇԽԱՍԱՎՈՐ», 27. XI. 1920:

¹¹³ МЕНТЕШАШВИЛИ А. Октябрьская., с. 117. Վերջինիս պնդումը բառացիորեն կրկնում են նաև այլ վրաց պատմաբանները, թե «представители Абхазии в конце концов согласились с проектом А. Чхенкели, который предусматривал широкую внутреннюю автономию Абхазии в составе Грузии».Տե՛ս ГАМАХАРИЯ Д. - ЧАНИЯ В. “Оккупация” Абхазии: мифы и реальность?!. - СГ, 30.IV.1991.

¹¹⁴ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 396-397, վավ. N 213:

¹¹⁵ Այս վայրիվկումների մասին Ս. Բասարիան գրում էր. «После русской революции, когда абхазский народ явно выявил свою национальную суть, столь неприятную для грузинских шовинистов и стал сговариваться с самурзаканским населением о вхождении в союз объединенных горцев... последовало [из Тифлиса] распоряжение о выделении из Абхазии Самурзакани и присоединении ее к Кутаисской губернии с подчинением губернскому комиссару В. Чхиквишвили. Но в виду протesta населения этого уезда... через два месяца Самурзаканы опять вернули в родное русло» (БАСАРИЯ С. Самурзаканцы или мурзаканцы. // В сб.: Материалы по истории Абхазии. Вып. 1. Сухуми, 1990, с. 30-31): Փաստերը վկայում են, որ Սամուրգականը վերադարձել էր Սոխումի շրջանի վարչական տարածքը դժվարին բանակցությունների արդյունքում, իրը փոխառուցում արխագիան կողմի վհջողական կեցվածքի: Այս «քաղաքական գործարքի» եռյանը չեն պարզաբնում նաև վրաց հետազոտողները: Հայտնի վրաց պատմաբանը գրում է. «...Связь Абхазского Народного Совета с Союзом объединенных горцев Кавказа и участие представителей Абхазии в правительстве образовавшейся в ноябре 1917 года Горской республики... с

մի շրջանի ճակատագիրը դարձյալ պետք է վճռվեր նրա Սահմանադիր ժողովում, և այդ հարցում, համաձայն 3-րդ կետի, իր ուրույն դերը պիտի ունենար Վրաստանը: Արխազների դիրքերի մեղմացումը կարելի է դիտել որպես ՍՕԳԿ-ից գործուն աջակցություն չստանալու արդյունք, ինչպես նաև փոխազդում վրացական կողմին Սամուրզականի և բուն Արխազիայի միասնականության պահպանման համար: Արխազ ժողովուն ներկայացուցիչների մասնակցությունը Հյուսիսկովկասյան լեռնական ժողովուրդների միուրյունում չէր նշանակում այդ կառույցի մեջ Արխազիայի ներգրավում:

Ավանդաբար արխազական ազնվականությունը գործուն ազդեցություն ուներ ամբողջ արխազ հասարակության վրա: Նրա ներսում սոցիալական հակասությունները գրեթե բացակայում էին՝ արխազների սակավության և նրանց պատկանող հողի առատության հետևանքով¹¹⁶: Ընդհակառակը, բախում կար արխազ կալվածատերերի և հողագորկ մեզրել գյուղացիների միջև: Օգտվելով հեղափոխությունից, վերջիններս հրաժարվում էին մուտք հողավարձը: Ազգամիջյան հարաբերությունները ավելի սրվեցին, եթե տարածվեց հողի վերաբաշխման մասին սոցիալիստական քարոզչությունը: Մի կողմից բոլշևիկները, մյուս կողմից վրաց սոցիալ-դեմոկրատները փորձում էին հրահրել սոցիալական պայքար արխազ հասարակության ներսում: Դրա դիմաց սակավաթիվ արխազ մտավորականության ներկայացուցիչները մարտնչում էին հանուն ազգային գաղափարի շուրջ արխազ ժողովուրդի բոլոր խավերի միասնականության: Սակայն դա հաջողվել էր երկու արխազարնակ գավառներից միայն մեկում՝ Կողորիում¹¹⁷: Արխազական քաղաքական գիտակցությունը պատրաստ չէր ազգի առաջ ծառացած խսդիրների լուծմանը: Ջրիխուա գյուղում և Մշխտա գետի ափին կայացած Գուղառտայի գավառի արխազ գյուղացիության հավաքները, հետևելով Ն. Լակորայի կոչին՝ ողջունեցին բոլշևիկների կարգախոսները: Այդ ամենի պատճառով արխազ ազնվականությունը և մտավորականության մի մասն ընտրել էր հյուսիսկովկասյան լեռնականների հետ միության կողմնորոշումը, որոնք խոստանում էին շնչամտել Արխազիայի ներքին գործերին և հովանավորել փոքրարիվ արխազ ժողովրդին: Հակառակ դրան մեզրելներն ընտրել էին վրացա-

самого начала носило формальный характер и длилось всего несколько месяцев, а связи между АНС и СОГК уже в начале февраля 1918 «оказались ослабленными» (ХОШТАРИЯ-БРОССЕ Э. Кафказский политический узел в прошлом и настоящем // В сб.: Явнотурдий и джандармаджюзас. № 2-3. Тбилиси, 2002, с. 54).

¹¹⁶ «Սովորմի շրջանի հողը կալվածատիական է և մեծագոյն մասը արխազներին է պատկանում ու կապալիք արտօն է հայերի և մինքրելների շահագործման» (ԱՐԵԱԼՈՅԱՆ Գ. Թիֆիսից - Հյուսիսային Կովկաս. - «ՀՈՐԻԶՈՆ», 24. IV. 1918):

¹¹⁷ Абхазия. - "СЛОВО", 4. VIII. 1920.

մետ ուղին, քանի որ այնտեղից ծավալվում էր հեղափոխական քարոզչությունը, որը խստանում էր հող: Հողագործկ մեզրելներին սիրաշահելու քաղաքականությունն էին վարում նաև տեղի բոլշևիկները: Վերջիններին հաջողվեց գայթակղել հրապուրիչ կարգախոսներով մեզրել գյուղացիության մի մասը ոչ միայն Սովորմի շրջանում, այլ նաև դրացի Չուգիդիի գավառում: Առաջացավ վտարանի արխագ-մուհաջիրների հայրենադարձության ծրագիրը, որպես հակալիքի մեզրելներին: Տառածել էին լուրեր, թե նրանց վերաբնակեցման համար արխազներն անհրաժեշտ էին զոնում վտարել մեզրելներին Արխազիայի¹¹⁸: Արխազիայի այամաններում տոշիալական հակասությունները հանգեցրին ազգամիջյան հարաբերությունների լարման:

Սուհաջրեների վերադարձի գաղափարը թելադրում էր սերտ կապ հաստատել Թուրքիայի հետ: Արխազների թուրքամետությունն ամրապնդվում էր նաև կովկասյան լեռնականների միջև նոյն տրամադրությունների հետևանքով, որոնք ավանդաբար տոգորված էին համախմանական քարոզությամբ և կապ էին հաստատել Օսմանյան Թուրքիայում գտնվող հյուսիսկովկասյան համայնքի՝ «չերքեզների» հետ:

1917 թ. վերջում – 1918 թ. սկզբին վրացական քաղաքական շրջանակների պայքարն ընդուն ՍՕԳԿ-ի կողմից ծրագրավորվող պետության մեջ Արխազիայի ընդգրկմանը նպատակ ուներ նաև զերծ պահել Սովորմի շրջանի մեզրելներին արխազների և նրանց դաշնակից լեռնականների հենարավոր ոտնձգություններից: Վրաց գործիչներն արխազներին առաջարկում էին լեռնականների փոխարեն դաշինք կապել մեզրելների հետ: Աշխատելով միություն ստեղծել Սովորմի շրջանի երկու իհմնական ազգությունների միջև, վրացական կողմը հույս էր փայփայում, որ դրա շնորհիվ երկրամասում կունենա լուրջ ազդեցության լծակներ: Սամուրզականի մեզրելների ցանկությունն ընդգրկվել ապագա Վրաստանի կազմի մեջ նպաստմ էր արխազների միջավայրում լուրջ հակավացական տրամադրությունների առաջացմանը:

1918 թ. փետրվարի 16-ից 21-ը Արխազիայի բոլշևիկները խորհրդային կարգերի հաստաման անհաջող փորձ կատարեցին¹¹⁹: Բոլշևիկյան վտանգը, որը դիտվում էր իրու հոդի վերաբաշխում տեղի մեզրելների օգտին¹²⁰, խրանեց արխազների թուրքամետ դիրքորոշմա-

¹¹⁸ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ. էջ 396, վավ. N 213:

¹¹⁹ Սովորմի դէպքեր. – «ՀՈՐԻԶՈՆ», 8. III. 1918: Նաև՝ «События в Сухуме. – КАВКАЗСКОЕ СЛОВО», 23.II.1918.

¹²⁰ «Արտօնացած», 17 ձեռօճու 1918.

նը և, իմշպես վկայում է Վ. Չիխիկվիշվիլին, ցանկություն էր առաջացել բոլշևիկների դեմ թուրքերից դեսանտ խնդրել¹²¹:

1918 թ. մարտի 4-ից 9-ը գումարվեց Սովումի շրջանի Երկրորդ զյուղացիական համագումարը: Երկրամասի բոլոր ազգություններից ներկա էր 300 պատվիրակ: Տեղի սոցիալ-դեմոկրատները, ունենալով անդրանիկ համագումարում իրենց ձախողման փորձը, և օգտվելով Վրաց կուսակիցների աջակցությունից, իրենց ձեռքը վերցրին նրա նախապատրաստական աշխատանքները և ընթացրուի Գրեթե միաձայն համագումարի նախագահ էր ընտրվել Վ. Չիխիկվիշվիլին: Պատվիրակներն Արխազիան հայտարարեցին «ինքնուրույն»: Միաժամանակ բարձրագույն օրենսդրական մարմին էր ճանաչվում Այսրկովկասի Սեյմը: Որոշվել էր ծևափորել Արխազիայի ժողովրդական խորհուրդ, կազմված շրջանի բոլոր ազգությունների ներկայացուցիչներից¹²²: Սոցիալ-դեմոկրատների ջանքերով հրավիրված Երկրորդ զյուղացիական համագումարը անտեսեց 1918 թ. փետրվարի 9-ի վրաց-արխազական համաձայնագիրը, եթե Արխազիայի ապագա քաղաքական կարգավիճակը պետք է վճռեր նրա ենթադրյալ Սահմանադրության ժամանակակից վերջինիս լիազորությունները նախնիոր որոշվել էր միանալ Այսրկովկասում ծևափորվող պետական մարմնին, որպես ինքնավար մաս: Այդպես էր ցանկանում վրացական կողմը: Կայացրած որոշումների մասին վրաց սոցիալ-դեմոկրատների «Էրթորա» պաշտոնաքերը հայտնում էր. «Այս համագումարում վերջնականորեն պարզ եղավ արխազների վերաբերմունքը դեպի մենք՝ վրացիներս... Արխազիան որոշեց մտնել որպես հավասար անդամ այսրկովկասյան ազգերի ընդհանուր ընտանիքը և ժողովրդավարական Վրաստանի հետ համատեղ կոփել իր ճակատագիրն ու լավագույն ապագան...»¹²³

1918 թ. ապրիլի 22-ին հոչակվեց Այսրկովկասի անկախությունը: Թեև բոլշևիկները մինչև իշխանության գալը չին մերժում ազգերի ինքնորշման գաղափարը, տվյալ փաստը հիվանդացին ընդունվեց նրանց կողմից: Այդպիսի վերաբերմունքը բխում էր 1917 թ. 7-րդ (ապրիլյան) կուսկոնքներանսի որոշումից, որն արձանագրում էր, թե «ազգերի տարանջատման իրավունքի հարցն անբույլատրելի է շփորել այս կամ այն ազգի տարանջատման նախակահարմարության հարցի հետ այս կամ այն պահին: Վերջին հարցը կուսակցությունը ... պետք է վճռի յու-

¹²¹ По Кавказу: Сюхум. — «КАВКАЗСКОЕ СЛОВО», 27.II.1918.

¹²² «յերանձա», 14 մարտի 1918.

¹²³ «յերանձա», 24 մարտի 1918. Տրապիզոնի բանակցությունների առաջին փողում՝ մարտի 7-ին այսրկովկասյան պատվիրակությունը վստահաբար իշխատակում էր Սովումի շրջանի Այսրկովկասի կազմի մեջ (ԱՎԵՏԻՍՅԱՆ Հ. Նշվ. աշխ., էջ 118-119).

բարանցուր դեպքում միանգամայն յուրովի...»¹²⁴. 1918 թ. այսրկով-կասյան բոլշևիկները դեմ էին ինչպես երկրամասի տարանջատմանը Ռուսաստանից, այդպես էլ նրա տրոհմանը տեղի ազգությունների միջև։ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, ի տարբերություն Ֆինլանդիայի և Ուկրաինայի ճանաշման, մերժեց Այսրկովկասի անկախության գաղափարը, հիմնավորելով այն Արխագիայում և Բարփում խորհրդային իշխանության գոյությամբ։

Այսրկովկասի անկախությունը Ռուսաստանից, խիստ ձեռնատու էր Թուրքիայի համար, քանզի նա արդեն գործ ուներ միայն բոյլ, ազգային տեսակետից անմիատարր և անմիաբան պետության հետ, որի նկատմամբ ցանկացած ժամանակ կարող էր վարպել իր ուզածի պես... Վերջապես, պանթուրքական և պանխվամական ծրագրերի իրականացման ճանապարհին առաջին ու ամենամեծ արգելվներից մեկը վերաբռնում էր...»

Այսրկովկասը անկախ հոչակելու պահին՝ Արխագիայի տարածքը չէր վերահսկվում այսրկովկասյան նորաստեղծ կառավարության կողմից։ 1918 թ. ապրիլի 8-ին Արխագիայում, քացառությամբ Կոտորի (Օշամշիրայի) գավառի, հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց պետականության վերականգնման¹²⁵։ Սուխումի Զինհեղկունը Ե. Էշրայի գլխավորությամբ իրեն չհոչակեց որպես ազգային պետականության մարմին։ Ռ.ՍՖՍՀ-ի կազմում Կուրանա-Սևովլյան հանրապետության ձևավորումից հետո ԶՀԿ-ն դիմել էր Եկատերինուրարում գտնվող խորհրդային իշխանություններին՝ առաջարկելով ընդգրկել նաև Սուխումի շրջանը¹²⁶։ Ուստի արխագիների մեծամասնությունը հրաժարվեց բոլշևիկյան կուսակցությանն աջակցելուց։ Արխագ ժողովուրդը, որը դարերով ապրում էր յուրահատուկ ստվորույթներով և դեկապարփում էր ազգային ավանդույթներով չգայթակղվեց բոլշևիկների հրապուրիչ կարգախոսներով։ ԱժԽ-ն ցրվել էր¹²⁷ և նրա անդամների ո-

¹²⁴ КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК. Часть 1-я. Москва, 1954, с. 345-346.

¹²⁵ Բոլշևիկները Սովորում. – «ՀՈՐԻԶՈՆ», 13. IV. 1918. Վրաց պատմաքանար նկատում է՝ “Автор главы Б. Сагария (иэн История Абхазии, с 289) не сколько неохотно признает, что большевики в 1918 году мало заботились о самоопределении абхазского народа и собирались просто включить её [Абхазию] в состав России в качестве “обычной административной единицы”, как это сделали с Баку во времена т. н. коммуны” (ХОШТАРИЯ-БРОССЕ Է. Նշվ. աշխ., էջ 54). Նաև տե՛ս ԴՅИДЗԱՐԻԱ Գ. Ա. *Советская власть в Абхазии в 1918 году*. Сухуми, 1972.

¹²⁶ ՎԿՊ(Ա), ֆ. 1861, ց. 2, գ. 41, թ. 1. Նաև տե՛ս ԴՅИДԶԱՐԻԱ Գ. Ա. *Очерки..*, с.

^{162.} Նաև ՄԵНТЕՎԱՇՎԻԼԻ Ա. *Из истории взаимоотношений..*, с. 17.

¹²⁷ 1918 թ. ապրիլի 22-ին ԶՀԿ-ի նիստում Ն. Լակորան պահանջում էր արգելել շրջանում գործող բոլոր ազգային կազմակերպությունները (ԴՅИДԶԱՐԻԱ Գ. Ա. *Очерки..*, с. 152-153):

բոշ մասը ձերբակալվել էր, այդ թվում նրա ղեկավարներ U. Բասարիան և Գ. Չուխբայը¹²⁸: Կալանավորվել էին նաև տեղի սոցիալ-դեմոկրատների առաջնորդները՝ Խսիդր Ռամիշվիլին և Վարլամ Շերպաշչինեն¹²⁹: Վ. Չխիկվիշվիլին բարեգում էր հայերի տներում¹³⁰: Դեռևս 1918 թ. փետրվարին վերջինս կոչ էր արել ՎԱԽ-ին՝ անհապաղ միջոցների դիմել և վրացական ռազմիկների գոնեն մեկ գումարտակ ուղարկել Սուխում՝ այդպիսով կանխել ուսական հեղափոխական նավաստիների միջամտությունը շրջանի գործերում¹³¹: Ապրիլ ամսին այդ խնդրանքին միացել էին նաև ԱԺԽ-ի մի շարք անդամներ Կողորի և Սամուրգականի գավառներից¹³²: Այսպիսով, բոլշևիկների իշխանության հաստատումը Սուխումում խրանեց արխագ հասարակության ներսում ձևավորելու նաև «վրացամետ» կողմնորոշում և ստիպեց ապավինել վրացական գինված ջոկատների օգնությանը: Օչամշիրայում կայացել էր Կողորիի բնակչության ներկայացուցիչների հավաք. որոշվել էր Այսրկովկասյան կառավարությունից բոլշևիկների դեմ գինված աջակցություն ստանալ¹³³: Հավաքը լիազորել էր քահանա Գ. Թումանովին մեկնել Թիֆլիս՝ խնդրելու «ազատազրել Արխագիան բոլշևիկներից»¹³⁴: 1918 թ. ապրիլի 18-ին Սամուրգականի կոմիսար Վալյիմիր Էնուխսկարին հեռուազրել էր Ա. Չխենենկելիին. «Տեղի ուժերով բոլշևիկներին ճնշելու մասին Ձեր կարծիքը բացարձակապես չեմ կիսում... Տեղի ուժերով պայքարը կրերի ազնվական տարրի գերիշխանությանը... ինչպես նաև կարող է հրահրել ազգային քննամության բոց... Տեղի ուժերով պայքարը կրերի անհամեմատ մեծ... զոհերի, կառաջացնի ավելի մեծ արյունահեղություն և ի վերջո կավարտվի մեր պարտությամբ, քանի որ բոլշևիկները հենվում են գինվորական զանգվածի վրա, որն ավելի կազմակերպված տարր է... Անհապաղ օգնություն է պահանջվում»¹³⁵: Այս առթիվ, վրացական քաղաքական գործիչների շփորության աստիճանը լուսաբանում է Ա. Չխենենկելու դիմումը՝ Արխագիայի և Սամուրգականի ժողովուրդներին, «փրք ձեր հայրենակիցն ու դեռ Պետ. Դումայում ձեր շահերի ներկայացուցիչն ու պաշտպանը»¹³⁶: «Ես ձեզ խնդրում եմ, - հորդու-

¹²⁸ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 72: Նաև տեսն ДЗИДЗАРИЯ Г. А. Формирование., с. 302.

¹²⁹ «յետուձ», 17 ձմրոցո 1918.

¹³⁰ «ԱՇԽԱՏԱՎԻՈՐ», 1. IV. 1919:

¹³¹ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 404, վագ. N 219.

¹³² Աճազայ. – «СЛОВО», 4. VIII. 1920.

¹³³ МАТАРАДЗЕ Н. И. Страницы прошлого. Сухуми, 1957, с. 29-30.

¹³⁴ Նոյն տեղում, էջ 35:

¹³⁵ ШАФИР Я. М. Очерки грузинской Жиронды. М.-Л., 1925, с. 47.

¹³⁶ Չխենենկելու կոչը Արխագիայի և Սամուրգականի ժողովուրդներին. – «ՀՈՐԻ-ԶՈՒ», 11. V. 1918:

բում էր այսրկովկասյան վարչապետը, - ամեն միջոց ձեռք առնել՝ անմիջապէս դադարեցնելու անհջիսանուրիսնը. գումարեցէք ժողովրդական համագումար և Թիֆլիս ուղարկեցէք ձեր ներկայացուցիչներին, մասնակցելու մեզ և Հիւսիսային Կովկասի լեռնցիների հետ, որոնք միացել են մեզ¹³⁷, սահմանադրութիւնը մշակելու և պետութեան սահմանները որոշելու, որպէսզի ձեր բոլոր ակնկալիքները և ցանկութիւնները լայն արձագանք գտնեն և ստանան լիակատար իրազործումն, իբրև կովկասնան թիերացիայի իրաւահաւասար անդամի»¹³⁸: Այսրկովկասյան կառավարությունը, որտեղ վրաց նախարարները թեև առաջին ջուրակի դերն էին կատարում, չէր կարող անմիջապէս իր ունեցած զինված ուժերի որոշ մասն ուղղել դեպի Արխագիա: Միայն, երբ կանգ առավ բուրժական զորքերի առաջխաղացումը Վրաստաճի վրա, 1918 թ. մայիսի 10-ին Օչամչիրա ժամանեց ավելի շատ ՎԱԽ-ի, քան այսրկովկասյան կառավարության հեղինակությունը ճանաչող վրացական «կարմիր զվարդիայի» ջոկատ՝ ծնունդով սովորման Վայիկո (Վայերիան) Զուրելիի իրամանատարությամբ¹³⁹: Սովորման Հայոց շրջանային ազգային խորհրդի նախագահ Խաչատուր Հայրապետի Ավդալբեզօյանը հետևյալ կերպ էր նկարագրում այս անցուղարձը՝ «[Բոլշևիկների դեմ] կոհիը [Վրաստաճը] վարում էր Արխագիայի գրեթե բոլոր ժողովուրդները»:

¹³⁷ 1918 թ. ապրիլի 11-ին Ն. Ժորգանիան հաղորդում էր, թե Թիֆլիս մի պատվիրակություն էր ժամանել, որն առաջարկում էր ընդորելի Դադասանը և Հյուսիսային Կովկասն Այսրկովկասյան հանրապետության կազմը (ԽՈՐԴԱՆԻԱ Հ. Ի. Նշվ. աշխ., էջ 90).

¹³⁸ Զիւնելիի դիմումը Արխագ և Սամորգականի ժողովուրդներին. – «ՄՇԱԿ», 9. V. 1918: Թիֆլիսի մամուլի էջերում Զիւնելիի կոչը մեկնաբանվեց իբրև «ինքնազուխ քայլ»: «Ենրարութենք, - զրում է քաղաքական մեկնաբանը, - որ Զիւնելին, որպէս սամորգականիացի, «փորք կավճակով» խնացա հայրենիքում կատարում «գործանարար անհջիսանութեան» մասին, ուզում է օգնութեան հասնել և իր հեղինակաւոր կոչով ժողովրդին գիտակցութեան բերել: Բայց ինչո՞վ բացարձել այն փաստը, որ դեռ կոչի պատասխանը չտացած, այդ կոչից մի երկու օր յանու կարորմ ենք՝ «քոլչևիկների դեմ» Սովորմ ուղարկեց մի զօրամաս, որի մէջ է Զուրելին և Թիֆլիսի կարմիր զարդիան»: Կոչի խաղաղասիրական տոնը և զօրամաս ուղարկելու իրամանը այնքան իրար հակասական են, որ հենց իր հայրենակիցները կապչեն: Երեւ «ոսցիալիստ» մինհատրնախազանի կարծում էր, որ իր պատճական կոչը առանց գենքի ազդեցություն չի գործի և նպատակին չի ծառայի, այն ժամանակ առանց կոչի կարելի էր զօրամաս ուղարկել, մարթելու շրջանը բոլոր կամաց հայտնի կարգությունները իրենց վատահորեան թագավորության համագումարները իրենց վատահորեան թագավորության համագումարների իշխանութեան և անջատեցին Անդրկովկասից: Ուրեմն այնտեղ թիւնապար և ժողովրդավարութիւն վայելող անհատներ, որոնք ի զարման բորդի... կոխ յայտարարեցին բեզական շովինհատական խորհրդի իշխան՝ Աժև. - Բ.Ս.] դէմ, տապալեցին նրան և շրջանային ժողովրդական համագումարները իրենց վատահորեան թիւն տիին խորհրդանքի իշխանութեան և անջատեցին Անդրկովկասից: Ուրեմն այնտեղ կերպով լուսաբարեց այն, որ անհանուն է «ազգերի ինքնորոշում»: Եւ խաղաղ կերպով լուսաբարեց այն, ինչու է յայտարարում Արխագիայի ինքնորոշման» (ՓԱՌԱԶԱՆԵԱՆ Գ. Արշավանը դեպի Սովորմ. – «ՀՈՐԻՉՈՂՈՆ», 17. V. 1918):

¹³⁹ «КАВКАЗ», 22.V.1918.

րի ցանկութեամբ ու աջակցութեամբ: Պատմական փաստաթղթերով կարելի է հաստատել, որ այդ շրջանում արխագ ժողովրդի ներկայացուցիչներն ամեն օր բաղնում էին վրաց կառավարութեան դուռը և խնդրում էին ազատել Արխագիան բօշկիկներից: Այս գործում երկրի բոլոր ազգութիւններին պատկանող գիտակից ու առողջ ոյժերի բացարձակ համակրանքը վրաց կառավարութեան կողմն էր»¹⁴⁰:

Բոլշևիկները տեղի հայերի աջակցությունը ստանալու նպատակով քարոզչություն էին տանում, խոստանալով, թե նրանք խորհրդային իշխանության օգնությամբ, առանց հպատակության ստանալու, կարող են տիրել կապալավարծով մշակվող հողատարածքներին¹⁴¹: 1918 թ. գարնանը բոլշևիկներին օժանդակում էր Ցերելրա ավանում Ղազար Կերսելյանի և Հակոբ Ջերունյանի ջանքերով գումարված 200 հոգանոց հայկական ջոկատը: Արխագիայի ղեկավար մարմինների անդամ էին հանդիսանում՝ Գևորգ Աքարքելովը (Զինհեղկոմի նախագահի տեղակալ), Դ. Կերսելյանը (բոլշևիկյան կարմիր գվարդիայի ղեկավար), Ա. Շահգելյանը, Լ. Աճանովը, Գ. Թոփշյանը: Հայերի մի մասն աջակցում էր բոլշևիկներին, քանի որ սարսափում էր բուրքական վտանգից¹⁴² և բավական էր կեղծ լոր տարածվեր Սովորումի ծովափում բուրքական հեսանտի ցամաք իշնելու մասին, որ «հայ ազգաբնակութիւնը գրավեր մեծամասնականների խոստումներով և տաճիկից ազատելու գրավիչ հեռապատկերը նրան ձգեր մեծամասնականութեան գիրկը...»¹⁴³: Միաժամանակ, Գուղառուսական պատրիարքական կամաց լուր (խորհրդային տարիներին Ազարակի, այժմ՝ Ամժիկովսուա) գյուղի բնակչության ելույթը բոլշևիկների դեմ վկայում է տարբեր քաղաքական ճամբարներում Արխագիայի հայերի թերուացման մասին¹⁴⁴:

¹⁴⁰ «ԱՌԱՎԿ», 28. III. 1919:

¹⁴¹ ГАМАХАРИЯ Д. — ГОГИЯ Б.Նշվ. աշխ., էջ 411, վագ. N 221:

¹⁴² Հայերը պարտադրված են կեղծ պաշտպաննելու խորհրդային կարգերը, քանի որ նրանք 1918 թ. ընտրություն էին կատարում ոչ թե սոցիալիզմի ու կապիտալիզմի՝ այլ ցեղասպան թուրքիայի և Ռուսաստանի միջև: Այս միտքը հնչում է Բարփի Ռուսական ազգային խորհրդի նախագահության անդամ Բ. Բայկովի հուշերում: Նա գրում է. «Армения в течение всего процесса русской революции не скрывали своей приверженности к России, видя в ней естественную и единственную защитницу от полного их физического истребления, и в этом их инстинкте самосохранения лежит и объяснение непротивленчества армян русскому большевизму и порою даже фактического их сотрудничества с большевиками. Армения откровенно и многократно заявляли: ... «лучше большевики, они все же русские, чем турки» (БАЙКОВ Б. Воспоминания о революции в Закавказье (1917-1920 гг.) // В сб.: АРХИВ РУССКОЙ РЕВОЛЮЦИИ. Т. IX, Берлин, 1923, с. 191).

¹⁴³ Սովորումի ապատամբութեան արդիք. - «ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ», 26. X. 1919:

¹⁴⁴ ՃՅԱՋԱՐԻԱ Գ. Ա. "Կորօզ", ս. 39.

Մայիսի 11-ին Եշբան դիմել էր Լենինին և Ռուսաստանի Հարավի կոմիսար Սերգո Օքոնիկիձեին, անհապաղ օգնություն ցուցաբերելու մասին խնդրանքով: Նա նշում էր, որ «Այսրկովկասի անկախության հռչակումը տեղի է ունեցել Սովորումի շրջանի բնակչության կամքին հակառակ: Սովորումի շրջանը ճանաչել է խորհրդային իշխանությունը¹⁴⁵: Այսրկովկասյան կառավարությունը իդել է պատժի ջոկատներ Սովորումի Սովորակի դեմ, համարելով այս ճանաշումը որպես խոռվություն...»¹⁴⁶: Այսրկովկասյան կառավարության հավակնությունները հենվում էին նաև Սովորումի շրջանի Երկրորդ գյուղացիական համագումարի որոշումների վրա, որոնք կցել էին Արխազիան Այսրկովկասի կազմը: Գործնականում շտանալով որևէ աջակցություն, ԶՀԿ-ն ճահանջել էր Գագրա: Մինչև խորհրդային կարգերի վերացումը՝ մայիսի 17-ը, Արխազիան համարվում էր խորհրդային Ռուսաստանի մասը:

¹⁴⁵ Ե. Եշբան վկայակոչում էր շրջանի ամբողջ բնակչության կամքը, այնինչ միայն գումարայի գավառի գյուղացիական համագումարը, որը կայացել էր 1918 թ. ապրիլի 22-26-ը, ճանաչել էր խորհրդային իշխանությունը և անհրաժեշտ էր գտել միավորել շրջանը ՌՍՖՍՀ-ին (ՃՅԻԴՃԱՐԻՅ Գ. Ա. Օշերկու., ս. 141):

¹⁴⁶ *Борьба за Октябрь в Абхазии (1917-1921)*. Сб. док., Сухуми, 1967, с. 72.

II

ՎՐԱՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԵՎ ՎՐԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ԴԱԾՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ

Վրացական գինված ջոկատների հրամանատարությունը, որն ավելի ճանաչում էր ՎԱԽ-ի հեղինակությունը, քան այսրկովկասյան կառավարության իշխանությունը, գրավելով Սովորումը, իր ձեռքը վերցրեց շրջանի կառավարման գործը: Մայիսի 20-ին Սովորումի պարետ էր նշանակվել սպա Լ. Տումարկինը, որը հրաման էր արձակել՝ «Մինչև երկրամասի լիովին հանդարտվելն աճբողջ իշխանությունը կենտրոնանում է Այսրկովկասյան կարմիր զվարդիայի ջոկատի շտաբի ձեռքերում»¹⁴⁷: Այս առիթով ԱԺԽ-ի անդամ Մ. Թարճավան գրում էր. «Բոլշևիկների պարտվելուց և Թիֆլիսից եկած մենշևիկյան գործերի միջոցով (Վ. Զուտելիի հրամանատարությամբ «կարմիր զվարդիայի» ջոկատը ենթարկվում էր Թիֆլիսի Բանվորական պատգամավորների խորհրդին, որի նախագահությունը վարում էին Ն. Շորդանիայի գլխավորած վրաց սոցիալ-դեմոկրատները. - Բ. Մ.) Արխազիայի նվաճումից հետո վրացական մենշևիկյան կուսակցության ու [այսրկովկասյան] կառավարության առջև կանգնեց Արխազիայի քաղաքացիական կառավարման և բնակչության հետ կապ հաստատելու հարցը: Հիշեցին մինչ այդ գոյություն ունեցած Արխազական ժողովրդական խորհրդի մասին... և որոշեցին վերականգնել այն նոր կազմով և նոր (վրացական) ազդեցության ներքո...»: ԱԺԽ-ի հին կազմը նոյն չափով «ձգտում էր վերսկսել գործունեությունը նոր պայմաններում՝ նպատակ ունենալով իր ձեռքը վերցնել Արխազիայի կառավարումը»¹⁴⁸: Սակայն վրաց զվարդիականների հրամանատարությունը շուտով կասեցրեց այդ միտունը: Արխազական քաղաքական գործիչների որոշ մասը, ովքեր ԱԺԽ-ի հին կազմն էին ներկայացնում և իրենց հույսերը կապում էին Թուրքիայի հետ՝ հավաքվել էին Մոլգայի մենաստանում: Այստեղ որոշում էր կայացվել պատվիրակություն ուղարկել Թուրքիա՝ օգնություն խնդրելու նպատակով¹⁴⁹:

Արխազ հասարակության մի մասը ցանկանում էր երկրամասը տեսնել հյութիսկովկասյան ժողովությունների հետ միասնական պետության

¹⁴⁷ ՃՅԱՋԱՐԻԱ Գ. Ա. Օչերկու., ս. 177.

¹⁴⁸ ՂԱՄԱԽԱՐԻԱ Դ. - ՀՈԳԻԱ Բ.Նշվ. աշխ., էջ 72-73:

¹⁴⁹ Նոյն տեղում, էջ 77-79:

մեջ: Այդ հարցին դրական լուծում տպար նպատակով Ա. Շերվաշիձեն մեկնեց Բարում, որտեղ 1918 թ. մայիսի 11-26-ը գումարվեց կոնֆերանս և Թուրքիայի աջակցությամբ առաջին իսկ օրը հոչակլեց անկախ Հյուսիսկայացան հանրապետությունը (կամ՝ Կովկասի համախմբված լեռնականների միության հանրապետություն)՝¹⁵⁰: «Առաջին» ԱժԽ-ի պատվիրակությունը Թուրքիայի հովանավորությունն էր փետրում՝ լեռնականների հանրապետության կազմի մեջ ընդգրկվելու նպատակով: Նրանք դիմել էին Թուրքիայի կառավարությանը, թե «Արխազիան չի ցանկանում լինել այսրկովկայացան ժողովուրդների խմբում, այլ իրեն վերագրում է հյուսիսկայացան լեռնականների միաբանությանը, որը պետք է ձևավորի հատուկ պետություն՝ Թուրքիայի հովանավորության ներքո»¹⁵¹: Կոնստանդնուպոլսում լույս ընծայվող «Վարքը» թերթը, պետությունը պետք է Արխազիան Թուրքիայի հետ¹⁵²:

1918 թ. մայիսի 20-ին վրացական զվարդիայի հրամանատարության ջանքերով գումարվեց նոր ԱժԽ-ի անդրամիկ նիստը: Ի տարրերություն «առաջին» ԱժԽ-ի, նրա նոր կազմը համալրել էին հիմնականում «սոցիալիստական» կողմնորոշում ունեցող տարրերը, նրանց մի մասը Սամուրզականից էր: Սովորմի գրավումից երեք օր էր անցել և կարելի է ենթադրել, որ նոր ԱժԽ-ի ստեղծման զիսավոր պատճառներից էր հանդիսացել Ա. Շերվաշիձեի Բարումում գտնվելը: ԱժԽ-ի երկրորդ կազմը վերահաստատել էր Արխազիայի պատկանելիությունն այսրկովկայացան դաշնությանը և կազմել էր պատվիրակություն (Վարչ. Շերվաշիձե, Ք. Գիցրա, Գ. Չուխրայա, Ա. Չոշուա, Կ. Կիուտ, Մ. Բագավիշ, Խ. Ավիձրա, Ա. Չուկրար, Գ. Գովիա, Ա. Բասարիա), որի անդամները օժտված էին մանդատով: «Վճռականապէս հաստատել արխազ ժողովրդի խորհրդի բազմից արված որոշումը և [1918 թ.] մարտի 4-ին կայացած գիտացիական շրջանային որոշումը, որ Արխազիան մտնում է ժողովուրդների ընտանիքի մեջ»¹⁵³, իբրև նրա իրաւագոր ան-

¹⁵⁰Հյուսիսային Կովկասի անջատումը. – «ՀՈՐԻԶՈՆ», 19.V.1918: 1918 թ. մայիսի 11-ին Վեհիբ Մահմուտ փաշան տեղեկացրել էր Ա. Չիսնեկելուն, որ Հյուսիսային Կովկասը հայտարարել է իրեն անկախ և նրա պատվիրակությունն, որը մինչ այդ գտնվում էր Ստամբուլում, բուրք բանագնացների հետ միավիճ մնելի է Բարու: Լեռնականների ներկայացուցիչների հայտնելը Բարումում Օսմանյան կայսրության նախաձեռնությունն էր, բանգի նրանց նախառակ պիտի մներ Թուրքիայի հովանավորության ներքո միություն կազմել Այսրկովկայացան մահմեդականների հետ (տես Եզնօվյ Թօնօսօլ, Ճատշմօնի Յոհաննես 184-186):

¹⁵¹История Абхазии, с. 291.

¹⁵²«Доброболъческий» меморандум. – «БОРЬБА», 3. IV. 1919.

¹⁵³Այս անորոշ ձևակերպումը վկայում է շարունակական պայքարի մասին հյուսիսկայացան և հարավկովկայացան կողմնորոշումների միջև:

դամը, որի մասին յայտնել Բարումի հաշտարար պատվիրակութեան, որին լիազօրում են մասնակցել կոնֆերենցիայի աշխատանքներին: Ըստ այսմ ժողովը նկատում է, որ բացի հաւաքած անձերից, ոչ-ոք լիազօր չէ և չի լիազօրում մտնել կոնֆերենցիայի մէջ արխագ ժողովրդի անունից»¹⁵⁴: 1918 թ. մայիսի 29-ին Վ. Զուղելին ՎԱԽ-ի գործկոմի նիստում զեկուցում էր՝ «Երբ ժամանեցինք Սուխում, խկույն... ընտրեցինք պատվիրակություն, որը պետք է Բարումում հաղորդեր բուրքերին, թէ ավելի վաղ եկած ներկայացուցիչները չեն հանդիսանում ժողովրդի լիազորներ և գործում են ինքնակամ...»¹⁵⁵:

Օգտվելով Վ. Զուղելիի աջակցությունից, պատվիրակությունը մեկնեց Բարում՝ մերժելու առաջին պատվիրակության լիազօրությունները և հայտարարելու այսրկովկասյան դաշնությանն Արխագիայի անդամակցելու մասին¹⁵⁶: Կոնֆերանսում, սակայն, տեղի ունեցավ անսպասելի միջադեպ. «Երկրորդ» ԱԺԽ-ի պատվիրակության մի մասն աջակցեց Ա. Շերվաշիձեին հյուսիսկովկասյան լեռնականների հետ միության հարցում¹⁵⁷: Կիուտը, Գիցրան, Ավիճբան, Բագավիշը ստորագրեցին ՍՕԳԿ-ի արտգործնախարար Հայդար Բամարովին հղած հոչակագիրը, որտեղ հայտարարվում էր Արխագիայի ցանկության մասին՝ ներկայացված լինել այդ հանրապետության կազմում¹⁵⁸: Հետազայում պատվիրակության այս անդամները բացատրում էին նման պահիվածքը տրված լիազօրությունների ավելի լայն մեկնաբանությամբ, թէ Արխագիան հանդիսանում է ոչ միայն այսրկովկասյան ժողովուրդների ընտանիքի անդամ, այլև ամբողջ Կովկասի¹⁵⁹:

1918 թ. մարտին ձևավորվել էր Թերերի խորհրդային հանրապետություն¹⁶⁰ և ՍՕԳԿ-ի կառավարությունը ստիպված էր լրել Վաղիկավկազը, մեկնելով Թիֆլիս, իսկ երբ 1918 թ. նոյեմբերին Դարստան մտան բուրքական զորքերը՝ տեղափոխվել էր Թեմիր-Խան-Շուրա¹⁶¹: Չնայած, որ լեռնականների հանրապետության կառավարությունը երկար ժամանակ պատսպարվել էր Թիֆլիսի «Օրիանտ» հյուրանոցում, այն շարունակ պնդում էր Արխագիայի նկատմամբ իր իրավունքների մասին: Հ. Բամարովը 1918 թ. հունիսին բողոք էր ներկայացրել Վրաս-

¹⁵⁴ Տե՛ս Արխագիա. – «ՀՈՐԻԶՈՆ», 22.V. 1918: Նաև՝ Արխագիա. – «ՍՇԱԿ», 23.V. 1918:

¹⁵⁵ ԱՄԱԽԱՐԻ. Դ. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 79:

¹⁵⁶ «Տայարացքագույն», 23 մայոս 1918.

¹⁵⁷ ՉՕԿԱ. Ա. Մ. Հայութ. Տ. 3. Սუխumi, 1976, ս. 80.

¹⁵⁸ ԲԱԿՐԱՁԵ Լ. Նշվ. աշխ., էջ 337:

¹⁵⁹ ՎԿՊ(Բ), ֆ. 1938, գ. 1, գ. 278, թ. 12-14:

¹⁶⁰ Տե՛ս ԿՈՐԵՆԵՎ Դ. Յ. Թերության առաջնային պատվիրակության աշխատանքները 1917-1918 թթ. Օրդյոնուկիձե, 1967.

¹⁶¹ Մամուլում մատնանշում էր, որ "...только турецкие штыки дали возможность этому правительству переехать из тифлисской гостиницы "Ориант" в Темир-Хан-Шуру" (А-սկի Յ. Վ Տերսկոյ օլուստի. – "КАВКАЗСКОЕ СЛОВО", 4. IV. 1919).

տանի կառավարությանը, ինչպես նաև Կովկասում գերմանական դիվանագիտական ներկայացուցչության պետ կոմս Ֆ. ֆոն Շուկենբուրգին՝ Արխագիայում փրացական զորքերի ապօրինի գտնվելու վերաբերյալ¹⁶²: 1918 թ. օգոստոսին ՍՕԳԿ-ի կառավարության նախագահ Արդուլ-Մեջին (Տափիա) Զերմուել լրացուցիչ բողոքով դիմեց գերմանական ներկայացուցիչներին, գրելով. «Դմ կառավարության անունից ես ամենայն կտրականությամբ բողոքում եմ Արխագիայում Վրաստանի վարչագծի դեմ, որը հանդիսանում է «Կովկասի լեռնականների միության» դաշնային հանրապետության բաղկացուցիչ մասը և ծանր հետևանքներից խուսափելու նպատակով իմ կառավարությունն առաջարկում է անհապաղ դրսություն քերել Արխագիայից փրացական զորքերը, պաշտոնյաներին և էմիսարներին»¹⁶³:

1918 թ. Արխագիայի ճակատագրի շուրջ առաջացած դիվանագիտական դավերը բխում էին Կովկասի տարածաշրջանում բուրգ-գերմանական մրցակցությունից¹⁶⁴: Թուրքական զորքերի ներխուժումը տրոհեց Այրիկովկասի միասնությունը: Այդ պահին թուրքամետ կողմնորոշում ունեցող արխազ զորձիների ջանքերը՝ Արխագիան հյուսիսկովկայան լեռնականների հանրապետության մաս դարձնելու ուղղությամբ, ապարդյուն եղան, քանի որ Թուրքիայի ավագ դաշնակից Գերմանիան իր վրա վերց-

¹⁶² Союз объединенных горцев., с. 132. Նաև՝ ՎԿՊ(Ա), ф. 1861, գ. 2, գ. 13.

¹⁶³ Союз объединенных горцев., с. 133-135. Այս անդամական բոյլ է տվել արևիսական պատմաբաններին համոզված գրել. թե. «...на Батумской конференции в мае 1918 г. был решен вопрос о независимости Северо-Кавказской республики (в русских источниках "Горская Республика"), в состав которой вошла и Абхазия" (История Абхазии, с. 299. Նաև՝ ԼАКОБԱ Ս. Յ. Абхазия после двух империй, с. 13, 46, 49); «На момент провозглашения 26 мая [1918 г.] Акта о независимости Грузии Абхазия была вне пределов ее территории, так как с 11 мая [1918 г.] являлась частью Республики горцев Кавказа...» (ЛАКОБԱ Ս. Յ. К Вопросу о Кавказской конфедерации. Абхазия и Грузия: Вместе или врозь?, с. 158. Նույնի՝ Абхазия после двух империй, с. 50); «...Во второй половине июня 1918 г. Абхазия, как часть Горской Республики, была оккупирована до февраля 1921 года войсками Грузинской Демократической Республики» (МАРЫХУБԱ Ի. Նշվ. աշխ.., էջ 38). Բանավիճելով իիշյալ տեսակետների դեմ վրաց պատմաբան է. Խոչտարիս-Բրուսեն գրում է. «Характерно, что в апреле 1918 года Горская Республика равнодушно наблюдала за большевистским мятежом в Абхазии, ничуть не беспокоясь о том, что его результатом явилась бы утрата всякой самостоятельности Абхазии, а на помочь абхазам пришли части грузинской гвардии, присланые Закавказским сеймом, которые вместе с отрядами абхазских патриотов разгромили большевиков и восстановили власть АНС» (ХОШТАРИЯ-БРОССЕ Է. Նշվ. աշխ.., էջ 54), ինչպես նաև «Абхазия... составляет органическую часть Грузии и никогда не была (да и не могла быть) за-воёвана — ни в 1918 году, вопреки утверждению абхазских сепаратистов...» (նոյն տեղում, էջ 53).

¹⁶⁴ Մանրամասն տնտ ՊИПИЯ Գ. Վ. Գерманский империализм в Закавказье в 1910-1918 гг. Москва, 1978, с. 131-140.

թեց նորաստեղծ վրացական պետության հովանավորության առաքելությունը¹⁶⁵: Ինչպես զրում էր գերմանական պետական և ռազմական զորդիչ Է. Լյուդենհորֆը՝ Վրաստանի նկատմամբ հովանավորությունը Գերմանիային Թուրքիայից անկախ ճանապարհ էր տալիս դեպի Բաքու¹⁶⁶: Վրացիները մերձեցան Գերմանիային, դրանով իսկ զերծ պահեցին իրենց տարածքները բորբական նվաճումներից: Փորիում վրաց-գերմանական բանակցություններից հետո զերմանական պատվիրակության զրուխ գեներալ Օստոտ ֆոն Լոստովը մայիսի 28-ին գաղտնի նամակ էր հղել վրացական կառավարությանը, որտեղ նկարագրում էր Վրաստանի Հանրապետության տարածքային կազմը: Վրացական նորակազմ պետության սահմանների հարցը, փաստորեն, լուծվում էր գերմանական գերազույն հրամանատարության հայեցողությամբ: Վրաստանի կառավարության իրավասությունը պետք է տարածվեր ինչպես Թիֆլիսի ու Քուրայիսի նահանգների, այդպես էլ Սովորությունի շրջանի վրա: Ենթադրվում էր, որ վերջինս Վրաստանի անքաժան մաս կլիներ, եթե վրացական պետությունը որպես անկախ միավոր ճանաչվեր միջազգային վեհաժողովում: Վրաստանի մասնակցության պարագայում կովկասյան ժողովուրդների ենթադրյալ համադաշնությանը, Սովորությունի շրջանի բնակչությանը, ըստ Լոստովի, պետք է արամադրվեր ընտրության հնարավորություն՝ մնալ Վրաստանի կազմում, անդամակցել լեռնական ժողովուրդների միության մեջ, կամ էլ լինել հավասար անդամ համադաշնությունում¹⁶⁷: Ակնհայտ է, որ Արխագիայի նկատմամբ վերապահումը չէր հանդիսանում նրա ժողովուրդի ինքնորոշման իրավունքի ճանաչում: Դա նպատակ էր հետապնդում հանգստացնել դաշնակից Թուրքիային, որն ուներ նվաճողական տրամադրություններ Կովկասի նկատմամբ: Միաժամանակ Գերմանիան հույսեր էր փայփայում, ապագայում տարածաշրջանից դուրս մղելով Թուրքիային, Կովկասյան համադաշնություն ստեղծել իր հովանավորության ներքո¹⁶⁸:

¹⁶⁵ Թուրք գործիչները չին ուզում համակերպել այդ նորի հետ: Վեհիքը զարմանք էր հայտնում, թե «վրայոտ են ինեւ խելազարներ, որոնք կարծում են, թե Վրաստանի պատճառով Գերմանիան կախի վիճեւ բորբերի հետ» (ԱՎԵՏԻՒՅՑԱՆ Հ. Նշվ. էջ 251):

¹⁶⁶ Германские оккупанты в Грузии в 1918 году. Сбор. док. и мат., сост. ГАБРИЧИДЗЕ М. М. Тбилиси, 1942, с. 150-155.

¹⁶⁷ АВАЛОВ З. Д. Независимость Грузии в международной политике 1918-1921 гг. Париж, 1924, с. 68-69. Ս. Լալիքրան այդ սկզբունքի մեջ տեսնում է արխաց ժողովուրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումը, քանի պատմաբանի կարծիքով, Բարումում գերմանական կողմը հաշվի էր նաև արխաց քանազաների փաստարկների հետ (ЛАКОБА С. З. Абхазия после добычи империй, с. 49): Վրայ հետազոտող, սակայն, հայտնում է. «Немецкие источники сожалением отмечают, что абхазские делегаты до такой степени находились под турецким влиянием, что даже не подходили к немецкой делегации» (БАКРАДЗЕ Л. Նշվ. աշխ., էջ 338):

¹⁶⁸ Գերմանիայի արտգործնախարար ֆոն Կյուլմանը 1918 թ. մայիսին ասում էր, թե «Գերմանիայում... խոսուն են Կովկասում գերմանական գտնութակալական պետության

Այս պարագայում Արխագիայի գործոնը Գերմանիան կարող էր ծառացնել իր շահին: Հավանաբար այդ նպատակով Արխագիան վերջնականապես չէր ճանաչվել որպես Վրաստանի անքածանելի մասը, ինչը վկայում է Կովկասում գերմանական զորքերի հրամանատար Կրեսս Ֆոն Կրեսսենշտայնի 1918 թ. սեպտեմբերի 9-ին Գերմանիայի ՆԳՆ հղած նամակը, որտեղ նա պնդում էր, որ «ցեռևս վիճելի տարածքներում (խոր Արխագիայի մասին է. - Բ. Ա.), մինչև նրանց պատկանելության մասին վերջնական վճիռը, պետք է հարգվի այն երկրի ուսումնական բոնագրավումը, որի գորքերն առաջին են ներթափանցել կարգ ու կանոն հաստատելու համար: Նահանջն այս սկզբունքից իրավունք կտար նաև Վրաստանին զորքեր ուղարկել այն տարածքներ, որոնք վիճակարույց են Վրաստանի ու Աղրբեջանի միջև¹⁶⁹ և ներկա ժամանակ գտնվում են բուրքական բոնագրավման տակը»¹⁷⁰:

Գերմանիան խանդով էր նայում, թե ինչպես Բարումում Թուրքիան ձեռք բերեց միակողմանի առավելություններ և պնդեց, որ իրավիրվի մի նոր կոնֆերանս: Նախատեսվում էր, որ Կոնստանդնոպոլսում այժմ պիտի բանակցեին Քառյակ միության և կովկասյան նորաստեղծ հանրապետությունների ներկայացուցիչները¹⁷¹: Հակավրացական ճամբարին պատկանող արխազ գործիչները փափազ ունեին, որ այդ վեհաժողովում Արխագիան ի վերջո կճանաչվի իբրև լեռնականների հանրապետության դաշնային անդամ: Ա. Բասարիան, որպես ՍՕԳԿ-ի լիազոր, մեկնել էր Թուրքիայի մայրաքաղաք՝ Սակայն, ինչպես հայտնի է, կոնֆերանսը պաշտոնապես այդպես էլ չգումարվեց:

ստեղծման բոլորովին ցնորամիտ ծրագրի մասին» (*Политика Германии в Закавказье в 1918 году*. Сб. документов, сост. ПИПИЯ Г. В. Тб., 1971, док. N 1, с. 30): Գերմանական վերնախավի պատրանքները նրանով չէին ավարտվում: Կայզր Վիկտոր Մատուցում Արխագիան ի վերջո կճանաչվի իբրև լեռնականների հանրապետության դաշնային անդամ: U. Բասարիան, որպես ՍՕԳԿ-ի լիազոր, մեկնել էր Թուրքիայի մայրաքաղաք՝ ԱՎԱԼՈՎ Զ. Դ. Նշվ. աշխ., էջ 78):

¹⁶⁹ Կոնֆիլիտ Վրաստանի և Աղրբեջանի միջև. – «ՀՈՐԻԶՈՆ», 27. VII. 1918: Նաև՝ Մրցագեաց Վրաստանի և Աղրբեջանի միջև. – «ՄԱԿԱ», 27.VII. 1918: Բ. Բայկովը գրում է: «...Империализм... толкнувший Грузию на овладение Самурзаканью и Абхазией с г. г. Сухумом и Сочи, несмотря на то, что ни в прошлом, ни в настоящем народ Грузии не имел там никаких интересов и грузины составляли там лишь незначительное меньшинство, толкнул и Азербайджан на предъявление Грузии требования о включении в территорию Азербайджана Закатальского округа... населенный лезгинами ... тем менее было оснований считать его частью никогда не существовавшего исторически Азербайджана... на примере притязаний Азербайджана на Закатальский округ наглядно вырисовывается то влияние, которое играла Турция в политике Азербайджана» (БАЙКОВ Б. Նշվ. աշխ., էջ 172).

¹⁷⁰ ԲԱԿՐԱԴՅԵ Լ. Նշվ. աշխ., էջ 339:

¹⁷¹ Կոնստանդնուպոլիսի կրթիքենցիան. – «ՀՈՐԻԶՈՆ», 22.VI. 1918: Նաև՝ Կ. Պոլիկ կոնֆերենցիան. – տե՛ս նույն օրաբերքը 4.VIII. 1918:

¹⁷² ԲԱՍԱՐԻԱ Ս. Պ. Հայրական պատմություններ. Սակայն, 1967, ս. 11.

Վրաստանի անկախության հոչակման պահին Աբխազիան կառավարվում էր ՎԱԽ-ին ենթակա ռազմական ուժի կողմից, հետևապես Վրացական կառավարությունը ստանում էր լուրջ առաջնություն երկրամասի կարգավիճակի խնդրի լուծման մեջ¹⁷³: ԱԺԽ-ն անտեղյակ լինելով Վրաստանի սահմանների հարցում ձեռք բերած վրաց-զերմանական պայմանագրածուրյունների մասին՝ 1918 թ. հունիսի 2-ին որոշում ընդունեց Վրաստանի Հանրապետության հետ հարաբերությունների վերաբերյալ: «Անդրկովկասյան դաշնային հանրապետության կազմալուծման պահից ու Վրաստանի անկախության հոչակման հետևանքով, - ասված է փաստաթրում, - Աբխազիան զրկվել է Վրաստանի հետ որևէ իրավական կապ ունենալու հիմքից: Անդրկովկասյան Կարմիր գվարդիայի ջոկատը, հանդիսանալով ներկա ժամանակ Վրացական հանրապետության գորամաս, հայտնվել է իր պետության սահմաններից դուրս, սակայն իշխանության ամբողջականությունն իրականում գտնվում էր նրա ձեռքերում»: Ելենով նշվածից ԱԺԽ-ն որոշել էր. «Ի նկատի ունենալով ստեղծված իրավիճակը՝ Աբխազիայի սահմաններում ընդունել իշխանության ամբողջականությունը»: Որոշման այս մասն արտահայտում էր Աբխազիայի ինքնուրույնության կողմնակիցների տեսակետը, իսկ փաստաթրությունը շարունակությունը վկայում է ԱԺԽ-ում նաև «Վրացամետ» ճամբարի գոյության մասին: «Ի նկատի ունենալով ուժեղ պետական իշխանության ձևավորման գործում և՝ Աբխազիայի, և՝ Վրաստանի կենսական շահերը՝ երկու երկրին էլ համախմբված և համերաշխ աշխատանքի անհրաժեշտություն են թելադրում՝ ինչպես Աբխազիայում, այդպես էլ Վրաստանում», - պնդում էին վերջինիս հետ դաշինք կապելու կողմնակիցները, որոնց չափավորում էին «անկախականները»՝ «...սակայն թույլ չտալով որևէ մեկի ինքնիշխան իրավունքների նկատմամբ հարևանների ոչ մի ուսնձգություն»: ԱԺԽ-ն, արտահայտելով «Վրացամետ» անդամների տեսակետը, որոշել էր նաև «դիմել Վրացական ազգային խորհրդին բարեկամական առաջարկով՝ օգնություն ցուցաբերել Աբխազիայում պետական իշխանության ձևավորման գործում, բողնելով... [ԱԺԽ-ի] ենթակայության տակ ներկա ժամանակ Սուխումում գտնվող վրացական կարմիր

¹⁷³ Աբխազ պատմաբանները պետում են, թե «на момент провозглашения Акта о независимости Грузии и его подписания, Абхазия, как самостоятельная страна, находилась вне пределов её территории» (*История Абхазии*, с. 79), սակայն անտեսում են վրացական գվարդիայի իրամանատարության ձեռքերում այլ պահին իշխանության գտնվելու փաստը: Այս գործոնի մասին ասպած էր նաև Ա. Դեմիքինին իդանամակում, որը կազմել էին «հակավագացական» թիվ գործինը. «[Абхазский народ] был вынужден просить помочь у Грузии против большевиков. Воспользовавшись этим, грузины ввели в Сухумский округ свои войска, поставили свою администрацию...» (ДЕНИКИН-ЮДЕНИЧ-ВРАНГЕЛЬ. *Мемуары*. М.-Л., 1931, с. 101).

զվարդիայի ջոկատը»¹⁷⁴: Արխագիայի կարգավիճակի վերաբերյալ 1918 թ. հունիսի 2-ի ԱԺԽ-ի որոշումն արտահայտում էր երկու մոտեցում՝ լինելով նախապես պատրաստված նախագծերի արհեստական միաձուլման արդյունք: Նոյն որոշումով ԱԺԽ-ն հանձնարարում էր Թիֆլիսում գտնվող իր անդամներին՝ Վ. Գուրջուային, Գ. Աջամովին, Գ. Թումանովին, որոնց պեսոք է միանար Ռ. Կակուրան (Կակուրավան), բանակցություններ վարել Վրաստանի կառավարության հետ՝ հենվելով որդեգրած դրույթների վրա: «Զկարողանալով սեփական ուժերով պայքարել բոլշևիկների դեմ՝ Արխագավական ժողովդական խորհուրդը, հանձինս իր լիազորների, դիմել էր վրացական կառավարության օգնությանը...»¹⁷⁵: Դա վերաբերում է այն թիվն, որը պայմանական կարելի է կոչել «վրացամետու»: Նոյն կերպով կարելի էր բնութագրել և «քրորամետու» ուղղությունը: Երկուսի շարժադրիները կայանում էին բոլշևիկյան կարգախոսների ներքո համախմբված հողազորկ զյուղացիների սոցիալական պահանջների հանդեպ ունեոր խավի մտահոգության մեջ: Ի տարբերություն «վրացամետների»՝ «քրորամետները», ապավինելով Կովկասի լեռնականների և Թուրքիայի օգնությանը, հարց էին բարձրացնում ոչ արխազ ազգությունների հեռացման մասին, ինչու ունենալով այդ միջոցով մեղմացնել սոցիալական խնդիրը:

Ուստական կայսրության տապալումից հետո արխագավական ազգային շարժման մի շարք գործիչներ, ինչպես նշվել է, առաջ քաշեցին ժուրքիայից մուհաջիրների հայրենադարձության գաղափարը, միաժամանակ Արխագիայի հայերին և հոյսներին հայտարարելով իրավագորկ և ժամանակավոր բնակիչներ, որոնց մեծ մասն այդպես էլ մնացել էր գաղթականի կարգավիճակում և համարվում էր բուրքահպատակ¹⁷⁶: Լայն տարածում ուներ «Արխագիան» արխազների հանար» կարգախոսը¹⁷⁷: Հայտնի է Սովորումի քաղաքագլուխ Վ. Զիմիկվիշվիլու 1918 թ. փետրվարին արված վկայությունն այն մասին, թե արխազներն

¹⁷⁴ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 413, վագ. N 224:

¹⁷⁵ ДЗИДЗАРИЯ Г. А. Очерк., с. 183. Որ դա այդպես էր, վկայում է ԱԺԽ-ի անդամ Վլատիմիր Էնուխսարիի 1918 թ. հուլիսի 12-ի հեռազիրը Սովորումի շրջանի կոմիսարի պաշտոնակատար Բ. Բասարիային, որտեղ նա հեգնորդն արձանագրում էր արխագավական իշխանությունների ենթակայության տակ որևէ ուժի բացակայության փաստը և առաջարկում էր դիմել Վրաստանի կառավարության օգնությանը: Էնուխսարին կորուկ պահանջում էր շնոշենդուտել վրացական գործերի գործողություններին խոռվարար զյուղացիների դեմ Սամորդականուն (ДЗИДЗАРИЯ Г. А. Очерк., с. 210. Նաև՝ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 76): Ծագման այս տարածքից էին Վրաստանի հետ դաշինք կապելու որոշ արխազ կողմնակիցները՝ իշխաններ Դմիտրի և Վլատիմիր Էնուխսարիները, իրավաբան Գրիգորի Զուխբայան, ճարտարագետ Ռաշեն Կակուրան և այլք:

¹⁷⁶ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61:

¹⁷⁷ «Երանեաց», 17 ձեռօսոց 1918.

ունեն հաշտ դիրքորոշում երկրամասի բոլոր ազգությունների նկատմամբ¹⁷⁸: «Ի՞նենց իմա՝ արխազմերի. - Բ. Մ.] յարաբերութիւնը դէպի շրջապատի ազգերը առերես լւա է - բարեկամական, բայց ներքուստ վատ են տրամադրուած դէպի հայերը, մանաւանդ դէպի մինզրելները: Վերջիններիս ինտ յարաբերութիւնը աւելի սրտած է նրա համար, որ մինզրելները ոուսահպատակ լինելով՝ կարող են հոդային խնդրում մեծ դեր խաղալ ի վճար արխազ իշխանների և կալածատերերի՝ իսկ հայերը որպէս տաճկահպատակ օադրականներ՝ այդ չեն կարող անել: Նրանց թվում է, թէ մինչև իսկ պետական օրէնքի ոժով հայերին կարող են հեռացնել իրենց երկրից և այդպիսով ազատած կը լինեն իրենց հոդերի սոցիալիզմացիայից»¹⁷⁹: Արխազմերի կողմից այդ ուղղությամբ կատարված առաջին քայլերից մնկը եղավ Սովորումի շրջանի բուրքերին ոտքի հանելն ընդուն տեղի հայերի: Շրջանից հաղորդում էին, որ «ափխազմերը հետզինետ զօրանալով իրենց վերաբերմունքը փոխում են [հայերի հանդեպ և] թիւրքերին ու պարսիկներին գէնը են բաժանում: Գիտերում սպառնում են հայերին եւ պահանջում, որ հեռանան այդ հոդերից: ...Ափխազմերի ու վրացինների յարաբերութիւնը [ևս] սրված է»¹⁸⁰: Գուղասուտայի օավառում բնակվող հայերը (հատկապես Պսիրցիս, Անուխվա, Մծարա գյուղերում) կողոպսվեցին բուրքամեն արխազմերի և տեղի բուրքերի կողմից¹⁸¹: 1918 թ. մայիսի 22-ին Վ. Զուլելիին դիմել էին Սովորումի Հայկական կոմիտեի լիազորները: Նրանք տեղինացնում էին նոր իշխանության ներկայացուցչին, որ հայերը կամենում են լրել շրջանը և գտնել իրենց համար այլ ապաստան: Զուլելին ամեն կերպ փորձում էր փոխել այդ մտադրությունը՝ ասելով, որ հայերի մեկնումը մեծ վճար կիացնի ողջ շրջանին¹⁸²: Այդ օրերին Թիֆլիսի մամուլում լույս ընծայվեց մի գրություն Արխազիայից, որտեղ ասված էր. «Հայերի դրութիւնը Սովորումի շրջանում ծանր է: Հարևանները դէպի մեզ թշնամական վերաբերմունք են ցոյց տալիս, [քանզի] մի քանի արխազ իշխաններ գնացել են Բարում խնդրելու թիւրքերին, որ նրանք գրաւեն Արխազիան: [Հետևապես] հայերը մտածում են զարդել [դէպի] Սոչի, Ալլեր և այլ [իյուսիսային] ծովափենայ քաղաքներ»¹⁸³: Նախկին տրապիզոնահայերը լավ գիտենալով թուրք-օսմանների բարբարոս բարքերը, բնականաբար գտնում էին, որ նրանց հնարավոր մուտքը Ար-

¹⁷⁸ Պո Կաթազ. – “КАВКАЗСКОЕ СЛОВО”, 27.II.1918.

¹⁷⁹ ԱՐԾՎԱԼՅԱ Գ. Թիֆլիսից – Հիսիային Կովկաս. – «ՀՈՐԻԶՈՆ», 24. IV. 1918:

¹⁸⁰ Սովորումի դայրերը. – «ՀՈՐԻԶՈՆ», 8. III. 1918:

¹⁸¹ ԳԱՄԱԽԱՐԻԱ Դ. – ГОГИԱ Ե. Նշլ. աշխ., էջ 90:

¹⁸² ՋԽՈԳԵԼԻ Վ. Տյայելու քրեստ (Յանչի արօնագույն քարտուղարություն) 22.XII.1918.

¹⁸³ Հայերի դրութիւնը Սովորումի շրջանում. – «ՀՈՐԻԶՈՆ», 26.V. 1918:

խազիա դառնալու է մեծամեծ շարիքների պատճառ... Սովորությունը հայկական կոմիտեի անդամների վկայությամբ, նրանք 1918 թ. ողբերգական օրերին դիմել էին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին և ՀՀ կառավարությանը՝ հայրենադարձության խնդրանքով, սակայն մերժվել էին միջոցների և հարճար բնակելի տարածքների բացակայության պատճառով¹⁸⁴: Սովորությունը քաղաքային դրսայի իրավասու իշխան Ն. Թափղարիի ներքում էր, որ «արխագ զյուղացիները երազում են վտարել Արխազիայից վրացիներին և ընդհանրապես բոլոր վարձակալներին ու ինքնուրույն վերաբաշխել նրանց հողամասերը»¹⁸⁵: Տեղահան արվեց մոտ 400 հայ ընտանիք, որոնք ենուացան Կուբանի մարզ¹⁸⁶: 1918 թ. ամռանը ծևավորվեց Սովորությունը Հայոց շրջանային ազգային խորհուրդը (այսուհետև՝ ՀԱԽ), որն իր վրա վերցրեց տեղի հայերի ֆիզիկական և քաղաքական պաշտպանությունը: Քանզի արխագները, ունենալով բոլոր դիրքորոշում, ծառում էին բոլորերի միջոցով վտարել հայերին, այդ իսկ պատճառով ՀԱԽ-ն, հանձինս նրա սոցիալ-դեմոկրատական դեկավարության (Խաչատոր Ավդաբեզյան, Տիգրան Սողոմոնյան, Վահարշակ Աղեկյան, Երվանդ Մինասյան, Եղիա Մյուսելիմյան, Վահան Ռշտոնին և այլք), աջակցում էր Վրաստանի կառավարությանն Արխազիայում, որը, ի դեպ, շեշտում են նաև արդի վրաց պատմաբանները¹⁸⁷: ՀԱԽ-ի նախագահությունը, քաղաքական նախասսիրություններից ենելով, հոյս էր տածում, որ կուսակից վրաց «Ծնկերներից» կազմված իշխանությունն այն ուժն է, որը կպաշտպանի տեղի հայերին բոլորական վտանգից և արխագների ունձգություններից¹⁸⁸: ՀԱԽ-ի դեկավարությունը կողմնակից էր նաև ամրացնել հայությունն

¹⁸⁴ ՀԱԽ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 12:

¹⁸⁵ «Եժառուցք», 4 օցանօս 1919.

¹⁸⁶ ՀԱԽ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61: 1926 թ. մարդահանարք հաստատում է հայարավումը մեծամասամբ արխագ բնակչություն ունեցող Կողորդի և Գուղատասայի զավաներում: Տե՛ս ԼԵՋԱՎԱ Գ. Պ. *Изменение классово-национальной структуры населения Абхазии*. Сухуми, 1989, с. 16-20, таблица № 5.

¹⁸⁷ ГАМАХАРИЯ Դ. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 91: «Սովորությունը մէջ կան քանի մը հայ սոց. դժմուկատներ՝ ուսուցիչ Ալարքեանի վխատորթեանք: Անոնց դերն է օգաւորին առջև ստով և հաճելի ըլլալ տիրողին: Անոնք արգելք կը յարուցանեն հոն հայկական հիւպատոսարան հաստատուելուն, բայց կը պարտուին: Ընդգրկած են վրացական օրինատային և հակահայաստանեն բաղաքականությին», - գրում է Սոյիի ՀԱԽ-ի նախագահ Արամ Հակոբյանը: Տե՛ս Վրեմուահայ գաղուր մը Կովկասի մէջ. - «ՀԱՅՐՈՒՆԻՔ», 1931, դեկտեմբեր, էջ 153-154:

¹⁸⁸ ՀԱԽ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61: Երեանում 1918-1919 թթ. լոյս տեսնող սոցիալ-դեմոկրատական «ԿԱՅՅ» եկորյայի (Խմբագիր՝ Հայաստանի խորհրդի անդամ, տնտեսագետ և հրապարակախոս Խաղելոս Հայրապետի Ավդաբեզյան) ենդինակները «ամելի հակփած էին պաշտպանել իրենց կուսակից վրաց մեջլիկների կասագրությունը», գտնում է արդի հետագոտողը: Տե՛ս ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Հայաստանի Հանրապետությունը, գտնում է արդի հետագոտողը: Տե՛ս ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Հայաստանի Հանրապետությունը պարբերական մասմույթ պատմություն 1918-1920 թթ. Եր., 2005, էջ 48:

Արխագիայում¹⁸⁹: Այդ ցանկությունը չէր համընկնում ՀՀ կառավարության հեռանկարային ծրագրի հետ, որն առաջնային էր համարում հայրենադարձության սկզբունքը¹⁹⁰: ՀՅԴ-ի Սույսումի ճյուղը, ելնելով կու-

¹⁸⁹ 1920 թ. Սույսումի ՀԱԽ-ի անդամները դիմելով Վրաստաժի Հայոց ազգային խորհրդին գրում էին՝ «Ծնորիի ընտրովի Ազգային Խորհրդի գործունեութեան և վարած քաղաքականութեան, [շրջանի հայությունը] վերջին երեք փոքրուոս տարիների ընթացքում ապրել է անհամենատ ապահով վիճակում, թէ՝ հնիքական, թէ՝ կուտարական տեսակետից և շատ կողմերով ճախաճճելի օրինակ կարող է համարել Անդրկովկասի այս կանային անկինում ապաստանած հայութեան թեկողների համար: Սույսումի [Հայոց] Ազգ. Խորհրդի գլխաւոր խնդիրն է եղել, որ շրջանի հայութիւնը այնքան ժամանակ, ինչըան որ նա ապրում է այդ շրջանում, իր բախտը կապի տեղական միս ազգերի հետ և նրանց ինեւ համաշգրծակցելով ու բարի դրացիական հարեւանութեամբ ստեղծի ինչպէս շրջանի, այդպէս էլ իր համար ապահով դրուին՝ խապել շրջանում իրեւ իրաւատէր և պարտաճանաչ քաղաքացի, օգտել իրեւ լիազօր քաղաքացի դեմոկրատական հասարակացի պարզեած բոլոր իրաւունքներով, կառարել իրեւ պարտաճանաչ քաղաքացի պետութեան հանդեպ ունեցած բոլոր պարտականութիւնները: Ահա սա է եղել [Սույսումի ՀԱԽ-ի] վարած քաղաքականութեան ընդհանուր ողին: ...Դրուինը հասկանալու համար պէտք է ի նկատի ունենալ, որ հայ գիտացիութիւնը նախ բան յեղափոխութիւն ապրում էր տեղական [արքայական] իշխանների հողերի վրայ եւ [նրանց] նշակելու համար կապալավարձ էր վճարում, իսկ յեղափոխութիւնը յետոյ նա տէր է դարձել իր ձեռքում գտնուող հողաքամիններին և արդէն երեք տարի է, որ կապալավարձ չի վճարում: Բացի այս, հայ գիտացիների ձեռքում գտնուու են շրջանի լաւագոյն հողաքամինները: Որպէս զի հայ գիտացիութիւնը կարողանայ պահպանել իր հողերը եւ տնտեսութիւնը, նա պէտք է [Վրաստաժի] քաղաքացի լինի: Ենց այս նպատակով է, որ Սույսումի Շրջանի [Հայոց] Ազգ. Խորհրդի կողմից իրավիրած, [տեղի] հայութեան երեք համագումարները անհրաժեշտ են հանձնել դրական մտքով լուծել [Վրաստաժին] հպատակութեան խնդիրը: ...Միայն այս ճանապարհով կարենի է պաշտպանել ժողովրդի [բարեկեցիկ] տնտեսական դրութիւնը: Իսկ երեւ հայ գիտացին իրեն օտարահաստակ յայտարարի, [Վրաստաժի] հանրապետության կառանձնը իր քաղաքացիական պարտականութիւնները ըլլ կատարի, [ապա] նա թշուառ դրուեան մէջ կը զգի իրեն և իրավուրդի եւակ կը դառնայ, [ինեւնապես] նրա հողաքամինները գրավման կենարկին հարեւանների կողմից, որոնք իրեւ պէտութեան հպատակներ եւ իրավազօր քաղաքացիներ չեն բոլնի լաւ հողաքամինները օտարահաստակների ձեռքին: Բացի այս շոլէն տարրեն էլ զորձի կանցնեն և հայերը շատ պատահարների եւ վուանների կենքրարքներ: ...Այս բոլոր դատողութիւնները միայն տեսական հետարքքրութիւն չեն ներկայացնում, այլ իրոք հայ գիտացիների հողերը սկսել են նրանց մեզեր հարեւանները բռնազրակի: Տես ՎԱՀԱՆԱ ՈՒԾԸՆԻՒՅԻ. Սույսումի շրջանի Հայոց ազգային խորհրդի հրաժարական առիրիք. - «ԲԱՆԱՎՈՐԻ ԶԱՅՅ», 28. III.1920: Քանի որ հողագորկ մեզեր զուտացիները 1918 թ. դարձել էին բոլշևիզմի կողմանակիցները Արխագիայում, վրաց իշխանությունները նրանց մէջ ազգայնական տրամադրություններ էին տարածում՝ տցիալական պահանջներից գերծ պահելու նպատակով: Այդ քարոզության հետևանքով մեզերները, համարելով իրենց արտոնյալ տարր սկսել էին մրցել հայերի հողաքամիններին և կարողությանը տիրելու համար: Տես ՀԱՆԱ. ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 61-61 շրջ: Եւ ոչ միայն հայերի: Արխագիայի ուստի բնակությունները բոլորում եր իր ազգային խորհրդին Թիֆլիսում, որ մեզերները խորս են նրանց պատկանող հողերը: Տես Յօյնենս ռյացիկ Կոչչուման օրու հայության առաջնադարձության մասին պատմությունը»:

¹⁹⁰ Տես ՀԱՆԱ. ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 56: «Սույսումի շրջանից, տրապիզոնից հմուտ ծխախտու արդինաբերողներ Հայաստան կանչուեցին՝ ազնուացնելու Հայաստանի «СОЦИАЛ-ДЕМОКОРАТ», 31. I.1919.

սակցական սկզբունքներից, ավելի կարևորում էր Մխացյալ Հայաստանի, հետևապես ազգահավաքնան գաղափարները: Ուստի, ՀՅԴ-ի տեղական կոմիտեն դիտում էր Արխազիան իբրև ժամանակավոր բնակավայր և միանշանակ կողմ էր արտահայտվում հայրենադարձությանը: Նրա անդամները մերժել էին հակաբոլշևիկյան դաշինք կապելու վրաց «մենչևիկների» առաջարկը: Ծրջանի հայության ընդհանուր ժողովում որոշվեց չեզոր մնալ և շմանակցել որևէ հակամարտության, բացառությամբ բուրբական ներխուժման դեպքի: Արտաքուստ դա պատճառ հանդիսացավ բոլշևիկյան տրամադրություններ վերագրելու տեղի հայերին, որից օգտվելով վրաց գինվորականությունը հալածում էր հայ ազգաբնակչությանը: «Վրացական շովինիստները, զվաստրապէս գինատրականները, ամեն տեսակ պրովակացիաներով լարում են հայերի և վրացիների յարաբերությունները. նրանք հայերին հակապետական քայլերի մէջ են կասկածում, որ իրք թէ նրանք խմբեր են պատրաստում վրացի օօրքին հարածելու թիկունքից»¹⁹¹, — հաղորդում էր դեպքերի ականատեսը: Այդ շիկացած մքնոլորտում, ըստ ՀՅԴ-ի Սույսումի կոմիտեի անդամ Գրիգոր Հովսեփյանի, «քալանը ու սպանութիւնները ևս շատացան, նոյնիսկ բռնագրաւեցին հայերի սեփական արտերը»¹⁹²: Դա նաև հաստատում են ԱԺԽ-ի անդամներ՝ Ի. Մարգանիան և Ս. Թարենավան¹⁹³: Տուժել էին Արարա Արմյանսկայա, Լեճկոպ, Գումիստա, Էշերա, Կավարլուք, Կալդախվարա զյուղերի հայ բնակիչները: «Վրացական կանոնավոր զորամասերի դամանության ամեննին շիմնավորված դրսւորումները առաջացրել են խորը վիրավորանքի զգաց-

ծխախոտը» (տե՛ս Ռ.Ռ.ԲԵՆ. Հայ յեղափոխականի մը յիշատակները. Է, հատոր, Լու Անգլենս, 1952, էջ 298): 1919 թ. հուլիսի 21-ին Բարումում, Սույսումի ճոյուի նախաձեռնությանը, մեկնարկել էր տրավագիոնցիների հայրենակցական միուրյունների համագումարը, որի օրակարգում էր հայրենադարձության խնդիրը: Տե՛ս «ԱՇԽԱՍԱՎԱՐ», 8.VI.1919: Նաև՝ «ՆՈՐ ԱՇԽԱՍԱՎԱՐ», 25.VII.1919: Սույսումի շրջանում հայության իրավունքները պաշտպանելու բացված Հայաստանի Հանրապետության հյուպատոսարանը, նախապատրաստական աշխատանքները էր իրականացնում հայրենադարձության համար: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 350, թ. 6: Նոյն տեղում թ. 276, գ. 1, գ. 33, թ. 199, 200: Նոյն տեղում՝ գ. 155, թ. 2, 7: Նաև՝ ՎԿՊ(Դ), ֆ. 1861, գ. 2, գ. 95, թ. 2: Նաև տե՛ս Հայաստանի հիմաստոսարանը Սույսումում. — «ԺՈՂՈՎՐԴԻ ԶՈՅՆ», 14.VIII.1919: Նաև՝ Լրատու Սույսումի հիմաստոս. — «ԱՇԽԱՍԱՎԱՐ», 1. XI.1919: Նաև՝ Հրանուկա: Հանուկա: Հանուկա: Հանուկա: Հանուկա: Հանուկա: Հանուկա:

¹⁹¹ Դրույթներ Սույսում. — «ԱՇԽԱՍԱՎԱՐ», 5. X. 1918: «Վրաց գինուրեները, մասնաւրապէս արխազ ծխառը հայիրեակի մարդիկը անխնայ կը ծեծեն հայ գիւղացիները իրեւ բոլշևիկները, ինչպես նաև հայտնի եղավ, որ արխազներին «ծառայութեան կոչեր են, արտօնելով բաղանել հայերը»: Տե՛ս Արևմտահայ գաղոր մը Կովկասի մէջ. — «ՀԱՅՐԵՆԻՔ», 1931, հունիս, էջ 143-144:

¹⁹² ՀՅԴ-ի Վրաստանի 2-րդ ուսումնական ժողով. — «ԱՇԽԱՍԱՎԱՐ», 1. IV. 1918:

¹⁹³ Օմեթ «ծելեցաս» Հար. Հօթ. Աբխազս և գազ. «Բօրբա»: — «СОЦИАЛ-ДЕМОКРАТ», 13.X.1919.

մունք հայ բնակչության միջավայրում: Սպանությունները, բալանները, գյուղացիներից ծիերի ապօրինի առզրավումները և կանանց բռնաբարումները ուղեկցում էին զորամասերը ողջ ճանապարհին»¹⁹⁴, — բողոքում էր Վրաստանի վարչապետին և. Ավիալթօյանը: Հայերի ահարեկումը վրաց զինվորականության ձեռքով պայմանավորված էր ոչ միայն հակահայկական տրամադրությունների տարերային արտահայտումով, այլ նաև վրացական իշխանությունների առանձին ներկայացուցիչների դիրքորոշմամբ, ովքեր դիտավորյալ աշխարող էին անում այդ երևույթները՝ նպատակ ունենալով դուրս մղված հայ երկրագործների փոխարեն վերաբնակեցնել սակավահող վրաց գյուղացիներին և այդպիսով մեղմացնել սոցիալական հակասությունները վրաց հասարակության ներսում¹⁹⁵: Հայկական համայնքի մեծամասնությունը, այ-

¹⁹⁴ *Борьба за Октябрь в Абхазии (1917-1921)*, с. 98.

¹⁹⁵ «Այդ գտումների լաւ իս, - գրում է դեպքերի ականատեսը, - պարզ են. հայերը բրոնել են ծովեզերի լաւագոյն նամակը և տնտեսական խոչըր ոյժ են ներկայացնում: Ծխախոտագործութեան, օրինակ, մեծ քաժինը հայերի ծերոն է: Վրաց հանրապետութեան «սոցիալիստ» դեկապարմերն իրենց իմաստիրախսուական ծրագրերը միշտ Տուապսէ են հսկանում՝ ի նկատի ունենալով ծովագիլ քարձնել վրաց զարուաշը, որիս զինվորական կամաց առաջնային դիրքորոշություններին: Այս հաշիւներին, ի հարկէ հայերը չեն կարող օգտակար լինել և, ահա, վեսմու պրավдами և նեպրավдами ստարացած ու չեն կայիտ: Ենթադրություններում կամ ուղարկություններում պարտավորությունները պատկանում են ազգային ազգային անդամակցությունների շահերը, որի հետևանքով նրանց և վրաց իշխանությունների միջև փոխհարթերությունները կամա թե ականա լարգում էին: Ազգային փորքամասնությունների պահանջները վրաց քաղաքական շրջանակների կողմից երբեմն մեկնաբանվում էին որպես «հակավացական»: Ազգայնական կարգախոսների շուրջը վրաց ժողովրդի հանախմբան նպատակով՝ քաղաքական գործիքների մի մասը (խորհրդաբանի պատզամագիքներ՝ Վեհապետի, Գլաւապետի, Մաշարեթի և այլը) օգտագործում էր ներքին բշխանող զաղագարի՝ հանձինս ազգային փորքամասնությունների: Դրա հետևանքով պակաս չկին նաև դեպքեր, երբ վրաց ազգայնական մասնություն ոչ վրացի ազգաբնակչության, հատկապես հայերի, փորման կոչեր էին հնչում: Ենթադրություն ազգային մասին վրաց սոց.-դեմ. պաշտոնարերը գրում էր «Смысл каждой их речи сводился к тому, что все армяне, русские, осетины и проч. — враги грузинского народа, что против них надо принимать репрессивные меры. Изгнание армян в Армению, русских в Россию...». Ենթադրությունը գուգակցվում էր վրաց հասարակության ներսում ազգայնական տրամադրությունների աննախազկ անուվ. որը տեղերում երբեմն վերածվում էր հայահալած միջոցառությունների, քանզի վրաց հասարակության մի մասը տոգորված էր հայատայց տրամադրություններով: Վրաստանի ՀԱՀ-ի անդամները արձանագրում էին, որ «Փայ բնակչության նկատմամբ շուրջ երկու տարի տարբիտ անփառականության և ճնշան քաղաքականության արդյունքում զիերե ամեն հայ դիտվում է իրեւ պետության քննամի... Անկախ Վրաստանի գոյուրյան երկու տարբու հակահայուրյան ոչ թե բոլոցի է, այս հակատակը՝ ներքրագիլ վրացական հասարակության նորանք շրջանակներ, վերածվելով մտավորական երեւյրից զանգվածայինի» (տե՛ս ՀԱՀ, ֆ. 441, գ. 1, գ. 140, թ. 2-6): Ներադրվում էր, թե հակահայկական երևույթները

նուամենայնիվ, 1918 թ. դեմ չէր վրացական գերակայության հաստատմանը Սովորության շրջանում, հատկապես բոլորքական վտանգից խուսափելու նպատակով։ Հավանաբար, արխազահայությունը որոշել էր հաշտվել այդ կացության հետ և հաճարել այդ բոլորը շարյաց փոքրագույնը։

1918 թ. հունիսի 6-ին ԱժԽո-ի լիազորները ներկայացել էին Վրաստանի կառավարության նիստին, որը վարում էր ռազմական նախարար Գ. Գեորգաձեն։ Մամուլը հաղորդում էր, որ «պատվիրակությունը վրաց կառավարութեանը ներկայացրեց մի շարք պահանջներ, որոնց զիսաւոր իմաստն այն էր, որ Վրաստանի երկրամասում եղած արխագները կամնում են ունենալ անկախ բարձր իշխանությին և իրենց գործերը տնօրինել անկախ վրաց կառավարությունից։ Բանակցությունները շարունակում են»¹⁹⁶։ Նրանց ընթացքում պատվիրակության դեկազար Կակուրան շարադրել էր երկու փաստաբույր։ Առաջինը՝ պարունակում էր 1918 թ. հունիսի 2-ի որոշման ընդիհանրացված բովանդակությունը։ Երկրորդը՝ բոլոր էր ՎԱԽ-ին Արխազիայում Վրաստանի կառավարության վարքագիր նկատմամբ, ինչով խախտվում էին ԱժԽո-ի ինքնիշխան իրավունքները։ Կակուրան տեղեկացրել էր հաս ԱժԽո-ի որոշման մասին՝ շուտով իրավիրել Արխազիայի բոլոր ազգությունների համագումարը։ Իսկ մինչ այդ ԱժԽո-ն ակնկալում էր Վրաստանի կառավարության աջակցությունը ինչպես ուսումնական, այդպէս էլ ֆինանսական ոլորտներում, ընդդեմ իր քաղաքական հակառակորդների (քուրքամետների և բոլշևիկների)։

Վրաց հասարակական կարծիքը վաղուց հակված էր դիտել Արխազիան իրեր պատմական Վրաստանի մասնաբաժինը։ Հետևապես ծգութում էին վրացական նորակազմ հանրապետության տարածքին գումարել նաև Սովորության շրջանը։ Իրավական իմքն այդ ծգութում համար, սակայն, չկար։ Ուստի Թիֆլիսում առաջացավ վրաց-արխազական միութենական դաշնագրի կնքման գաղափարը¹⁹⁷։ Վրաստանի

իմքնականության այսպիսական գործարքը առաջնային դերում, որոնց միջամտությունը կամա թե ականա դժվարացնում էր վրաց բորբոքափայի կայացումը։ Տե՛ս ԱՌԽԱՆՅԱ Բ. Экономические и общественные основы армяно-грузинского антигегемонизма (критический анализ). Тифлис, 1914. Նաև՝ յշեաբամի ծովեցությունը կամա առաջարկությունը (XX եացյանու 10-օճո բնակչություն) // Ժառանչություն գումարացություն 5. տեղուցություն 1998, զ. 485-497.

¹⁹⁶ Արխազիայի անկախությունը. – «ՀՈՐԻԶՈՆ», 8. VI. 1918:

¹⁹⁷ Վրաց պատմաբանները հատուկ շեշտում են այդ հանգամանքը ասելով, թե «Грузинская Демократическая Республика терпеливо проводила политику присоединения своей исторической области – Абхазии путем заключения договоров, не прибегая при этом к использованию военной силы». Տե՛ս ГАМАХАРИЯ Դ. - ЧАНЯ В. «Оккупация» Абхазии: мифы и реальность?! – СГ, 1. V. 1991.

ռազմական նախարարը առաջարկեց ԱժԽ-ի բանագնացներին գործ-նականում ամրացնել երկու ժողովուրդների բարեկանական կապը: Հիշյալ հարցերի լրտեսան նպատակով փրացական կառավարությունը նույն օրը հանձնարարել էր արդարադատության (Շ. Ալեքսի-Սևսիփշ-վիլի) և երկրագործության (Շ. Խոմերիկի) նախարարներին կազմել երկու ժողովուրդների միջև դաշնագրի նախագիծը¹⁹⁸: Քանզի Արխագիայի հարցին նվիրված կառավարության նիստը վարում էր ռազմական նախարարը, ապա կարելի է ենթադրել, որ այդ պահին երկրամասի հետ կապված խնդիրները թիֆլսում դիտում էին ոչ թե քաղաքական ոլորտում՝ այլ ռազմական, ինչը վկայում է Գ. Գերզածեի կողմից Սուխումի շրջանում գեներալ-նահանգապետի նշանակման փաստը: Հունիսի 8-ին փրաց-արխազական համաձայնագրի նախագիծը պատրաստ էր և նրա բովանդակության մասին տեղյակ էր պահիվել ԱժԽ-ն: Սակայն մինչև Սուխումի կարծիքն իմանալը՝ ԱժԽ-ի լիազորներից փրացական կողմը պահանջում էր տալ նախնական համաձայնություն: Դա նաև է վկայում Կակուրայի հաղորդումը Սուխում, թե: «Վրացական կառավարությունը համաձայն է բանագործ կնքել մեզ հետ առաջարկվող համաձայնագիրը, այսինքն՝ նա կրավարարվի պատվիրակության բանագործ հավաստիացումներով և չի անդի դաշնագրի ստորագրման վրա: Ասեմ նաև, որ եթե ժողովրդական խորհուրդը խոսափում է իր վրա վերցնել առաջարկվող համաձայնագրի կնքման վերաբերյալ որևէ պատասխանատվություն, ապա պատվիրակությունը վերցնում է այդ պատասխանատվությունը»¹⁹⁹: Կակուրայի անհամբերությունը գուցե կարելի է բացատրել այն վարկածով, թե թիֆլսում ԱժԽ-ի լիազորներին ահարեկում էին մոտակա բուրքական ներխուժումով Արխագիա²⁰⁰: Այս դեպքում «վրացանոտությունը» բացախում է, քանի որ լիազորներից երեքը (քաջի Վ. Գուրջուայի) ոչ հեռու ապագայում դարձան մոլեգին ընդդիմադիրներ Արխագիայի գործերին թիֆլսի միջամտությանը: Թեև կա կարծիք, որ պայմանագրերի հապեապ վավերացման գործում սամուրզականցի Ո. Կակուրայի դիրքուժումն անշահագրիու չէր, քանզի թիֆլսում իրեն խոստացել էին Արխագիայի գործերով նախարարի պաշտոնը²⁰¹:

1918 թ. հունիսի 3-ին Բարումում կնքվեց դաշնագրի թուրքիայի և Համախմբված լեռնականների դեկավարների միջև²⁰²: Վերջիններս հավակնում էին Արխագիային այն հույսով, որ նրա վրայով անմիջական

¹⁹⁸ МЕНТЕШАШВИЛИ А. Из истории взаимоотношений..., с. 14-15.

¹⁹⁹ История Абхазии, с. 295.

²⁰⁰ Նոյն տեղում, էջ 294:

²⁰¹ ЛАКОБА С. З. Абхазия после дружих империй, с. 54.

²⁰² ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 80:

կապ կատեղծվի նրանց ավագ դաշնակցի և հովանավորի հետ: Ստեղծված իրավիճակում Վրաստանի կառավարությանն անհրաժեշտ էր որևէ փաստաբուղբ, որը դիմանագիտական պայքարում կօգներ ընդդիմանալ րուրական պահանջներին, որոնց գրյության մասին է վկայում ֆոն Կրեսի հիշյալ նամակը: Վրացական իշխանությունների և ԱԺԽ-ի միջև դաշնագրի կնքման անհրաժեշտությունը բխում էր նաև բոլշևիկյան վտանգից, որոնք Գագրայից դեռևս սպառնում էին Սովումին: Այսպիսով արխագ պատվիրակները, որոնք լիազորված էին միայն քանակցություններ վարել²⁰³, 1918 թ. հունիսի 8-ին, գերազանցելով սահմանված լիազորությունների չափը, վրաց նախարարների հետ համատեղ դաշնագրի կնքեցին: Զի բացառվում, որ այս ստորագրումը պարզապես եղավ նախորդ երկու օրում մշակած նախագծի վերջնական վավերացումը: Վրաստանի կառավարության հունիսի 8-ի որոշման առաջին կետում ասված է. «Հավանություն տալ Արխագիայի լիազորների հետ մշակած համաձայնագրի նախագծին»: Հնարավոր չէ ճշտորյանքը որոշել, ե՞րբ է գումարվել նիստը՝ դաշնագրի ստորագրումից առաջ, թե հետո: Սակայն որոշման երկրորդ և երրորդ կետերն արձանագրում էին՝ «Ֆինանսների նախարարին կարգադրել կազմուրել Սովումի գանձապետարանը բորադրամով» և «ներքին գործերի նախարարին՝ Արխագիա ուղել լրացուցիչ ջոկատ անարխիայի դեմ պայքարելու համար»²⁰⁴: Այս որոշումը բխում էր «հունիսի 8-ի դաշնագրի» բռվանդակությունից²⁰⁵ և հազիկ թե Վրաստանի կառավարությունը կայացներ այն՝ չունենալով ԱԺԽ-ի լիազորների ծեռքով որևէ վավերացված փաստաբուղբ: Սակայն ԱԺԽ-ի մեծ մասը հավանություն չտվեց Թիֆլիսում մշակած դաշնագրի տեքստին: Սովումում այն նոր խմբագրության արժանացավ, որը և հաստատվեց հունիսի 10-ին ԱԺԽ-ի կողմից²⁰⁶: Նրա նախկին նախագահ Ս. Բասարիան դարձյալ դեմ էր քվեարկել և գրավոր հայտնել էր իր առարկությունները: «Վրացական հանրապետության կողմից առաջարկվող դաշնագրի նախագիծը, - գրում էր նա, - ունի վերջնագրի բնույթ և հետևապես զրկում է ազատ մտածված քննարկման հնարավորությունից: Այսպիսի կարևոր ակտը՝ ինչպես առաջարկվող Վրաստանի հետ Արխագիայի դաշնագիրը՝ արվում է հապճեագորեն, Արխագական ժողովրդական խորիոյի անդամների սահմանափակ թվով և առանց Արխագիայի բնակչության գիտության, որը խորիում է իր բաղաքական ազատությունն՝ առանց

²⁰³ Նույն տեղում, էջ 413, վագ. N 224:

²⁰⁴ ՎԿՊ(Մ), ֆ. 1891, ց. 1, գ. 75, թ. 42 շրջ:

²⁰⁵ Տե՛ս ՎԿՊ(Մ), ֆ. 1861, ց. 2, գ. 37, թ. 58: Նաև՝ МЕНТЕШАШВИЛИ А. Историко-ческие предпосылки..., с. 75-76, док. N 2.

²⁰⁶ История Абхазии, с. 295.

որևէ մեկի կողմից հովանավորության: Ես առաջարկում եմ Արխազական ժողովրդական խորհրդին Վրաստանի վերջնագրին պատասխանել խնդրանքով՝ բնակչությանը հնարավորություն տալ գումարելու Արխազական Ազգային համագումար, որն իրավասու կիմի վերջնականապես սահմանել Արխազիայի քաղաքական կառուցվածքը՝ [նաև] հավաստիացնել Վրացական հանրապետությանը, որ Արխազիան որպես ինքնուրույն ազգային կառույց անպատճառ կենքի քարիդրացիական միուրյուններ և համաձայնագրեր Վրաստանի հետո»²⁰⁷:

1918 թ. հունիսի 11-ին Թիֆլիսում վավերացվեց դաշնագրի նոր բնագիրը, որը սկսվում էր նախարանով՝ «Արխազական ժողովրդական խորհրդը որոշեց լիազորել իր ներկայացուցիչներին... 1918 թ. փետրվարի 9-ի համաձայնագրի գարգաման և լրացման համար... Կմքել ներքոնշված դաշնագիրը...»²⁰⁸: Ինչպես առաջին տարբերակը (հունիսի 8-ի), այդպես էլ երկրորդը (հունիսի 11-ի) պատմագրության մեջ հետազոտվել են մասնակի, միակողմանի և տարածատված միմիանցից, այնին երկրորդը՝ առաջինի վերամշակված օրինակն է և բխում է նրանց: Միայն դիտելով երկու տարբերակները որպես միասնական ամբողջականություն, կարելի է ստույգ հաստատագրել նրանց միջև եղած պատճառահետևանքային կապը: «Հունիսի 11-ի դաշնագիրը» որոշակի կրկնում է հունիսի 8-ի տարբերակի բովանդակությունը, սակայն նրանում վերջինս չի հիշատակվում, ինչն ասում է նրա իրավական անզորության մասին: «Արխազիայի կառուցվածքին վերաբերող հարցերը վերջնականորեն վճռելու համար հնարավորինս մոտ ապագայում ժողովրդավարական սկզբունքներով հրավիրվում է Արխազիայի բնակչության համագումարը» (1-ին տարբերակ, կետ 7-րդ) անորոշ ծևակերպումը փոխարինվեց ավելի ստույգով՝ «Կնքված դաշնագիրը վերանայվում է Արխազիայի Ազգային ժողովում, որը պետք է վերջնականապես վճռի Արխազիայի քաղաքական կառուցվածքը և ճակատագիրը, ինչպես նաև Վրաստանի և Արխազիայի փոխհարաբերությունների հարցը» (2-րդ տարբերակ, կետ 1-ին): Ուազմական ոլորտում որոշվել էր, բացի Արխազիայում գտնվող վրացական գվարդիայի ջոկատի, ԱժԽ-ի տնօրինման տրամադրել ևս մեկը (1-ին տարբերակ, կետ 4-րդ), սակայն հստակեցմանը՝ «մինչև նրա կարիքը վերանա» (2-րդ տարբերակ, կետ 6-րդ): ԱժԽ-ին ենթակա կամավորական ջոկատի գումարման մտադրությունը (1-ին տարբերակ, կետ 5-րդ), փոխարինվեց կանոնավոր արխազական զորամասերի կազմակերպման պարտադիր պահանջով, որի դիմաց Վրաստանի հանրապետությունը պարտավորվում էր տրամադրել գենք և

²⁰⁷ Նոյն տեղում, էջ 297:

²⁰⁸ МЕНТЕШАШВИЛИ А. Исторические предпосылки.., с. 76-77, док. N 3.

անհրաժեշտ հանդերձանք (2-րդ տարբերակ, կետ 7-րդ)՝²⁰⁹ Վարչական ոլորտում ԱԺԽ-ն ստանձնում էր Արխազիայի ներքին կառավարումը (1-ին տարբերակ, կետ 2-րդ և 2-րդ տարբերակ, կետ 3-րդ): Վրաստանի կառավարության կից ստեղծվում էր Արխազիայի գործերով նախարարի պաշտոնը, որի թեկնածուն պետք է նշանակվել ԱԺԽ-ի առաջարկով և հանդիսանում էր վերջինիս լիազորը, որի հետ վրաց կառավարությունն առնչվում էր Արխազիային վերաբերող հարցերի քննարկման և վճռման դեպքում (2-րդ տարբերակ, կետ 2-րդ): Այս պաշտոնի գոյուրյունը դիտվում էր արխազների կողմից իրք դիվանագիտական ներկայացուցություն²¹⁰: Օրենսդրական ոլորտում հունիսի 11-ին որոշվել էր առաջնորդվել Այսրկովկասի Սեյմի օրենքներով (կետ 8-րդ), ի տարբերություն նախորդ որոշմանը՝ գործել «Վրաստանի ընդհանուր օրենքներով» (կետ 6-րդ): Երկրորդ տարբերակը շեշտում էր, որ արտաքին քաղաքականության հարցերում Վրաստանը հանդիսանում է երկու պայմանավորվող կողմերի ներկայացուցիչ (կետ 4-րդ): Պատմաբան Ա. Մենթեշաշվիլին պնդում է, թե «հունիսի 8-ի դաշնագրով Արխազիային տրամադրվել էր լայն ինքնավարություն»²¹¹: Սակայն, վրաց-արխազական դաշնագրերի տեքստում, այնուամենայնիվ, Արխազիայի կարգավիճակը չի որակափորկում իրք «ինքնավար»: 1918 թ. հունիսի 11-ի ավելի շահեկան դաշնագիրը Արխազիային երաշխավորում էր ոչ միայն լայն իրավունքներ, այլև արխազական կողմն ընկալում էր այն, որպես երկու պետական կառույցնե-

²⁰⁹ Ինչ նշանակություն ուներ արխազ գործիչների համար այս պայմանը՝ վկայում է 1918 թ. հունիսի ԱԺԽ-ի անդամներ Գ. Թումանյանի և Ս. Թարնավայի գործունեությունն «Արխազական բրիգադ» կազմելու ուղղությամբ: Սակայն ն. թ. հունիսի 11-ին, ԱԺԽ-ի նախորդ, արձանագրվել էր այդ գործի ծախտողում՝ արխազների միջև բավարար բնոլ կամացիության շինելող պատճառով: ԱԺԽ-ի ենթակայության տակ էր գտնվում 400 հոգանոց «Արխազական հարյուրյակ» կոչված գործառաք (ՃՅԱԴՅԱՐԻԱ Գ. Ա. «Կառքար», ս. 47): Անհաջող եղավ նաև վրացական կամագրական ժողովուրդական գվարդիայի օրինակով նրա արխազական տեսակն ստեղծման փորձը՝ «Անսայու կիարապ» (ՃՅԱԴՅԱՐԻԱ Գ. Ա. Օչերքու., ս. 213): Վրաց իշխանությունները ձևափորել էին ժողովրդական գվարդիայի Սուխումի տարածքային ճյուղը, որն անմիջապես ենթարկվում էր Թիֆլիս՝ Գլխավոր շտաբին (Хроника.— «БОРЬБА», 1919, N 265):

²¹⁰ ГАМАХАРИЯ Դ. — ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 445, վավ. N 244: Այդ ինստիտուտի իրական դերը և նշանակությունը այդպես էլ մնաց անհասկանայի ժամանակակիցների համար: Հայտնում էր կարծիք, թե Արխազիայի գործերով նախարարը պետք է հանդիսանար ոչ թե Վրաստանի կառավարության անդամ, այլ «Արխազիայի հյուպատոս, թե նրա դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում, քանի որ վերջին տեսակն ավելի է համապատասխանում [1918 թ.] հունիսի 11-ի դաշնագրի իմաստին» (АВАМИНСКИЙ И. О министерстве по делам Абхазии. — «КАВКАЗСКОЕ СЛОВО», 20.IX.1918):

²¹¹ МЕНТЕШАШВИЛИ А. Грузино-абхазские отношения в первоий четверти XX века // В сб.: Развыскания по истории Абхазии / Грузия. Тб., 1999, с. 266.

թի միուրյում²¹²: Ակզբնապես նման մոտեցում էին դրսերում նաև վրացական կառավարական շրջանակները: Ագ-ի նախարարի տեղակալ Գվարչալաձեն 1918 թ. հունիսի 28-ի գրության մեջ որակում էր Արխագիայի կարգավիճակը որպես «միութենական»²¹³: 1918 թ. հունիսի 23-ին Վրաստանի Ազգային խորհրդի անդամ Ի. Ռամիշվիլին հավաստիացնում էր ԱժԽ-ին, որ «եթէ Արխագիան ցանկանա, իրաւունք ունի ֆեხերատիվ կապերով կապել Վրաստանի հետ»²¹⁴: Դաշնագիրը մանրամասն չէր բաժանում ԱժԽ-ի և Վրաստանի կենտրոնական իշխանությունների լիազորությունները, քանի որ կրում էր ժամանակավոր բնույթ: Այդ հարցում համամիտ են թե՝ վրաց, թե՝ արխաց պատմաբանները²¹⁵: Նրա մասին է վկայում նաև Ի. Ռամիշվիլի 1918 թ. հուլիսի 19-ին արված հայտարարությունը, թե ժողովրդի լիիրավ համագումարը կվճռի Արխագիայի ապագա քաղաքականությունը՝ Վրաստանին, Թուրքիային, Ռուսաստանին միանալու, թե ինքնուրույնություն հայտարարելու հարցում²¹⁶: Հարկ է նշել, որ Վրաստանի կառավարությունը ջանում էր առավելագույնս օգտվել Գերմանիայի աջակցությունից: Եթե 1917 թ. Պետրոգրադում ծեղոք բերած համաձայնությունների հիմքում ընկած էր սահմանագուման երեխական սկզբունքը, ապա անկախացումից հետո Վրաստանի իշխանակորների համար հիմք էր դարձել ցարական վարչատարածքային բաժանումը: 1918 թ. հունիսի երկրորդ կեսին պաշտոնապես հայտարարվել էին Վրաստանի սահմանները²¹⁷: Նրա կառավարությունը հավակնում էր Թիֆլիսի և Քուրայիսի նահանգներին, ինչպես նաև Սոլյումի շրջանին²¹⁸: Այս առումով կարելի է կասկածել Ի. Ռամիշվիլու հիշյալ հայտարարության անկեղծությանը:

²¹² Արխագիան ժողովրդական խորհրդի պատվիրակութեամ հոլշագիրը Վրաստանի կառավարութեամ. — «ԱՅՆԱՄԱՒՐ», 26. XI. 1920:

²¹³ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919, док. N 187.

²¹⁴ Արխագիայի ինքնավարութեամ շորջը. — «ԱՅՆԱՄԱՒՐ», 26. XI. 1920:

²¹⁵ Տե՛ս ΓΑΜΑΧΑΡΙЯ Դ. — ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 74: Նաև՝ Իстория Абхазии, с. 296. Վրաց-արխագական դաշնագրերը չեն իրապարակվել և նրանց բովանդակությունը մանուփ էցերում շարադրվում էր մոտավոր ծևով: «Խոսովում է, - հայորդում էր օրաքերը, - որ վրաց կառավարութիւնը որոշել է Արխագիային տալ ինքնավարութիւն Վրաստանի սահմաններում և մի մինիստրական տեղ Արխագիայի ներկայացոցին վրաց կառավարութեան մէջ: Արխագիան պաշտպանելու և նրանուն կարգ հաստատելու համար վրաց կառավարութիւնը Արխագիայում պահելու է իր ժողովրդական» գվարդիան» (Արխագիայի մասին. — «ՄԾՎԿ», 12. VII. 1918: Նաև՝ Ավիշագիայի անկախութեան մասին. — «ՀՈՐԻԶՈՆ», 12. VII. 1918):

²¹⁶ Իстория Абхазии, с. 296.

²¹⁷ ԱՍՐԴԱՐՅԱՆ Կ. Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ. Եր., 2002, էջ 47:

²¹⁸ Территориальные вопросы в Грузии. — «КАВКАЗСКОЕ СЛОВО», 6. XII. 1918.

Գագրայում գտնվող ԶՀԿ-ն, ստանալով զինված օգնություն Մայկոսից, գրոհով վերցրեց Գուղառտան և «կարմիրները» հասան Նոր Աֆոն: Հունիսի 18-ին Երանք ունեին նաև Սոլխումը գրավելու հնարավորություն, եթե քաղաքացիները զենքի չդիմեիմ²¹⁹: Թիֆլիսում գտնվող ԱժԽ-ի անդամները հունիսի 16-ին հայցեցին Վրաստաճի կառավարության շտաբ օգնությունը: Պատասխանը երկար սպասել չտվեց և հունիսի 18-ին գեն. Գիորգի Մազնիկը (նաև՝ Մազնիաշվիլի) նշանակվեց Արխագիա մեկնող զորքերի հրամանատար, ինչպես նաև (առանց ԱժԽ-ի համաձայնության) Սոլխումի շրջանի գեներալ-նահանգապետ: Հունիսի 19-ին Սոլխում էին ժամանել Մազնիկի զորքերը: Հավաքելով նաև Արխագիայում եղած առկա ուժերը, այդ թվում «Արխագիան հարյուրյակ» կոչված զորամասը²²⁰ և բոլշևիկների հալածանքներից փրկվող կազակներին, նա անցավ հակահարձակման և ստիպեց «կարմիրներին» նահանջել ոչ միայն Սոլխումի՝ այլ նաև Սոչիի շրջանից: 1918 թ. հունիսի 23-ին, առանց ԱժԽ-ի համաձայնության, Մազնիկը արձակեց իր «Թիվ 1 հրամանը», որի միջոցով տեղեկացնում էր բնակչությանը Սոլխումի գեներալ-նահանգապետության ստեղծման մասին: Իսկ «Թիվ 3 հրամանով» Մազնիկը, իբրև վրացական իշխանության ներկայացուցիչ, պահանջում էր բնակչությունից անվերապահորեն ենթարկվել Վրաստաճի Հանրապետության օրենքներին²²¹: Այս ամենով ի շիր էին արվում ոչ վաղ անցյալում ծեռք թերքած պայմանագրովածությունները: ԱժԽ-ի նախագահ Վարլամ Շերվաշիձեն (ճանաչված Վիրաբույժ, որի անունը խորհրդային տարիներին շնորհվել է Սոլխումի երկրորդ քաղաքային իիվանդանոցին), որը այս ամենով զրկվել էր երկրամասը զործնականում դեկավարելու հնարավորությունից, հունիսի 4-ին դիմել էր վարչապետ Նոյ Ժորդանիային՝ «Հուչագրով» և, վկայակոչելով հունիսի 11-ի դաշնագիրը, պահանջում էր՝ չեղյալ հայտարարել գեներալ-նահանգապետության ստեղծման մասին հրամանը: Պահանջը հիմնավորվում էր նաև Երանով, որ Մազնիկը արդեն ԱժԽ-ից բավարար լիազորություններ էր ստացել ուազմական զործողություններ վարելու համար: Միաժամանակ Վարլ. Շերվաշիձեն ասում էր՝ «մանրում եմ մատնանշել գեներալին, որ Արխագիայի տարածքում իշխանության արտակարգ լիազորությունների իրավասու է հանդիսանում միայն Արխագիան ժողովրդական խորհրդը... գեներալ-նահանգապետի զործությունն իրականում Արխագիայի

²¹⁹ Բոլշևիկների արշաւաճը Սոլխումի վրայ. – «ՀՈՐԻԶՈՆ», 20.VI.1918: Նաև տես նոյն օրաբերք 21.VI.1918:

²²⁰ «Կողորդ մասից իմ տրամադրութեան տակ եկան 400 ծիսառը արխագներ», - գեկուցում էր գեներալը: Տե՛ս Սոլխում. – «ՀՈՐԻԶՈՆ», 27. VI.1918:

²²¹ История Абхазии, с. 297-298.

բնակչության զանգվածներում անվստահություն է ձևավորում Վրաստաճի կառավարության նկատմամբ... Ապագա թյուրիմացություններից խոսափելու և ազգային վեճի կանխման համար խնդրում եմ Վրաստաճի ղենոկրատական հանրապետության կառավարությանը, ենելով հունիսի 11-ի դաշնագրից, Արխագիայում իր ներկայացուցիչներին տալ հստակ և սահմանված հրահանգները...»²²²: ԱժԽ-ի և Մազնիսի միջև սրված հարաբերությունների մասին է վկայում 1918 թ. հունիսի 18-ի միջադեպը, երբ ԱժԽ-ն մերժեց այս մարմնում գեներալի ներկայացուցիչ (Դ. Պ. Ցխակայա) լիազորությունները²²³: 1918 թ. հունիսի 11-ի դաշնագրի դրույթների մի մասը, այնուամենայնիվ, կոչվեց կյանքի, թեև կա կարծիք, որ Վարլ. Շերվաշիձեի բողոքը հավաստում է Վրաստաճի գինված ուժերի կողմից Արխագիայի բոնագրավման փաստը²²⁴: Հունիսի 6-ին Վարլ. Շերվաշիձեն դիմել էր Վրաստաճի կառավարության առաջարկով՝ ԱժԽ-ում նրա ներկայացուցիչ նշանակել հ. Ռամիշվիլուն²²⁵: Հունիսի 11-ին ԱժԽ-ն որոշեց Արխագիայի գործերով նախարարի պաշտոնը հանձնել Ո. Կակուբային: Սակայն հունիսի 17-ին նա հրաժարական տվեց, իսկ հունիսի 19-ին ԱժԽ-ն վավերացրեց այդ դիմումը²²⁶: Վարլ. Շերվաշիձեի հեռագրում ասված էր՝ «ճարտարագետ Կակուբան չի կարող գործույթել Թիֆլիսի հանգամանքների փոփոխման հետևանքով»²²⁷: Կակուբայի հրաժարականի պատճառը կայանում էր նրանում, որ վերադառնալով Թիֆլիսից, ԱժԽ-ի բանագնացները արժանացել են մեղադրանքների, որի հետևանքով սրվել են հարաբերությունները նրանց միջև: Երբ Վրաստաճի կառավարության համաձայնությամբ Կակուբայի թեկնածությունն առաջարկվել էր նախարարի պաշտոնում, ապա Գ. Թումանովի և Վ. Գուրջուայի ակտիվ մասնակցությամբ Գուտառուտայի և Գագրայի գալատոների արխազ բնակչության հավաքը հուլիսի 12-ին իրեն անվստահություն էր հայտնել և պահանջել էր հետ կանչել պաշտոնից²²⁸: Հունիսի 25-ին նրա փոխարեն նշանակվել էր գնդապետ իշխան Ռաֆայիլ Չխոտուան²²⁹:

Գեներալ Մազմիկը իր հուշերում գրում էր, թե ինքն Արխագիայի քաղաքական և վարչական կյանքին չէր միջամտում, քանի որ այդ նպատակին ծառայում էր ԱժԽ-ում Վրաստաճի ներկայացուցիչը: Գեներալը համարում էր իրեն բացարձակապես անպատճառ քաղաքա-

²²² ГАМАХАРИЯ Д. —ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 417, վագ. N 227:

²²³ Նոյն տեղում, էջ 77:

²²⁴ История Абхазии, с. 298.

²²⁵ Վկողու, ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 1-3:

²²⁶ ЛАКОБА С. З. Абхазия после друж империй, с. 56.

²²⁷ Վկողու, ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 13:

²²⁸ ЛАКОБА С. З. Абхазия после друж империй, с. 55-56.

²²⁹ Վկողու, ֆ. 1861, գ. 2, գ. 7, թ. 2:

կան գործունեության համար և, իր խոսքերով, ամբողջ ուշադրությունը դարձնում էր ռազմական ոլորտին²³⁰: Այս պնդումը հակասում է Վրաստանի Ազգային խորհրդի անդամ Գ. Անջափարիձեի հեռագրին: Նա տեղեկացնում էր կառավարությանը, որ «...ընդհանրապես աննորմալ է, որ գեներալը գրեթե միշտ ինքնուրույն որոշում է քացարձակապես քաղաքական, իրավական և քաղաքացիական բնույթ ունեցող հարցեր... պետք է շատ նրբանկատ, չփրավորելով գեներալին, սակայն միաժամանակ վճռականապես զգացնել տալ իրեն, որ նա չի կարող կատարել որևէ քայլ քաղաքացիական և, առավելապես, քաղաքական բնագավառի հարցերում առանց իմ, որպես կառավարության ներկայացուցի, և Խսիդոր Ռամիշվիլու վավերացման...»²³¹: Մազնիկի մեկնելուց հետո գեներալ-նահանգապետի պաշտոնը պահպանվում էր, որպես տեղի ռազմական իշխանությունների ղեկավարի, որն ուներ առաջնուրյուն քաղաքացիական վարչության նկատմամբ: Այդ դրվագը հաստատում է Ժորյանիայի 1918 թ. հոկտեմբերի 7-ի հեռագիրը, որն արգելում էր ԱժԽ-ին զինաքափել տեղի հույների ջոկատը, վերապահելով այդ իրավունքը միայն ռազմական իշխանությանը²³²: Գնդապետ Գ. Տոխարելին, վարելով Սովորությունը, հանդիսանում էր նաև գեներալ-նահանգապետի պաշտոնակատար²³³: Միաժամանակ Արխագիայում գործում էր քաղաքա-

²³⁰ Տե՛ս Թա՛ինօս Շվյուզո ցուցը. Թօրոնեցնելու աշխատանք, 1927, զ. 63.

²³¹ "Тифлис. Председателю правительства. ...Вообще как-то ненормально, что генерал [Мазинев] почти всегда самолично разрешает вопросы чисто гражданского, правового и политического характера... нужно в очень деликатной форме, чтобы не обидеть генерала, но вместе с тем и самым решительным образом дать ему понять, чтобы ни одного шага по вопросам гражданского и, в особенности, политического характера он не делал без санкции представителя правительства в лице меня и Исидора Рамишвили... Член Национального Совета Анджапаридзе". Տե՛ս ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 22-26:

²³² Նոյն տեղում, թ. 58: Նաև՝ *Об автономии Абхазии*. — "РЕЧЬ", 6. XI. 1918: 1918 թ. սեպտեմբերին Վարլ. Շերպաշիձեն հեռագրել էր Թիֆլիս՝ բողոքով, որ գորակով ամփեսների սահմանման իրավունքը ուներ ԱժԽ-ն, իսկ Արխագիայի ռազմական իշխանությունները, չգարով իր հետ համաձայնության, որա մասին ինքնուրույն որոշում էին կայացրել, ինչը խստում էր Արխագիայի և Վրաստանի միջև դաշնագրի որոշումները (Տե՛ս Զօրահանգար Արխագիայում. — «ՀՈՐԻԶՈՆ», 17. IX. 1918: Նաև՝ *Лրատում՝ Արխագիայի զօրահանգարի շորջը*. - «ԱՇԽԱՑԱՒՈՐ», 17. IX. 1918: Նաև՝ *Хроника: В Абхазии*. — "КАВКАЗСКОЕ СЛОВО", 17. IX. 1918): Վարլ. Շերպաշիձեն պահանջում էր, որ վայա զինուրական իշխանությունը «պայմանագրի ողուն հակառակ չը գործի» (Արխագիայի գործերից. — «ԱՇՎԱԿ», 17.IX.1918): Գ. Թումանյանը հայտնում էր, որ ԱժԽ-ի հետ հաշվի չեն նստում նաև գավառական զինուրական պարետուրյունները (ՃՅԱՃԱՐԻԱ Գ. Ա. Օչերկի.., ս. 203-204):

²³³ Տե՛ս *Об автономии Абхазии*. — "РЕЧЬ", 6. XI. 1918.

ցիական վարչություն, որը սկզբից դեկավարում էր Ս. Բասարիան, որին փոխարինեց Աժլու-ի այլ անդամ՝ Ի. Մարգանիան:

Պատմաբան Զ. Պապասրիբեն գտնում է, թե Աժլու-ն հանդիսանում էր «փշխանության ժամանակավոր մարմին»²³⁴: 1918 թ. հուլիսի 25-ին Աժլու-ն որոշում էր կայացրել, թե անհրաժեշտ է «ստորագրութիւն պահանջել պետական իհմնարկութիւնների բոլոր աստիճանաւորներից, որով նրանք պարտաւորում են ծառայել Արևո. ժող. և նրա առաջ պատասխանատու կը լինեն որպէս երկրի գերազոյն օրգանի: Նրանք, որոնք անհնար կը համարեն խոստանալ այս պարտաւորութիւնը, պէտք է անմիջապէս պաշտօնից հրաժարեցնեն»²³⁵: Աժլու-ի անդամ Ա. Չոչուան 1918 թ. հուլիսի 31-ի նիստում, սակայն, ասում էր, թե՝ «Մենք համարում ենք Խորհրդություն երկրամասի բարձրագույն մարմին, իսկ ուրիշների համար նա հանդիսանում է ծաղրանք... զբաղվում ենք միայն նրանով, որ փոխում ենք նախազահություններ»²³⁶: 1918 թ. սեպտեմբերի 16-ին Ն. Շորբանիայի որոշնամք Ի. Ռամիշվիլու կարգավիճակը բարձրացվեց մինչև վրաց կառավարության ներկայացուցչի և շրջանի բոլոր իշխանություններին՝ գինվորական և քաղաքացիական՝ հանձնարարվել էր ցուցաբերել նրան ամենայն աջակցություն ու կատարել նրա կարգադրությունները²³⁷: Այս ամենով Աժլու-ի դերը նվազեցվել էր մինչև ներկայացուցչական մարմինի²³⁸: Արխազներին չհաջողվեց ստեղծել թե՝ ազգային կառավարություն, թե՝ սեփական վարչակազմ: Թիֆլիսի թելայրանքով ուս պաշտոնյաներին հեռացնում էին և նրանց փոխարեն նշանակում էին վրացիներին²³⁹:

Քանզի «Երկրորդ» Աժլու-ն չէր ընտրվել, այլ նշանակվել էր, հետևապես արխազ հասարակությունը պահանջում էր վերահստատել նրա անդամների լիազորությունները: 1918 թ. հուլիսի 27-ի նիստում որոշվեց իրականացնել վերընտրությունները²⁴⁰: Հուլիսի 31-ին Աժլու-ն հաստատեց 29 նոր անդամի լիազորությունները: Վերջիններիս թվում հայտնվեցին նաև վրացական կողմի համար ոչ ցանկալի արխազ ազնվականները, որոնք Աժլու-ի դեռ առաջին կազմում էին անդամակցում (օրինակ՝ իշխան Դմիտրի Մարշանիան): Կատարվել էր արխազ բնակչության լիազորների վերընտրություններ Գագրայի, Գուղառուսայի և Կողորի

²³⁴ Յանաբեյորո ՚Եղրած. հարցազգեց տաճամցածք օգիծական օնօթության վաճեցածք 1917-1993. Խազեթո. II. էջ 24.

²³⁵ Արխազիան և ազգայնացումը. - «ՀՈՐԻԶՈՆ», 31.VII.1918:

²³⁶ ՃՅԱՋՅԱՐԻԱ Դ. Ա. Օչերկ., ս. 303.

²³⁷ ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 37:

²³⁸ Նոյն տեղում, թ. 22-22 շրջ. նոյն տեղում գ. 38, թ. 1-1 շրջ:

²³⁹ Տես ՕԵ օբխօզչիք ծելաք. - «РЕЧЬ», 15.XI.1918.

²⁴⁰ ԳԱՄԱԽԱՐԻԱ Դ. - ГОГИԱ Բ. Նշվ. աշխ., էջ 83:

զավառներում: Սամուրզականում «բոլշևիկյան անարխիայի» պատճառով Վերընտրությունները չէին կայացել: Վերջինիս հետևանքով զգայութեան նվազեց վրացամետների թիվը ԱժԽ-ում: Օգոստոսի 4-ին ԱժԽ-ու բողոքի վճիռ կայացրեց Արխագիայում վրաց կառավարության գործելակերպի դեմ (Վրաստանի կառավարությունը, շրջանցելով ԱժԽ-ն, կնքել էր Գերմանիայի հետ պայմանագիր, այդ երկիր արխազական ծխախոտի մենաշնորհային արտահանման մասին) և որոշեց գործողել Թիֆլիս Վաղիմիք Շերվաշիձեին և Դմիտրի Ալանիային, ովքեր պետք է հայտնեին այդ բողոքը²⁴¹: Զկարողաճախով կատեցնել այդ քայլ, սակավարիվ վրացամետ թեղ (Վարլամ և Զոտո Շերվաշիձեները, Վաղիմիք և Դմիտրի Էմուլսվարիները, Յավա, Գուրջուա, Խոպերիձե) դուրս եկավ ԱժԽ-ից: Նոր նախագահ ընտրվեց Վաղիմիք Շերվաշիձեն (պատմագրության մեջ հիշատակվում է իր երկրորդ՝ Զաշբա արխազական ազգանվան տակ)²⁴²: Վերջինիս պաշտոնակարգումը հաստատում է այն միտումը, որ արխազները շարունակում էին դիտել Շերվաշիձեների իշխանական տոհմն իրու Արխազիայի անտականության խորհրդանիշ:

Օգոստոսի 8-ին, հենվելով 1918 թ. փետրվարի 9-ի և հունիսի 11-ի վրաց-արխազական համաձայնագրերի վրա, ԱժԽ-ն որոշեց ստեղծել հանձնաժողով (անդամներ՝ Ռ. Կակուրա, Վ. Գուրջուա, Ն. Խասայա, Ա. Խնալ-Խապա) Արխազիայի Սահմանադիր (Ազգային) ժողովի ընտրությունները նախապատրաստելու համար²⁴³: Ենթադրվում էր, որ այդ մարմնի գլխավոր նպատակը պիտի լինի Արխազիայի վերջնական կարգավիճակի և Վրաստանի հետ փոխհարաբերությունների հստակեցումը: Նույն ժամանակ Թիֆլիսում սկսեց գործել հատուկ հանձնաժողով, որի նախագահն էր արդարադատության նախարար Շալվա Ալեքսի-Մեսվիժվիխին, իսկ արխազներից էին՝ Վրաղիմիք Շերվաշիձեն և Դմիտրի Ալանիան: Հանձնաժողովի առջև դրված գլխավոր պահանջն

²⁴¹ Հասնելով այդ բողոքը, նրանք նաև գրում էին, որ վրաց կառավարության գործելակերպ ասելուն է «враждебное отношение населения к грузинским властям, а вместе с тем и недовольство абхазским народным советом, который не сумел, по мнению пострадавшего населения, оберечь его интересы. Для абхазского народного совета совершенно ясно, что должны быть приняты радикальные меры, чтобы излечить общую [для] Грузии и Абхазии болезнь – взаимное недоверие. Народный совет стремится к плодотворной совместной работе с грузинским правительством. Он отнюдь не желает и не допустит турецкой ориентации. Священная обязанность абхазского народного совета и грузинского правительства рассеять это крайне опасное взаимное недоверие двух братских народов и прочно укрепить полезную для обеих сторон тесную их связь». Տես «Об абхазских делах», – «РЕЧЬ», 15.XI.1918.

²⁴² Борцы за Советскую власть в Абхазии. Сухуми, 1965, с. 243-244.

²⁴³ Տես ԼАКОБԱ Ը. Յ. Աբխазия после ծեղմ սպասում, ս. 67. Նաև՝ Հաձայիջօրո Եղորած. ճարշյայը տաճամցածը ացեանցուս ութուույզա Քաջուցան 1917-1993. ճայցյու Ա. էջ 23-24.

Էր կարգավորել վրաց-աբխազական հարաբերությունները՝ ելմելով հավասարության սկզբունքից²⁴⁴: Վրացական կողմը խոսանափում էր, ի նկատի ունենալով, որ Կողորիի զավառում այդ պահին գտնվում էր թուրք-«մուհաջիրական» դեսանտը: Օգոստոսի 15-ին, դեսանտի վերացման հետ մեկտեղ, ԱժԽ-ի կազմը «վերանայվեց», երբ հեռացվեց նրա անդամների մի մասը՝ մեղադրվելով թուրքամետության մեջ²⁴⁵: Թիֆլիս հղած հեռագիրը հայտնում էր, որ «այսօր՝ օգոստոսի 15-ին Աբխազական ժողովրդական խորհրդի ընդդիմությունը (իմա՞ վրացամետ թեր. - Բ.Ս.) ցրել է նրա իրն կազմը, որը թիկունքում կազմակերպել էր թուրքամետ ուղղագծություն ունեցող ապստամբությունը»²⁴⁶: ԱժԽ-ի անդամների վերանայված ցուցակում ննացին միայն Վրաստանի քաղաքացիություն ընդունած անձինք²⁴⁷: Հրավիրվեցին նաև Աբխազիայի եկվոր բնակչության ներկայացուցիչները: Այս նախապայմանը հնչել էր Թիֆլիսից, որպեսզի «վերակազմված» ԱժԽ-ն ճանաչում ստանա Վրաստանի կառավարության կողմից²⁴⁸: Ծրանի ազգություններից յուրաքանչյուրը, իր ազգային խորհրդի առաջարկությամբ, ունեցավ

²⁴⁴ Տե՛ս ՕԵ օթոնոմս Աճշօնս. — «ՊԵԿԵ», 6. XI. 1918.

²⁴⁵ Այս իրադարձությունների նախին Անդրկովկասյան Հեռագրային Գործակալության միջոցով հաղորդեց Երկրագործության նախարար Նոյ Խոմերիկին, որը մասնակիութեան ասաց՝ «Վերջին ժամանակ աբխազ ժողովրդական խորհուրդը այնպիսի դիրք բռնեց, որ սկզբում խուսափում էր կատարել Վրաստանի հանրապետության հետ կապուած պարտաւորությունները: Այդ կատարում էր թիւրք գործակաների աշխատանքի ազդեցութեան ներքոյ... Խորհրդի մէջ նուան կարուածատերեր, որոնք անպաշտօն կերպով օգնում էին թիւրք գործականերին, ազիտացիա էին նորու վրաց հանրապետութեան դեմ: Խորհրդի դեմոկրատիկ տարրերը [իմա՞ վրացամատ թեր. - Բ.Ս.], տեսանդու այդ աշխատանքը, միջոցներ ծերե առաջ դրա առաջն դրա առաջն առներու համար: Դեռ օցխասովի 4-ին, երբ խորհուրդը բողոքի գիտի կայացրեց վրաց կառավարութեան [գործունեության] առիրկի... օպապողիցիան [իմա՞ վրացամատ թեր. - Բ.Ս.], որի գլուխ կանգնած էր Վարդ[ան] Շերպաշչիձեն, դորս եկաւ խորհրդից... և ահա օցխասովի] 15-ին օպապողիցիան, յնտեւ լով աբխազների գինուած ոյժերին, ցրեց իին խորհուրդը և յայտարարեց իրան Աբխազիայի ժամանակավոր՝ ազգային խորհրդը, ընդունելով իր մէջ Աբխազիայում բնակվող ազգությունների ներկայացուցիչներին... Ժամ. ազգ. խորհուրդը իր զիսխար խնդիր դարձեց անյապատ գումարել վիալատար իրաւատէր ներկայացուցչական մարմին ընդհանուր ընտրական իրաւունքի իմբունքով, որպիսին չը հանդիսանում էին խորհուրդը: Ժամ. խորհուրդը կրչող դիմեց ազգարնալութեան... [որ] Աբխազական դեմքը լրատախան դաշն կերպ Վրաստանը հանրապետութեան հետ և ուստի ժամանակավորը աբխազական խորհուրդը իր գործունեությունը ընթացրում ամբողջովին կը հետևէ այդ դաշնորին, իսկ Աբխազիայի բաղարական վիճակը և ապագայում Վրաստանի հետ ունենալիք յարաբերությունները կրող ժողովրդական ներկայացուցչական ժողովը» (Աբխազիա. — «ՄԸԱՀԿ», 22.VIII.1918):

²⁴⁶ ЛАКОБА С. З. Абхазия после дружих империй, с. 68.

²⁴⁷ ДЕНИКИН-ЮДЕНИЧ-ВРАНГЕЛЬ. Мемуары, с. 101.

²⁴⁸ Յաձաւելություն Կյուրիած. ճառացացած տաճամքարարության աշխատանքության մասին 1917-1993. հայեցական Ա. էջ 23.

իբրև ԱԺԽ-ի անդամ երկուական լիազոր (Յ. Գոգելաշվիլի, Պ. Գելո-
վանի, Խ. Ավարքեզյան, Ի. Փաշալիդի, Դ. Լուկյանով, Ա. Դեմյանով և
այլը)²⁴⁹. Այս ամենով ԱԺԽ-ն դադարեց լինել մեկ ազգության ներկա-
յացուցություն:

Վրաց պատմաբանները անվերապահորեն ժխտում են ԱԺԽ-ի
ցրման մասին արխագ հեղինակների կարծիքը²⁵⁰: Վրացական կողմի
պնդումը, թե որևէ «ցրում» չի եղել այլ կատարվել է ԱԺԽ-ի «վերակազ-
մություն»²⁵¹, կարոտ է մնում իհմնափորման և շատ կասկածելի է, քան-
զի հակասում է մեզ հայտնի տվյալներին²⁵²:

Կա կարծիք, որ Վրաստանի կառավարության այդ պահին ձեռ-
նատու չեր Արխագիայի Սահմանադիր ժողովի գումարումը, որը պետք
է վերջնականապես վճռեր վրաց-արխազական հարաբերությունների
հարցը²⁵³: Արխագ պատմաբանների այս պնդումը որոշ չափով հաս-
տատում է տարածաշրջանում Վրաստանի Ազգային խորհրդի ներկա-
յացուցիչ Գ. Անջափարիձեն, որը Արխագիայի Սահմանադիր (Ազգա-
յին) ժողովի գումարման փոխարեն առաջարկում էր «արագորեն իրա-
կանացնել մեր ցանկությունն՝ ունենալու ներկայացուցչական մարմին
[ընտրված] Արխագիայի ամբողջ բնակչության կողմից, որը կանգ կառ-
նի մեր տեսակետի վրա»: Անջափարիձեն նպատակահարմար էր
գտնում նաև «իրականացնել [ժողովրդական] խորհրդի և Զեմստվոյի
ընտրությունները միաժամանակ ու միավորել այս երկու իհմնարկները
մեկ ընդհանուր անվանման ներքո, որը չի խոցի Արխագիայի ազգային
ինքնասիրությանը»²⁵⁴: Այս ամենով հասկանալի է դառնում տարածայ-
նությունների բնույթը, եթե ԱԺԽ-ի անդամների մի մասը հույս ուներ
երկրամասի երթադրյալ Սահմանադիր ժողովում վերանայել 1918 թ.

²⁴⁹ ՎԿՊՊԱ, ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 22:

²⁵⁰ Разгон второго АНС (§ 10) // История Абхазии, с. 305.

²⁵¹ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 83-84: Նրանք նաև գրում են, թե «С. Лакоба и другие историки, которые писали об этом "разгоне", никогда не ссылались на источники, т. к. их не существует» (տե՛ս ГАМАХАРИЯ Д. - ЧАНИЯ В. "Оккупация" Абхазии: мифы и реальность? – СГ, 2. V. 1991). Վրաց պատմաբան Զ. Պապասիրիին գրում է, թե «վրացական այլպես կոչված «պավրութական բանավի» կողմից ժողովրդական խորհրդի նկատմամբ որևէ հապածանք տեղի չի ունեցել, և դա ամբողջությամբ անջատողական «պատմագրության» հերթական քաղաքական շարա-
շահման դրսուրումներից մեկն է» (տե՛ս Համալիօսո Խշրած. հարցազգչություն այժմա՞նություն 1917-1993. Խայզու Ա. էջ 23):

²⁵² Այսպիսով, 1918 թ. օգոստոսի 16-ին Գ. Անջափարիձեն, իր հերքին, հետազոտել էր Վրաստանի կառավարությանը՝ «15-го сего августа левая оппозиция абхазского народного совета при помощи вооруженных абхазцев разогнала туркофильский народный совет» (տե՛ս Օբ абхазских делах. – «РЕЧЬ», 15.XI.1918):

²⁵³ История Абхазии, с. 301.

²⁵⁴ ՎԿՊՊԱ, ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 22-22 շրջ:

հունիսի 11-ի դաշնագիրը, իսկ Վրաստանի ներկայացուցիչները վարում էին այդ բոլոր շտալու քաղաքականությունը: Նրանք ցանկանում էին ունենալ Արխագիայում որևէ ընտրովի ներկայացուցչական մարմին, ինչով, ի լուր աշխարհի, կապացուցվեր երկրամասի բնակչության «ազատ կամքի» դրսորումը: Այդիսի մարմնի գոյուրյան փաստը կարելի էր օգտագործել դիվանագիտական պայքարում Թուրքիայի, Համախմբված լեռնականների կամ ոուսական «ապիտակ» շարժման պահանջների դեմ, միաժամանակ շտեղծելով Արխագիայում հնարավոր վտանգ Վրաստանի շահերի համար²⁵⁵: Թիֆլիսը ցանկանում էր Արխագիայում, նրա լիիրավ խորհրդարանի փոխարեն, տեսնել զեմստվայի բնույթ կրող «Խորհուրդ» և այդ պատճառով վրաց կառավարությունը շուտով մոռացության մատնեց «հունիսի 11-ի դաշնագիրը», որին ընդդիմանում էր ԱԺԽ-ի անդամների գօալի մասը:

Վրաստանի գերակայուրյան հաստատմանն Արխագիայում նպաստեցին՝ քաղաքացիական պատերազմը, թուրքական վտանգը և արխազ ազգայնական թէի ոտնձգությունները ոչ արխազ տարրի իրավունքների նկատմամբ: Վրաստանի հովանու ներքո ինքնուրույն Արխագիայի ստեղծման ծրագիրը, սակայն, ձախողվեց՝ հիմնականում երկրամասի կառավարման գործում Արխազական ժողովրդական խորհրդի անկարող լինելու հետևանքով: Բանն այն է, որ արխազների միջավայրում եղանակ ստեղծող ԱԺԽ-ն, ի վիճակի չեղավ (հաճուն արդարության նշենք, որ նման դժվարին պայմաններում չէր էլ կարող) ճիշտ կողմորոշվել և իր հայրենի երկրի համար ապահովել ավելի նախընտրելի կարգավիճակ և հնարավորինս ավելի թիչ կահսկածության մեջ հայտնվել Վրաստանից: ԱԺԽ-ի պառակտվածությունը, առանձին անդամների ծեռնարկած անխոհեմ քայլերը ակամայից նպաստեցին Արխագիան հետզհետև Վրաստանի վարչական ենթակայության տակ թերելու վրացական գործիչների ջանքերին:

²⁵⁵ 1920 թ. ԱԺԽ-ի անդամ Մ. Ցագուրիան ասում էր՝ «...[ժողովրդական] խորհրդյան անհրաժեշտ էր Կենտրոնին (իմա՝ Վրաստանի կառավարությանը. - Բ. Ս.) իրքի թագատերն, թե՝ դաշնակիցների, թե՝ Թուրքիայի, ու նաև [լեռնականների] համադաշնության առջև ցուցադրելու համար, իբր թե [Արխագիայում] գոյուրյուն ունի ինքնավարություն» (տե՛ս ՃԱԴՅԱՐԻԱ Գ. Ա. Օչերքի., ս. 302-303):

III

ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՍՈՒՀԱԶԻՐԱԿԱՆ» ԴԵՍԱՆՏԸ

Վրաստանի կառավարության նոտ լորջ տագնապ էր առաջացնում Թուրքիայի զավթողական նկրտումները, եթե նրա երիտրութքական կառավարիչները, նոյնիսկ կնքելով 1918 թ. հունիսի 4-ի «ֆաղադության և բարեկամության մասին» պայմանագիրը, շարունակում էին նվաճողական քաղաքականությունն Արխազիայի նկատմամբ: Դա հաստատվում է Վրաստանում գերմանական զորքերի հրամանատար Կրեսս ֆոն Կրեսսենցտայնի նամակում, որտեղ նա, հենքելով 1918 թ. հունիսի 11-ի վրաց-արխազական դաշնագրի դրույթների վրա, ընդգծում էր Թուրքիայի պահաջներին անհերեքությունը: «Ընդդեմ այս անբասիր իրավական դրույթների, - գրում է գերմանացին, - Էսսադ փաշան²⁵⁶ շի կարող վկայակոչել որոշ բարձրաստիճան անձնավորությունների հրավերին²⁵⁷: Նոյնիսկ եթե չիներ վրաց-արխազական դաշնագիրը և հնարավոր լիներ մերժել Արխազական ժողովրդական խորհրդի լիազորությունները, զորքերի ուղղումն Էսսադ փաշայի կողմից կիխներ անօրինական, քանի որ Բարումի պայմանագրով Թուրքիան և Վրաստանն ապրում են խաղաղության մեջ...»²⁵⁸: «Վրաստանի անկախության հոչակումը և գերմանացիների օգնությունը կփրկի մեզ բուրքերի արշավանքից...», - ասում էր Նոյ Ժողովանիան: Նա հայտնում էր, որ «...արխազները հովանավորության խնդրանքով դիմել էին Թուրքիային և բուրքերը որոշել էին Սոխումը գրավելու նախատակով այնտեղ զորամաս ուղարկել: Եթե նրանք նախապատրաստվում էին, լուր եկավ, որ մեր զորքերը գրավեցին Սոխումն իր արվածաններով: Այս իրադարձությունը շանթի պես ազդեց բուրքերի վրա, որոնք անպատրաստ էին այդ տեսակի նորության: Ինքնըստինքյան, նախապատրաստումը եղավ ապարդյուն և զորքերը զնեկնեցին»²⁵⁹: Ժողովանիան գրեթե կրկնել էր Բարումի կոնֆերանսում վրաց պատվիրակության դեկավար, ի դեպ,

²⁵⁶ Գեներալ-Լեյտենանտ, Այսրկովկասում բորբական զորքերի հրամանատար, 1918 թ. օգոստոսի 27-ին իրամայել էր իր ներական ուժերին զրավել Սոխումի նավահանգիստը՝ իմանափրեելով այն բոշկիների դեմ պայքարի անհրաժեշտությանը (տե՛ս ՀՅԱՀԾԱՐԻԱ Գ. Ա. Օւերկու., շ. 206):

²⁵⁷ Հավանաբար նկատի ունի իշխաններ Ալբանիոյ Շերվաշիձեին և Տատաշ Մարանիային:

²⁵⁸ ԲԱԿՐԱՋԵ Լ. Նշվ. աշխ., էջ 339:

²⁵⁹ ГАМАХАРИЯ Դ. - ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 80:

ծնունդով սովորում է Ա. Չիւենկելու հեռագրի բովանդակությունը, որը հաղորդում էր՝ «Թուրքերը որոշել են զորքեր ուղարկել Սովորումը զրավելու նպատակով և արդեն սկսել են նախապատրաստական աշխատանքները: Սակայն շուտով տեղեկացվեցին, որ մեր զորքերը մուտք են գործել Սովորում և վտարել են բոլշևիկներին: Այս լուրջ շանրի պես պարզ երկնքում ազդեց նրանց վրա, քանի որ իրադարձությունների այսպիսի զարգացման նրանք չեն սպասում և ստիպված են իրաժարվել նախորդ մտադրությունից»²⁶⁰: Իրականում թուրքական առաջին զրաման արդեն հասել էր Սովորում: Ինչպես վկայում էր Վ. Զովելին, գեկուցելով մայիսի 29-ին ՎԱԽ-ի նախագահությանը, մինչև վրացական ջոկատի ժամանումը Սովորում թուրքերը ցամաք են իջեցրել նավերից 200-300 զինվոր, որոնք նախապատրաստական աշխատանքներ են իրականացնում իհմնական ուժերի ժամանման համար: «Բարունում, հստակ տեղեկություններով, թուրքերի զիված ուժերը պատրաստ են դեսանտավորման և, եթե մենք, - ասաց Զովելին, - հետ ընկնելինք մեկ շաբարով, այնտեղ կգերիշխեն թուրքերը: Նրանց իրավիրել են արխագ իշխանները»: Միաժամանակ նա ճանաչում էր, թե «հայտնի չէ դեսանտի հետաձգման ժամկետը»²⁶¹: Մինչդեռ թուրքական զործակալները և հետախույզները վստում են Արխագիայում: Օչանշիրայում լրտեսություն անելու համար ձերքակալվել էր օսմանյան ծովային սպա Հասան Շաքիր Օղլին²⁶²: Օսմանյան կայսրության զաղտնի ծառայությունները զիսավորապես հենվում են Արխագիայի ազգայնական շրջանների, հատկապես թուրքասիրական ծգտումներ ունեցող արխագ ավատատերերի վրա:

1918 թ. ապրիլի 27-ին Ստամբուլում զաղտնի պայմանագիր էր կնքվել, որի համաձայն Այսրկովկասը ազդեցության գոտիների էր բաժանվել երկու դաշնակիցների՝ Թուրքիայի և Գերմանիայի միջև²⁶³: Ար-

²⁶⁰ МЕНТЕШАШВИЛИ А. Октябрьская., с. 87.

²⁶¹ ГАМАХАРИЯ Д. — ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 79:

²⁶² Արտաքսելու համար. — «ՀՈՐԻՇՈՂՈՆ», 15.VIII.1918:

²⁶³ Այս պայմանագրի գործոներության ժամկետը սահմանվել էր մինչև 1918 թ. դեկտեմբերի 31-ը: Օսմանյան կողմը, սակայն, արդեն մայիսի խախտել էր ծեղության պայմանագիրվածությունները, ներխուժելով Արևելյան Այսրկովկասի տարածքը (ՊԱՊԻԱ Ռ. Յ. Նշվ. աշխ., էջ 101): 1918 թ. օգոստոսի 21-ին Բեղլինում կայզերական բանակի Գլխավոր շտաբում կայացագ խորհրդակցություն, որի մասին Վրաստանուն Գերմանիայի դիմանագիտական ներկայացուցիչ կրօն Ֆրիդրիխ Վեներ ֆոն Շոլենբուրգը գրում էր՝ «Քորոք եկան միահանուն կարծիքի, որ օսմանյան մոցակցությունը պետք է լինի բացառիկ և բուրքելու անհրաժեշտ է չափավորել ստիպելով նրանց հետևել նախկինում վերցրած պարտավորություններին, որոնք բխում են 1918 թ. ապրիլի 27-ի պայմանագրից: Թուրքական խոստումները որևէ զին չունեն, հետևապես մենք կարող ենք իրականացնել մեր նպատակները միայն այն դեպքում, եթե բռնագրավենք Թիֆլիսի բարու և Թիֆլիս-Զովկա երկարություն» (տե՛ս *Политика Германии в Закавказье в*

խազիան, ինչպես նաև Վրաստանը, իբրև մասնաբաժին էին տրվել կյազերական Գերմանիային: Այդ պատճառով քուրք իշխանավորները սսիպված էին քողարկել սեփական ոտնձգությունները և ընտրել պատմական հայրենիք վերադառնող արխազ մուհաջիրների գինված ջոկատի տարբերակը²⁶⁴: 1918 թ. մայիսին Բարումում մուհաջիրների լիազորները հարկադրում էին «երկրորդ» ԱԺԽ-ի պատվիրակներին քուրքական կողմի հետ բանակցություններ վարել հետևյալ հարցերով. 1) գենքի տրամադրում; 2) մուհաջիրների հայրենադարձություն; 3) Արխազիայից ոչ արխազական բնակչության լիովին վտարում²⁶⁵:

800 քուրք գինվոր²⁶⁶ նավակներով մեկնել էին Բարումից՝ նպատակ ունենալով խարիսխ նետել Սովորումի ափերի մոտ, սակայն փոթորիկի պատճառով չէին հասել նպատակին: 1918 թ. հունիսի 26-ի լույս 27-ի գիշերը Կողորի գետաբերանի մոտ ցամաք իջավ «մուհաջիրների» դեսանտը, որը զիխավորում էր քուրքական բանակի գնդապետ, ծագումով արխազ իշխան Զամալբեկ Ամարշանը²⁶⁷: Գերմանական հյուպատոսը Ստամբուլից հաղորդում էր, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել 3-րդ բանակի հրամանատար Վեհիր փաշայի կարգադրությամբ²⁶⁸: Զինվորները տեղակայվեցին Ա. Շերպաշիձեի Ցկուրզիլ կալվածքում (քուրք՝ Սովորունակալե): Արխազիայի ներքին գործերի կոմիսար Մ. Ս. Ուրիբիան համարում էր դեսանտը զուտ քուրքական, բանի որ իր տվյալներով դեսանտի կազմում մուհաջիրները չէին գերազանցում 2-3 տոկոսը: Բացի այդ, S. Մարշանիան և ևս 70 ազնվական իջան լեռներից ու միացան դեսանտին²⁶⁹: Հետազոյւմ բացատրելով իր արարքը՝ Ա. Շերպաշիձեն գրում էր, որ դիմել էր օսմանյան իշխանություններին Սովորումի պաշտպանության համար քուրքական բանակում ծառայող արխազների մի խումբ հայրենիք ուղարկելու խնդրանքով²⁷⁰, բանի որ

1918 տարի, ս. 156-157, դոկ. N 58): 1918 թ. ամռանն ու աշնանն Այսրկովկասին տիրապետելու համար նդիտ պայքարի. Գերմանիայի և Երիտրուրքական պարագուխների միջև այդ խնդրում առկա սուր տարածայնությունների մասին տես' ՍԱՐԳԱՅԱՆ Ե. Ղ. Դավադյան գործարքը. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Եր., 1995, էջ 57-67:

²⁶⁴ Օսմանյան կողմը նոյնատեսակ ուղարկածության էր դիմել նաև Դաշտանի պարագայում: Վերջինս տարածեց 1918 թ. մայիսին ինչ-որ քուրքական գորանա էր հայտնին, գնդապետ Խամայի Խամբադ թիվի զիխավորությամբ, որը մեծամասամբ «չերեկներից» էր բաղկացած: Տե՛ս ՄԱԳՈՄԱԴՈՎ Մ. Ա. Գործы Սևերնոց Կավկаз և Հայաստանի պատմությունը. Մահակալա, 1980, ս. 120-121.

²⁶⁵ ԿՈՒԱ Ա. Մ. Նշ. աշխ., էջ 80:

²⁶⁶ Տե՛ս Տաճկական դեսանտ. – «ՀՈՐԻԶՈՆ», 30.VI.1918: Նաև՝ Թիրքերը քայլած են Սովորումից. – «ԱՇԱԿ», 2. VII. 1918:

²⁶⁷ История Абхазии, с. 300.

²⁶⁸ Политика Германии в Закавказье в 1918 году, с. 54, док. N 18.

²⁶⁹ Абхазия. – «СЛОВО», 4.VIII.1920.

²⁷⁰ Տե՛ս «ГРУЗИЯ», 7.IX.1918.

սակավաթիվ վրացական ջոկատը²⁷¹, իր կարծիքով, իբր չէր կարող դիմակայել տեղի բոլշևիկներին²⁷²: Այս բացատրությունը չի համընկնում որոշ պատմաբանների տեսակետի հետ, թե ճոկատի կողմից Արխագիայի զավթմանը և Մազմիկին երկրամասի գեներալ-նահանգապետ նշանակմանը²⁷³: Ըստ Սովորումի քաղաքավոլուս Վ. Չիխկիվչվիլու, դեռ 1918 թ. փետրվարին արխագների մի մասը մտադրություն ուներ դիմել Թուրքիայի օգնությանը բոլշևիկների դեմ²⁷⁴: Դեսանոի ժամանման պահին բոլշևիկների ուժերն այլևս չին սպառնում Արխագիային, ինչը պետք է հայտնի լիներ նրա կազմակերպողներին, դա մեկ անգամ էլ հաստատում է, որ նրա հրավերը թխում էր արխագների մի մասի բուրքամետ կողմնորոշումից, ինչպես նաև Թուրքիայի քաղաքականությունից, որն օգտագործում էր մոռհաջիրներին իր նվաճողական ծրագրերի դիմակավորման համար²⁷⁵: Լյուիթենդորֆը վկայում էր, որ «Ենվերը և բուրքական կառավարությունն ավելի շատ մտածում էին Կովկասում սեփական համախամական ծրագրերի իրականացման, քան Անգլիայի դեմ պատերազմելու մասին»: Դրա հետևանքով մենք, գերմանացիներս, ակամայից հակասության մեջ գտնվեցինք այն նպատակների հետ, ո-

²⁷¹ Սովորումի շրջանում գտնվում էր 200 վրաց զվարդիական (տես՝ Բոլշևիկների արշաւանքը Սովորումի վրայ.՝ «ՀՈՐԻԶՈՆ», 20.VI.1918):

²⁷² Մամովը հաղորդում էր, թե «գօրանասի պետն է արխազայի իշխան» Ալեքսանդր Շերաշիձեն, որը յայտնել է, որ Տաճկաստանը իր հետ միահան զօրք է ուղարկել Արխագիան բոլշևիկներից պաշտպանելու համար» (Տաճկական դեսանու.՝ «ՀՈՐԻԶՈՆ», 30.VI.1918): 1918 թ. նայտի 9-ին Օչանջիրա Վ. Զուգելիի ժամանման պահին Ա. Շերաշիձեն հսկության առաջարկեց իրեն «հակառակութեական» դաշինք կապել արխազ իշխանների հետ: Սակայն Զուգելին ներժեց նրան և քացարձականիւ արհամարհական էր իշխանների հանդեպ, քանի որ բոլշևիկները քարոզ էին տարածում, թե նա եկել է վերականգնելու «շահագործողների» իշխանությունը (ՃԿԿԳԵԼԻ Բ. Տայշելի կրքտ: զանու հարօօցթարծենց.՝ «БОРЬБА», 12. XII. 1918):

²⁷³ История Абхазии, с. 300.

²⁷⁴ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 404:

²⁷⁵ Վրաց նամուր արձագանքում էր այդ դեպքերին, գրելով. «Ով որ Թիւրքիայի քաղաքական կեանքի պետերին ճանաչում է, նրա համար զարմանայի շպետը է վիճի փաշաների նենգորինը: Թիւրքիան, երկի, սկզբից որոշած է ունեցել խախտելու այն հաշտութեան դաշնագիրը, որ նա կնքեց մեզ հետ Բարումում: Ես երեւ նա միշև այժմ միրտ չարա բացայայտ կերպով այդ անել, այդ բացարություն է նրա անոյժ լինելով և ոչ թէ որևէ որիշ հանգամանքով: Նա ճարպիկորեամբ էր իհասում մեր երկրում իր պրովիլկատորական ցանքը: ...Սակայն վարագոյրը յետ քաշեց... Թիւրքիան մի թիշ ուշացա, յայտարարելով, թէ դեսանու իշեցնելու պատճառը Սովորումի շրջանում բոլշևիկների կողմից վկասած խրստումն է: Նա իր ուզամ պէտ չկարոցաց վերջացնել իր սրած կատակերգորինը: Նա նախօրօր կազմակերպեց բոլշևիկների հանդէս զալլ [?] և յեռոյ զօրք ուղարկեց, քայլ ուշացա. Երբ նրա զօրքը Կորոր իհար բոլշևիկներն արդէն քշած էին Սովորումի շրջանից...»: «Յատուն» (1918, N 133) թերթից արտասպակած հոդվածը տես՝ Վրաց կեանք՝ Թիւրքիան ու բոլշևիկները.՝ «ՀՈՐԻԶՈՆ», 3.VII.1918:

բոնք հետապնդում էին բուրքերը...»²⁷⁶: 1918 թ. հունիսի 28-ին Վրաստանի ԱԳՆ տեղեկացրել էր գեներալ Կրեսսին Արխագիայում վերջին իրադարձությունների մասին: Գրության մեջ շեշտվում էր, որ ԱԺԽ-ն եռանդագին բողոքում է դեսանտի փաստի վերաբերյալ, իսկ Վրաստանի կառավարությունը սատարում է իր դաշնակից Արխագիային²⁷⁷: Դեսանտը մեծ անհանգստություն էր պատճառել գերմանական կողմին, որը մի քանի անգամ ճշտում էր բուրքերից՝ աջակցում է նրան Օսմանյան կայսրությունը, թէ զինվորները հանդիսանում են դասավիճեր բուրքական բանակից²⁷⁸: Կրեսար մենակնել էր Բարում, որտեղ 1918 թ. հունիսի 29-ին կայացել էին բանակցություններ նրա և բուրք զորավարներ Էսասդի ու Վեհիրի միջև: Ուստի մամուլը տեղեկացնում էր, թէ «գերմանական ներկայացուցիչներն իրենց վրայ են վերցրել տաճկական բարձր իրամանատարութեան հետ բանակցութիւններ փարելու գործը»²⁷⁹: Այսրկովկասում սեփական ռազմական հաջողություններից արքած՝ բուրքական իրամանատարությունը նախընտրում էր անգամ իր զիսավոր դաշնակցի հետ հարաբերությունների փատրարացման ճանապարհը: Թուրքական կողմը կտրականացնելու մերժեց Արխագիայից իրեն ենթակա զորամասի դուրս բերման մասին գերմանացիների առաջարկը²⁸⁰:

1918 թ. հուլիսի 30-ին ԱԺԽ-ի նիստում նրա անդամ Վ. Էմուխվարին ասում էր՝ «Ծագման տեսակետից մուհաջիրներն անշուշտ մեր եղբայրներն են... Նրանք ներկայացել են որպես բուրքական բանակի կանոնավոր զորամաս... Մինչ զորացրում չհայտարարվի, զինվորները չին կարող պատերազմի ժամանակ դասալցություն կատարել Թուրքիայից: Եթե բուրքական կառավարությունը չի դիմադրում դրան, ու-

²⁷⁶ Германские оккупанты в Грузии в 1918 году, с. 150-151.

²⁷⁷ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии.

Тифлис, 1919, док. N 187. Մամուլը գրում էր, որ «արխագական ժողովրդական» խորհրդը դիմել է վրաց կառավարութեանը, խնդրելով օգնութիւն... կառավարությունը դիմել է գերմանական դիլլյումատիկական ներկայացուցիչներին, մատմնանշելով, որ տաճկական զօրքը նորից խախտել է Վրաստանի սահմանները» (Տաճկական դեսանտ. – «ՀՈՐԻԶՈՆ», 30.VI.1918):

²⁷⁸ БАКРАДЗЕ Л. Նշվ. աշխ., էջ 339:

²⁷⁹ Տաճկական դեսանտ. – «ՀՈՐԻԶՈՆ», 30.VI.1918

²⁸⁰ Политика Германии в Закавказье в 1918 году, с. 54, док. N 18. Վրաց դիվանագետ Զ. Դ. Ավալովը, հավանաբար տեղյակ չինելով այդ բանակցությունների մասին, նվազեցնելով փասնք՝ ատամ է. «Турецкие прониски обнаружились в Абхазии... Это сравнительно мелкие угрозы, приводившие однажды в неописуемое волнение некоторых из грузинских государственных мужей... легко устранились благодаря противодействию грузинского правительства, а особенно влиянием германской миссии в Тифлисе» (АВАЛОВ З. Д. Նշվ. աշխ., էջ 112):

թեմն՝ գիտակցաբար»²⁸¹: ԱժԽ-ի հունիսի 27-ի արտակարգ նիստում որոշվեց դեսանտի փաստը համարել զուտ քաղաքական խնդիր, որը հարկավոր է վերացնել բնակչության լայն զանգվածների համար մինիմալ վնասով: ԱժԽ-ն տրամադրված էր օգտագործել դիվանագիտական միջոցների ազդեցությունը և խոսափել առանց ծայրահեղ անհրաժեշտության զինված բախումներից: Հունիսի 28-ին ԱժԽ-ի երկու լիազոր անդամ, ինչպես նաև Ի. Ռամիշվիլին և գեն. Մազմիկը, ժամանել էին Ցկուրգի և առաջարկել էին «մուհաջրիներին» 24 ժամվա ընթացքում լրել դիրքերը և մեկնել Թուրքիա: Բանակցությունների ընթացքում բուրք սպաները զարմանք էին հայտնել ստեղծված կացության վերաբերյալ, քանի որ Արխազիա մեկներուց առաջ նրանց խոստացել էին պատվավոր ընդունելություն, որի փոխարեն դեսանտը հայտնվել էր վրացական զորքերի օղակում: Տրամադրված երկու լաստանավով բուրքական ջոկատի մի մասը հունիսի 29-ին վերադարձավ Բաքում: Ավյարները հաճանել էին ԱժԽ-ի ներկայացուցիչներին 180 հրացան և մեկ միլիոնից ավելի փամփուշ: Մազմիկը այդ ամբողջն իր զորքի ավարձ էր հայտարարել, ինչն ԱժԽ-ի հետ վեճի առարկա դարձավ²⁸²: Նախարար Ն. Խոմերիկիի վկայությամբ՝ «...Թէև Թիւրքիան պաշտօնապես դուրս տարաւ այդտեղից իր զօրաբաժննը, որի մի մասը սակայն մնաց և շարունակեց կազմակերպել տեղական թիւրքերին Սուխումի շրջանում: Այդ զործի զլուխ կանգնած է յայտնի կալուածատէր Տ[{ատաշ}] Մարշանիան, որի [Զգերդա] կալուածքում ապաստան գտան թիւրքերի զինված հրոսակախմբերը: Վերջին շարաբները այդ հրոսակախմբերի մօտ էին զայխս օգնական զօրախմբեր Թիւրքիայից նաև կներով»²⁸³: Սուհաջրիների նոր խմբերը բերել էին շուրջ 1000 հրացան և մեծ թվով զինամքերը, որը բաժանում էին տեղի արխազ բնակչությանը²⁸⁴: Սուխումի Հայոց շրջանային ազգային խորհրդի նախագահ Խ. Ավդալբեգյանը հետևյալ կերպ էր նկարագրում իիշյալ դեպքերը՝ «Դեռ Տրավիզօնի ու Բաքումի բանակցությինների ժամանակ մի քանի արխազ խոչոր կալուածատէր իշխաններ աշխատում էին որևէ ճանապարհով Արխազիան Թուրքիայի ձեռքը գցել: Այդ պահանջում էր նրանց դասակարգային շահը: Դիպլոմատիական քայլերից զատ նրանք Արխազիա բերեցին շատ մեծ քանակութեամբ ռազմամքերը, սպաներ ու զինուրեներ: Այս շարժմանը դեմ էր արխազ գիւղացիութիւնը: Խսկ երկրի ազգաբնակութեան 50 տոկոսը կազմող յոյների, հայերի և մինքելների մասին խօսք անգամ լինել չէր կարող: Բարեբաղդաբար

²⁸¹ ГАМАХАРИЯ Դ. — ГОГИЯ Ե. Նշվ. աշխ., էջ 81:

²⁸² Նոյն տեղում, էջ 416-417, վավ. N 227:

²⁸³ Արխազիա. — «ՍԸԱԿ», 22.VIII. 1918:

²⁸⁴ ԿՈԿՅԱ Ա. Մ. Նշվ. աշխ., էջ 81:

Գերմանիան դեմ գնաց Թիւրքիայի այս ոտնձգութիւններին և պահանջեց ետ կանչել թիւրքական զօրքն և յանձնել զենքերը Վրաստաճին: Իր այս պահանջն անմիջապէս իրագործելու համար Գերմանիան զօրագունդ ուղարկեց Սուխում²⁸⁵: Թիւրքերը պաշտօնապէս զենքերը յանձնեցին և հեռացան Արխազիայից, բայց անպաշտօն կերպով նրանք մնացին և խոշոր կալուածատէր Մարշանիայի դեկավարութեամբ շարունակեցին պատրաստել ներքին շարժում, որը պայրեց Կողորի զաւոյի մահմենական արխազների շրջանում²⁸⁶: Իրավիճակը ԱժԽ-ի նախագահության և վրացական զորքերի իրամանատարության կողմից դիտվում էր որպես սպառնալի: ԱժԽ-ի անդամները, սակայն, հավանություն չունեցին Մազմիկի առաջարկին՝ անմիջապէս զրոհել թշնամուն և փոխարենը հանդես եկան հաշտարար ծրագրով՝ առաջարկելով զինված մուհաջիրներին վերադառնալու թուրքիա: Կողորի զավար մեկնեց ԱժԽ-ի լիազոր պատվիրակություն (Գ. Չուխրայ, Ա. Չուկրար, Ք. Գիցբա, Վ. Գուրզուա, Ս. Բասարիա, Ա. Չոչուա)²⁸⁷: Բանակցությունները, արխազական ավանդույթի համաձայն, ընթանում էին իրապարակայնորեն և այդ նպատակով Սոլվա գյուղում հայտարարվել էր արխազ բնակչության հավաքը: Լսելով կողմերի փաստարկները ժողովուրդը պետք է կայացներ վերջնական վճիռը: Մուհաջիրները տեղաբնիկ արխազներից պահանջում էին միացյալ ուժերով երկրամասից վտարել ոչ արխազ բնակչությանը²⁸⁸: Հավաքը տևեց Յօր: Կողմերից ոչ մեկին չհաջողվեց ապացուցել իր փաստերի իսկուրյունը: Որոշվել էր հանդիպել նաև չորրորդ օրը: Վրաց զինվորականների՝ Մազմիկի և Տուխարելու համբերությունը, սակայն, սպառվել էր և ըստ Վարլ. Շերվաշիձեի, «զորքերը մեկնեցին Կողորի զավար թուրքական արկածախնդրությանը վերջ տալու համար»²⁸⁹: Մուհաջիրների դեմ հավաքած ուժերը բաղկացած էին վրաց զարդիականներից, կազակներից²⁹⁰, գերմանացիներից²⁹¹, հույն²⁹² և մեզրել աշխարհազորայիններից²⁹³,

²⁸⁵ Իրականում առաջին գերմանական զորամասը ժամանել էր Օչամշիրա 1918 թ. մայիսի 25-ին: Տես ցոյցա ցոօրնօր. եայժմուցցայտ եացածքու շրջույթութեածին չունեցած մետղացաւ ուժեմ վայցձմու (1917-1918 წ.): // Ժամանակական թուրքական արկածախնդրություն 5. տեսօսեօ, 1998, թիւ 360.

²⁸⁶ ԱՐԴԱՐԵԳԵՑՎԱՆ Խ. Վրաստաճը և Արխազիան. – «ԱՇԱԿ», 28. III.1919:

²⁸⁷ ԿՕԿՎԱ Ա. Մ. Նշվ. աշխ., Էջ 82:

²⁸⁸ Նոյն տեղում, Էջ 83:

²⁸⁹ Աճօզայ. – "КАВКАЗСКОЕ СЛОВО", 5. IX.1918.

²⁹⁰ Գ. Անօսիարիձեն հաղորդում էր Ն. Ժորգանիային, որ Մազմիկը հաջող է զորդում իիննականում շնորհիվ իրեն միացած վտարանի Կոբանի կազակների: Տես Վեդուա, թ. 1861, գ. 2, գ. 28, թ. 24-26: Զոկաւր բաղկացած էր 600 վինուրից, որոնց իրամանատարն էր զինապետ Մորոզով (ԿՕՅԼՕՎ Ա. Ի. Բօրբա որդյապահ Կերոմորիա չափություն 1917-1920 թ.). Ռոստով-նա-Դոնու, 1972, ս. 71).

րից: Կարծեն հայերն այդ գործում մասնակցություն չեն ունեցել: Աքարիա Արմյանսկայա զյուղի բնակիչները, սակայն, գրում էին Վ. Զիխիկ-վիշվիլուն, որ «Քուրքական ղետանութի օրերին մենք [իմա՝ հայերս - Բ. Մ.] ամեն կերպ աջակցում էինք մեր շրջանում գործող գորամասերին...»²⁹³.

Վրացական զինվորական հրամանատարության ենթակա ուժերը 1918 թ. օգոստոսի 14-ի լույս 15-ի զիշերը ջախջախսեցին «մոլիաջիրներին»: Օգոստոսի 26-ին Վրաստանի կառավարության ներկայացուցիչ Գ. Անջափարիձեն կազմել էր գելուցագիր, որտեղ մասնակորապես ասված է՝ «...Աքսազ ազգարիաների արկածախնդրությունը քուրքական ղետանութի հետ մեկտեղ գրեթե վերացվել է: Մեր գորամասերով շրջափակված արխագեները, թվով 700 մարդ, փորձեցին ճեղքել օդակը Մոկվիի մենաստանի մոտ, որը զբաղեցված էր երկու զննացիրներով զինված մեր 50 զբարդիականներով: Չնայած բուրքերի ահեղ գրոհներին, նաև նոճակներով, որոնք տևեցին երեկոյան ժամը 11-ից մինչև հաջորդ օրվա ժամը 9-ը, մեր ուազմաճակատը ոչ միայն չեր քայլայիլ, այլև հակահարձակման անցած զբարդիականները թշնամուն մատնեցին փախուստի... Այս դեպքերից հետո հակառակորդի կողմից բացահայտ ելույթներ չեն եղել, հավանաբար նրա փորքարիկ խմբերը ցրվել են անտառներով: Ինչպես հաստատում է գործողությունների անմիջական դեկապար՝ դիվիզիայի շտաբի պետ [զնդապետ Տոխարելին], հակառակորդը չի կարող դուրս գալ օդակից, որը ստեղծել են մեր գորքերը և, որը հաստատուն կերպով նեղմում է: ...Պետք է սպասել, որ սննդից և ուազմական հանդերձանքից զրկված հակառակորդը մի քանի օրից կիհանձնվի...»²⁹⁴: 1918 թ. սեպտեմբերի 2-ին Վարլ. Շերվաշիձեն կազմել

²⁹¹ 1918 թ. մայիսի 14-ին ՎԱԱ-ը առաջարկել էր Գերմանիայի կառավարության ներկայացուցիչներին ժամանակավոր բողնու իր ենթակայության տակ նախկինում ուսական գերության մեջ գտնվող գերմանացի գլխավորներին, հանձնարկելիք նրանց պայքարել «անարխիայի» դեմ (Германские оккупанты в Грузии в 1918 году, с. 8. Ճշրւյզո զեհցանց, Խայմանցըցըուն Խացարշու-Յուլուցօհցցու տրօյցենցաւու (1917 վարություն - 1918 վարություն) // յաժույզու լուծարմանը, Վշլովնչցյուզու 9. տօնութու, 2002, զք. 32. Ճշրւյզումցոծո լույզու. Ժինոյցածու լա շյրմանցու Խացեցնուն Խածունությունը տաճամցումներուն օկտոբերուն (1914 - 1918 վ.): // յաժույզու լուծարմանը 11. տօնութու, 2004, զք. 166): Սոլիստում գտնվում էր գերմանացիների փորքարիկ գորամաս լեյտենանու ֆոն Պայենի հրամանատարությանը (БАКРАДЗЕ Լ. Նշվ. աշխ., էջ 339): Նաև տես՝ Սոլիստ. - «ՀՈՐԻԶՈՆ», 7.VI. 1918:

²⁹² Տեղի 200 զինված կույների ջոկատը զինավորում էր Համբո Պապսնդոպուլուն, որը մեծ ծառայություններ էր մատուցել վրաց իշխանություններին (ДЗИДЗАРИЯ Գ. А. Օպերկ., ս. 169):

²⁹³ Տես GAMACHARIA D. - ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 91:

²⁹⁴ «Тифлис. Председателю правительства. Телефонограмма. Из Сухума. 26-го августа 1918 г. ...Авантюра абхазских аграриев с турецким десантом почти ликви-

Էր մի գրություն և նկարագրել հիշյալ իրադարձությունները: Նա գրում է, որ «արշավի ընթացքում Տուխարենը իրամանատարությամբ կանոնավոր զորամասերը չկարողացան առնակատվել հակառակորդի հետ: Ժուրը չետնիկների թիվը հասնում էր շուրջ հազարի: Միայն Կարճիր զվարդիայի փոքրաթիվ ջոկատները բախվեցին թուրքերի հետ: Մոկվիի մենաստանում 60 հոգանոց ջոկատը, [Ակ] Տումարկինի իրամանատարությամբ, արիությամբ ետ մնեց թշնամու ուժերի բազում գրոհները, որը զգավի գերազանցում էր նրանց թվով: Նույն կերպ դրսերեց իրեն երկրորդը՝ [Սամսոն] Գլոնթիի իրամանատարությամբ, Աշխմազմախի բարձունքի պաշտպանության պահին: Նույն ժամանակ մոտակայքում և խորը թիկունքում գտնվող կանոնավոր զորքերը, զգտնելով շփում թուրքերի հետ, զբաղվում էին խաղաղ բնակչության զանգվածային ձերբակալություններով և [տների] իրկիզումներով: Ներկա ժամանակ Սովորմի բանտը լեփ լեցուն է Կողորի զավարի խաղաղ արխազներով, ովքեր իրքու ուղարկում են նշված շտարի ցուցակներում: Հրկիզումները շարունակվում են մինչև վերջին պահը՝ շնայած շտարի բազում հավաստիացումներին, թե իրկիզումները կատարում են զազազած անկարգ զինվորները... օգոստոսի 31-ին Զգերդա գյուղում դարձալ իրկիզովել է 7 տուն...»²⁹⁵: Կուտոյ գյուղում ոչնչացվել էր U. Բասարիայի հայրական տունը²⁹⁶: Այս առթիվ Անջափարիձեն հաղորդում էր, որ «հաստատվել է ապստամբության պարագլուխների տների և այլ ունեցվածքի ոչնչացումը, որոշ մասը ձերբակալված է»²⁹⁷: ...Չիաջողվեց...

дирована, окружённые со всех сторон нашими частями абхазцы в количестве 700 человек попытались прорвать фронт у Мокского монастыря, который был занят нашими народогвардейцами в количестве 50 человек при двух пулеметах. Не смотря на ожесточённые атаки турок вооруженных гранатами, которые длились с 11-ти вечера до 9-ти часов следующего утра, фронт не только не был прорван, но напротив перешедшие в контратаку гвардейцы обратили их в бегство... После этого случая открытых выступлений со стороны неприятеля не было, очевидно они рассыпались маленькими группами по лесам. Как утверждает нач. штаба дивизии [полковник Тухарели], лично руководивший этой операцией, противник никуда не может выйти из того круга в котором он замкнут нашими войсками и который постоянно сужается... Нужно ожидать, что через несколько дней противник лишённый продовольствия и боевого снаряжения сдастся... Член Национального Совета Анджалапидзе". Ст'я ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, գ. 27, թ. 27-29: 1918 թ. սեպտեմբերի 15-ին Սամորզականի Բեղոյն գյուղում վերջին 60 ասկարները ընկել էին Վ. Օղոներու ջոկատի ծեռքը (ՃԿՍԵԼԻ Յ. Թյայևի կրք: զանք արօնակիցները. — "БОРЬБА", 26. X. 1919):

²⁹⁵ Абхазия. — "КАВКАЗСКОЕ СЛОВО", 5. IX. 1918.

²⁹⁶ БАСАРИЯ С. П. Избранные произведения, с. 11.

²⁹⁷ Նեսանտի կազմակերպման մնալային թիվականությունը բնակչության մեջ էր գտնվում 13 անձ՝ Ալեքսանդր Շերվաշյանը, Տատաշ Մարշանիան, Տակոյ Ցիլիդրան, Խալիք Ավիծքան, Մեջիդ Բազարիշը, Միմոն Բասարիան, Կենջա Կիոտը, Խարիդա Աշուրան, Կարաման Աշուրան և այլը (ՎԿՊ(Ա), ֆ. 1938, գ. 1, գ. 278, թ. 21): Դեսանտին աջակցության մեջ կասկածայլները ոչ միայն ձերբակալվում էին, այլ նաև վտարվում էին երկրամասից և,

զերծ մնալ որոշ միջադեպերից: Գեներալ Մագնիկի հրամանով դեպի Կողոր ուղղված կազմակերը իրենց նախաձեռնությամբ դրսւորեցին խաղաղ քնակչության նկատմամբ այնպիսի դաժանություն, որ Ալիխանովի²⁹⁸ ժամանակները կատակ են բփում: Տեղեկացվելով, որ քնակչությունը ենթարկվում է թալանի, իսկ կանայք բռնաբարության այն անձանց կողմից, որոնք խոսափում են հանդիպել հակառակորդին, ես պահանջ դրեցի դուրս բերել կազմակերին այս շրջանից, ինչն անմիջապես կատարվեց: Նրանք բոլորն ուղղվեցին դեպի Տուապսն...»²⁹⁹:

Եթե քաղաքական ընդդիմադիրների նկատմամբ պատժամիջոցներն իրականացվում էին վրացական ներկայացուցիչների և Արխա-

ըստ Ն. Խոնմերիկի, «Քիւրքասէր մասին [ԱժԽ-ն] արգելեց ապրել Արխագիւյում» (Արխագիւ, – «ՄՇԱԿ», 22.VIII. 1918): Ի դեպ, արխազական ստորույթին իրավունքում հիմնական պատժամիջոցներից մնեն եր հանցագործին հայրենի երկրից փոարման ավանդույթը (ԿՐԵԼՈՎ Ա. Բ. Նշվ. աշխ., էջ 52): Վրաստաճ դեկանալու ավագանությանը հիած հեռագրում ԱժԽ-ի անդամ Վ. Գուրզուան հաղորդում էր, որ «Дмитрий Маршанин с самого возникновения турецкой авантюры по убеждению совета принимал активное участие, но данных для предания его суду у совета не имеется. Нахождение его в округе народный совет нашел опасным и потому выслал на время военного положения» (ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, զ. 27, թ. 40):

²⁹⁸ Գեներալ Դ. Ալիխանով-Վարարյան, նեշում էր հենափոխական շարժումը վրացաբնակ զավականությունում: Ընկապ Ալիխանովապում վրիժառու Սարտիրու Զարուխյանի ծեռորից, որպես Նախիջևանում 1905 թ. հայերի կոտորածների կազմակերպիչ:

²⁹⁹ «...Подтверждены уничтожения дом[ов] и прочее имущество главарей восстания, некоторые арестованы. ...Казаки, посланные в сторону Кодор ген. Мазниевым, по своей личной инициативе проявили такую жестокость по отношению к мирному населению, что времена Алиханова [Аварского] кажутся шуткой. Узнав о том, что население подвергается ограблению, женщины изнасилованию со стороны лиц, которые уклоняются против неприятеля, я потребовал вывода казаков из этого района, что было немедленно исполнено. Они все направлены в сторону Туапсе...» (из телеграммы Анджапаридзе, 26.VIII.1918 г. - Б. М.). Տես ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, զ. 27, թ. 28-29: Վ. Շերպաշճեն չի տեղեկացնում կազմերի մասին ի տարրերություն Ա. Բասարիայի, որը գրում է, թե նրանք «վրացիների ծնորով զինված սկսեցին քաղաքներ և անյացներ արխազների տները» (БАСАРИЯ С. *Абхазия в географическом, этнографическом и экономическом отношении*, с. 95): ԱժԽ-ի անդամները վրաց զինվորական իրանափառությանը պատասխանատվության էին կանչում, ասելով, որ «...Делом их (Мазниев, Тухарели) было снаряжение экспедиционного отряда из кубанских казаков, бежавших от большевиков, греков и местного мингрельского населения в Кодорский уезд для борьбы с турецким десантом. Надо заметить, что все население Кодорского уезда (за исключением одного села, да и то не по своей воле) относились явно отрицательно к авантюре этого десанта, во главе которого стояли абхазские дворяне... Этот отряд по своей жестокости и бесчеловечности превзошел деятельность печальной памяти царского генерала Алиханова [Аварского], так, например, казаки этого отряда врывались в мирные абхазские деревни, заирали все мало-мальски ценное, совершая насилия над женщинами. Другая часть отряда, под непосредственным наблюдением Тухарели, была занята разрушением бомбами домов тех лиц, на которых кто-либо доносил. Аналогичные насилия были произведены в Гудаутском уезде...» («СОЦИАЛ-ДЕМОКРАТ», 6. X. 1919):

զիայում նրանց դաշնակիցների համատեղ ջանքերով, ապա զորքերի հիշյալ վարչագիծը բնակչության նկատմամբ առաջացնում էր ԱժԽ-ի «վրացամետ» թիվ բողոքը: «Կառավարական զորքերի կողմից տների հրկիզումը... որևէ կերպ չի կարող արդարացվել՝ ոչ բնակչության առջև, ոչ էլ պետական տեսակետից, առավելապես, եթե իրկիզում են տները և ոչնչացվում է այն անձանց ունեցվածքը, ովքեր բացարձակապես առնչություն չունեն բուրքական արկածախնդրության հետ», - հաղորդում էր Վարլ. Շերվաշիձեն 1918 թ. սեպտեմբերի 2-ին Թիֆլիսում գտնվող Ռ. Զիստուային՝ Վրաստանի կառավարությանը և Ազգային խորհրդին տեղյակ պահելու նպատակով: «Վստահ եմ, որ տների հրկիզումները և անմեղ մարդկանց զանգվածային ծերբակալությունները, - շարունակում է նա, - չեն կարող առաջացնել բնակչության մոտ որևէ վստահություն պետական իշխանության նկատմամբ, հակառակը... - դա հեշտությամբ զանգվածները կմնի դեպի բուրքերի շարքերը: Առավելապես դրույյունը վատրարանում է և մքնուրուց բանձրանում է այն պատճառով, որ ռազմական իշխանություններն ամենուր ներշնչում են բնակչությանը, որ... իրենք ենք արկան և Արխազական ժողովրդական] խորհրդին և գործում են կատարելով նրա հրամանները: Այդ ամենը... ժողովրդական զանգվածները սկսում են ընկալել որպես թշնամական բոնության ակտ Վրացական հանրապետության կառավարության կողմից ուղղված Արխազիայի նվաճմանը, և, որ այդ հարցում կառավարությանն աջակցում է Արխազական խորհրդը: Հետևապես իրկիզումների և զանգվածային ծերբակալությունների մասին ռազմական իշխանությունների հաճճարարությունները հարվածում են կառավարության հեղինակությանը... Եթե մենք բնակչությանը հանգստացնելու համար վճռական միջոցների չիմենք, ապա հավերժ կկորցնենք ժողովրդին, իսկ թշնամությունը և շարությունը դեռ երկար ժամանակ կլինի, այնուամենայնիվ, արխազների և վրացիների այս սերնդի միջև»³⁰⁰: Վարլ. Շերվաշիձեն տեղեկացնում էր, որ «գատախազական հսկողության կարգով, մեր կողմից իրականացվում է իրկիզումներին և քալաններին մասնակից հանցագործ անձանց օրինական պատախանատվության կանչումը...»³⁰¹: Վարլ. Շերվաշիձեն առաջարկում էր դիմել արագ ու վճռական միջոցների՝ 1) անհապաղ ազատել կալանավայրերից ռազմագերիներ կոչեցյալ խաղաղ արխազներին; 2) պետության կողմից լիովին փոխհատուցել կառավարական զորքերի ձեռքով պատճառած բոլոր վնասները: Վարլ. Շերվաշիձենի վճռական զանգատն ունեցավ անմիջական հետևանք, քանի որ սեպտեմբերի 3-ին

³⁰⁰ *Абхазия. — “КАВКАЗСКОЕ СЛОВО”, 5. IX. 1918.*

³⁰¹ Նոյն տեղում:

Վրաստանի կառավարության նիստում լսվեց Ռ. Չխոտուայի գեկույցը և որոշվեց գործողիկ Արխագիա արտակարգ հանձնաժողով գեներալ Թոփուրիայի գլխավորությամբ: Նրա կազմի մեջ ընդգրկվել էին, քայի ԱԺԽ-ի երեք անդամից, նաև արդարադատության, ներքին գործերի և ռազմական նախարարությունների պաշտոնյաները: Հանձնաժողովին հանձնարարվել էր քննել Վարլ. Շերվաշիձեի կողմից բվարկված բոլոր հանգամանքները և որոշել հասցված վճարի չափը³⁰²: 1918 թ. դեկտեմբերի 17-ին կառավարությունը լսելով ներքին գործերի նախարարի գեկույցը, որոշեց. «Կողորի շրջանում մեր ջոկատների կողմից հասցված վճարի մասին գործը վերցնելով արտակարգ հանձնաժողովից հանձնել արդարադատության նախարարությանը՝ հետագա քննության համար»³⁰³: Տևական լրությունից հետո Վրաստանի կառավարությունը դարձյալ վերադարձավ այս հարցին և 1919 թ. մարտի 25-ին որոշեց վերսկսել քննությունը, այժմ առաջարկելով նորընտիր «Երրոր» ԱԺԽ-ին, ստեղծելով սեփական հանձնաժողով, վերջնականորեն ճշտել հասցված վճարի չափը: Սուխումի շրջանի տուժած բնակիչների հայցերը բավարարելու նպատակով ՆԳ նախարարությանը հատկացվել էր 500 հազար ռուբի³⁰⁴: ԱԺԽ-ի անդամները, անդրադանալով իիշյալ դեպքերին, գրում էին Վրաստանի վարչապետին՝ «Քանի որ այս բոլոր բռնությունները կատարվում են Վրացական կառավարության անունից, ապա արխագական զանգվածներում ձևավորվել է Վրացիների մասին կարծիք, ինչպես բռնարարիչների և ստրկացնողների... Այդ պահից սկսվում է Արխագիայի ողբերգությունը»³⁰⁵: Վրաց մամուլն արձանագրում էր. «Ափխազմերի դժողովութեան և Վրաստանի պրեստիժի վարկարեկման գլխաւոր պատճառը մենք ենք: Մենք մեր անտակտութեամբ, փորոցային խուժանավարութեամբ և կատարեալ պետական անընդունականութեամբ մի քանի ամսայ ընթացքում կորցրեցինք ափխազմերի բազմադարեան բարեկամությանը և նրանց սրտներում թշնամութեամբ արմատներ ձգեցինք»³⁰⁶: Այսպիսով, քաղաքական պայքարը Արխագիայում ձեռք էր բերում նաև ազգային երանգավորում:

³⁰² ԱԿՊՈԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 37, թ. 12:

³⁰³ МЕНТЕШАШВИЛИ А. Из истории Взаимоотношений.., с. 25.

³⁰⁴ Действия Правительства Грузии. — «КАВКАЗСКОЕ СЛОВО», 30.III.1919.

³⁰⁵ «СОЦИАЛ-ДЕМОКРАТ», 6. X. 1919.

³⁰⁶ «Խայանագույն» թերթից արտապահ հոդվածը տես Արխագիան և Վրաստանը. — «ՆՈՐ ԱՇԽԱՏԱՌՈՐ», 19. VIII. 1919:

IV ԱԲԽԱԶԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՈՒՄ

Վերացնելով Սովորմի շրջանին սպառնացող բուրքական և բոլշևիկյան վտանգը, վրացական զորքերը շարժվեցին դեպի մերձծովյան հյուսիսային շրջանները: Ըստ իրազեկ աղբյուրների, «վրաց կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է տիրապետել ծովափին՝ մինչև Տուապսէ այստեղ վերաբնակեցնելու համար սակաւահող վրացի գիտացիներին»³⁰⁷: 1918 թ. հունիսի 24-ին ԱԺԽ-ն, վրացական կառավարության առաջարկությամբ³⁰⁸, որոշում կայացրեց Սոշի-Գագրայի և Տուապսէի շրջանները զբաղեցնելու անհրաժեշտության մասին³⁰⁹: Փաստաթղթի ընդունմանը նախորդող իրադարձությունների մասին հուշեր է բողել Ս. Շասարիան. նա նշում է, թե երբ վրացական բանակը արդեն ուժունում էր Տուապսէին, ֆոն Կրեսոր այդ քայլի անօրինականության մասին զգուշացրեց Վրաստաճի կառավարությամբ³¹⁰: Այդ իսկ պատճառով վրացական իշխանությունները պահանջեցին ԱԺԽ-ից, որ Տուապսէն հայտարարվի Արխազիայի սահման, ինչը կարդարացներ Վրաստաճի ուսնձգությունները Ռուսաստաճի Սևծովյան նահանգի նկատմամբ³¹¹: Վրաստաճի կառավարության քաղաքականությունը Ռուսաստաճի հարավում հզորացած «Սպիտակ շարժման» հետ ընդհարման խթան դարձավ: Վերլուծելով վրացական զորքերի ծովափինյա արշավի պատճառները՝ Ա. Դենիկինը գրում էր. «Թուրք-գերմանական բռնագրավման ժամանակ Վրաստաճի հյուերն ուղղվեցին դեպի Սևծովյան նահանգը... Աղիքը եղավ պայքարը բոլշևիկների դեմ, երաշխավորությունը՝ գերմանացիների համաձայնությունը և աջակցությունը, որոնք հաստատվել էին Ալլերում»: 1918 թ. աշնանը սրվեցին Վրաս-

³⁰⁷ Հրուրինը Սովորմ. - «ԱԺԽԱՍԱՒՈՐ», 5. X. 1918:

³⁰⁸ Տես ՎԿՊ(Դ)Ա, ֆ. 1861, ց. 2, գ. 37, թ. 1-2:

³⁰⁹ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 415, վավ. N 226:

³¹⁰ БАСАРИЯ С. Абхазия в географическом, этнографическом и экономическом отношении, с. 92.

³¹¹ 1919 թ. մարտի 14-ին Փարիզի վեհաժողովում վրացական պատվիրակությունը տարածեն եր մի «Հուշագիր», որը պահանջում էր Վրաստաճի սահման ճանաչել Տուապսէից 14 լր դեպի հարավ գտնվող Մակուպս գետը: Տես Մեմորանդում ուժառնության մասին կոնֆերենսս ծելեցաւուն Հրցանակությունների համաձայնությունը և աջակցությունը, որոնք հաստատվել էին Ալլերում»:

տանի կառավարության և «ապիտակ» Կամավորական բանակի հրանատարության հակասությունները ենթադրյալ վրաց-ռուսական սահմանի շորջ³¹²: Նոյն ժամանակ պարզ դարձավ, որ Թուրքիայի հովանավորության ներք Աղրեջանի և հյուսիսկովկասյան լեռնական-ների համադաշնության ստեղծելու մտահղացումը ձախողվել է³¹³: Թուրք-մոնիահաջիրական դեսանտի անհաջողությունից հետո հակավրացական ընդդիմությունը և Թուրքիայի օգնությանն ապավինող արխագ գործիչները հիասքափեցին և Արխազիայի ապագայի նկատմամբ իրենց հոլյուերը կապեցին «Սպիտակ շարժման» հետ: «Ոչ թի աբխազներ, սպաներ և հեծյալներ, գաղտնի հեռացան Արխազիայից և համալրեցին գեն: Դենիկինի Կամավորական բանակի շարքերը...»³¹⁴: 1918 թ. սեպտեմբերին Վրաստանի Ազգային խորհրդի անդամ Ե. Գեգենկորին Սոչիից հաղորդում էր Ժորդանիային, որ Կամավորական բանակի հրամատարության մոտ մեկնել էր արխազների պատվիրակություն՝ հայտարարությամբ, որ Վրացական կառավարությունը բռնաբարում է իրենց կամքը, թեպես նրանք ողջ ոգով Ռուսաստանի հետ են³¹⁵: «Կայ նաև խնդրի հոգեբանական կողմը: Արխազները տեսնում են, որ առաջ վրացիք ևս, իրենց նման, Ռուսաստանի պարզ հպատակներ են, որ՝ քաղաքացիական-իրաւական, և ազգային տեսակետից առաջ որևէ տարբերութիւն չկար նրանց մէջ, այն ինչ 1918-ից սկսած... մէկը իշխող տարր է դարձել միսար՝ ստորադաս: Այդ պարագային, մտածում են արխագ դեկապարները, ի՞նչ հարկ և առաւելութիւն՝ վրացիների նման մի

³¹² «Բարեկամանական հարաբերությունները, հաստատված մեր և վրացիների միջև, կտրուկ փոխվեցին Տուպասեն մեր վերահսկողության տակ վեցցնելու հետո», - գրու է ուս գեներալ Լուկոմսկին (ЛУКОМСКИЙ А. С. Из воспоминаний // В сб.: АРХИВ РУССКОЙ РЕВОЛЮЦИИ. Том VI. Берлин. 1922, с. 103): Ինչպես նաև «Վաստարական բանակում Վրաստանի դեմ աներևակային ատելորին է ածում: ...Բանակի ստորին խաւերում այդ ատելորինը գօրանում է այն լուրջի եռանդուն տարածումք ըստ որոնց, իբր թէ, Վրաստանու բոլոր ուսմեր հալածանքի են ենթարկած» (տես՝ Կամատրական բանակի վրաբերումները դժու վրաց հանրապետութիւնը. - ԱԱԾԽԱՍԽՈՒՐ, 28. XI. 1918):

³¹³ ՀԱԱ, ֆ. 276, գ. 1, զ. 30, թ. 12: Հյուսիսային Կովկասի մահնեղականների շրջանում բարոզացուրյուն էր ծավալում հասուլ գործուղված բուրքական սպա Խզգեթը իր գործակալներով: «Հենվելով կրոնի վրա, բուրքերը նախատեսել են Լեռնականների միության և Աղրեջանի միավորումը: Այդ դաշինքը կնքվել է 1918 թ. հոկտեմբերին», - գեկուցում էր Փարիզ ֆրանսիական գնճվրական առաքելության դեկավար գնճապան Շարլինեն (ՎՎԵՏԻՒՅԱՆ Հ. Նշվ. աշխ., էջ 331):

³¹⁴ Տես ДАНИЛОВ С. Трагедия абхазского народа (Вестник Института по изучению истории и культуры СССР. N 1. Мюнхен, 1951) // В сб.: Материалы по истории Абхазии. Вып. 1. Сухуми, 1990, с. 9.

³¹⁵ ՎԿՊ(Ա), թ. 1861, գ. 2, զ. 26, թ. 38-40:

փոքր ազգի ենթարկությի, ավելի լաւ չէ՝ անմիջապէս ռուս տիրապետութեան ենթարկություն»³¹⁶:

Վրաստաճի և «ապիտակների» միջև հակասությունները կարգավորելու նպատակով 1918 թ. սեպտեմբերի 25-26-ին Եկատերինողարում տեղի ունեցած քանակցությունների Կամավորական քանակի հրամանատարության (Ալեքսեև, Դենիկին, Ռոմանովսկի, Դրազոնիրով, Լուկոմսկի, Շուլցին), Կուբանի կառավարության անդամների (Բիչ, Վորոբյով) և վրաց բանագնացների (Գեգենզերի, Մազմիկ) միջև: Ռուսական կողմը պահանջում էր իր վերահսկողությանը հանձնել Սոչին և Գագրան³¹⁷: «Ապիտակ» հրամանատարությունը համարում էր, որ Վրաս-

³¹⁶ ԱՐԵՂԵՎՆ Ա. Անդրկովկասի փոքր ազգությունները. – «ՀԱՅՐԵՆԻՔ», 1929, մարտ, էջ 95: Հետազայում Բարումից Եկատերինողար էր տեղափոխվել նաև Ա. Շերվաշիձեն: Ռոշագրավ է, որ դա առիր տվեց ԱԺԽ-ի անդամ Դ. Գուլյային հանդես զայ Սուխումի սոցիալ-դեմոկրատական մասնություն «Խնդա Աճազան» հոդվածով, որտեղ հետինակը մեղադրում էր Շերվաշիձեին և նրա կողմնակիցներին անսկզբության մէջ («НАШЕ СЛОВО», 21.VI.1919): Եթե 1918 թ. մայիսին Բարումում այլ արխանց քեզ փնտրում էր Թուրքիայի հովանավորությունը, ապա նրա պարտվելոց հետո՝ Դենիկինին հրած նամակում նրանք ասում էին՝ «Կովկասի ժողովուրդների միջև արխազները պատկանում են երանց, ովքեր սրտան նվիրված են Կամավորական քանակին և Ռուսաստանին: Եւ մենք չենք տեսնում մեկ որիշին, քայլ թեզանից, որը կարող է օգնություն ցուցաբերել մեր Արխազիայի ազատազրան համար...» (Բ Աճազան. – «КАВКАЗСКОЕ СЛОВО», 16. VII.1919): 1919 թ. Գետրվարին «ապիտակների» առաջիաղացման հետևանքով փացական գործերը նահանջեցին մինչև Բայր գենոր՝ գիշերով Սոչին, Ալեքսեև և Գագրան: Արխազիա էր գործուղիւն Կամավորական քանակի զնդապես Նախարարն Մարշանիան զայտնի առաքելությամբ՝ կազմակերպել ապատամբություն վրացիների դեմ (ԿՕԶԼՕՎ Ա. Ի. Նշվ. աշխ., էջ 80): Սակայն Կովկասում թրիտանական ուազմական միմիայի պահանջով կանխվեց «ապիտակների» հարձակումը Սուխումի ուղղությամբ: Տես «Մեմորանդում» Դօքրօնութեական օրմու առցուցական կոմահօճանու ո ուսուցանական համարություն Հրցաւ. – «КАВКАЗСКОЕ СЛОВО», 5. IV.1919.

³¹⁷ Հայ 1918 թ. օգոստոսի 27-ի «Ուս-գերմանական հավելյալ պայմանագրի» Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը համաձայնվում էր, որ «...Գերմանիան ճանաչի Վրաստանը որպես ինքնուրույն պետական կառուցվածք» (Документы Внешней политики СССР. Т. 1-й. М., 1957, с. 443): Սակայն հստակ սահմաններ չին գծել և Վրաստանի կառավարությունն իր «Ալյում» որոշել էր նրանց ժամանակամուր կացությունը: Իմանալով դա, Վ. Շուլցինը և Ն. Վորոբյովը պահանջում էին, որ Արխազիան և չնեղդրկիլ Վրաստանի Համբակենության մէջ, քանի որ, նրանց ասելով, արխազները ցանկանում էին լինել Ռուսաստանի կազմում: Գեն. Ալեքսեևը, սակայն, նկատի ունենալով 1918 թ. հունիսի 11-ի վրաց-արխազական դաշնապիրը, ի վերջո համաձայն եղավ բողնի Վրաստանի կառավարության հայեցողության Արխազիայի կարգավիճակի հարցը (Документы и материалы..., с. 391-414): Հետազոտողներն ուշադրություն են դարձնում Ն. Վորոբյովի գրույկին «Օ հեօսնօթաթելություն գրցնի ո Հցիմուսկի օքրու (Աճազան). Ռոտով-նա-Դոնу, 1919»: Նաև առև Մատերիալն ու ստորև Աճազան. Վոլ. 1. Սუխumi, 1990. Այս աշխատությունը վրաց հետինակներն անհանուն են՝ կեղծարութը (МЕНТЕШАШВИЛИ Ա. Առև ստորև Վզամոօթաթելուն.., ս. 19. Նաև՝ ՇԱՄԱԽԱՐԻ Դ. – ԳՈԳԻԱ Բ. Նշվ. աշխ., էջ 88), իսկ նրա հակավագական տեսակետուները մեջբերում են արխազ պատմաբանները (История Абхазии, с.

տանը որևէ իրավունք չուներ տիրելու Սովորմի շրջանին: Բանակցություններն ավարտվեցին անարդյունը³¹⁸:

Արևագիայի կարգավիճակի շորջ հակասությունների լարումը բերեց մի իրադարձության, որի վերաբերյալ եղած տեղեկությունները հակասական են: 1918 թ. հոկտեմբերի 9-ի երեկոյան ԱԺԻւ-ի որոշ անդամների (Գ. Էմուխվարի, Յ. Գոգելաշվիլի, Ի. Փաշալիյի, Պ. Գելովանի) ներկայությամբ Վարլ. Շերվաշիձեն ուղիղ հեռախոսակապով հաղորդել էր Թիֆլիս, որ Կամավիրական քանակի իրամանատարության դրդմամբ մի խումբ ԱԺԻւ-ի նախկին անդամներից, Ի. Մարգանիայի և Ռ. Չխոտուայի զիսավորությամբ, քաղաքական հեղաշրջման փորձ էին կատարել: Վարլ. Շերվաշիձեն, իր գործընկերների համաձայնությամբ, առաջարկում էր Վրաստանի կառավարությանը լուծարել ԱԺԻւն և «մինչև իրական ժողովրդական ներկայացուցության գումարում... ժամանակավոր նշանակել կառավարական իշխանությամբ լիազորված շրջանային կոմիսար... որը եռանդուն կերպով պետք է հաստատի պետական կարգը վարչական կառավարման ասպարեզում»: Բացի այդ «ալեքսեևականների նախաձեռնող խումբը (ինձ՝ «հակավարացական» ընդդիմությունը. - Բ. Մ.) պետք է վճռականապես և հուսայի մեկուսացվի, քանի որ ազատության մեջ գտնվելը կարող է ստեղծել...

304-305. Նաև՝ ԼԱԿՈԲԱ Ս. Յ. Օչերկու.., ս. 68-69): Այնինչ Վորոբյովը ասում էր, որ չեր պաշտպանի արխազներին, երե շիամարեր Վրաստանի և Ռուսաստանի միջև առավելապես հարմար սահման նշնոր գետը (Դոկումենտы ո մատերիալы..., ս. 413):

³¹⁸ Զ. Դ. Ավալովը համարում էր, որ քանակցությունների ժամանակ Գեկեճկրորին և Մազնիկը, հավակնենալու Սոյիի շրջանին, պաշտպանում էին անարդար սկզբունքներ (ԱՎԱԼՈՎ Զ. Դ. Նշվ. աշխ., էջ 198): Վրա ներկայացուցիչների անգիտում դիրքորոշումը պայմանագրաված էր Գերմանիայի աջակցությամբ, որի վկայություններից մեկն է Կովկասում գերմանական կայգերական առաքելությանն առջներեր տեղեկատվական բյուրոյի պետ արոքեար է: Ցուցմայերի հայտարարությունը: «Ռուսական Կամավիրական քանակի դեկանալ գեն. Ալեքսեևի սպառնալիքները, - ասում էր գերմանացին, - Վրաստանի համար անվճառ են, քանի որ հարձակման դեպքում գերմանական զորքերը, պայմանագրավածությունների համաձայն, կկանգնեն Վրացական հանրապետության սահմանների պաշտպանությանը, իսկ ուկրաինական զորքերը կարգածեն գեն. Ալեքսեևի քանակի թիվունիքն» ("КАВКАЗСКОЕ СЛОВО", 5.Х.1918): Ե. Լյուտենդորֆը վկայում էր, որ գերմանացների և Կամավիրական քանակի միջև հակասությունները Հյուսիսային Կովկասում, ստիպեցին իրեն միջնորդել Գերմանիայի կանչելիք առջև Վրաստանի ցանկությունները բավարարելու նախակալով (Германские оккупанты в Грузии в 1918 году, с. 153-154): Դիտորդները գտնում էին՝ «Стремление любой ценой удерживать Сухумский округ заставило продвинуть грузинские войска на север в Черноморскую губернию и создать заслон, тем более, что близкое соседство "великодержавных" сил питало в Абхазии отнюдь не прогрузинские симпатии. В Сухумском округе были созданы условия, при которых может существовать и работать только "революционный" народный совет, а всякий иной подлежал разгону, как гнездо "контрреволюции" и "туркофилов"» (КАЗАНСКИЙ М. Очерки Закавказья. — "НАРОДНОЕ ЗНАМЯ", 23. III.1919):

պայմաններ այլ արկածախնդրության համար»: ԱժԽ-ի նախագահը խնդրում էր «հանձնարարական տալ շտաբին վճռական միջոցների դիմելու համար»³¹⁹: Վարդ. Շերպաշհանի հաղորդումը հաստատում էր 1918 թ. հոկտեմբերի 12-ին Սուխտումի ջոկատի շտաբի պետ Տոխարելին, որը հեռազրով զեկուցում էր կառավարությանը՝ «Ծրջանային կոմիսարը և այլ անձինք կազմակերպել էին զինված ելույթ Արխազական ժողովությական խորհրդի դեմ, որի նպատակն էր փոխել նրա կազմը և բերել դեկանավարության պետությանը (ինա՞ Վրաստանին. - Բ. Մ.) թշնամանքով վերաբերվող տարրերին: Եռանդրուն կերպով իրականացված միջոցների շնորհիվ կոմիսարը և այդ անձանց որոշ մասը ձերբակալված է և ճամփվել է Թիֆլիսում»³²⁰: Հոկտեմբերի 10-ին Վրաստանի կառավարությունը լսեց Ժորդանիայի հաղորդումն Արխազիայում տեղի ունեցածի մասին: Վարչապետը մասնավորապես ասաց. «Կառավարությունը վաղուց տեղեկություններ ուներ, որ ԱժԽ-ի անդամների որոշ մասը, իիմնականում կալվածատերեր, կանգնելով ԱժԽ-ի և Սուխտումի շրջանի բնակչության շահերի դավաճանության ճանապարհին, միշտ ձգտում էին հասնել, կալվածատերերի շահերից բխող, օտարերկրյա միջամտության արխազ ժողովովի և ամբողջ պետության (ինա՞ Վրաստանի. - Բ. Մ.) գործերին՝ սկզբից Թուրքիայի, ապա Ալեքսեևի բանակի կողմից: Վերջին ժամանակ այդ խմբի խիզախսությունը հասավ նրան, որ շրջանային կոմիսար Մարգանիայի և Աբխազիայի գործերով նախարար զնդապետ Շխոտուայի զիսավորությանը մտածել էր իրականացնել քաղաքական հեղաշրջում զորահավաքելով տեղի զինված ուժը՝ արխազական հեծյալ հարյուրյակը և միլիշտիան, շրջապատելով Արխազական ժողովրդական խորհրդի շները և մոտարի մոտ տեղադրելով զնդագիրներ, ներս էին բերել զինված մարդկանց»³²¹: Ժորդանիայի հաղորդման իիմնական դրույթները դարձան կառավարական որոշման նախարարն, որին հաջորդում էր. «...Նկատի ունենալով, որ արխազական ժողովրդական խորհրդի անդամների ընտրութիւնները չեն արտայալու արխազ ժողովրդի խկական կամքը՝ [կառավարությունը] որոշեց. 1) Ցրած համարել արխազական ժողովը ներկայ կազմը և նոր ընտրութիւններ նշանակել ընդհանուր ընտրական իրաւունքի հիման վրայ; 2) Ընտրութիւնների համար կազմել մի կենտրոնական ընտրական յանձնաժողով Վարլամ Շերաշիձեից, Խիդոր Ռամիշվիլուց, Վասիլի Գուրջուայից, դոկտ. [Իվան] Պաշալիդիից և Գեորգ Շանշինից, որպիսի յանձնաժողովին իրաւունք է տրում ընտրել իր նախագահին և գործակցութեան իրավունք իր օգտակար համարած անձերի; 3) Մինչև

³¹⁹ ՎԿՊ(Մ), ֆ. 1861, գ. 2, գ. 37, թ. 64-69:

³²⁰ Նոյեմ տեղում, գ. 28, թ. 60:

³²¹ «КАВКАЗСКОЕ СЛОВО», 12. X. 1918.

աբխազական նոր ժող. խորհրդի ընտրութիւնը՝ ժամանակաւորապէս Սովորումի շրջանի կոմիսար նշանակել Բենիամին Չխիկիշվիլուն, սրան ենթարկել Սովորումի շրջանի բռլոր իշխանութիւնները. իսկ մինչև այս վերջինի տեղ հասնելը գինուրական ու քաղաքացիական իշխանութիւնը յանձնել Սովորումի գօրախմբի սպայակոյտի պիտ Թուխարելուն; 4) Աբխազիայի գործերի նախարար զնդապետ Շխոտուայի լիազօրութիւնները վերջացած համարել և այդ պաշտօնը ժամանակաւորապէս յանձնել ներքին գործերի նախարարին; 5) Աբխազիայի ժող. խորհրդի կայքի և դիւնանի պահպանումը յանձնել յիշեալ կենտրոնական ընտրական յանձնաժողովին, որպէսզի փոխանցւեն նոր ժողովրդական խորհրդին»³²²:

Այս ամենը հերքելով, ընդդիմադիր կողմը հաղորդում էր, որ 1918 թ. հոկտեմբերի 9-ին կայացավ ԱԺԽ-ի բուռն նիստ, որի ընթացքում Դ. Ալանիան, Ս. Աշխացավան և այլք պահանջում էին վերականգնել օգոստոսի 15-ին մանղատներից գրկած ԱԺԽ-ի նախակին անդամների լիազօրությունները³²³: Արդարացնելով հեռացվածներին, Աշխացավան ասում էր՝ «Գոյուրյուն ունեցող կարգը այլևս չի կարող շարունակվել: Թուրքամետության մասին խստակցությունները տխմարություն են և խարեւայություն: Եթե նոյնը շարունակվի, ժողովուրդը իրականուն կը նայի ցանկացած այլ կողմնորոշում, ոչ միայն քուրքական՝ նոյնիսկ սատանայական, միայն փրկվի նվաճողներից»³²⁴: Նա նաև առաջ էր քաշել Վարլ. Շերվաշիձեի գլխավորած նախազահորժյանն անվտանգություն հայտնելու հարցը³²⁵: Մեծամասնությունը՝ 20 ձայն, այդ առաջարկության օգտին էր քվեարկել, դեմ՝ 9-ը³²⁶: Սակայն Շերվաշիձեն հայտարարեց ընդմիջում և վերսկսեց նիստը վրացական ժողովրդական զարդիայի գինուրների հրավերից հետո: «Խորհրդի նախազահը, - գրում է Ս. Թարնավան, - առաջ էր քաշել ընդդիմության կողմից վտանգի և պետության դավաճանության հարցը... Թեպետ այս նիստում կտրուկ միջոցներ չեն կիրառվել... որա փոխարեն նոյն գիշերը կամ հաջորդ օրը... այս պատզամավորները ճերբարկալվել էին»³²⁷: Հոկտեմբերի 10-ին Սովորումի գրոսարանում հավաքվել էին ցուցարարներ, որոնց առջև, դատապարտելով ուազմական իշխանությունների կամա-

³²² Տե՛ս Աբխազիայում՝ Կառավարութեան հաղորդագրութիւն. – «ՀՈՐԻԶՈՆ», 13. X. 1918: Նաև՝ Կառավարական հաղորդագրութիւն. – «ՄԸԱԿ», 13. X. 1918: Նաև՝ Կառավարութեան որոշումները Աբխազիայի ժող. խորհ. մասին. – «ԱԾԽԱՏԱՒՐ», 13. X. 1918:

³²³ Իստորիա Աբխազիա, ս. 306.

³²⁴ Նոյն տեղում, էջ 307:

³²⁵ ԱԺԽ-ի նախազահի պաշտոնին ընդդիմությունից հավակնում էր Ս. Աշխացավան (Տե՛ս ՃՅԱՋՅԱՐԻԱ Գ. Ա. Փօրմիօթանու, ս. 304):

³²⁶ Օֆ օբխազսկի ծելաշ. – «РЕЧЬ», 20. XI. 1918.

³²⁷ ՂԱΜԱԽԱՐԻԱ Դ. – ГОГИЯ Ե. Նշվ. աշխ., էջ 85:

յականությունները, կտրուկ ճառով ելույթ էր ունեցել քահանա Գ. Թումանովը: Ցույցը ցրվել էր բրնի ուժով³²⁸: Հոկտեմբերի 15-ին Տոխարելին գեկուցում էր Թիֆլիս՝ «Սաղրիշները ձգուում են բարձրացնել ազգային ապստամբության դրոշը և նրանց ձերբակալման նպատակով քաղաքը հսկում է սպայական պարեկներով: Ձերբակալությունները հաջող են ընթանում»³²⁹: Կալանքի վերցված Ս. Աշխացավան, Ի. Մարգանիան, Դ. Ալանիան, Գ. Աջամովը, Գ. Թումանովը, Վլատիմիր Շերվաշչիձեն և նրա եղբայրը՝ ճանաչված նկարիչ Ալեքսեյը, ինչպես նաև Սովորում քաղաքի միլիշիայի պետ Մ. Շատատերը՝ բվով 16 մարտ քանտարկվել էին Թիֆլիսի Մերեխի բանտում³³⁰: Տոխարելու կարգադրությամբ ձերբակալվել էին տեղի Ռուսական ազգային խորհրդի նախագահ Դմիտրի Լուկյանովը և նրա տեղակալ Ալեքսանդր Դեմյանովը, ըստ 1918 թ. հոկտեմբերի 12-ին Վրաստանի կառավարությանը հղած բողոքի՝ առանց որևէ բացատրությամբ³³¹: Հոկտեմբերի 14-ին նրանք մեղադրվել էին անհաջող հեղաշրջմանը մասնակցելու մեջ³³²: Հարուցված գործի տրամաբանությունն անխոսափելի էր դարձնում ԱԺԽ-ի ոռու անդամների ձերբակալումը, քանի որ դավադիրները մեղադրվում էին Վամավորական բանակի հետ հանցավոր կապ ունենալու մեջ³³³: Ինչպես հետևում է Տոխարելու գեկուցագրից, Զխոտուան մեկնել էր Փոքրի և տեղի զինվորական պարետին հանձնարարվել էր կալանավորել նրան³³⁴: Գլխավոր ամբաստանյալը՝ «սպիտակ» դաշնակիցների մոտ ապաստան գտնելու փոխարեն մեկնել էր ճիշտ հակառակ ուղղությամբ: Ուշագրավ

³²⁸ ДЗИДЗАРИЯ Г. А. *Формирование...*, с. 305.

³²⁹ "Тифлис. Телеграмма. Военному министру. Из Сухума. 15-го октября 1918 г. Город охраняется офицерскими патрулями с целью ареста провокаторов стремящимся поднять знамя национального восстания. Аресты проходят успешно... Полковник Тухарели". Ст. в *ՎԿՊ(Ռ)*, ф. 1861, գ. 2, գ. 28, թ. 63:

³³⁰ Ст. в *Об обстановке Абхазии*. — «РЕЧЬ», 6. XI. 1918. Նաև՝ *История Абхазии*, с. 306.

³³¹ ՎԿՊ(Ռ), ф. 1861, գ. 2, գ. 28, թ. 64: Մամովը հաղորդում էր, որ Աթբեխում երեք շաբարյա կալանքից հետո Դ. Լուկյանովը ազատ էր արձակվել, վերադառնադրվ Սովորում, սակայն, դարձայլ ձերբակալվել էր և արտարվել էր Վրաստանից: Վ. Զիմեկիվշվիլու այլ հանձնարարության պատճառներն անհայտ էին մնացել հասարակության համար (*Պո Կաբոզу: Сүхум.* — «НАРОДНОЕ ЗНАМЯ», 24. I. 1919):

³³² ՎԿՊ(Ռ), ф. 1861, գ. 2, գ. 28, թ. 71-72, 74:

³³³ Այս առումով հարկ է նաև նշել, որ հետազյում Ի. Մարգանիան և ամբաստանյալներից մի ճանանակակցել էր Կոմինիսատական կոսակցությանը (Եօրպա չա Հօթետսկու Յլաստե Յ Ածխզս, ս. 167, 241-242): Ինչ վերաբերում է Դեմյանովին, ապա լինելով «երրորի» ԱԺԽ-ի անդամ, նա փորձած էր կասեցնել Աբխազիայի տարածում կամագորական բանակի դեմ ուղղված պաշտոնական քարոզությունը, որի համար էլ 1919 թ. նոյեմբերին գրկվել էր մանդատից և այնուհետև փոարվել Վրաստանից (Տես «СЛОВО», 27.VII.1920):

³³⁴ ՎԿՊ(Ռ), ф. 1861, գ. 2, գ. 28, թ. 63:

է, որ նրան կալանքի վերցնելու կարգադրությունը միայն հոկտեմբերի 15-ին էր տրվել: Ինչպես հետևում է 1918 թ. հոկտեմբերի 17-ին Վրաստանի կառավարությանը հղած Զխոտուայի բացատրագրից, Սուլսումում հոկտեմբերի 7-9-ը, իր գտնվելու պահին, որևէ բռնություն ԱժԽ-ի նկատմամբ չի եղել: Կամավորական բանակի հետ կապը նա համարում էր մողոնած: «Ես պնդում եմ, - գրում էր Զխոտուան, - որ ոչ միայն երբեք չեմ վարել որևէ բանակցություններ և չեմ ունեցել որևէ գործ այս բանակի մասնակիցների հետ, այլև բազմիցս հայտնել եմ վնասակար ազդեցության մասին, որն առաջանում է մեր դեմոկրատական հանրապետության հետ նրանց հարեւանությունից, ապա ընդհանրապես պատկերացում չունեմ ինչպիսի առնչություն կարող է ունենալ այս բանակն Աբխազական ժողովրդական խորհրդի հետ»³³⁵: Նախապես հայտնի էր, որ Զխոտուան նձգոն էր Աբխազիայում ստեղծված կացությունից և դրա մասին ինքը տեղեկացնում էր Վրաստանի կառավարությանը 1918 թ. սեպտեմբերի 20-ին հղած դիմումում: «Եթե արխազ ժողովուրդը կապել է իր ճակատագիրը վրաց ժողովրդի հետ, - գրում էր նախարարը, - ապա Վրացական կառավարության հետ ունեցած հարաբերություններում պետք է նշակել այնպիսի պայմաններ, որոնք կինոն պարզ ու հստակ և ապագայում տարբեր մեկնաբանությունների ու թյուրիմացությունների առիթ չեն տա: Զնայած [1918 թ. հունիսի 11-ի] դաշնագիրի պայմաններին, այստեղ իմ նշանակման առաջին օրից իրավիճակը թիւ է փոխվել, քանի որ առանձին գերատեսչություններ, որոց հիմնարկների պաշտոնյաներ շարունակում են նայել Աբխազիային ոչ թե որպես Վրացական հանրապետության կազմում ինքնավարության, այլ ինչպես նրա գավառի»³³⁶: Այս հարցում առաջացել էր ջրածան նրա և Վարլ. Շերվաշյանի միջև: Վերջինս բացեիրաց հայտարարում էր, որ Աբխազիան Վրաստանի գավառն է՝ օժտված զեմստվայական ինքնակառավարման իրավունքով³³⁷: Զխոտուան պահանջում էր, որ ոչ մի սկզբունքային հարց, առավելապես տնտեսական և քաղաքական ոլորտներին վերաբերող, չվճռվեր շրջանցելով Աբխազիայի գործերով նախարարին և առանց ԱժԽ-ի վավերացման: Զխոտուան, համարելով իրեն Վրաստանի կառավարության առջև արխազ ժողովրդի շահերի պաշտպան, գտնում էր, որ իր հետ հաշվի չնստելը նշանակում էր նոյն կերպ վերաբերվել ԱժԽ-ին, որի հետևանքով կիսախտվի դաշնագիրը Վրաստանի և Աբխազիայի միջև: Դիմումի բովանդակությունը վկայում է Զխոտուայի և Վրաստանի կառավարության միջև առաջա-

³³⁵ Նոյեն տեղում, գ. 37, թ. 53, 71:

³³⁶ Նոյեն տեղում, թ. 1863, գ. 1, գ. 707, թ. 1:

³³⁷ Տե՛ս ՕՇ աճազմական ծելաք. — “РЕЧЬ”, 15.XI.1918. Այդ հարցի շուրջ ծագած բանավեճների մասին տե՛ս ստորև. Վ բաննում:

ցած տարածայնությունների մասին: Նույնը հաստատում է անստորագիր բանաձևը, որը հավանորեն պատկանում է վարչապետ Ժորժա-նիային և կարգադրում է՝ «Սպասել Արխագիայի գործերով նոր նախարարի նշանակման և այնուհետև տեղյակ պահել բոլոր գերատեսչություններին, որ Արխագիային վերաբերող որևէ փաստարդի ընթացք շարվի առանց նրա գործերով զբաղվող նախարարի եզրակացության»³³⁸: Ծխոտուայի պաշտոնագրկման հետ մեկտեղ վերացվել էր Արխագիայի գործերի պատասխանատու նախարարի պաշտոնը, ինչը հակասում էր 1918 թ. հունիսի 11-ի դաշնագրի երրորդ կետին: Այդ ինստիտուտի գործառույթների կատարումը հանձնարարվել էր Վրաստանի ՆԳՆ-ին: 1918 թ. հոկտեմբերի 17-ին ՆԳ. փոխնախարար Գ. Մախարաձեն, օժտված լինելով արտակարգ լիազորություններով, գործուղվել էր Սուխումի շրջան³³⁹:

Այս վայրիվերումների վերլուծությունը բերում է այն եզրահանգման, որ Սուխումի շրջանում որևէ զինված հեղաշրջման փորձ 1918 թ. հոկտեմբերի 9-ին տեղի չի ունեցել: Վրաստանի կառավարությանը հղած Ռ-ուսական շրջանային ազգային խորհրդի հեռագրում ասված էր միայն ԱԺԽ-ի նախագահության վերընտրության փորձի մասին³⁴⁰: Այսիսկ ԱԺԽ-ի ներսում «վրացամետ» և «հակավագացական» թևերի միջև տարածայնությունները բերեցին նրա՝ վրացամետ դեկավարությանը փոխելու փորձին, ինչը հարմար պատրվակ ծառայեց ԱԺԽ-ն լուծարելու համար: Լրացուցիչ հանգամճները ավելացվել էին հետագայում, ԱԺԽ-ի արձակման փաստը հիմնավոր դարձնելու համար³⁴¹: Կարենոր վկայություն է բողեկ Վ. Զուլեկին, որը 1918 թ. հոկտեմբերի 23-ին գրանցել էր օրագրում, որ Սուխումում որևէ «ապստամբություն» չի եղել³⁴².

³³⁸ ՎԿՊՊԱ, ֆ. 1863, գ. 1, գ. 1184, թ. 1-1շրջ:

³³⁹ Նույն տեղում, ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 69:

³⁴⁰ Նույն տեղում, թ. 71-72, 74:

³⁴¹ Ոնն, որը ներկայանում է «Свидетель» ծածկանվան տակ, լինելով դեպքերի ականատես և, ինչպես երևում է շարադրաբից, բավականաչափ իրազեկ անձնավորություն, գրում է. «Совершенно определенно можно утверждать, что Варл. Шервасидзе и его единомышленники строили свою политику на том, что они, как социал-дем. меньшевики, найдут поддержку себе в лице министров грузинского правительства с.-д. меньшевиков, что в виду их партийной с ними связи грузинское правительство будет им во всем доверять и на них опираться, и что следовательно, пользуясь таким положением, они останутся у власти». Տե՛ս Об абхазских делах. — «РЕЧЬ», 20. XI. 1919.

³⁴² «Ездил в Сухум. Там произошло "восстание" абхазцев. Конечно никакого восстания не было, но повидимому часть реакционно настроенных абхазцев за-мышиляла выступление. И из этой мухи постарались создать слона!...». Տե՛ս ДЖУГЕЛИ В. Թյակելի կրք: записки народогвардейца. — «БОРЬБА», 12.XII.1919.

Ի տարբերություն վրաց պատմարանների, ովքեր անվերապահողնեն ճանաչում են Վրաստանի կառավարության պաշտոնական որոշումներում հնչած փաստերի ճշմարտությունը³⁴³, արխսազ հետազոտողները ԱԺԽ-ի աշխատանքի կասեցումը մեկնարանում են Արխագիայի և Վրաստանի փոխհարաբերությունների վերանայումն արգելելու ձգտմամբ³⁴⁴. Մենք, սակայն, կարծում ենք, որ ԱԺԽ-ի լուծարման բուն պատճառն ընտրությունների մասին նոր օրենքի շորջ ծագած վեճն էր: Գ. Անջափարիձեն դեռ 1918 թ. օգոստոսին տրանզում էր, թե ԱԺԽ-ի «կազմի փոփոխումից և քուրքասերների հեռացվելուց հետո դարձյալ չհաջողվեց ստիպել նրա անդամներին՝ մշակելու ընտրությունների մասին կանոնակարգը»³⁴⁵. Վրացական կողմը պահանջում էր վերընտրել ԱԺԽ-ն և համայնք նրա նոր կազմը համամասնական ներկայացուցչությամբ՝ համընդիմանուր, հավասար, ուղղակի ու զաղտնի քվեարկությամբ, ինչն առաջին հայացքից արդարացի էր: Արխագական կողմը, սակայն, դեռ էր դրան, քանզի այդ պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունք էր ստանում Արխագիայի ներքո բնակչությունը: Այսինքն՝ «դեմոկրատական» ընտրությունների արդյունքում արխագները, կամաք ականա, կորցնում էին ճնշող մեծամասնությունն ԱԺԽ-ում³⁴⁶: Այս-

³⁴³ Տե՛ս ՄԵНТЕՎԱՇՎԻԼԻ Ա. *Из истории взаимоотношений...*, с. 22. Նաև՝ ԳԱΜԱԽԱՐԻԱ Դ. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 85-86: Նաև՝ Յանձեկիրո ՚Ե՞րաժ. ճարցըցքն տաճամցրուց օգեանցութ օհջուրուց ՚Վարելուց 1917-1993. ճայցու Ա. էջ 27-28.

³⁴⁴ *Разгон второго АНС (§10) // История Абхазии*, с. 305-306.

³⁴⁵ ՎԿՊ(Ռ). ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 22-22 շրբ:

³⁴⁶ Զգուտմը արհեստական մերդուներով պատմովել արխագական մեծամասնությունն ընտրվել ճարմիններում արտահայտվել են և ԽՀՀՄ-ի կազմալուծնան շեմին: Նոր (ոչ խորհրդային, կամ «դեմոկրատական») ընտրական օրենսդրության կիրառման պարագայում մինչև 18 տոկոս հագիկ հասնող արխազ բնակչության թեկնածուները բնակնարար չեն կարող նրանքեւ այլ ազգություններին՝ առաջին հերթին Արխագիայի ազգաբնակչության 46 տոկոսը կազմող վրաց համայնքի ներկայացուցիչների հետ: Այսուհետև, 1991 թ. Արխագիայի Գերագոյն Խորհրդի նոր կազմը համապետ էր «քվեային» սկզբներով: Այն պարագայում, եթե արխագները խորհրդարանում քաղաքը էին 28 արդու (մանդատների ընդհանուր ծավալի 43 տոկոսը), վրացական համայնքին հատկացվել էր 26 պատգամագրության մանդատ, ինչպես նաև 11 տիկ իմնականությամբ էր հասել ուստի և հայացքի ներկայացուցիչներին: Տե՛ս ՅԵՐԵԲԵԿ Ա. *Этнические конфликты на Кавказе (1988-1994 гг.) // В сб.: Спорные границы на Кавказе*. М., 1996, с. 47. Նաև՝ ГОГСАДЗЕ Գ. *Глафные аспекты межэтнических отношений в Грузии // В сб.: Этнopolитические конфликты в Закавказье: их истоки и пути решения*. Мериден (США), 1997, с. 133. Նաև՝ ԳԱՋԿԻԵՎ Կ. Ս. *Геополитика Кавказа*. М., 2001, с. 160. Նաև՝ ՄԻՏЯЕВ Վ. Գ. *Грузино-абхазский конфликт и гражданская война в Западной Грузии // В сб.: Грузия: проблемы и перспективы развития*. Т. 2-й (Российский институт стратегических исследований). М., 2002, с. 50. Նաև՝ ԸՈՂԻՑԿԱՅԱ Տ. Ի. *Грузино-абхазский конфликт*. – «ВОСТОК», 1996, № 6, с. 42. Նաև՝ ԱԿԱԲԱ Հ. *Абхазия: после затянувшейся зимы*. – СГ,

տեղ կարևորվում է արխագ բնակչության թվաքանակի հարցը, որի նաս-
սին 1910-ական թթ. Վերաբերող ճշգրիտ տեղեկությունները բացակա-
յում են: Այդ և հաջորդ 1920-ական թթ. առաջին կեսի բացը փաստում է
նաև Ն. Լակորանի շեշտելով, որ «Արխազիայի բնակչության կանոնա-
վոր վիճակագրությունը մեզ նոտ բացակայում է»³⁴⁷: Գաղտնիք չէ, որ
խնդրի կապակցությամբ արխազական և վրացական գիտական ու քա-
ղաքական շրջանակների մոտեցումներն իրարամերժ են հատկապես
այս հարցում: Արխազները պնդում են, որ իրենց հայրենիքում վրացա-
կան երեկ տարրերն այդ ժամանակաշրջանում կազմել են բնակչուր-
յան շնչին տոկոսը, և նրանց թվաքանակի զգակի աճը վերագրում են
հատկապես խորհրդային իշխանության տարիներին տեղի ունեցած
նպատակալաց վերաբնակեցմանը: Ըստ 1897 թ. մարդահամարի՝ Ար-
խազիայի բնակչության մեջ արխազները կազմում էին 55,3 տոկոս, իսկ
1926 թ. նրանց մասնաբաժնը կրճատվել էր մինչև 26,4 տոկոս³⁴⁸:
Պատմաբան Ա. Մենթեշաշվիլին, մեջբերելով 1917 թ. գյուղատնտեսա-
կան վիճակագրությունը՝ 42,1 տոկոս է արձանագրում վրացիների (այդ
թվում նաև մեզրել, սպան և լազ բնակչության) թվաքանակը Արխազիա-
յում, իսկ արխազների թվաքանակը նվազեցնում է մինչև 21,4 տոկոս-
ին³⁴⁹: «Էրթորա» օրաթերթը, սակայն, պնդում էր, թե Արխազիայում
մեզրելները կազմում են 50 տոկոս, իսկ արխազները՝ 30 տոկոս³⁵⁰: Ինչ-
պես երևում է, այդ թվերը ակներևորեն հակասում են առաջին միուրե-
նական մարդահամարի տվյալներին, որը վրաց հետինակեները համա-
րում են սկզբնակետ, քանզի այն պաշտոնակես փաստում է վրաց
բնակչության թվաքանակի առաջնությունը (31,8 տոկոս)³⁵¹: Ըստ Տ.
Շամբարյան և Ա. Նեպրոշինի 1918 թ. Արխազիայում եկվորների թիվն ար-
դեն հավասարվել եր տեղաբնիկ արխազների թվի հետ³⁵²: Այնուամե-
նայնիվ պարզ է, որ հետագուստով շրջանում արխագ բնակչությունն այլ
ազգությունների նկատմամբ, լավագույն պարագայում, հարաբերական

23.V.1992. Նաև՝ ГАМАХАРИЯ Д. Абхазия: наступит ли Весна "после затя-
нувшейся зимы". - Ст. 6 на 16 стр. опубликовано 18.VI.1992.

³⁴⁷ ЛАКОБА Н. А. Նշվ. աշխ., էջ 206:

³⁴⁸ Ст. 6 История Абхазии, с. 209. Նաև՝ СКАКОВ А. Ю. Абхазия: социально-
демографические проблемы, экономика, политика // В сб.: Грузия: проблемы и
перспективы развития. Т. 2-й. М., 2002, с. 132.

³⁴⁹ МЕНТЕШАШВИЛИ А. Из истории взаимоотношений..., с. 19.

³⁵⁰ «յօթուծ» թերթից արտապահած հոդվածը տես՝ Абхазский вопрос. — «КАВ-
КАЗСКОЕ СЛОВО», 25.VII. 1919. Այնինչ, միուրենական մարդահամարը 1926 թվակա-
նին 22 տոկոս եր արձանաբեր մեզրեների թվաքանակը Արխազիայում: Ст. 6 Население
Закавказья (Всесоюзная перепись населения 1926 г. Краткие итоги. Издание
ЗакЦСУ). Տифլիս, 1928, с. XI.

³⁵¹ ТОТАДЗЕ А. Население Абхазии. Осетины в Грузии. Тб., 1994, с. 13.

³⁵² ШАМБА Т. М. — НЕПРОШИН А. Ю. Նշվ. աշխ., էջ 83:

մեծամասնություն էր կազմում³⁵³: «Երկրորդ» ԱԺԽ-ն համալրված էր իիմնականում արխագ ազգության անդամներով, ովքեր լիազորվում էին ազգակից տղամարդկանց հավաքներում՝ բաց քվեարկությամբ, ինչը վրաց կառավարական շրջանակները համարում էին «հակադեմոկրատական»³⁵⁴: Ուստական, հայկական, վրացական ու հունական ազգային խորհուրդների ներկայացուցիչները եղանակ չին ստեղծում: Միակ հուսալի հենարանը, որն ուներ այդ իիմնարկում վրաց կառավարությունը՝ Սամուրզականի սակավաթիվ լիազորներն էին: Ցանկանալով օժտել ընտրելու իրավունքով նկար բնակչությանը, առաջին հերթին մեգրել-վրացիներին, Թիֆլիսը հույս էր փայփայում, որ այդ միջոցով կարող է ստեղծել Աբխազիայում վերահսկելի ներկայացուցչական մարմին, որն այլև չի բարձրացնի ինքնորոշման հարցը:

ԱԺԽ-ի արձակումից հետո քաղաքական մքնողորդը ավելի շիկացավ: Դեռ «մուհաջրական» դեսանտի ջախջախումից անմիջապես հետո կառավարության ներկայացուցիչ Անջափարիձեն պահանջում էր իրականացնել արխազական բնակչության զանգվածային գինաբափում, քանի որ իրավիճակը շրջանում շարունակում էր մնալ անկայում³⁵⁵: Վրացական տիրապետությանը թշնամական տրամադրված արխազները կազմել էին պարտիզանական ջոկատներ, որոնք գործում էին S. Մարշանիայի ղեկավարությամբ³⁵⁶: 1918 թ. հոկտեմբերի 7-ին Ժորդանիայի կարգադրությամբ արգելվել էր տեղի հույների ջոկատի արձակումը³⁵⁷, ինչը վկայում էր շրջանում վրացական ուազմական ուժի բոլորթյան, ինչպես նաև այլ ազգությունների ներկայացուցիչներին արխազների հնարավոր գինված ելույթի ճնշման համար օգտագործելու ցանկության նախին³⁵⁸: 1918 թ. հոկտեմբերի 27-ին ուազմական նա-

³⁵³ Ст'ю ГУРКО-КРЯЖИН В. А. *Абхазия* (изд. Научной Ассоциации Востоковедения при ЦИК СССР). М., 1926, с. 8-9.

³⁵⁴ Նոր ժամանակների հետազոտողների մի մասը ևս հետևում է այս զնահատականին: Ст'ю ГАМАХАРИЯ Д. - ЧАНЯЯ В. «*Оккупация*» Абхазии: мифы и реальность?! – СГ, 2.В.1991.

³⁵⁵ ՎԿՊ(Ա), ֆ. 1861, ց. 2, գ. 27, թ. 27-27ըթ: Այս առումով ուշագրավ է Սերխեով, Գուլբիզ և Դրանդա ավանների հայ բնակչության հոգեր հովիվ Վրասին Թորոսյանից գենքի առգրավման դեպքը, երբ քահանան մտրակման էր ներարկվել (Նամակ Խմբագրութիւն. – «ՆՈՐ ԱԾԽԱՏԱՒՐ», 23. VII. 1920):

³⁵⁶ УРАТАДЗЕ Г. И. *Образование и консолидация Грузинской Демократической Республики*. (Исследования и материалы, серия 1, выпуск 29. Институт по изучению истории и культуры СССР). Мюнхен, 1956, с. 91.

³⁵⁷ ՎԿՊ(Ա), ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 58:

³⁵⁸ Այս քահարականների ախտղման մասին է գրում Ս. Բասարիան. «К чести переселенцев из армян, русских и др. надо прибавить и то, что они не поддались политике грузинского правительства по отношению к абхазам, именно: не посыпали свои национальные отряды наравне с грузинскими, греческими и мингрельскими

խարարին հղած նամակում շրջանային կոմիսար Վ. Չխիկվիշվիլին ծայրահեղ մտահոգություն էր հայտնում Սուխումից դեպի Սոչի գեն. Գեղևանովին (Աբխազիայի և Մինքրելիայի տարածքում տեղակայված ուժերի հրամանատար՝ ³⁵⁹ – Բ. Մ.) ենթակա զորամասի տեղափոխման մտադրության նկատմամբ: Անհամաձայնության պատճառի մասին նա գրում է՝ «Ծրջանի գինարարափումը չի իրականացվել: Ալեքսեևականների հնարավոր հարձակման դեպքում գինված հանցախմբերը յուրաքանչյուր րոպէն կվտանգեն մեր թիկունքը»³⁶⁰: Մեկ տարի անց այս դրությունը չէր կրել որևէ փոփոխություն, երբ 1919 թ. օգոստոսին Վրաստանի Սահմանադիր ժողովի անդամ, ազգային-դեմոկրատների առաջնորդ Սպիրիդոն Քենիան ասում էր՝ «Աբխազական ժողովուրդը Վրաստանի դեմ է տրամադրված, եթե [Սոչիի] ուղղամաձակատում իրավիճակը փոխվի, ապա Աբխազիայում աղետ կինծի... Աբխազիայում պահում ենք հսկայական գինված ուժ: Մեծամասնությունը [Աբխազիայի ժողովրդական] խորհրդում կառավարական կուսակցության ծերություն է [ինաւ՝ վրաց սոցիալ-դեմոկրատների. – Բ. Մ.], սակայն յուրաքանչյուր մի նոր վրացու պաշտոնում հայտնվելն առաջացնում է բողոք... Աբխազիայում գետինը հուսալի չէ»³⁶¹: Նոյն ոճով էր արտահայտվում «Սաքարբելո» թերթը. «Սուխումի շրջանում պետք է սպասել նորանոր բարդություններ, քանի որ շնորհիվ մեր կենտրոնական կառավարության անհեռատեսության և տեղի դեկավար անձանց բացարձակապես անմիտ ու վնասակար զործունեության արդյունքում՝ մենք քշնամացրինք աբխազներին մեր դեմ... Սուխումի շրջանում մեր զործերն այնքան ծախողված են, որ մենք չենք կարող հենվել որևէ մեկի վրա: Ստեղծված պայմաններում դժվար չէ կոակել քաղաքական բարդացումների հետևանքները [Կամավորական բանակի] առաջխաղացման դեպքում»³⁶²:

Անկայուն պահերին աճում էր ոչ աբխազական բնակչության դերն ու նշանակությունը և կարևորվում նրան վրաց իշխանության կողմ գրավելու հանգամանքը: 1918 թ. հոկտեմբերի 8-ին Բարուշերայի, Գումբատայի, Բենվերիի և Գուլբիազի համայնքների (Աբխազիայի կենտրոնական տարածքը, որտեղ աբխազ բնակչությունն անշատ էր) ներկայացուցիչները խնդրանքով դիմել էին Վրաստանի կառավարության

жечь и грабить абхазские села». Ст. БАСАРИЯ С. Абхазия в географическом, этнографическом и экономическом отношении, с. 82-83.

³⁵⁹ Տես Լրատու 'Գյանուր իրամանատար. - «ԱՇԽԱՍԱՒՐ», 27. IX. 1918:

³⁶⁰ ՎԿՊ(Բ), ֆ. 1861, գ. 2, գ. 27, թ. 98:

³⁶¹ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 448-450, վալ. N 244:

³⁶² «Խաջարովյան» թերթից արտասոված հոդվածը տես «Հեյորալիզօթաթայաց» ուժամասնությունում. – «КАВКАЗСКОЕ СЛОВО», 3. VII. 1919.

լիազոր Ի. Ռամիշվիլուն՝ իրականացնել հողային բարեփոխումը և վերացնել կապալավարձը³⁶³: Քանի որ հիմնական վարձակալներն էին մեզրելները, հայերը և հույները, ապա Արխագիայում վրաց իշխանությունների ներկայացուցիչները նրանց սիրաշահելու քաղաքականություն էին վարում: Մարտավարական նկատառումներով, վրաց պաշտոնյաները երբեմն աջակցում էին տեղի հայերին և հույներին՝ որպես լրացուցիչ հակակշիռ անջատամետ արխազներին: 1918 թ. հոկտեմբերի 17-ի հեռագրում Ի. Ռամիշվիլին պահանջում էր կառավարությունից անհապաղ կասեցնել շրջանում կապալավարձի գանձումը³⁶⁴: Այս հեռագիրը հաստատում է, որ չէր իրականացվել տեղի գյուղացիական երկրորդ համազումարի որոշումը, որի համաձայն կապալով մշակվող հողերի սեփականատեր էին ճանաչվել վարձակալները³⁶⁵: Աժև-ի արձակման և Արխագիայում ստեղծված ընդհանուր կացության պարագայում հողավարձի հարցը տեղափոխվել էր տնտեսահրավականից քաղաքական դաշտ: Երկրագործության նախարար Խոմերիկին տվել էր իր նախնական համաձայնությունը Ի. Ռամիշվիլու առաջարկին, սակայն հետագայում հայտարարել էր, որ վարձավճարը գանձվում է հանրապետության ամբողջ տարածքով և մեկ շրջանի համար բացառություն չի կարող լինել: Նախարարի պատասխանը ստեղծել էր աննպաստ պայման Արխագիայում վրաց իշխանության ներկայացուցիչների համար: Առաջացած վեճի լրջության մասին է վկայում Վ. Չիփկիշվիլիու կամավոր հրաժարականը շրջանի արտակարգ կոմիսարի պաշտոնից՝ ի նշան իր բողոքի, որը սակայն չէր ընդունվել: Ռամիշվիլին չէր հետևել նրա օրինակին և ժորդանիային էր դիմուլ երկրագործության նախարարի հետ վեճը հարթելու խնդրանքով³⁶⁶:

1918 թ. հոկտեմբերի 10-ից մինչև 1919 թ. նարտի 18-ը Արխագիայի ամբողջ կառավարումն իրականացնում էին Վրաստանի ղեկավարության կողմից նշանակված պաշտոնյաները, առանց որևէ միջնորդ օլակի: Արխագ պատմաբանների կարծիքով՝ «երկրորդ» Աժև-ի ցրումից հետո Արխագիայում հաստատվեց վրացական անքարույց բռնագրավումը³⁶⁷ և միայն Ա. Դենիկինի պահանջը՝ վերածել Սովումի շրջանը չեզոք գոտու³⁶⁸, ստիպեց Վրաստանի կառավարությանը տեղում շու-

³⁶³ Борьба за Октябрь в Абхазии (1917-1921 гг.). Сб. док. и мат. Сухуми, 1967, с. 93.

³⁶⁴ ՎԿՊ(Ռ) ֆ. 1861, գ. 2, գ. 28, թ. 68:

³⁶⁵ ГАМАХАРИЯ Դ. — ГОГИЯ Ե. Նշվ. աշխ., էջ 410, վագ. N 221:

³⁶⁶ ՎԿՊ(Ռ) ֆ. 1861, գ. 2, գ. 27, թ. 99:

³⁶⁷ История Абхазии, с. 308.

³⁶⁸ Ст'ն ДЕНИКИН А. И. Очерки русской смуты. В 3-х книгах. Книга третья — Вооруженные силы Юга России (т.т. IV-V). М., 2005, с. 226.

տափույթ կազմակերպել «դեմոկրատական ընտրություններ»³⁶⁹: Վրաստաճի կառավարությունը, սակայն, պաշտոնապես երբեքց չէր իրաժարվել 1918 թ. հոկտեմբերի 10-ին հոչակաված մտադրությունից, թեև ընտրությունների իրականացման ժամկետները նախորոք չէին որոշվել: Կառավարության կողմից նշանակաված հանձնաժողովը շարունակում էր գործել և նրա նախագահ Վարլ. Շերվաշիձեն 1918 թ. նոյեմբերի 30-ին Վրաստաճի վարչապետին էր դիմել նամակով: «Արխազական ժողովրդական խորհրդի գումարումը անհրաժեշտ է իրականացնել հնարավոր կարճ ժամկետներում, - գրում է Վարլ. Շերվաշիձեն, և իմ նախորենով իր պնդումը, ասում է, - առաջինը՝ այդ միջոցով հստակ ու ուշակի պարզ կդառնա Վրաստաճի և Արխազիայի կասերի և հարաբերությունների տեսակը: Երկրորդը՝ ընտրությունների ուշացումը զանգվածներում տպավորություն կարող է ստեղծել, թե Կառավարությունը ցանկանում է վերջնականորեն և ընդիշտ ոչնչացնել Արխազիայի ներկայացուցական մարմինը [իմա՝ Արխազիայի ինքնակարգության զաղափարը. - Բ. Մ.]... Համաշխարհային վեհաժողովն այլ հարցերի շարքում պետք է բննարկի Վրացական դեմոկրատական հանրապետության անկախության ու նրա սահմանների խնդիրը, և այդ պահին Արխազիայի բնակչության դիրքորոշման անորոշությունը կարող է վատ ծառայություն նախուզել և Արխազիայի, և Վրաստաճի շահերին: Խնդրում եմ Արխազական ժողովրդական խորհրդի ընտրությունների մասին կանոնակարգի նախագիծն ամենաարագ կարգով անցկացնել Պալամնենտում... և անմիջապես հրապարակ նշու Ուամիշվիլին: Նա հայտնում էր, թե շրջանի բնակչության մոտ առաջացած խիստ դժգոհությունը և տառապանքը պայմանաբարդ պայմանաբարդ է վրաց գինված ուժի կիրառմամբ: Դրությունը կանոնակարելու համար նախարարն առաջարկում էր հնարավոր վաղ ժամկետում իրականացնել շրջանային ընտրությունները:

³⁶⁹ Տե՛ս Իстория Абхазии, с. 313. Նաև՝ ЛАКОБА С. З. Абхазия после дезъюнктуры, с. 73.

³⁷⁰ “Созыв Абхазского народного совета необходим в наивозможно кратчайшие сроки. Первое, чтобы могла быть выяснена точно и определенно без всякой недоговорённости форма связей и отношений Грузии и Абхазии. Второе, промедление с выборами может создать в массах впечатление желания Правительства упразднить раз и навсегда представительный орган Абхазии... Всемирная конференция в числе прочих вопросов должна будет подвергнуть обсуждению вопрос о признании Грузинской демократической республики и границах ее, и в этот момент неясность позиций населения Абхазии может оказать плохую услугу интересам и Абхазии, и Грузии. Прошу предложенный проект положения о выборах в Абхазский народный совет провести в самом срочном порядке через Парламент... и немедленно распубликовать. Варл. Шервашидзе”. Տե՛ս ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, գ. 38, թ. 1-12թ:

Նա վավերացման ներկայացրեց ընտրությունների մասին կանոնակարգի նախագիծը, որը հաստատվեց կառավարության կողմից³⁷¹: Սույնով Արխագիայի նոր ներկայացուցչական մարմինն ընտրելու իրավունքը վերապահվում էր ոչ միայն արխազներին և սամուրզականացիներին, այլ նաև շրջանի բոլոր եկվոր ազգություններին: Աժև ընտրվելու իրավունքը էին ստացել նաև Արխագիայում մինչ այդ շբակվող Վրաստանի քաղաքացիները: Կառավարությունը որոշեց ուղերձով դիմու Արխագիայի բնակչությանը, որի միջոցով վերահստատել ինքնավարության սկզբունքը շրջանի ներքին կյանքում³⁷²: Կառավարությանն էր ներկայացվել նաև, իբրև «Կանոնակարգի» նախագծի³⁷³ լրացում, ընտրական հանձնաժողովի անդամներ՝ Ն. Թավդզիրիձեի և Ս. Քվարիանիի հատուկ կարծիքը: Նրանք պահանջում էին արգելել քուրքահպատակ համարվող հայերի և հույների մասնակցությունն ընտրություններում: Ըստ Երանց՝ հարկավոր էր ճանաչել իբրև ընտրող միայն արխազներին և սամուրզականացիներին, ինչպես նաև այլազի այն անձանց, ովքեր մինչև 1914 թ. հուլիսի 19-ը (հ. առ.) հանդիսանում էին Ռուսաստանի հպատակներ և Վրաստանի անկախության հոչակումից հետո հայել էին վրացական քաղաքացիություն³⁷⁴: Ն. Թավդզիրիձեն և Ս. Քվարիանին կարծում էին, որ Արխագիայում մշտապես բնակվող օտար հպատակներին որպես հնարավոր ընտրող ճանաչելը կինդի աղաղող անարդարություն բնիկ արխազների նկատմամբ: Նրանք նաև առաջարկում էին արխազների ազգային ինքնամիտությունը չգրգռելու համար «Կանոնակարգում» ձայնի իրավունք ունեցողներին անվանել «Արխագիայի հպատակներ»³⁷⁵: 1918 թ. դեկտեմբերի 27-ին Վրաստանի Պառամենտը հաստատեց «Արխազական ժողովրդական խորհրդի ընտրության մասին կանոնակարգը», որը պետք է համարվեր համանական ներկայացուցչությամբ և համընդհանուր, հավասար, ուղղակի, գաղտնի քվեարկության միջոցով³⁷⁶: Վերջապես 1919 թ. փետրվարին ընտրվեց ներկայացուցչական մարմին՝ Արխազական ժողովրդական խորհրդի, որը ն. թ. մայիսի 20-ին վերանվանվեց Արխագիայի ժողովրդական խորհրդը³⁷⁷: Աժև-ն կազմված էր երկու տարփա ժամկետով ընտրված 40 անդամից: Նոր Աժև-ի ձևակորման ծգծումը կարելի է բացատրել նաև այդ ընտրությունները Վրաստանի Սահմանա-

³⁷¹ История Абхазии, с. 308.

³⁷² МЕНТЕШАШВИЛИ А. Из истории взаимоотношений..., с. 25.

³⁷³ Տես ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, գ. 38, թ. 2-13ըք:

³⁷⁴ Այդ սկզբունքը հաստատվեց Վրաստանի քաղաքացիության մասին օրենքում: Տես «КАВКАЗСКОЕ СЛОВО», 5. V. 1919.

³⁷⁵ ՎԿՊ(Ա), ֆ. 1861, գ. 2, գ. 38, թ. 14-15ըք:

³⁷⁶ ՎԿՊ(Ա), ֆ. 1836, գ. 16, գ. 159, թ. 37-38:

³⁷⁷ ДЗИДЗАРИЯ Г. А. Очерки..., с. 232-233.

ոյիր ժողովի համերկրային ընտրությունների հետ համատեղելու ցանկությամբ, որի կազմ, Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության համամասնական ցուցակով, ընդգրկվել էին նաև՝ Վարչ. Շերվաշիձեն, Դ. Էմոլիսվարին, Վ. Գորջուան, Դ. Զախարովը, Ի. Փաշալիին, Վ. Չիխկվիշվիլին³⁷⁸: Վրաց պատմաբանները գտնում են, թե ԱԺԽ-ի ընտրությանը համատեղ Արխագիայի բնակչությունը մասնակցել էր նաև Վրաստանի Սահմանադիր ժողովի ընտրություններին³⁷⁹: Վերջիններս, սակայն, Արխագիայի տարածքում անորոշ ժամանակով հետաձգվել էին³⁸⁰ և իրականացվել էին միայն 1920 թ. մարտ ամսին:

Վրաստանի հայալեզու մամուլը անդրադարձել էր ԱԺԽ-ի ընտրություններին ողջույնի խոսրով. «Անդրկովկար, լինելով այլազան ու այլացեղ ազգերի մի հսկայական զանգածք, առաջ է բերում... մանր... ազգերի խնդիր՝ պահանջելով անյապաղ ու հաստատուն լուծում տալ նրանց: Այդ խնդիրը շարունակվում է օսերի, յոների, լազերի, եզրիների... որոնց մէջ իրայատուկ տեղ է գրաւում Արխազ ժողովրդի կճռուտ խնդիրը, որը... մինչև այժմ, շնորհիս ծախորդ պայմանների ու շրջապատող ազգերի իմպերիալիստական ձգտումների, ոչ միայն վերջնական, այլ նոյն իսկ մասնակի լուծումն ստացած չէ: ...Որքան էլ որ անկանոն, հապճէաւ լինի կազմած [Արխագիայի ժողովրդական] խորհուրդը, ամենայն դէպս՝ նա իրանից ներկայացնում է ժողովրդական մի մարմին, որը առաջ է եկել ժողովրդի սուվերեն կամքն արտայատելու: Մենք ողջունում ենք Արխազ ժողովրդի այդ լինքնորշման գործը և միևնույն ժամանակ ցանկանում, որ այդ լինի ազատ ու անկախ՝ առանց որևէ արտաքին մանր, թէ մեծ իմպերիալիստների ճնշման տակ», - զրված է «Պաշնակցական» թերթի էջերում³⁸¹:

³⁷⁸ Տե՛ս “ЗАКАВКАЗСКОЕ СЛОВО”, 14. III. 1919. 1919 թ. մարտի 12-ին, առաջին նիստում, Սահմանադիր ժողովը վերահսկութեց 1918 թ. մայիսի 26-ի «Անկախության Ակտը» և այլ պատշաճապերերի բյում փաստարությը կնքեցին նաև արխազներ. Վարչ. Շերվաշիձեն, Դ. Էմոլիսվարին, Վ. Գորջուան: Պատմաբաններ. Զ. Գամախարիան և Բ. Գոլյամի դիմում են նրանց իրքներու վերահսկության առաջ և այդ իրադարձության մէջ նկատում են մեծ քաղաքական ենթատերատ (ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 87): Մինչդեռ Սահմանադիր ժողովի արխազ ազգությամբ անհամները Սովումնի շրջանի բնակչության կողմից լիազորված չէին և հետևապես չէին կարող լինել «Արխագիայի ներկայացուցիչներ»: Մեկ այլ վրաց պատմաբան՝ Լ. Թոխիձեն, անդադար նույն հարցին, զգուշաբեր ծևով անվանում է նրան «Արխագիայի զավակներ» (ТОИДЗЕ Լ. Կ вопросу о политическом статусе Абхазии (1921-1931 гг.) // В сб.: *Разыскания по истории Абхазии/Грузии*. Тб., 1999, с. 291-292):

³⁷⁹ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 87:

³⁸⁰ Տե՛ս *Парламент Грузии. – «НАРОДНОЕ ЗНАМЯ»*, 4. II. 1919.

³⁸¹ Տե՛ս Արխագիայի ժողովրդական խորհուրդ. – «ԱԾԽԱԾԱՌՈՐ», 16. III. 1919:

Վրաստանի կառավարությունն օգտվելով զանազան միջոցներից՝ այդ թվում դիվանագիտական, չխորշելով նաև ուժային լծակներ գործադրելուց, կարողացել էր 1918 թ. ընթացքում հաստատել Աբխազիայում Վրաստանի Հանրապետության գերակայությունը։ Վրացական տիրապետության կայացման գործում մեծ դեր է ունեցել սոցիալական խնդիրը, հատկապես հողային բարեփոխման հարցը, որի նշանակությունը կարևորվում էր Աբխազիայի բնակչության գերակշիռ մասի երկրագործ լինելով։ Աբխազիայի հողագորկ, առավելապես մեզրել, հայ և հույն գյուղացիության աջակցությունը ստանալու նպատակով վրաց իշխանությունները խոստանում էին օժտել նրանց սեփական հողամասերով։

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրված նյութը, կարելի է հանգել այն եզրակացության, որ 1917-1918 թթ. Աբխազիայի կարգավիճակը մնում էր անորոշ, բանզի շհաջողվեց ստեղծել որևէ լիազոր մարմին, որը իրավասու կիմներ խոսելու երկրամասի ամբողջ բազմազգ բնակչության անունից։ 1918 թ. մայիս ամսից մինչև 1919 թ. փետրվարը նորակազմ Վրաստանի Հանրապետությունը հաղթահարել էր կայացման փուլը և 1919 թ. մարտի 12-ին գումարել էր Սահմանադիր ժողով։ Սույն պահից Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցը, կամաքե ականա, փոխադրվեց Վրաստանի ներքաղաքական դաշտ, դառնալով նաև նրա մշակվող սահմանադրության միջոցով կարգավորման խնդիր։

V

**ՎՐԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
(ՄԱՐՏ 1919 թ. – ՓԵՏԾՎԱՐ 1921 թ.)**

Համընդիանուր սկզբունքով ընտրված Արխագիայի ժողովրդական խորհուրդը (այսուհետև՝ ԱԺԸ) 1919 թ. մարտի 20-ին ընդունեց «Արխագիայի ինքնավարության նախնական օրենք»³⁸²: Փաստաթուղթը չէր պարունակում որևէ սկզբունք, ինչը կիական Վրաստանի կառավարության պաշտոնական տեսակետներին: 1919 թ. փետրվարին վարչապետ Ն. Ժորդանիան ասում էր՝ «Եթե ցամկանուն ենք ոչ բռնի ուժով, այլ բարի կամքով ամրապնդել մեր օգտին ծայրամասերը, ապա պետք է ընտրենք նրանց համար հատուկ սահմանադրության մշակման ճանապարհը»³⁸³: «Ակտ»-ն ընթերցվել էր և հավանության արժանացել Վրաստանի Սահմանադրի ժողովի (այսուհետև՝ ՍԺ) 1919 թ. մարտի 21-ի նիստում³⁸⁴: Նորընտիր ԱԺԸ-ի բացման նախօրյակին Վրաստանի կառավարությունը որոշել էր հայտարարել, որ «Արխագիային իր բոլոր ներքին գործերում տրամադրվում է լիակատար ինքնավարություն: [Արխագիայի ժողովրդական] խորհուրդն իրավունք ունի իր ձեռքը վերցնել բոլոր վարչական ֆունկցիաները, ներառյալ գենստվայի ղեկավարումը: Արխագիայի ինքնավար մարմինների լիազորությունների հստակեցված տեսակն ավելի հանգամանորեն հաստատված կլինի

³⁸² «Ակտ»-ն Արխագիայի ժողովուրդների անոնց որոշում էր՝ «1) Արխագիան մտնում է Վրաստանի դեմքրատիկ հանրապետութեան կազմը, ինչպէս նրա աւտոնոմ միաւորը, որի նախնականությունը է Վրաստանի հանրապետութեան կառավարութեանը և նրա Սահմանադրի ժողովին: 2) Արխագիայի աւտոնոմիայի Կոնստիտուցիան կազմելու, ինչպէս և կենտրոնական և աւտոնոմ իշխանութիւնների փոխյարաբերութիւնները որոշելու համար, ընտրում է խառն՝ Վրաստանի Սահմանադրի ժողովի և Արխագիայի ժողովրդական խորհրդի կողմից՝ հասասար բոլոր անդամների յանձնաժողով, սրա նշակած իրմանական որոշումները՝ Վրաստանի Սահմանադրի ժողովի [և Արխագիայի ժողովուրդական խորհրդի] կողմից ընդունելոց յետոյ՝ ճոցում է Վրաստանի ղենուլքատիկ հանրապետութեան Կոնստիտուցիայի մէջ»: Տե՛ս Արխագիայի աւտոնոմիայի մասին ակտ. - «ԱՇԽԱՆԱՏՈՐ», 27. XI. 1920: Նաև տե՛ս ՄԵԴԵՎԱՌՎԻԼԻ Ա. - ԏՐԳՈՒԼԱԴ-ՅԵ Ա. Տոлько факты и документы. - ЛГ, 1989, N 11, с. 155-156.

³⁸³ ЖОРДАНИЯ Н. Н. Նշվ. аշխ., էջ 207-208:

³⁸⁴ Грузия и Абхазия: телеграмма Учредительного собрания Абхазскому народному совету в Сухум. - “КАВКАЗСКОЕ СЛОВО”, 23. III. 1919.

սահմանադրությամբ»³⁸⁵: Այսամանակ անհասկանալի էր մնում՝ ո՞ր սահմանադրությամբ՝ Վրաստանի՝ թե՛ Արխագիայի: Հետազայում այս երկմիտ ձևակերպումը լուրջ տարածայնություններ էր առաջացրել: Ինքնավար կառավարման մեխանիզմը կարգավորող օրենսդրության բացակայության պարագայում Վրաստանի կառավարության կողմից Արխագիայի ինքնավարության սկզբունքի վերահստատումը հանգեցրեց հակասական հետևանքների:

ԱժԽ-ն ենթադրություն էր իրեն օրենսդիր մարմին³⁸⁶, սակայն մինչև Արխագիայի սահմանադրության հաստատումը նրա լիազորությունների շրջանը չէր որոշված: Այդ իսկ պատճառով ԱժԽ-ն ուներ ներկայացուցական ֆունկցիա, ինչը հաստատում է ՆԳ նախարար Ն. Ռամիշվիլու երլույթը ԱժԽ-ում 1920 թ. փետրվարին, եթե նա բազմից անվանում է այդ մարմինը՝ «ներկայացուցական»³⁸⁷: ԱժԽ-ի քարտուղար Գ. Կորույսի վկայությամբ ընդդիմությունն ամեն կերպ ջանում էր հայտային կարգով օժտել ԱժԽ-ն «բարձրագույն օրենսդրական մարմնի» ֆունկցիայով, սակայն սոցիալ-դեմոկրատական իշխող մեծամասնությունը³⁸⁸ համաձայն չինելով՝ կասեցրեց այդ միտունը: Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (այսուհետև՝ ՎԱԴԲԿ) Արխագիայի ճյուղը դիտում էր ԱժԽ-ն իրեն մի մարմին, որն առաջին եերին պետք է քաղաքականորեն համախմբեր երկրամասի բոլոր ազգություններին³⁸⁹: 1919 թ. մայիսին ԱժԽ-ն ձևավորեց տարածքային գործադիր իշխանություն՝ Կոմիսարիատ: Նրա կառավարման ներքո պետք է գործեին տեղական ինքնակառավարման մարմին-

³⁸⁵ Местная жизнь: афтономия Абхазии. — «ГРУЗИЯ», 21. III. 1919.

³⁸⁶ История Абхазии, с. 315.

³⁸⁷ Н. В. Рамишвили в Народном Совете Абхазии. — «БОРЬБА», 14. II. 1920.

³⁸⁸ ԱժԽ-ում ձևակորքել էր մի բանի պատգամափորական խումբ, որոնցից խոչորն էր սոցիալ-դեմոկրատների 27 հոդվանոց խմբակցությունը, ինչպես նաև արմատական ընդդիմության՝ «անկախ սոցիալիստների»: Դ. Ալանիա, Մ. Ցագորիա, Ս. Չանրա, Ի. Մարգարիա, ովքեր ժամանակակիցների կարծիքով անկախ Արխագիայի կողմնակիցներ էին: Ընդդիմադիր էին համարվում նաև «զյուղացիական» խմբակցության անդամները՝ Ռ. Կալորիա, Ո. Ջխոտուա, Ա. Դեմյանով: ԱժԽ-ի այլ անդամները ներկայացնում էին վրաց սոցիալիստ-հեղափոխականների (3 տեղ), սոցիալիստ-թեղերախատների (1 տեղ), ազգային-դեմոկրատների (1 տեղ) կուսակցությունները, ովքեր դասելով «կառուցողական» ընդդիմության: Էյն վիճարկում Արխագիայի պատկանելիությունը Վրաստանի Հանրապետությանը: Տես Յարօդում կազմակերպությունը: — «КАВКАЗСКОЕ СЛОВО», 26. III. 1919. ԱժԽ-ի կազմը բազմազգ էր և բացի արխազներից, մեզրեներից ու վրացիներից ներկա էին ուս (Դ. Զախարով, Գ. Կորույսի, Ա. Դեմյանով), հույն (Ի. Փաշալիդի, Պ. Չաչա, Պ. Կուպասախալիդի), իրեն (Լ. Տումարկին), հայ (Խ. Ավագիելյան, Վ. Աղակյան) և էստոնց (Ա. Մարտին) անդամները:

³⁸⁹ КОРОЛЮВ Г. Письма из Абхазии. (О положении и настроениях в Сухумском округе). — «БОРЬБА», 1. X. 1919. Тես նաև նոյն օրաբերք 3. X. 1919.

ները (Զեմստվո)՝³⁹⁰ Կոմիսարիատի ղեկավարումը հանձնարարվել էր Դ. Էնոլիսվարիին, որը զիջել էր ԱժԽ-ում նախազահույքունը Վարլ. Շերվաշիձեին՝³⁹¹ ՎԱՂ-ԲԿ պաշտոնարերը «Երթորբ»-ն նշում էր, որ «մեր հանրապետությունը դեռևս չի պարզել իր հարաբերություններն ԱժԽ-ի հետ... բացի դրանից Արխազիայում գրյուրյուն ունեն չորս զավառական և երեք քաղաքային տեղական ինքնակառավարում։ ԱժԽ-ն չունի իրավունքների և պարտականությունների սահմանված չափ՝ ոչ միայն կենտրոնական իիմնարկների, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ։ ԱժԽ-ի վերջին քայլերը բացահայտեցին երկու միտում։ Մի կողմից՝ յուրացնել ֆունկցիաներ, որոնք բնորոշ են ինքնիշխան պետությանը, մյուս կողմից՝ նա ունահարում է ինքնակառավարման իրավունքը։ Կենտրոնական իշխանությունը պետք է վճռականորեն սահմանազատի ԱժԽ-ի գրքնական լիազորությունները։ Անընդունելի է, որ մեր պետությունը զիջի իր իշխանության մասնաբաժնը, ինչպես նաև անքույլատրելի է սահմանափակել ԱժԽ-ի օգտին տեղական ինքնակառավարման մարմինների ֆունկցիաները»³⁹²։ Արխազիայի գեմստվաները դժգոհ էին, քանի որ Կոմիսարիատը վերցրել էր իր վրա երկրամասի քարձրագույն գեմստվայական մարմինի ֆունկցիա, այն էլ շատ լայն մեկնարաններով իր լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ։ Զեմստվաների բոլոր որոշումները հաստատման համար պարտադիր վերաբերնվում էին Կոմիսարիատի կողմից³⁹³։ ՎԱՂ-ԲԿ-ն, որը հսկում էր երկրի կառավարությունը և ՍԺ, միանշանակ իրականացնում էր որդեգրված «ղեմոլիրատական պետության» զաղափարը, որի հիմքում պետք է գտնվեին գեմստվաները՝ օժտված լինելով տեղական կառավարման մարմինների ֆունկցիայով։ Քաղաքների և զավանների նակարդակով կենտրոնական պետական իիմնարկները գրկում էին որևէ ենթակա պաշտոնյաներ կամ կառավարման մարմիններ ունենալու իրավունքից։ Վրաստանը բաժանվել էր զավառական գեմստվաների, ո-

³⁹⁰ ԱժԽ-ի մի շաբթ անդամներ միաժամանակ հանդիսանում էին Կոմիսարիատի և Զեմստվոյի ղեկավար աշխատողներ (Դ. Էնոլիսվարի, Լ. Տումարկին, Կ. Արիրբավ, Ս. Ուրբիշի, Տ. Կվարացխելիա, Ի. Լորրիփանիձե, Տ. Էշրայ, Գ. Զոլիբայա, Վ. Անշարաձե, Ա. Չուլքար)։

³⁹¹ ՎԿՊ(Ա), ֆ. 1861, ց. 2, գ. 122, թ. 1: Խ դեպ, եթե արխազ պատմաբանները գտնում են, որ Դ. Էնոլիսվարին վրաց կառավարության ծեռքին «տիկնիկ» է եղել և արխազ ժողովոյի շահերի դեմ է գործել (տե՛ս *История Абхазии*, с. 307, 315, 317), ապա ժամանակակից վրացական մասովի էշերում նա փառարձնան է արժանացել. իբրև «Վրաստանի մեծ հայրենաբար» (տե՛ս *Я счастлив, что доожил...* - СГ, 25.VI.1991):

³⁹² «Հյուսուն» թերթի արտասպան հոդվածը տե՛ս *Абхазский вопрос. — КАВКАЗСКОЕ СЛОВО*», 25.VII. 1919.

³⁹³ *Земская и городская жизнь. — БОРЬБА*, 28.XII.1919.

րոնք իրենց հերթին կազմված էին լինելու համայնքներից՝ «Քեմի»³⁹⁴: Չնայած, որ ԱԺ-ում դեռևս քննարկվում էր «Զեմստվաների միուրյան մասին» օրինագիծը, Արխազիայի զեմստվաների խորհրդակցությունը որոշել էր երկրամասի շրջանակներում ձևավորել նրանց միուրյունը: Ենթադրվում էր, թե Կոմիսարիատի բոլոր լիազորությունները կանցնեն այդ միուրյանը: Գավառական վարչակազմն արդեն գտնվում էր զեմստվաների տրամադրության տակ³⁹⁵: 1920 թ-ից գոյություն ուներ Սովումի շրջանի գավառական զեմստվաների Կենտրոնական վարչությունը³⁹⁶: Հետևապես զեմստվայական ժողովներն ավելորդ իին համարում և ԱԺ-ի, և Կոմիսարիատի գոյությունը: Սամուրզականի առաջին խև զեմստվայական ժողովում միաձայն որոշում էր ընդունվել, որը մատնանշում էր Թիֆլիսի հետ անմիջական կապի հաստատման անհրաժեշտությունը, առանց «սովումյան իշխանությունների» միջնորդությանը³⁹⁷: Թիֆլիսի մամուլը արձագանքում էր այս անցուղարձին՝ գրելով, թե «Արխազիայում չկա ոչ մի երկրամասային կազմակերպություն, ոչ մի երկրամասային իհմնարկություն այդ քայլի ստույգ իմաստով... Արխազիայի յուրաքանչյուր գավառական զեմստվո, յուրաքանչյուր քաղաքային ինքնակառավարում՝ սեփական աշխատանքի բոլոր դեպքերում իր հայացքն է նետում դեպի Թիֆլիս»³⁹⁸:

Գ. Կորույովը, ընդհակառակը, կարծում էր, թե չափազանց աճած կառավարման մարմինները փոքր երկրամասն արտաքուստ վերածել էին առանձին պետության: Նա առաջարկում էր միաձուլել Կոմիսարիատը զեմստվաների հետ, իսկ ԱԺ-ի նստաշրջանների թիվը կտրուկ նվազեցնել: Նրա կարծիքով այդ մարմինների գոյությունը չափազանց քանի էր նստում երկրամասի բյուջեի վրա, բացի դրանից այդ իհմնարկները, իբր, չեն կարող ինքնուրույն կազմակերպել տեղական կյանքը³⁹⁹: Կորույովի հետ այդ հարցում համաձայն էր ԱԺ-ի ընդդիմադիր անդամ Մ. Թարնավան՝ գտնելով, որ «փնճնավար իշխանության կեղծ մարմինները՝ ժողովրդական խորհուրդը և Կոմիսարիատը, ունակ

³⁹⁴ *Доклад Н. Н. Жорданя.* — «БОРЬБА», 17.XII.1919. «Վրաստանն անկախ հանրապետություն դատնալու յետոյ՝ երկուու կազմակերպությին ինքնակար գենստվոներ լայն իրաւունքներով: Ազգաբնակուրեան ամբողջ տնտեսական և քաղաքակրթական գործը կենդրուացաւ այդ իհմնարկութիւնների մէջ և կենդրուական կառավարութեան դերը սահմանափակուեց ընդհանոր օրենքներ իրատարակելով և ցուցմունքներ տալով» (տե՛ս «Վրաստանի զեմստվաները եւ հայոց դպրոցները»: — «ԱՇԱԿ», 9. II. 1921):

³⁹⁵ *Земская и городская жизнь.* — «БОРЬБА», 28.XII.1919.

³⁹⁶ *Դաշնակցականները և Սովումի Հայոց ազգային խորհուրդը.* — «ԲԱՌՎԱՐԻ ԶԱՅՆ», 3. X. 1920:

³⁹⁷ *Земская жизнь.* — «БОРЬБА», 26.VI.1919.

³⁹⁸ *Абхазия.* — «СЛОВО», 20. VIII.1920.

³⁹⁹ *КОРОЛУВ Г. Письма из Абхазии.* — «БОРЬБА», 1. X.1919.

չին որևէ բանում արտահայտել ինքնուրույնություն: Նրանց գոյությունը կարելի է համարել ավելորդ»⁴⁰⁰:

Կասկածի տակ էր առնվում նաև Արխազիայի ինքնավարության մասին Վրաստանի կառավարության հավաստիացումները: «Զկա Արխազիա և որպես երկրամաս, և որպես Վրաստանի ղենոկրատական հանրապետության ինքնավար միավոր: Արխազիայի ինքնավարությունը, որպես իրողություն զեռևս գոյություն չունի և պետք է ստեղծվի»⁴⁰¹, - սա է Սույսում գործուղված հատուկ լրագրողի կարծիքը: Արխազիայում տիրող կացության մասին Մ. Թարնավան արտահայտվում էր հետևյալ կերպ. «Քաղաքներում ստեղծված են զիվորական պարետություններ, Սույսումում՝ գնդապետ Տուխարելու գլխավորությամբ «պաշտպանության շտար» կոչված շրջանային ռազմական վարչությունը: Գավառներում զրամանակը գործում են իրենց հայեցողությամբ՝ փոխարինելով վարչակազմը»⁴⁰²: Մի խոսքով՝ երկրի ռազմավարչական կառավարությը գտնվում է վրացական կառավարության գործակալների ձեռքերում: Բոլոր իհմնարկները, այդ բվում նաև տեղական նշանակության, իրահանգներ ստանում են և վերահսկվում են կենտրոնական կառավարության կողմից»⁴⁰³:

ՎԱՂԲԵ-ի դեկավարության տեսակետներն արտահայտող մասունք գրում էր՝ «Ինչպես... յայտնի է, Արխազիան ամենաշնորհածակ ներքին ատոռնում իրաւունքներով միացած է Վրաստանի ղենոկրատիկ հանրապետութեանը: Արխազիան իր ներքին կեանքում ունենալով լայն կոլտուրական ինքնավարութիւն, իր արտաքին քաղաքականութեան, մաքսային, ֆինանսական և մի քանի այլ խնդիրներում կազմում է վրաց ղենոկրատիկ հանրապետութեան մասը»⁴⁰⁴: Ուշագրավ է, որ բացի «լայն կոլտուրական ինքնավարութիւն» սահմանման այլ բնութագրում Արխազիայի կարգավիճակի համար մեկնաբանը չէր գտնել: Այսպիսով,

⁴⁰⁰ ТАРНАВА М. Друзья и враги демократии Абхазии. – “СОЦИАЛ-ДЕМОКРАТ”, 20.X.1919.

⁴⁰¹ Абхазия. – “СЛОВО”, 20.VIII.1920.

⁴⁰² Երկրամասի կառավարման գործում զինվորականների շափազանց մեծ դերը ականական բանաչում են նաև վրաց պատմաբանները՝ «Даже самое грубое вмешательство военных властей в гражданскую жизнь, ограничение автономных прав Абхазии можно квалифицировать как угодно (самоуправством военных, нарушением ими договора, невыполнением уставных обязанностей, проявлением недисциплинированности, иногда даже преступлением и т. д.), но только не “оккупацией” собственной территории» (ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 82):

⁴⁰³ “СОЦИАЛ-ДЕМОКРАТ”, 20. X. 1919. Կարմիր բանակի իրամանատարությունը տեղեկացվում էր, որ իշխանության ամրողականությունը շրջանում գտնվում է Արխազիայի ՆԳ կոմիսար Մ. Ս. Ուրիխիայի ձեռքերում, որն էլ նշանակում է վարչակազմը («Բօրբա Յանապահ Աբխազիա Օկտյաբեր 20 1919»:

⁴⁰⁴ Ուղիղ ճամապահ. - «ԲԱՆՎՈՐԻ ԶԱՅՆ», 12. X.1919:

միտում էր նկատվում սահմանափակել արխագ բնակչության իրավական կան կարգավիճակը ազգային մշակութային ինքնավարության մասին թեզով: Վրաստանի կառավարական շրջանակները պատրանք ունեին, թե այս կերպ վճռված հարցը ի չիր կանի Արխագիայի տարածքային ինքնավարության մասին գաղափարը, որը կկորցնի իր երբեմնի կարևորությունը:

Արխագ ազնվականությունը, ինչպես տեսանք, մերձեցել էր նաև ոուսական «սպիտակ» շարժմանը: Ականատես լինելով, սակայն, վերջինիս ճնշմանը, և բնականաբար սարսափելով կոմունիստական կարգերի հաստատման սպառնալիքից, արխազական վերնախավը ակամայից ի վերջո կարծես ընտելացավ վրացական գերակայությանը: Ա. Շերպաշիձեն և Տ. Մարշանիան, ««ներում» ստանալով վրացական իշխանություններից, 1920 թ. վերադարձան Արխագիա⁴⁰⁵:

«Հակավրացական» պայքարի դրոշը անցավ արխագ սոցիալիստական տարրերի ձեռքը, ովքեր ակտիվ համագործակցում էին բոլշևիկյան ընդհատակի հետ: ԱԺԽ-ի շրջանակներում գործող «անկախ սոցիալիստները», ինչպես նաև հետազոյւմ առաջացած «միջազգայնականների» (ինտերնացիոնալիստների) խմբակցությունը, արխագ հասարակության ներսում տարածում էին Խորհրդային Ռուսաստանի հետ մերձեցման գաղափարը: Արխագիայի ճակատագրի վերաբերյալ նրանց և վրաց սոցիալ-դեմոկրատների միջև տիրող տարածայնությունների մասին պարզաբանել է ընդունմադիր Դ. Ալանիան: Վերջինիս ասելով, ««մենշևիկները [իմա՝ ՎՍԴ.ԲԿ Արխագիայի ճյուղը. - Բ. Մ.] առաջարկում էին մարզային ինքնակառավարման որևէ տեսակ: Մենք պահանջում էինք ամենալայն ինքնավարություն»⁴⁰⁶: Այդ սկզբունքների նրերանզները պարզ կերպով բացատրվում էին ՎՍԴ.ԲԿ-ի Արխագիայի ճյուղի առանձնացած «միջազգայնականների» խմբակցության 1919 թ. նոյեմբերի 15-ի հոչակագրում, որտեղ մասնավորապես ասված էր, որ ԱԺԽ-ի նոր ֆրակցիան «...արդի քաղաքական կոնյուկտորայի պայմաններում [իմա՝ Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմը. - Բ. Մ.] ճանաչում և պաշտպանում է Վրաստանի դեմոկրատական հանրապետության անկախությունը... Ներկա ժամանակ չկանխորոշելով միասնական Ռուսաստանի պետության հետ կապի տեսակը և Արխագիայի ու Վրաստանի ներքին

⁴⁰⁵ ДЗИДЗАРИЯ Г. А. *Очерки..., с. 335.*

⁴⁰⁶ ГАМАХАРИЯ Դ. - ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 104: Վրաց պատմաբանները կարծում են, թե «հայտնի անջատվականներ» Մ. Թարմական, Դ. Ալանիան, Մ. Ցագրիխան, Ի. Մարգարիան և նրանց համախնները պահանջում էին «պայն ինքնավարություն», որպեսզի ստեղծվի գործնական միջոց Վրաստանից մեկուսանալու համար: Տես նոյն տեղում, էջ 78, 81:

ինքնուրույնության չափի հարցը, ապագայում՝ քաղաքական իրադրույթյան այլ պայմաններուն, գտնում է ավելի նպատակահարմար և կողմ է արտահայտվում Արխազիայի և Վրաստանի մշակութային, տնտեսական ու քաղաքական զարգացման համար՝ միավորել երկրանասը Ռուսաստանի ժողովուրդների ընդհանուր ընտանիքին»⁴⁰⁷. ԱժԽունում գործող ընդդիմությունը լայն ինքնավարության եր համաձայն Վրաստանի կազմում, քանզի կրում էր սոցիալիստական բնույթ և, հետևապես, չէր կարող համակրել «Սպիտակ շարժմանը»⁴⁰⁸ և անհամբեր սպասում էր նրա պարտությանը՝ Ռուսաստանին միանալու համար: Արխազիայի ներքին գործերի կոմիսար Մ. Ռիբիշան ասում էր, թե «սկզբնապես աբխազ ազգայնականներն Արխազիայի համար լիակատար անկախության էին ձգտում, սակայն համոզվելով այդ զարդարի անկենունակության մեջ՝ առաջ էին քաշել Արխազիայի և Վրաստանի հավասարության զարախարը, որի դեպքում հարաբերությունները պետք է լինեին համադաշնային... Սահմանադրության նախագծի մշակման ընթացքում պարզվել էր, որ «անկախ սոցիալիստների» խմբի նպատակն էր ստեղծել Վրաստանի հետ ժամանակակիր դաշինք, որպեսզի հետազայում՝ հարմար պահին, խօեր կազմ նրա հետ և շրջեր Արխազիան դեպի այլ քաղաքական կողմնորոշում»⁴⁰⁹: Արդի վրաց հետազոտողները, որպես ընդդիմության հակապետական և հակավրացական գործունեության օրինակ մեջքերում են Մ. Թարճավայի հուշերը: Նա գրում է. «Զհաշովելով ազգային հարցում Արխազիայի նկատմամբ իրականացվող մենշևիկյան կուսակցության քաղաքականության հետ՝ ես դուրս եկա մենշևիկյան կուսակցության շարքերից... և ստեղծեցի իմ ֆրակցիան...ս[ոցիալ-դեմոկրատների] (միջազգայնականների): Գաղափարապես առավել նոտ գտնվող «անջազգայնականների» և «անկախ սոցիալիստների» ֆրակցիաները, այսինքն՝ ես, Ալանիան, Մարզանիան, Չանքան ու Յագուրիան, վարում էինք միասնական քաղաքականություն և ոազմավարություն Խորհրդային Ռուսաստանին (ՌՍՖՍՀ) միավորվելու համար»⁴¹⁰: Այդ նպատակով

⁴⁰⁷ Նոյն տեղում, էջ 111:

⁴⁰⁸ Պատմաբաններ Զ. Գամախարիան և Բ. Գոգիան անհիմն կերպով գրում են, թե «անկախ սոցիալիստների» խմբակցությունը համակրում էր Դենիկինին: Տե՛ս նոյն տեղում, էջ 90:

⁴⁰⁹ *Աճշազար.* — «СЛОВО», 5.VIII.1920.

⁴¹⁰ 1920 թ. նայիսի 7-ին Մոսկվայում Վրաստանի բանագնացների և Խորհրդային Ռուսաստանի կառավարության միջև կնքվել էր «Խաղաղորդյան պայմանագիր», ըստ որի ՌՍՖՍՀ-ը իրամարդում էր վրաց ժողովոյ նկատմամբ բոլոր ինքնիշխան իրավունքներից, որոնք նախկինում պատկանում էին Ռուսաստանին, և պարտագրվում էր այսուհետև չմիջամտել Վրաստանի ներքին գործերին, ինչպես նաև անվերապահործն ճանաւել Սոխումի շրջանի տարածքն իրեն Վրաստանի Հանրապետության անքածանեածել:

մենք պաշտոնապես բոյկոտում էինք Վրաստանի Սահմանադիր ժողովի ընտրություններն Արխագիայում, որպեսզի Արխագիան պետական նորեն կրկին չկապվեր այսպես կոչված Վրացական դեմոկրատական հանրապետության հետ⁴¹: Մենքսիկյան վրացական կառավարության

լի մասը (ՄՐԱԴՅԵ Գ. Ի. Նշվ. աշխ., էջ 103-104): Աճշուշտ, ինչպես հաստատեցին հետագա զարգացումները, Սովորված կրոնութասության կառավարությունը տոյն պայմանագիրը թեև կմըել էր ենթեր մարտավարական ընտառությունից, սակայն և հետագայում Ո-ՍՅԱՀ-ն Արխագիայի վերաբերյալ պաշտոնապես որևէ տարածքային պահանջ չէր ներկայացնում:

⁴¹ Դեռ 1919 թ. հունվարի 31-ին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ա. Լոմբրադեն տեղեկացնում էր, թե սահմանված ժամկետներում Մոլոտիվ շրջանը չի կարող պատրաստ վնել Սահմանադիր ժողովի առաջիկան ընտրություններին (Պարլամենտ Հրազդական պատրաստություն, 4.II.1919): Մի շաբաթ, իմանականության հայաբնակ, շրջանների հետ միասին Արխագիայի բնակչությունը պետք է քվեարկեր 1919 թ. օգոստոսի 10-ին (Սահմանադիր ժողովի բացուցիչ ընտրությունները. - «ԱԾԽԱԾԱՒՈՐ», 11.VI.1919): Սակայն Արխագիայում «ինչ-ինչ» պատճառներով ընտրությունները դարձայ չկայացան: Վրաստանի մամուլը հաղորդում էր, որ Սովորված շրջանում «ըրութիւն» այն աստիճանի լարել էր, որ կառավարության և նախանձները կանչած են [ենթել] անմիջական հեռազրարկով անձանք խօսելու: Ընթացք տեղեկացվել էին, եթե շարունակի մոտ տարբերի պրովինցիային ափանացիան Վրաստանի դիմ, [ապա] դուրսինը խփան լորջ բնոյր կը ստանայ: Կառավարութեանն անձանք զելուցում տալու համար այս օրեւն եկած հա. Ռամիշչիկին և Արխագիայի ժող. խորհրդի անդամ Կորուլը Արխագիայի ներկայ դրութիւնը նկարագրել են շատ նոյալ զոյներով» (Անցքերը Արխագիայում. - «ԸՈՐ ԱԾԽԱԾԱՒՈՐ», 12.VIII.1919): Արխագիայում իրականացվում էր ընտրությունները ծախսելու հատուկ նախառակ ունեցող, ինչպես նաև Վրաստանի և նրա կառավարության բաղադրականության դեմ բարոզություն: Արխագ ազնվականությունն առաջ էր բաշել «Արխագիան արխագների համար» և «Ալորչի վրացիների բռնակալություն» կարգախսները, որոնք պարարտ հող էին գտնել արքայա զուտացիության զանգվածներուն (Տե՛ս ԿՕՐՕԼՎՅ Բ. Պուսակ ոչ Աճազաս, - «ԵՕԲԵԱ», 1. X.1919): «Հրոսակեները», որոնք մինչ այդ բարեվոր էին լսուելում, սկսել էին գործել ավելի կազմակերպված, նրանց հարձակությունը ստացել էին սպառնացող բնոյր: Առավելապես աչքի էր ընկնում «զազական ջոկատ» (պարագրիսներ Խ. Խազըր օղի, Ո. Քիրին օղի), որը գործում էր հյուսիս-արևմայան Արխագիայում Խուապ, Օքխարա, Աճանդարա, Խարյու զուտերի շրջակայրում (Տե՛ս Բօրցի ու Հովեմերու Վլաստ Յ Աճազաս, ս. 69, 221): Զգերդայում Տ. Սարչանիայի կողմնակիցների ձեռով սպանվել էր ընտրական հանձնաժողովի իրահանգիչ Կարաման Սամացկը (ՄԱՏԱՐԱԴՅ Հ. Ի. Նշվ. աշխ., էջ 17): Արխագիայի բնակչության համար ձայն տալու հնարափրոյդյան ընձեռնմից միայն 1920 թ. մարտ ամսն լրացուցիչ մնացությունների ժամանակ: Արխագ «ասնկախականները» դարձյալ կոչ էին անում չցնալ ընտրություններին (Յ Աճազաս, - «ԵՕԲԵԱ», 23.IV.1920): Սեփական շահերից ենթելով՝ նոյն տեսակի կարգախսությունը հանդիպ հանել նաև բոշկիկները (Բօրեն ու Օկտաբր Յ Աճազաս, ս. 118-121, դօք. ԱՆ 132-133): Վրաց ազգայնականների շաբաթաթերթը տեղեկացնում էր, որ Արխագիայում տցիալ-դեմոկրատների կոսակցության բաղադրականությունից դժգոհ բնակչությունը ընդհանուր բոլիտու էր հյուսարարել ընտրություններին: Կողորդի զավառում արխագրանակ ավաններից միայն Գինդող զոյտը մասնակցեց ընտրություններին: Երկրանակ մեքելը բնակչիներից մասնակցությունը ունեցավ բարորդ մասը, այնին Սամորգականում հարցանակ տարավ վրաց տցիախստ-հեղափոխականների կուսակցությունը (տե՛ս «յըզը»; 1920, N 14): Արխագիայում Սահմանադիր ժողովի ընտրությունները ծա-

հետ մեր շփումներում ինքնավարության և Արխագիայի սահմանադրության ընդունման հարցերում ծախսողում էինք որևէ համաձայնության գալու հնարավորությունը, իրականացնում էինք մենշևկյան կառավարության գործունեության քննադատության քաղաքականություն։ Գործելով այդպէս, մենք, միաժամանակ, Ռ.ՍՖ.Հ-ի հետ կապ հաստատելու և նրա կազմ ընդգրկվելու հնարավոր միջոցներ էինք փնտրում»⁴¹²։ Այս հայտարարությունը հարկավոր է ընդունել որոշ վերապահումներով, քանի որ այն գրելով էր խորհրդային իշխանության տարիներին։ Ռուսաստանի հարավում «Սայհակ շարժման» վերելքի պահին, երբ 1919 թ. գարնանն առաջացավ Արխագիա Կամավորական բանակի ներխուժման վտանգը, Վրաստանի կառավարությունը որոշ չափով մեղմացրել էր իր քաղաքականությունը տեղի բոլշևիկների նկատմամբ, դիտելով նրանց որպէս հնարավոր դաշնակիցներ ընդհանուր թշնամու առջև։ Հետևապես սոցիալիստական բնույթ կրող և Խորհրդային Ռուսաստանի վրա կողմնորոշում ունեցող ընդդիմությունն Արխագիայում այդ պահին չափավորում էր իր պահաճները Վրաստանի կառավարության առջև և նույնիսկ համագործակցում էր նրա հետ։ Արխագիայում բոլշևիկներն օգտվում էին կիսալեզակ պայմաններից⁴¹³։ 1920 թ. մայիսի 7-ի վրաց-խորհրդային պայմանագիրը ստեղծել էր առավել նպաստավոր պայմաններ Վրաստանում կոմունիստների գործունեության համար։ Արխագիաների միջավայրում նրանք քարոզում էին Խորհրդային Ռուսաստանին միանալու գաղափարը⁴¹⁴։ Բոլշևիկներն ամեն կերպ ջանում էին ի շահ իրենց ծառայեցնել ընդդիմությունն ԱԺԽ-ում։ Դրա վկայությունն է Ն. Լակրբայի՝ ընդդիմությանը տրված գնահատականը։ «Նրանք, -գրում է Լակրբան, - օգտվելով պաշամնենտական կարգերից, ամեն կերպ դատապարտում են շովինիստներին, վրաց ազգայնականներին... պահպանում են գյուղացիական զանգվածներում տարերային դգործություն։ Արխագական ժողովրդական խորհրդում մեր ընկերների խոսմքը... բարեխիճ կատարեց իր հեղափոխական պարտը»⁴¹⁵։ Սուխումի շրջանային դատախազ Զիարտիշ-

խորվեցին ոչ միայն երկրամասի չլուծված կարգավիճակի հետևանքով, այլ նաև որան նպաստեց սոցիալական դգործությունը, որն արտահայտում էր ամբողջ բնակչությունն՝ առանց ազգային խորականության։

⁴¹² Ст. «СВОБОДНАЯ ГРУЗИЯ», 9.III.1994.

⁴¹³ ЛЕМБЕРГ Г. О положении в Абхазии. – “ЖИЗНЬ НАЦИОНАЛЬНОСТЕЙ”, 16.IX.1920.

⁴¹⁴ ՎԿՊ(Ռ), ֆ. 1863, գ. 1, գ. 523, թ. 5: Նաև տես՝ Ա. Ա. Աննեքսիա Հրազդական քաղաքական դգործությունը, որն արտահայտում էր ամբողջ բնակչությունն՝ առանց ազգային խորականության։

⁴¹⁵ ԼАКОБА Н. А. Искры Октябрьской революции в Абхазии // В сб.: К истории революционного движения в Абхазии. Сухум, 1922, с. 21. Նաև տես՝ Ա. Ա. Աննեքսիա Հրազդական քաղաքական դգործությունը, որն արտահայտում էր ամբողջ բնակչությունն՝ առանց ազգային խորականության։

վիլին 1920 թ. օգոստոսին հաղորդում էր, որ ցանկանալով միանալ խորհրդային Ռուսաստանին բոլշևիկների տեղական կազմակերպությունն աշխատանք է իրականացնում անջատողական տրամադրությունների իրակրման և արխազների ապստամբությունը կազմակերպելու ուղղությամբ⁴¹⁶: Ելնելով հայտնի նպատակներից՝ բոլշևիկները ձգուում էին վարկարեկել անկախ Վրաստանի կազմում Արխազիայի խճնավարության գաղափարը: Նրանց մամուլը գրում էր, թե «Արխազիայի տիրահռչակ ինքնավարությունը եղավ որևէ բովանդակությունից գուրկ դատարկ խայծ»⁴¹⁷: Նույն ոգով էր արտահայտվում ՌԿ(Բ)Կ-ի անդամ Մ. Ցագորիխան՝ «[Արխազիայի ժողովրդական] խորհուրդը սպառել է իրեն, լինելով ոչ կենսունակ մարմին... Սի՞թե մենք չենք ասում, որ խորհուրդը պետք է Կենտրոնին իրեն քաստերէ, որպեսզի ցույց տրվի ինքնավարության գոյությունը»⁴¹⁸: Այս ամենով արդի վրաց հեղինակները պնդում են, որ «բոլշևիկները ձգուում էին սրել ազգամիջյան հարաբերությունները, հանողելով արխազներին, թե իրը Վրաստանը նվաճել է Արխազիան և Ռուսաստանին միանալու խորհուրդ էին տալիս»⁴¹⁹: Իսկ «Արխազիայի ինքնավարության մասին ակտ»-ի պահանջների իրականացման ձգձգումները նրանք հետևյալ կերպ են բացատրում՝ «Կառավարությունը... իրազեկ լինելով անշատողականների նպատակների մասին, գրավել էր զգուշավոր դիրք և ամեն կերպ հետաձգում էր Արխազիայի Սահմանադրության ընդունումը»⁴²⁰, քանի որ մտավախություն ուներ, թե այն միջոց կհանդիսանա Վրաստանից առանձնանալու համար⁴²¹:

Տարածայնությունները ԱԺԽ-ի ներսում, մեծամասնության և ընդունության միջն, բույլ չտվեցին կազմել սահմանադրության միասնա-

⁴¹⁶ ДЗИДЗАРИЯ Г. А. *Очерки...*, с. 311.

⁴¹⁷ «КОММУНИСТ ГРУЗИИ», 20.XI.1920.

⁴¹⁸ История Абхазии, с. 317. ՆԳ նախարար Նոյ Ռամիշվիլին այդ տեսակի ելույթներին պատասխանեց. «Մեր պետականության դեմ հանդես են գալիս ձախ տարրերը՝ հանձինս անկախ սոցիալիստների»: Տես ՎԿՊ(Դ), Խայմանացցացություն և ճամշումները յարձակ, Եջեռուցագոյզը անցարություն, 45-աց եեցում, 2 օցուներ 1919 թ. զը. 13. Ուշագրավ է, որ Արխազիայում Վրաստանի շահերի դեմ գործելու մեջ ՆԳ նախարարը մեղադրել էր ոչ միայն բոլշևիկներին և Դենիկինին համակրող տարրերին, այլ նաև վրաց ազգային-դեմոկրատների կոսակցությանը: Տես «БОРЬБА», 5.VIII. 1919. 1919 թ. հուլիսին Կոմիսարիատի որոշմամբ Արխազիայի տարածքից վտարվել էր այլ կուսակցության միակ ներկայացուցիչն ԱԺԽ-ում՝ Ն. Թավիզիի հետևյալ որք մեղադրվել էր սարդիչ գործունեության և ազգային վեճի իրակրման մեջ: Տես ГАМАХАРИЯ Դ. – ГОРИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 776:

⁴¹⁹ ЖОРЖОЛИАНИ Г. – ЛЕКИШВИЛИ С. – ТОИДЗЕ Л. – ХОШТАРИЯ-БРОССЕ Э. Նշվ. աշխ., էջ 26:

⁴²⁰ ГАМАХАРИЯ Դ. – ГОРИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 112:

⁴²¹ Նույն տեղում, էջ 102:

կան նախագիծ: Երկու կողմն էլ պատրանք ունեին, թե իրենց միջև ծագած տարածայնությունները կիազողվի հարթել կենտրոնական իշխանությունների միջնորդությամբ⁴²²: 1919 թ. աշնանը Թիֆլիսում միաժամանակ գտնվում էին ԱԺԽ-ի անդամներից կազմված երկու պատվիրակություն: ‘Առաջինը ներկայացնում էր մեծամասնությունը, որի լիազորություններն ընդունությունը չէր ճանաչում: Նրա կազմում էին սոցիալ-դեմոկրատներ՝ Մ. Ութիրիան, Վ. Գուրջուան, Գ. Կորույովը, Մ. Ցավան և սոցիալիստ-հեղափոխական Մ. Գրիգորիան⁴²³: Նրանց մասնաւոր նախատեսում էր ԱԺ-ի անդամների հետ համատեղ մասնակցել Արխազիայի սահմանադրության մշակման հանձնաժողովում, ինչպես նաև կենտրոնական և Արխազիայի իշխանությունների փոխհարարելությունների պարզեցումը⁴²⁴: Եթե ընդդիմությունը բոլոր թերությունները մեկնարանում էր Արխազիայի գործերում Թիֆլիսի չափազանց միջամտությամբ, ապա ըստ ԱԺԽ-ի մյուս թեկի, Արխազիայում տիրող անմշտիքար կացությունն առաջացել էր կենտրոնական իշխանությունների և երկրամասի միջև կապերի բոլորթյան հետևանքով⁴²⁵: Սույսում Հայաստանի Հանրապետության հյուպատոս Վաղարշակ Սահակյանը մատնանշում էր, որ երկրամասի լայն ինքնավարության կողմնակիցների և վրաց իշխանությունների միջև պայքարի պատճառով Արխազիայի կառավարման բնագավառում խառնաշփոր է տիրում⁴²⁶: Բացասական երևոյթների վերացման համար ԱԺԽ-ի մեծամասնությունն անհրաժեշտ էր գտնում մինչև սահմանադրության ընդունումը կնքել ժամանակավոր բնույթ կրող համաձայնագրեր և այդ միջոցով կարգավորել «աննորմալ երևոյթները, որոնք առաջացել են կենտրոնական և տեղական իշխանությունների միջև»⁴²⁷: Հետևապես ԱԺԽ-ի «վրացամետ» թեկի կարծիքով՝ Թիֆլիսի և Սույսումի միջև հարաբերությունների կարգավորման արդյունքում նրանք պետք է ավելի ամրապնդվեին՝ ի շահ երկու կողմից: Այս հայեցակարգից էր բխում 1919 թ. հոկտեմբերի 4-ին կառավարությանը ներկայացված «Զեկուցումը», որի բովանդակությունը հրապարակվել էր մամուլում⁴²⁸.

Ընդդիմադիրների հանձնարարությամբ Թիֆլիս էին մեկնել Մ. Թարնավան, Ի. Մարգարիան, Գ. Ալանիան և Մ. Ցագորիան: Նրանք հանդիպել էին կառավարության անդամների հետ: Վարչապետ Ժոր-

⁴²² АВТОНОМИЯ АБХАЗИИ. — “СЛОВО”, 26.XI.1920.

⁴²³ Лրասություն Արխազիայի ներկայացուցիչների գալուստը. — «ՆՈՐ ԱՇԽԱՏԱՍԻՈՐ», 5. X. 1919:

⁴²⁴ Хроника. — “БОРЬБА”, 4. X. 1919.

⁴²⁵ КОРОЛ'Յ В. Г. Письма из Абхазии. — “БОРЬБА”, 28.IX.1919.

⁴²⁶ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 409, թ. 20-21:

⁴²⁷ Ответ делегации Народного совета Абхазии. — “БОРЬБА”, 9.X.1919.

⁴²⁸ “БОРЬБА”, 20.XII.1919. Տես նույն օրաբերք 21.XII.1919; նաև՝ 23.XII.1919:

ηαնիան առաջարկել էր պատվիրակներին իրենց տեսակետներին տալ զրավոր ձևակերպում, ինչն էլ արվեց 1919 թ. սեպտեմբերի 29-ին: Այս փաստարդի գգալի մասը նվիրված է Արխազիայում Վրաստանի կառավարության ներկայացուցիչների գործելակերպի սուր քննադատմանը⁴²⁹: Հետազոտողների կողմից ընդունված «հուշագիրը» հրապարակվել է մասամբ, իսկ արխազական հեղինակները մեջբերում են միայն նրա քննադատական հատվածը⁴³⁰: Վրաց պատմաբաններն ու շարություն են սկզբում կառուցողական մասի վրա, որտեղ ասված է՝ «Մենք գտնում ենք, որ ոչ մեր մերքով ստեղծված լուրջ հետևանքներով իդի կացությունից միակ ելքը Արխազիայի կարգավիճակի ծևավորումն է լայն ինքնավարության սկզբունքների հիման վրա: Փոխադարձ անվատահության վերացման և մեր ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների հաստատման համար մեր խմբի կողմից մշակված է ինքնավար Արխազիայի սահմանադրության նախագիծը, որպես միակ ընդունելի տարբերակ և Արխազիայի, և Վրաստանի շահերի համար»⁴³¹: Վրաց սոցիալ-եկանկրատների պաշտօնարթերը խմբագրականում հայտնում էր, թե ընդունված նախագիծը «Վրաստանի և Արխազիայի միջև հաստատում է մոտավորապես այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք գոյություն ունեն Ավստրիայի և Հունգարիայի միջև [1867-1918 թթ.]: Թեև պարզ է, որ այդ տեսակի «ինքնավարություն» Արխազիայի բնակչությունը չի յուրացնի: Այդ սահմանադրությունը, բացի նորանոր դժվարությունների, ոչինչ չի տա Արխազիային: Նա ունի միակ նպատակ՝ փոս փորել Վրաստանի և Արխազիայի միջև»⁴³²: «Էրբորա»-ն նկատում էր, որ արխազների շահերը պաշտպանելու համար Սուխումի շրջանի վերածումն առանձին ինքնավար տարածքային միավորի անարդարացի կիմներ երկրամասի բնակչության մեծամասնության նկատմամբ⁴³³: Ի վերջո երկու պատվիրակությունները, դժգոհ մնալով, վերադարձան Սուխում: Թիֆլիսում Կոմիսարիատի կողմից առաջարկվոր և չափավոր բնույթ կրող Արխազիայի սահմանադրությունը շարժանացավ որևէ ուշադրության: Այդ մասին լուրն ԱԺԽ-ի անդամների մոտ ճնշված տրամադրություն էր առաջացրել⁴³⁴: 1919 թ. նոյեմբերի 15-ին Մ. Թարնավան գեկուցեց ԱԺԽ-ին, թե Վրաս-

⁴²⁹ Տե՛ս «СОЦИАЛ-ДЕМОКРАТ», 6.Х.1919.

⁴³⁰ Տե՛ս САГАРИЯ Բ. Е. Национально-государственное строительство в Абхазии (1921-1931 гг.). Сухуми, 1970, с. 17. Նաև՝ ԼԱԿՈԲԱ Ս. Յ. Օчерки., ս. 65-66. Նաև՝ История Абхазии, с. 299.

⁴³¹ Տե՛ս ГАМАХАРИЯ Դ. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 101:

⁴³² Պեճականություն – «БОРЬБА», 9.Х.1919.

⁴³³ «յայուղ» թերթի արտասպան հոդվածը տես՝ Абхазский вопрос. – «КАВКАЗСКОЕ СЛОВО», 25.VII. 1919.

⁴³⁴ Ավտոնոմիա Աբխазիա. – «СЛОВО», 26. XI.1919.

տանի կառավարությունն ավելի նեղ առումով է դիտում Արխագիայի ինքնավարական իրավունքների ծավալը, քան ԱԺԽ-ի ներսում «անկախ սոցիալիստների» հակառակորդները և կասկած էր հայտնում կառավարության հետ վերջնական հաճածայնության զալու հնարավորության նասին⁴³⁵: Այդ տեսակի հայտարարությունները գրգռում էին հասարակական կարձիքն Արխագիայում: 1920 թ. հունվարին Վ. Չուղին գեկուցում էր ՎՍԴ-ԲԿ Կենտկոմ, որ արխագիան մեծամասնորյունը «վճռականապես չի աջակցում մեզ»⁴³⁶: Ն. Լակորան բնորոշում էր այդ վերաբերմունքը ավելի շեշտված, իբրև «կատաղի ատելություն»⁴³⁷: ԱԺԽ-ի սոցիալ-դեմոկրատական խմբակցության արխազ 7 անդամ դուրս եկան նրա շարքերից և ստեղծեցին մի նոր ընդդիմադիր ֆրակցիա՝ «միջազգայնականների»⁴³⁸:

1920 թ. փետրվարին ԱԺԽ-ում հուզող հարցերի շուրջ հանդես եկավ Ն. Ռամիշվիլին, արտահայտելով կառավարության տեսակետները: Իր ելույթում նախարարը ևս մեկ անգամ էլ վերահստատեց խոստումը՝ տրամադրել Արխագիային ինքնավարություն, և պնդում էր Վրաստանի կառավարության այդ մտադրության անքակտելիության մասին⁴³⁹:

Վրաստանի ԱԺ-ի հետ համատեղ Արխագիայի սահմանադրության մշակման համար 1920 թ. մայիսի 21-ին ԱԺԽ-ն ընտրել էր լիազոր պատվիրակություն, որի կազմում էին՝ Վարլ. Շերվաշիձեն, Դ. Էնուխ-վարին, Դ. Զախարովը, Գ. Չուխբայան, Մ. Թարնավան, Վ. Անչարածեն: Համաձայն 1920 թ. հունիսի 24-ին նրանց տրված մանդատի՝ պատվիրակությունը պարտավորեցվում էր հետևել ԱԺԽ-ի կողմից հաստատված սահմանադրության նախագծի դրույթներին և հնարավոր չափով պիտի պաշտպաներ Արխագիայի լայն ինքնավարության սկզբունքը⁴⁴⁰: Թիֆլիսում պատվիրակության անդամները 1920 թ. հու-

⁴³⁵ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 101:

⁴³⁶ Борьба за Октябрь в Абхазии (1917-1921 гг.). Сб. док. и мат. Сухуми, 1967, с. 114.

⁴³⁷ ЛАКОБА Н. А. Статьи и речи, с. 210.

⁴³⁸ Դիմելով Վրաստանի կառավարությանը՝ նրանք գրում էին. «...Представители грузинского правительства не только не сумели наладить дружеских отношений между народностями Абхазии и грузинским правительством, но, наоборот, оттолкнули от себя и тех, ктоискренне поддерживал Республику Грузии... результатом такой политики был выход из фракции социал-демократической партии меньшевиков Грузии почти всех меньшевиков-абхазцев».Տես «СОЦИАЛ-ДЕМОКРАТ», 6.Х.1919.

⁴³⁹ Արխազ պատմաբանները համարում են, թե նախարարի ելույթն ընդդիմության ըկատմամբ սպառնափ բռվանդակություն ուներ (*История Абхазии*, с. 318), սակայն ինչպես ճիշտ եկատել էին վրաց հետագույնները՝ որևէ սպառնալիք նրա մեջ չկար (ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 102):

⁴⁴⁰ МЕНТЕШАШВИЛИ А. Исторические предпосылки..., с. 79, док. N 6.

նիս-հուլիսին հանդիպել էին Սժ-ի ղեկավար գործիչների հետ (Սժ-ի փոխնախագահ Ա. Լոմբարթիձե, սոց.-դեմ. խմբակցության առաջնորդ Ա. Չիննելի, սահմանադրության մշակման գծով հանձնաժողովի նախագահ Պ. Սաղվարելինե): Պատվիրակության խնդրանքը՝ Սահմանադրի ժողովի մի խումք անդամներին լիազորելու համատեղ աշխատանքի համար մերժվեց այն պատճառաբանությամբ, թե Արխագիայի սահմանադրության՝ համապետականից առաջ մշակումը հանդիսանում է վաղաժամ քայլ: Արխագական բանագնացները, սակայն, շարունակում էին պնդել հավասար սկզբունքներով կազմված համատեղ հանձնաժողովի ստեղծման վրա, որը պիտի օժտված լիներ վճռական իրավուրներով: Սժ-ի նախագահությանը հովայի 1-ին հոդած գրության մեջ ասված էր, որ Արխագիան «իրականում հանդիսանալով Վրաստանի ինքնավար մասը, մինչ այժմ չի ստացել իրավական ճանաչում, ինչը խոչընդոտում է ինքնավար մարմինների ստեղծագործական աշխատանքին»⁴⁴¹: Կրթերի հանգստացման նպատակով առաջարկվում էր ընթացող նստաշրջանում քննարկել հետևյալ հարցերը. 1) ճանաչել Արխագիան որպես Վրաստանի ինքնավար մասը; 2) օժտել ԱժԽ-ն օրենսդրական գործունեությամբ զբաղվելու իրավունքով; 3) իրեւ տեղական գործադիր իշխանություն ճանաչել Արխագիայի Կոմիսարիատը⁴⁴²: Համար պահանջներից հետո Սժ-ն ի վերջո համատեղ աշխատանքների համար լիազորել էր իր մի խումք անդամների: Առաջին խև օրից Վրաց-արխագական հանձնաժողովում առաջացել էին տարածայնություններ: Վրացական կողմը հայտարարել էր, որ օժտված է միայն նախնական տերսուի մշակման իրավունքով՝ Սժ-ի սահմանադրական հանձնաժողովում նրա հետագա քննարկման համար: ԱժԽ-ի անդամները, ելնելով «Արխագիայի ինքնավարության մասին ակտ»-ի 2-րդ կետի պահանջներից, պնդում էին համատեղ հանձնաժողովի լիազորությունների վճռական դերի մասին Արխագիայի սահմանադրության բնագրի մշակման գործում: ԱժԽ-ի պատվիրակությունը, անբավարարված լինելով հանդերձ, ստիպված էր, սակայն, համաձայնել Վրացական կողմի պայմաննեն: Երկրամասի վերջնական իրավական վիճակը պետք է որոշվեր Վրաստանի ապագա սահմանադրությամբ և, որպես վերջինիս գումարելին՝ կազմվեր «Ինքնավար Արխագիայի կանոնակարգը»: Երկար վիճաբանություններից հետո ձևափրկեց միասնական նախագիծ, որը, ինչպես ասված էր ԱժԽ-ի բանագնացների հաշվետվության մեջ՝ «Հանդիսանում էր մինիմում՝ պատվիրակության համար և մաքսիմում՝ Սահմանադրի ժողովի [լիազորված] հանձնաժո-

⁴⁴¹ ГАМАХАРИЯ Դ. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 105:

⁴⁴² Նույն տեղում:

դովի համար»⁴⁴³: Տարածայնություններ առաջացնող «Կանոնակարգի» կետերը դրս էին բերվել ՍԺ-ի սահմանադրական հանձնաժողովի ընդիանուր նիստի քննարկման, որն աբխազական պատվիրակության ներկայությամբ երկու անգամ անդրադեմ էր խնդրին: Սակայն այդ նիստերին, ՍԺ-ի վրաց պատգամավորների առարկությունների հետևանքով, մասնավորապես Աբխազիայի բնական պաշարների օգտագործման⁴⁴⁴ և մենաշնորհի մասին նախսկինում որոշված հարցերի շուրջ, հարուցվեցին նորանոր վեճեր: Անարդյունք բանավեճից հետո ՍԺ սահմանադրական հանձնաժողովի նախագահությունը սահմանափակվեց վիճահարույց հարցերը նախագծի վերջնական մշակման ժամանակ լուծելու խոստումով և հրավիրեց արխազ պատվիրակներին ևս մեկ անգամ այցելել Թիֆլս: Մեկնելուց առաջ ԱԺԽ-ի պատվիրակությունը հանդիպում էր ունեցել Ն. Շորդանիայի հետ: Վարչապետը իրազեկ էր պահիվել, որ «Աբխազիայի կացությունն այսպիսի անորոշ և անպարզ վիճակում... ծայրահեղ անցանկալի է, քանի որ նախ և առաջ հարվածում է Աբխազիայի Կոմիսարիատի ուժին և հաստատականության» և գործնականորեն «առաջացնում է աբխազական ժողովրդի մեջ կասկածի և անվստահության զգացմունքներ»⁴⁴⁵: Պատվիրակները խնդրում էին, որպես նվազագույն ցանկություն, ընդունել «Ենթակար Աբխազիայի մասին կանոնակարգն» առանձին օրենքով: Շորդանիան խոստացել էր խնդրի դնել կառավարության քննարկման: Մ. Ուրիբիան «Слово» օրաթերթին տված հարցազրոյցում ասել էր, որ «այս աշխատանքը պետք է ավարտել հնարավորին չափ շուտ, քանի որ Կենտրոնի հետ ստույգ սահմանադրական հարաբերությունների բացակայության պայմաններում յուրաքանչյուր մանր հարցի շուրջ մենք ստիպված ենք շատ եռանդ կորցնելու»⁴⁴⁶:

Վերադառնալով Սովորում՝ պատվիրակությունը սեպտեմբերի 10-ին ներկայացրել էր ծավալուն հաշվետվություն⁴⁴⁷: ԱԺԽ-ի անդամների մեծ մասը բողոքարկեց վրացական կողմի նոր պայմանը և շարունակում էր պնդել 1919 թ. մարտի 20-ին որդեգրված համատեղության սկզբունքը: Աբխազիայի սահմանադրության վերջնական տարրերակը կազմելու նպատակով 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ԱԺԽ-ի հա-

⁴⁴³ Նոյն տեղում, էջ 461, վավ. N 254:

⁴⁴⁴ Վրաստան-Աբխազիա իրավական հարաբերությունները կարգավորող մեխանիզմի բացակայության պարագայում, Վրաստանի «Սահմանադրի ժողովը իր [1921 թ.] յունվարի 21-ի միացեալ ժողովում հաստատեց խորական արդինարերական «մԼՎԱ» ընկերության պայմանագրի ծրագիրը Տկարչելու բարածումի հանքը ճշակելու մասին»: Տե՛ս Հրովհկոն. — «ՄԸԱԿ», 25. I. 1921:

⁴⁴⁵ ГАМАХАРИЯ Դ. — ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 462-263, վավ. N 254:

⁴⁴⁶ Абхазия — «СЛОВО», 5.VIII.1920.

⁴⁴⁷ Տե՛ս ГАМАХАРИЯ Դ. — ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 460-465, վավ. N 254:

մապատասխան հանձնաժողովը Սուխումում շարունակեց աշխատանքը: Հոկտեմբերի 16-ին մշակված բնագիրը հաստատվեց ԱժԽ-ի նիստում: Նոյն օրն ԱժԽ-ն որոշեց Թիֆլիս գործուղել նոր պատվիրակություն՝ շեշտելով, որ պատվիրակները պարտադրվում են իրենց գործունեության մեջ առաջնորդվել 1919 թ. մարտի 20-ի «Ակտ»-ով և ԱժԽ-ի կողմից հաստատված նախագծով⁴⁴⁸: Այսպիսով, ԱժԽ-ի կենտրոնամետ և ընդդիմադիր («հակավագական») թերի միջև կայացել էր համաձայնություն Աբխազիայի հնարավոր կարգավիճակի շուրջ, ինչը նաև վկայում է պատվիրակության կազմը: Վարլ. Շերվաշիձեն, Դ. Զախարովը, Վ. Գուրջուան, Մ. Ուրիշիան, Ի. Փաշալիդին ներկայացնում էին մեծամասնությունը, իսկ Մ. Թարմալան, Դ. Ալանիան, Մ. Ցագորիան, Մ. Թերուլավան լիազորվել էին ընդդիմադիր խմբավորումներից⁴⁴⁹: 1920 թ. նոյեմբերի 6-ին ԱժԽ-ի պատվիրակությունը ժամանել էր Թիֆլիս: Սակայն այս անգամ վրաց պաշտոնյաներն արհամարիում էին արխաց բանագնացներին և ձախողում համատեղ աշխատանքը: Ըստ վրաց պետական և քաղաքական շրջանակների՝ Աբխազիայի վերջնական իրավական կարգավիճակը պետք է որոշեր ոչ թե Աբխազիայի, այլ Վրաստանի սահմանադրությունը: Բողոքից հետո միայն պատվիրակներին նոյեմբերի 16-ին ընդունեց Ն. Ժորյանիան: Նա ևս մեկ անգամ հաստատեց Աբխազիայի ինքնավարության իրավունքը, թեպետ ընդգծել էր, որ մշակել և վավերացնել նրա սահմանադրությունն իրավագրը է միայն Վրաստանի ՍԺ-Ա⁴⁵⁰, ինչն, ի դեպ, հակասում էր համատեղության գաղափարին, որը ամրագրվել էր «Աբխազիայի ինքնավարության մասին ակտ»-ում: Ժորյանիան համաձայնվելով, որ Աբխազիայի սահմանադրության ընդունումը պահի հանդիսավոր պահանջն է, խոստացավ, սակայն, չսպասելով Վրաստանի սահմանադրության հաստատմանը, ՍԺ-ում իրեւ առանձին օրենք անցկացնել «Աբխազիայի ինքնավարության մասին կանոնակարգ»-ը, «որը Վրաստանի սահմանադրության ընդունման պարագայում կընդգրկվեր նրա մեջ»⁴⁵¹: Սակայն ինչպես հետևում էր պատվիրակների նոյեմբերի 19-ին արված հայտարարությունից, խոստումները չեին բավարարել նրանց⁴⁵²: Վրաստանի հետ միություն կապելու հետևողական կողմնա-

⁴⁴⁸ Նոյն տեղում, էջ 106:

⁴⁴⁹ Տես Դելեգացիա Աբխазիա. — «СЛОВО», 9. XI.1920. Նաև՝ «ԱՇԽԱՏԱՌՈՐ», 26. XI.1920:

⁴⁵⁰ ГАМАХАРИЯ Д. - ЧАНИЯ В. «Оккупация» Абхазии: мифы и реальность?!

— СГ, 3.V.1991.

⁴⁵¹ ГАМАХАРИЯ Д. — ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 108-109:

⁴⁵² «Դեռ 1918 թ. վետրվարի 9-ին, եթե գոյութիւն ուներ Անդրկովկասեան յատուկ կոմիտէ, - ասված է «Հուշագրում», - Վրաստանն ու Աբխազիան իրար մեջ պայմանագիր կնքեցին, որի մեջ ընդիհանուր գծերով ցույց էին տրած այն փոխարարքերութիւնները,

կիցներն ապրում էին որոշակի հիասքափություն և նրանց համախմբումն ընդդիմության հետ զգալի հարված կիներ կենտրոնական հշխանությունների համար: Նոյեմբերի 22-ին Պ. Սաղվարելիձեն հայտնեց ՍԺ-ի նախագահությանը, որ Արխագիայի ինքնավարության մասին հարցն ընդգրկվել է իր հանձնաժողովի օրակարգի մեջ, հաստատման նպատակով: Նոյեմբերի 28-ին ՍԺ-ի նախագահությունն իրազեկ էր պահել ԱԺԽ-ի պատվիրակության անդամներին, որ Վրաստանի սահմանադրության նախագծի քննարկումը կտեսի և երեք ամիս, իսկ ինքնավարության մասին հարցը վճռվում է նրա 120-121 հոդվածներով: Իսկ նոյեմբերի 30-ին հավելյալ տեղեկացրեց, որ ՍԺ-ն բացարձակապես մերժում է 1919 թ. մարտի 20-ի մատնանշված կարգը և առաջար-

որոնք կարող էին գոյութիւն ունենալ այդ երկու պետական կազմությունների միջև... Այդ փոխյարաբերությունները ձևակերպեցին և յետազայտ Արխագիայի և Վրաստանի կառավարութեան միջև 1918 թ. յունիսի 8-ի համաձայնորեան մէջ: ... Այսիսիք են այն հիմունքները, որոնք հաստատում են Արխագիայի անվիճելի իրաւունքները համարեա երեք տարույ ընթացքու: [ԱԺԽ-ն] ենթելով... պայմանագիրերից, ակտերից և կառավարութեան հաստիացուներից, շարունակ պատզանաորություններ է ուղարկել Սահմանադրի ժողովը, որպէսի վերջնականապէս ձևակերպեն Արխագիայի և Վրաստանի փոխյարաբերությունները: ...Կառավարութեան հաստիացուները Արխագիայի աստոն իրաւունքների մասին, գործնականում շատ էին հեռու իրականութիւնից... 1918 թից սկսած հանրապետութեան կառավարությունը աւելի ու աւելի է լայնացնում իր իրաւունքների ծավալը Արխագիայի աստոնու կյանքին միջանտելու համար, յաճախ խախտելով նոյնիսկ այն իրաւունքները, որոնց շորջը [նախկինում] որևէ վեճ չէր յարուցում... Այս հակասությունները՝ մի կողմէից, հաստիացուները և միևնույն, կառավարութեան միջանտերեան շնորհի Արխագիայում անվտանգություն և գործում է ստեղծել ոչ միայն դեպի հանապետական հշխանութեանը, այլև նաև դեպի Արխագիայի խորհրդողը: Մինչև այսօր [ԱԺԽ-ն] կատեցնում էր այն բոլոր նետերը, որոնք ուղղած էին հանրապետութեան կառավարութեան դիմ: Բայց... այս յուրաքանչյուր բաղադրականութիւնը, ստիպում են մեզ իրածարել ապագայ այն պատասխանատութիւնից, որը կարող են վերև յշխած հակասությունների հետևանք դառնա: Վրաստանի և Արխագիայի փոխյարաբերությունները մինչև այսօր ձևակերպած չեն և, հետևապէս, երկու կողմերի համար էլ իրաւաբանութեան պարտադիր լինել չի կարող: Մրա համար, [Ենթերլով] հանրապետութեան շահերի և երկու ժողովուրդների բարօրությն տեսակտուից, անհրաժեշտ է շառապ վիճոցներ ծեռք առնել հանձնածորություն ձևակերպելու համար: [ԱԺԽ-ն], ի դեմ իր վերջին սպատամատրների, դիմում է Վրաստանի հանրապետութեան կառավարութեանը՝ ցանկութիւն արտայաստում պարզ և հստակ շարպանած պատասխան ստանալ [ըստ] 1919 թ. մարտի 20-ի Ակտի Ելոյանը, [ինչպես նաև] պահանջում է, որ անմիջապէս հաւասարություն Սահմանադրի ժողովի և Արխագիական ժողովրդական խորհրդի խառը յանձնաժողով կազմի Արխագիայի աստոնումիայի մասին նախագիծը ընթելու և Սահմանադրի ժողով շառապ կերպով հաստատման մացնելու համար: Սօս երեք տարի շարունակ Արխագիայի ժողովուրդը սպասում է այդ կոնստիտուցիային և ներկայ պատզամատրությունը, դեկապարտիւ համապետական շահերի տեսակետով, կարծում է, որ նոր յետածգումների համար ոչ մի ինքնապուրը պատասխան չկայ, [որոնց համար] Արխագիական ժողովրդական ազգայի ազգաբնակութեանը» (Արխագիայի իմբնավարութեան շորջը. - «ԱԺԽԱ-ԱՀՏՈՐ», 26. XI.1920):

կում բոլորովին նոր պայման, ըստ որի Արխագիայի ինքնավարության հարցը պետք է վճռվեր միայն Վրաստանի ՍԺ-ի կողմից: Հետևապես արխագական պատվիրակության անդամներին առաջարկվում էր մասնակցել գործընթացին միայն տեղեկատվական կամ խորհրդակցական կարգավիճակով, իսկ ԱԺԽ-ն կատարելապես չեզոքացվում էր Արխագիայի սահմանադրության ընդունելու գործից⁴⁵³: 1920 թ. դեկտեմբերին Ն. Ժորժանիան խորհրդարանում առաջարկել էր պարտադիր պահանջներ երկրի պապա սահմանադրության նկատմամբ, այդ բայում՝ Վրաստանում որևէ դաշնային միավորների բացակայության սկզբունքը: Նա ասում էր, որ «մեր նայատակն է ստեղծել դեմոկրատական այնպիսի սահմանադրությին, որը ապահովելիս լինի ունիտար դեմոկրատիկ համբաւագետութիւն, որտեղ իշխանութիւնը պետք է բաժանած լինի կենտրոնի և... տեղական օրգանների միջև»⁴⁵⁴: Դեկտեմբերի 5-ին ԱԺԽ-ի պատվիրակությունը ետ կանչվեց Սուլիսում՝ մանրամասն հաշվետվություն տալու նպատակով⁴⁵⁵: Մեկնելուց առաջ ԱԺԽ-ի լիազոր բանագիտական ստորագրել էին Վրաստանի ՍԺ-ի նախագահության անունով ուղարկված գրություն, որը ևս մեկ անգամ հիշեցնում էր նախկին պայմանագրվածությունների մասին և եզրափակվում էր հայտարարությամբ, թե «աչքի առաջ ունենալով, որ կենտրոնական կառավարութեան և Արխագիայի ժողովրդական խորհրդի միջև հիմնովին տարբերութիւն է տիրում, պատգամատրութիւնը չի ցանկանում իր վրայ պատասխանատութիւն վերցնել և վերադարձնում է Արխագիա...»⁴⁵⁶:

1921 թ. հունվարին Թիֆլիսում խորհրդային Ռուսաստանի ներկայացուցության ուղամական կցորդ Պ. Պ. Միտինը տեղեկացնում էր Մոսկվա, թե «Թիֆլիսից Արխագական ժողովրդական խորհրդի պատվիրակության վերադարձից հետո խորհուրդը դեռևս չի գումարվել: Չնայած, որ նրա անդամների մեծ մասը պնդում է խորհրդի հրավիրման օգտին՝ Վրաստանի կառավարությունը վախենում է, որ Արխագական ժողովրդական խորհրդը առաջին իսկ նիստում կիսի կապը Վրաստանի հետ՝ ի նկատի ունենալով 1919 թ. մարտի 20-ի Ակտի պահանջների խախտումը... Այս ամենը վրդովում է զանգվածներն Արխագիայում և ստեղծում բարենպաստ պայմաններ մեզ համար»⁴⁵⁷: Վրաս-

⁴⁵³ Արխագիայի առողջությայի շորջը. - «ԱԾԽԱՏԱՒՈՐ», 9.XII.1920:

⁴⁵⁴ Վարչապետ Ն. Ժորժանիայի ծանր Սահմանադիր ժողովում. - «ԱԾԽԱՏԱՒՈՐ», 19.XII.1920:

⁴⁵⁵ Աბխազիա. — «СЛОВО», 8. XII.1920.

⁴⁵⁶ Տես Արխագիայի առողջությայի շորջը. - «ԱԾԽԱՏԱՒՈՐ», 9.XII.1920: Նաև՝ ՎԿՊ(Դ), ֆ. 1861, գ. 2, գ. 175, թ. 2:

⁴⁵⁷ Բօրբօ Յա Օկտյան 1917-1921 ց., ս. 172-173. 1921 թ. ապրիլին նա նաև գրում էր՝ «...Мерой, ослабляющий грузинский шовинизм и территориальную и материальную, я считал бы отделение Абхазии... Если засим абхазскому народу бу-

տանի կենտրոնական իշխանությունների հետ համաձայնության գալու կողմնակիցները գտնվում էին տարակուսանքի մեջ: Վարդ. Շերպաշիծեն անգամ հայտարարեց իրաժարական տալու իր ցանկության մասին⁴⁵⁸: 1921 թ. հունվարի 4-ին ԱԺԽ-ի նիստում նա ասաց, որ «մինչդեռ ժողովրդական խորհուրդը, որպես իր հիմնական խնդիր համարելով տեղում պետական իշխանության կազմակերպումը, փորձում էր բոլոր միջոցներով բույլ շտալ հակասությունների խորացում, սակայն ժամանակն ընթանում էր և այս հարցով արդեն երեք պատվիրակություն էր ուղարկվել ժողովրդական խորհուրդի կողմից, իսկ Արխագիայի ինքնավարությունը մինչ այժմ ձևակերպված չէ»⁴⁵⁹:

1920 թ. դեկտեմբերի 29-ին Վրաստանի ՍԺ «փոքր» սահմանադրական հանձնաժողովը, առանց ԱԺԽ-ի որևէ ներկայացուցիչ, վերջապես հաստատել էր «Ինքնավար Արխագիայի կառավարման մասին կանոնակարգ» կոչված նախագիծը, սակայն որպես հիմք վերցնելով ԱԺԽ-ի կողմից 1920 թ. հոկտեմբերին ընդունված տարբերակը⁴⁶⁰: Երկրամասը արխագական ազգային ինքնավարության վերածելու պահանջ մերժվեց՝ նրա բազմազգ լինելու պատճառով: Պատգամավոր L. Նարանցեն, գեկուցելով 1921 թ. փետրվարի 4-ին խորհրդարանի նիստում, սահմանադրական հանձնաժողովի անդամների անունից ասաց, որ «ազգային ինքնավարություն տալը չի համարում այնպիսի միջոց, որ կարող է լուծել ազգային հարցը, մանաւանդ Արխագիայի խայտարդելու ազգաբնակութեան վերաբերմամբ: Չի կարեիլ լուծել ազգային հարցը ազգային ինքնավարութեամբ, եւս առաւել տերրիտորիալ ատտոնմիայնվ»⁴⁶¹: Փետրվարի 11-ին ՍԺ-ի սոցիալ-դեմոկրատական խմբակցության 8 անդամ լրեց նրա կազմը, և, ի թիվս այլ պահանջների, նրանք նշում էին, որ «ծայրավայրերի ժողովուրդների (մահմեղական վրացիների, արխագների և այլն) կենսական շահերը պէտք է բաւարարուն և պէտք է ապահովուի փոքրամասնութիւնների իրաւական դրույթինք»⁴⁶²: Ուստաшան Կարմիր բանակի ներխուժման պայմաններում 1921 թ. փետրվարի 21-ին ՍԺ-ն հավանություն տվեց «Ինքնավար Արխագիայի կառավարման մասին ժամանակավոր կանոնակարգ»-ին⁴⁶³, որը պէտք

дет поставлен, например, путем плебисцита, вопрос о желательной форме государственного бытия, то нет никакого сомнения..., абхазский народ вынесет решение о полном присоединении к РСФСР...». Ст. «ИВЕРИЯ ЭКСПРЕСС», 18.VIII. 1993.

⁴⁵⁸ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 110:

⁴⁵⁹ История Абхазии, с. 319-320.

⁴⁶⁰ ГАМАХАРИЯ Д. – ГОГИЯ Б. Նշվ. աշխ., էջ 110:

⁴⁶¹ Հիմնայիլ ժողով. – «ՄԸԱԿ», 12. II. 1921:

⁴⁶² Պատակտմ վրաստանի սոց.-դեմոկրատ կուսակցութեան մէջ. - «ՄԸԱԿ», 15. II.

1921:

⁴⁶³ Ст. ՎԿՊ(Ա), ф. 1833, գ. 2, գ. 863, թ. 93-95:

է գործեր մինչև Վրաստանի սահմանադրության վերջնական վավերացումը: Ե՛ վրաց, և՝ աբխազ արդի պատմաբանները միասնական են այն հարցում, որ ուշացած այս որոշումն այլևս ոչ մի նշանակություն չուներ և, հետևապես, չեր կարող որևէ իրական ուժ ունենալ⁴⁶⁴:

Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցը, իր լուծումը զգտնելով Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության գոյության շրջանում, օրակարգի մեջ էր մնում նաև խորհրդային իշխանության հաստատումից հետո:

⁴⁶⁴ Տես ГАМАХАРИЯ Դ. – ГОГИЯ Բ. Նշվ. աշխ., էջ 110; Նաև՝ ЛАКОБА С. З. Очерки.., с. 78. Նաև՝ История Абхазии, с. 320.

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ (ԱԲԽԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ)

Այսրկովկասում խորհրդային կարգերի հաստատման նախօրեին արխազ հասարակությունն ազգային բազմակուտակ հարցերի լուծումը տևանում էր Աբխազիայի կարգավիճակի բարձրացման մեջ: Չնայած բազմաթիվ փորձերին՝ 1918-1920 թթ. ինքնիշխանության գաղափարն իրականացնել չէր հաջողվել, որը Աբխազիայի կարգավիճակի շուրջը 1920-ական թվականներին հարուցեց նոր հակամարտություն:

Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով տեղի ունեցավ Վրաստանի խորհրդայնացումը: Խնչակ գրում է վրաց պատմաբան Դեկ Ստորոտան, «1921 թ. փետրվարին Վրաստանի պետականությունը ձևականորեն չէր վերացել, այլ տեղի էր ունեցել հասարակական-քաղաքական կարգերի ուժային փոփոխություն, Վրաստանի... բոլշևիզացում»⁴⁶⁵:

Կարմիր բանակը 1921 թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 8-ը գրավեց ամբողջ Աբխազիան: Մարտի 6-ին ձևավորվեց Աբխազիայի Հեղկոմի հետևյալ կազմը. Ն. Լակորա, Ն. Ակիրտավա, Պ. Ազնիաշվիլի: Հեղկոմի նախագահ ընտրվեց Ե. Էշրան, որը 1918 թ. գարնանն արդեն գլխավորում էր Սոլյումի Զինհեղկոմը: Բնորոշ է, որ խորհրդայնացման առաջին իսկ օրերից մինչև 1921 թ. մարտի վերջերը Հեղկոմի պաշտոնական փաստաթղթերում ոչինչ չի ասված Վրաստանի և Աբխազիայի հարաբերությունների վերաբերյալ: Բավարարվում էին ընդհանուր կարգախոսներով, ինչպես՝ «Կեցցե եղբայրական միությունը Վրաստանի և Աբխազիայի աշխատավորների միջև»⁴⁶⁶: Սուլվայում ունենալով նախնական պայմանագրավածություններ, Վրացինեղկոմի անդամները համոզված էին, որ Վրաստանի ամբողջականությանը պատճակիր չկա, և կոչ հրապարակեցին, ըստ որի «Աջարիայի, Աբխազիայի և Հարավային Օսերիայի եղբայր ժողովուրդները ինքնուրույն են որոշում իրենց ճակատագիրը»⁴⁶⁷: Կարգախոսային բնույթ է կրում

⁴⁶⁵ СТУРУА Д. *Сепаратистское движение в Абхазии в 60-е и 70-е годы нашего столетия*. Тб., 1995, с. 59.

⁴⁶⁶ Укрепление Советской власти в Абхазии (1921-1925). Сборник док. и мат. Сост. ТУЛУМДЖЯН А. О. Сухуми, 1957, с. 14-15.

⁴⁶⁷ Образование СССР. Сборник док. М., 1972, с. 172.

Վրացիեղկոմի դիմումը Աբխազիայի Հեղկոմին, որտեղ մասնավորապես ասված է, «որ բոլոր փոքր ժողովուրդները հնարավորություն են ստանում ապրելու ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների»⁴⁶⁸: Դիմումի մեջ Աբխազիայի և Վրաստանի հարաբերությունների վերաբերյալ որևէ առաջարկության բացակայությունը վկայում է բանակցությունների անդրկովայսան բնույթի մասին: Միաժամանակ Վրացիեղկոմի նարտի 8-ի «Վրաստանի ԽՍՀ կառավարման համակարգի նախին» որոշման մեջ ասված է, որ «ճահճճագային հեղկոմները պետք է լինեն երեքը. Թիֆլիսի, Քուրայիսի, Բարთիմի և մեկ շրջանային՝ Սուխումի կամ Աբխազիայի»⁴⁶⁹: Ենթադրվում էր, թե Աբխազիան կատանա ինքնավար մարզի կարգավիճակ: Հետագա իրադարձությունները, սակայն, զարգացան ոչ նախնական ծրագրի համաձայն:

1921 թ. մարտի առաջին կեսին տեղի ունեցավ Աբխազիայի պատասխանատու աշխատողների երկու խորհրդակցություն, որտեղ որոշվեց հոչակել Աբխազիայի ինքնուրույն հանրապետություն, իսկ շրջանային բոլշևիկյան կուսկազմակերպությունը կոչել՝ Աբխազիայի Կոմունիստական կուսակցություն⁴⁷⁰: Մարտի 26-ին Աբխազիայի Հեղկոմի անդամները Լենինին և Ստալինին հետագիր հղեցին, որտեղ առաջ էին քաշում Աբխազիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հոչակման և այն Ռ-ՍՖՍՀ-ի կազմում ընդգրկելու հարցը: Որոշումը հիմնավորվում էր «իր ճակատագիրը անմիջականորեն Խորհրդային Ռուսաստանի հետ կապելու» արխագ ժողովոյի զանգվածային ցանկությամբ և «Աբխազիայի ինքնուրույնության հոչակումով Կարմիր բանակի պայքարի ազատագրական բնույթն ամրապնդելու ձգտութով՝ ինչպես Աբխազիայի աշխատավոր զանգվածների գիտակցության, այնպես էլ արտասահմանի հասարակական կարծիքի նեզ»⁴⁷¹: Այս դիմումը դարձավ արխագ բոլշևիկների նախորդ հակամենշևիկյան քառորդության տրամարանական շարունակությունը, որի հիմնական դրույթներից էր Խորհրդային Ռուսաստանին միավորվելու անհրաժեշտությունը, ինչը նշանակում էր նաև խորհրդային կարգերի հաստատում:

Խորհրդայնացումից հետո վերադառնալով վտարանիությունից՝ Ե. Էշբան ստիպված էր այս տրամադրությունները նկատի առնել:

⁴⁶⁸ Революционные комитеты Абхазии в борьбе за установление и упрочение Советской власти (февраль 1921 – февраль 1922). Сборник док. Сухуми, 1961, с. 27.

⁴⁶⁹ Революционные комитеты Грузии. Сборник док. и мат. Сухуми, 1963. с. 78.

⁴⁷⁰ САГАРИЯ Б. Е. Национально-государственное строительство в Абхазии (1921-1931 гг.). Сухуми, 1970, с. 25.

⁴⁷¹ Նույնի՝ Образование и укрепление советской национальной государственности в Абхазии (1921-1938 гг.). Сухуми, 1981, с. 41-42.

«...Կարծում էինք, - զրում է նա, - որ Արխագիան գրյուրյուն կունենա որպես Խորհրդային Վրաստանի անբաժանելի մասը, սակայն երբ մենք այստեղ եկանք և պարզեցինք, թե ինչպիսի մքնուրու ենք ընկել, մենք ստիպված էինք ընդունել Արխագիայի անկախության տարրերակը» և «...մենք միաձայն կանգ առանք այն բանի վրա, որ ազգային պառակտության վերացման համար անհրաժեշտ է, թեպես և ժամանակավոր՝ մինչև Խոհուրդների համագումարը, հոչակել Արխագիայի անկախությունը»⁴⁷². Արխագ բոլշևիկների 1921 թ. ռազմավարությունը հաշվի եր առնում 1918 թ. իրենց կողմից բոլյ տրված լուրջ Վրիպումները, երբ Արխագիայում ժամանակավոր հաստատվեցին խորհրդային կարգեր, սակայն առանց նրա պետականության վերականգնան, որին և ձգուում էին արխագական ժողովրդի լայն շրջանակները: Նկատի ունենալով քաղաքական ինքնուրույնության համար 1918-1920 թթ. արխագների պայքարը, Արխագիայի բոլշևիկները խորհրդային կարգերի հաստատումից հետո առաջ քաշեցին ինքնուրույն պետականության գաղափարը:

Վրաց և արխագ բոլշևիկների միջև ծագած տարածայնությունները վերացնելու նպատակով միջնորդի դերը ստանձնեց ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի քարտուղար Սերգո Օրջոնիկիձեն: 1921 թ. մարտի 27-ին Ե. Էշրան նրա հետ ունեցած զրույցի ընթացքում Հեղկումի անունից առաջարկեց վավերացնել Արխագիայի հոչակումը որպես ինքնուրույն հանրապետություն Ռ-ՍՖՍՀ անմիջական կազմում⁴⁷³: Ե. Էշրան Հեղկումի դիրքորոշումը իմնավորում էր այն բանով, թե արխագների մոտ ձգուումը դեպի ազգային ինքնուրուչում հարուցեց մենշևիկների քաղաքականությունը: Մեկ այլ առիթով այս գնահատականը հաստատում է Օրջոնիկիձեն, շրացնելով, որ «մենշևիկների ազգայնական քաղաքականությունը ծնեց կտրուկ հակավրացական տրամադրություններ Արխագիայի, Աջարիայի և Հարավային Օսերիայի բնակչության մեջ»⁴⁷⁴: Օրջոնիկիձեն, զարմանք հայտնելով, որ «արխագ ընկերների» կողմից հարցը առաջին անգամ նման մեկնաբանման էր արժանանում, այնուամենայնիվ համաձայնեց հոչակել Արխագիան ինքնուրույն հանրապետություն⁴⁷⁵: Միաժամանակ նա խորհուրդ տվեց շրջանցել Արխա-

⁴⁷² Նույն տեղում, էջ 44:

⁴⁷³ МЕНТЕШАШВИЛИ Ա. Октябрьская..., с. 189.

⁴⁷⁴ ОРДЖОНИКИДЗЕ Г. К. Статьи и реэс. Т. I. М., 1959, с. 199-200.

⁴⁷⁵ 1921 թ. դեկտեմբերին Վրացիկլիմ նախագահ Ֆ. Մախարաձեն գանձատվում էր ՌԿ(Բ)Կ ԿԿ, որ Կովկասյան բյուրոն և XI բանակի Հեղինակուրուդը փաստացի հանդիսանում են իրական իշխանության բարձրագույն մարմններ և միանգամայն առանց Վրաստանի կոմիտսի ԿԿ-ի ու Հեղկումի գիտության բոլոր դեպքերում անսարքելի կերպով որոշում են Վրաստանին անմիջապես վերաբերող քաղաքական բոլոր կարերագույն

զիայի դաշնության հարցը թե՛ Ուստաստանի, թե՛ Վրաստանի հետ, մինչև այդ հարցի վերաբերյալ ՈւԿ(թ)Կ Կենտկոմի վճռը⁴⁷⁶: Ի վերջոն նրանք համաձայնության եկան հանդիպել Բարումում մարտի 28-ին: Նշված օրը տեղի ունեցավ Կովկասյան բյուրոյի (Ս. Օրջոնիկիձե), Վրաստանի կոմկուսի Կենտկոմի (Ը. Էլիափա, Մ. Թորոշելիձե, Ա. Քափթարաձե) և Արխագիայի Հեղկոմի (Ե. Էշրա, Ն. Լակորա) ներկայացուցիչների համատեղ խորհրդակցությունը, որը վարում էր Ս. Օրջոնիկիձեն: Օրակարգում մեկ հարց էր՝ «Խորհրդային իշխանության և Արխագիայում Կոմկուսի կառուցվածքի մասին»: Երկար վիճարանություններից հետո չհաջողվեց պտանալ Վրաստանի կազմ ընդգրկվելու հանար Արխագիայի ներկայացուցիչներից որևէ համաձայնություն: Մարտի 29-ին խորհրդակցությունը վճռ կայացրեց. «Մինչև Արխագիայի Խորհրդային համագումարը ՈՒՖԱՀՀ կամ ՎԱԽՆՀ հետ Խորհրդային Արխագիայի դաշնության հարցը մնում է բաց և Արխագիան հայտարարվում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն»⁴⁷⁷: Արխագիայի կուսկազմակերպության ղեկավար մարմինը ժամանակավոր կարգավիճակ ստացավ՝ ՈՒԿ(թ)Կ Կազմը ուրու և ենթարկվեց անմիջականորեն Կովկասյան բյուրոյին: Ինչպես կարծում են վրաց հետազոտողներից ոմանք (Մ. Գ. Գափրիխնաշվիլի, Գ. Գ. Գեորգաձե և այլք), «մարտի 29-ին Բարումի խորհրդակցությունը փաստացի ստիպված էր ճանաչել Խորհրդային Արխագիայի անկախությունը հանգամանքների ճնշման ներքո»⁴⁷⁸:

1921 թ. մարտ ամսին քաղաքական կացությունը Վրաստանում, ինչպես նաև ամբողջ Կովկասում տակավին մնում էր անորոշ: Հայատանում և Դաղստանում հակաբողշեկլյան ապստամբության դրոշը բարձրացրած ուժերը առաջմ ընկնված չէին: Անցել էր մի քանի օր ինչ անկում էր ապրել Վրաստանի անկախ պետականությունը: Վրաց հասարակության մեծ մասը վերաբերյալ կարմիրբանակայիններին իբրև նվաճողների: Խորհրդայնացված Վրաստանի կոնդիստական կառավարությունը հենվելով օտար սլվանների վրա որևէ համբավ չէր

հարցերը: Տես ԼԵЖАВԱ Գ. Պ. *Технологии этнической мобилизации. Из истории становления грузинской государственности (1987-1993)*. М., 2000, с. 93.

⁴⁷⁶ МЕНТЕШАШВИЛИ А. Октябрьская..., с. 189.

⁴⁷⁷ Укрепление Советской власти в Абхазии (1921-1925), с. 27.

⁴⁷⁸ По поводу искасожения грузино-абхазских взаимоотношений. Тб., 1991, с. 85.

Վրաստակ Ազգային Ազգանվայի ակադեմիկոս Մարիամ Լորրիֆանիձեն արտահայտվում է ավելի հստակ. «...Грузинские большевики не случайно пошли на уступку. Хотя переговоры велись после аннексии Грузии, но они велись в условиях борьбы за упрочение и сохранение власти, и грузинские большевики нуждались в поддержке своих абхазских коллег... Единственное, что заботило грузинских большевиков – это сохранение власти» (ЛОРДКИПАНИДЗЕ Մ. *Абхазы и Абхазия*, с. 57-58).

